L 23

ՀԱԿՈԲ ՄԱՆԱՍՏՅԱՆ

ՏՈՊՐԱՆ ԵՐԿՐՈՐԴԸ ԵՎ ՀՈՒՈՄԸ

ՍՊԱՏԱԿ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Я. А. МАНАНДЯН

ТИГРАН ВТОРОЙ И РИМ

В НОВОМ ОСВЕЩЕНИИ ПО ПЕРВОИСТОЧНИКАМ

(Переиздание)

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН—1972

9(Հ)
Ա 239

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿՐՈՐԴԸ ԵՎ ՀՌՈՄԸ

ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԸՍՏ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

(Վերահրատարակություն)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1972

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Է. Բ. ԱՂԱՅԱՆ, Մ. Մ. ՄԿՐՅԱՆ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ «ՏԻԳՐԱՆ Բ ԵՎ ՀՌՈՄԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ակադ. Հ. Մանանդյանը հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության, հայ բանասիրության խոշոր հետազոտողներից ու երախտավորներից մեկն է: Նրա անունը հայտնի է ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև Սովետական Միության և արտասահմանի հայագետների ու արևելագետների լայն շրջաններում:

Հակոբ Համազասպի Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին (հին տոմարով՝ 10-ին), Ախալցխա քաղաքում, անտառապետի ընտանիքում[1]: Նրա ծնողները բոլոր հնարավորությունները ստեղծում են իրենց անդրանիկ որդուն հիմնավոր ու փայլուն կրթություն տալու համար:

Նախնական կրթությունը ստանում է իր հայրենի քաղաքում, ապա 1883—1893 թթ. սովորում է Թիֆլիսի առաջին գիմնազիայում և հաջողությամբ ավարտում այն:

1893 թ. աշնանը Հ. Մանանդյանը մեկնում է Գերմանիա և ընդունվում Ենայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը: Գերմանիայում բարձրագույն կրթություն ստացողներից շատերի նման նա ևս սովորում է ոչ թե մի, այլ մի քանի համալսարաններում: Բացի Ենայի համալսարանից, նա համեմատական լեզվաբանության, պատմության, բանասիրության, տնտեսության պատմության և այլ հասարակական գիտությունների գծով դասընթացներ է լսում նաև Լայպցիգի ու Ստրասբուրգի համալսարաններում:

---

[1] *Ակադ. Հ. Մանանդյանի կյանքի և գիտական գործունեության մասին տե՛ս Б. Д. Греков*, Выдающийся советский историк, *А. Арзуманян*, Дружба, Ереван, 1960, кн. 2, էջ 270—281 *կամ նույնի հայերեն հրատարակությունը, Երևան, 1958, էջ 774—752), Г. Х. Саркисян*, Яков Амазаспович Манандян, Ереван, 1959, *Վ. Հակոբյան, Համալսարանի առաջին ռեկտորը (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 1970, էջ 57—74)*:

1897 թ. Հ. Մանանդյանը ավարտում է ուսումնառությունը, Ենայի համալսարանում պաշտպանում Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկին նվիրված իր պատմա-բանասիրական դիսերտացիան[2] և ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1898 թ. նա Էքստերն կարգով ավարտում է նաև Պետերբուրգի կայսերական համալսարանի արևելագիտական ֆակուլտետը (պարսից լեզվի, պատմության ու բանասիրության մասնագիտությամբ) և ստանում առաջին աստիճանի դիպլոմ:

Ուսանելու ընթացքում Հ. Մանանդյանը ոչ միայն ձեռք է բերում բազմակողմանի, խոր ու հարուստ գիտելիքներ, այլև սովորում բազմաթիվ լեզուներ: Բացի մայրենի լեզվից (աշխարհաբար և գրաբար), նա գիտեր նաև ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, հին հունարեն, լատիներեն, պարսկերեն և սանսկրիտ:

Գիտական ու լեզվական հարուստ գիտելիքներով զինված, իրեն գիտությանը նվիրելու եռանդով Հ. Մանանդյանը 1899 թ. վերջին գալիս է Հայաստան: Սակայն այստեղ, զուտ գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորություններ չլինելու պատճառով, հայագիտության մեր մյուս մեծ երախտավորների՝ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Ստ. Մալխասյանցի, Ա. Տերտերյանի և այլոց նման, Մանանդյանը ևս ստիպված է լինում զբաղվել ուսուցչությամբ: Նա 1900—1905 թթ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի բարձր դասարաններում ու լսարաններում դասավանդում է հին հունարեն, գերմաներեն, հին հունական գրականություն և փիլիսոփայության պատմություն, անգլիական գրականություն: Միաժամանակ, կաթողիկոսի կարգադրությամբ, 1902 թ. հունվարից Հ. Մանանդյանը նշանակվում է «Արարատ» հայագիտական հանդեսի խմբագրի օգնական, իսկ 1903—1904 թթ. պրոֆ. Ֆ. Ֆինկի և Գյանջեցյանի հետ խմբագրում „Zeitschrift für armenische philologie“ հանդեսը[3]:

Մանկավարժական աշխատանքի հետ միասին Հ. Մանանդյանը վերոհիշյալ տարիներին եռանդուն կերպով ուսումնասիրում է Էջմիածնի մատենադարանի պատմական ու իմաստասիրական ձեռագրերը: Հատկանշական է, որ Հ. Մանանդյանը հայագիտության մեջ մուտք է գործում ոչ թե իբրև պատմաբան, այլև իբրև բանասեր, աղբյուրագետ և բնագրագետ: Իր ստեղծագործության այս շրջանում նա նախ՝ Հ. Աճառյանի հետ համատեղ կատարում է «Հայոց նոր վկաները» աշխատության ժողովրդական և գիտական հրատարա-

[2] **Agop Manandian,** Baitrăge zur albanischen Geschichte, Leipzig, 1897.

[3] *Տե՛ս Վ. Հակոբյանի նշված հոդվածը, էջ 58:*

կությունները[4], ապա գիտական բարձր մակարդակով, փայլուն բանասիրական ուսումնասիրություններ է գրում Դավիթ Անհաղթի և հունաբան դպրոցի առանձին գրական հուշարձանների մասին, ինչպես և հրատարակության պատրաստում մի քանի արժեքավոր բնագրեր[5]:

1905 թ. ամռանը Հ. Մանանդյանը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ առաջին, երկրորդ արական գիմնազիաներում և Ներսիսյան դպրոցում երկու տարի, առանց հիմնական դրույքի, ժամավճարով դասավանդում է հայերեն, գերմաներեն և հայոց գրականություն: Նա միաժամանակ աշխատակցում է «Արշալույս» օրաթերթին, իսկ 1906 թ. մարտից նույնիսկ դառնում նրա ժամանակավոր խմբագիրը: Նա այդ թերթում գրում է արևմտահայ առաջին մասսայական կոտորածների 10-ամյակի, ճնշված ազգերի, ցարական կառավարության ռեակցիոն քաղաքականության մասին մի քանի ուշագրավ առաջնորդողներ:

Սակայն Էջմիածնում շատ հաջող կերպով սկսված՝ Հ. Մանանդյանի գիտական գործունեությունը ավելի քան տասնհինգ տարով ընդհատվում է, նրա անունը ժամանակավորապես անհետանում է հայագիտության երկնակամարից, եթե հաշվի չառնենք 1911 թ. նրա հրատարակած «Մեկնութիւն ստորագրութեացն Արիստոտելի, ընծայեալ Էլիասի իմաստասերի» աշխատությունը[6]: Պատճառն այն էր, որ նախասովետական շրջանում պետական հովանավորությունից և նյութական օժանդակությունից զուրկ, ժողովրդական զանգվածների անգրագիտության պատճառով ընթերցողների նեղ շրջանակ ունեցող հայագիտությունը նույնիսկ իր տաղանդավոր ու բեղմնավոր մշակներին չէր ապահովում ապրուստի նվազագույն պայմաններ: Գիտական, այդ թվում և հայագիտական աշխատությունները ոչ միայն չէին սպառվում, այլև նրանց հրատարակութիւնն իսկ կապված էր նյութական մեծ դժվարությունների հետ:

1907 թ. կեսերին Հ. Մանանդյանը որոշում է և նախապատրաստ-

[4] *«Հայոց նոր վկաները», ժողովրդական հրատարակություն, հատոր Ա և Բ, Վաղարշապատ, 1902, «Հայոց նոր վկաները», գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903:*

[5] *Հունաբան դպրոցի երկերին նվիրված Հ. Մանանդյանի այս շրջանի ուսումնասիրություններն էին. ա)* Nonnos, die Scholian zu fünf Reden des Gregor von Nazianz, Marburg, 1903, *բ) Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ, Վաղարշապատ, 1904, գ) Հատվածքներ եվսեբիոս Կեսարացու Բրոնիկոնից մի հին ձեռագրում, «Հանդէս ամսօրեայ», 1905, № 1, էջ 15—19:*

[6] *Ս. Պետերբուրգ, 1911:*

վում մանկավարժական աշխատանքից ու բանասիրությունից անցնել դեպի նյութապես ավելի ապահով իրավագիտության գործնական բնագավառը: Նա 1909 թ. էքստերն կարգով քննություններ է տալիս Յուրևի (Դորպատ—Տարտու) համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և հաջողությամբ ավարտում այն: Դրանից հետո նա տասը տարի (1909—1919 թթ.) աշխատում է Բաքվի օկրուգային դատարանում նախ՝ իբրև երդվյալ հավատարմատարի, օգնական, իսկ ապա՝ երդվյալ հավատարմատար: Բազմակողմանի զարգացում, խորաթափանց միտք և մեծ էրուդիցիա ունեցող Հ. Մանանդյանի նման մի գիտնականի, այն էլ հետազոտական աշխատանքի համար ամենաարդյունավետ տարիքում, ժամանակավորապես գիտությունից հեռանալը ափսոսանքի արժանի մի կորուստ էր հայագիտության համար:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հնարավորություններ է ստեղծում Հ. Մանանդյանի գիտական լայն ու բեղմնավոր գործունեության համար:

1920 թ. գալով Երևան, Հ. Մանանդյանը Սովետական Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարի՝ 1921 թ. հունվարի 7-ի հրամանով նշանակվում է նորաստեղծ համալսարանի ռեկտոր, ինչպես և հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ ու դասախոս, իսկ ապա՝ արևելագիտական-պատմագրական ֆակուլտետի դեկան (1921—1924 թթ.):

1921—1930 թթ. նա սկզբում արևելագիտական, իսկ ապա պատմագրական ֆակուլտետում կարդում է հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության դասընթացը, դառնալով այդ առարկայի համալսարանական գիտական դասընթացի հիմնադիրը: Ուսանողները միշտ մեծ սիրով և լարված ուշադրությամբ են լսել խնամքով պատրաստված, պատմական հարուստ փաստերով հագեցված, կուռ տրամաբանությամբ կառուցված նրա դասախոսությունները: Մանանդյանը դաստիարակել և պատրաստել է պատմաբանների մի քանի սերունդներ, նրանց մեջ արմատավորելով սեր հայրենի պատմության նկատմամբ, գիտական աշխատանքի ճաշակ, պատմա-քննական ունակություններ, աշխատասիրություն և սկզբունքայնություն: Նա ավելի ուշ (1946—1950 թթ.) եղել է նաև հայ ժողովրդի պատմության գծով մասնագիտացող՝ համալսարանի մի քանի ասպիրանտների գիտական ղեկավարը: Ներկայումս Սովետական Հայաստանի գիտական հիմնարկներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատող պատմաբանների, հնագետների և բանասերների շարքերում քիչ չեն նրա սաները, որոնց մեջ կան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ, թղթակից-անդամներ, դոկտորներ, պրոֆեսորներ:

1926 թ. Հ. Մանանդյանին շնորհվում է պրոֆեսորի, 1935 թ.՝ Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1938 թ., առանց դիսերտացիայի պաշտպանության՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Իր կյանքի նոր շրջադարձի հենց սկզբից նա մեծ եռանդով լծվում է նաև ստեղծագործական, գիտահետազոտական աշխատանքի: Նա նախ վերսկսում ու ավարտում է հունաբան դպրոցին նվիրված իր ուսումնասիրությունները, որոնց արդյունքներն ու եզրակացություններն ամփոփում է 1925—1928 թթ. «Հանդէս ամսօրեա» ամսագրում, իսկ 1928 թ. նաև առանձին գրքով լույս տեսած «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» վերնագրով մենագրության մեջ[7], որը նրա բանասիրական ուսումնասիրության պսակն է, մի արժեքավոր ներդրում հայ դասական բանասիրության մեջ: Սակայն սրանով նա իր հաշիվները չի փակում հունաբան դպրոցի հետ: Հետագայում ևս հրատարակում է այս դպրոցին պատկանող երկու արժեքավոր բնագրեր[8]:

Սակայն սովետական շրջանում է, որ Հ. Մանանդյանը, չհրաժարվելով հանդերձ բանասիրությունից, իր գիտական ստեղծագործական աշխատանքների հիմնական առանցքը դարձնում է հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության հանգուցային հարցերի ուսումնասիրումը, որով և նա ձևավորվում ու հանդես է գալիս իբրև ականավոր պատմաբան: «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» վերնագրով համալսարանում կարդացած իր դասախոսությունները հրատարակելուց հետո (1922 թ.), նա ձեռնամուխ է լինում ոչ միայն իր համար նոր, այլև հայ պատմագրության մեջ շատ քիչ ուսումնասիրված հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի հետազոտմանը: 1925 թ. լույս է տեսնում նրա «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում»[9] հոդվածը, որին հետևում են նաև «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության

---

[7] *Վիեննա, 1928:*

[8] *ա) Թեովնեայ յաղագս ճարտասանական կրթութեանց (Հանդերձ յոյն բնագրաւ), Երևան, 1938, բ) Հերմեայ եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք, «Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1958, էջ 287—314:*

[9] *Տե՛ս «ՀՍԽՀ պետական համալսարանի դիտական տեղեկագիր», 1925, № 1, էջ 3—45, նույնը առանձին հրատ., Երևան, 1925:*

շրջանում»[10], «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» 1-ին և 2-րդ մասեր[11], «Заметки о феода и феодальном войске Парфии и Аршакидской Армении»[12] հոդվածները: Գիտական բարձր մակարդակով գրված այս աշխատանքներում նա վեր է հանում ֆեոդալական հասարակարգում նյութական բարիքներ արտադրող հիմնական դասակարգի՝ գյուղացիության (շինականների) սոցիալական, տնտեսական ու իրավական դրությունը, գյուղական համայնքում գոյություն ունեցող հողաբաժանման ձևը, պարզաբանում է մարզպանության և հետագա շրջանում գոյություն ունեցող հարկերի տեսակները, նրանց բնույթը և չափերը, մեկնում է «խոստակ» տերմինի իմաստը և նրա համապատասխան լինելը «ֆեոդավատին» և այլն:

Հետազոտելով սոցիալ-տնտեսական հարցերը, բնական է, որ Հ. Մանանդյանը պետք է պարզաբաներ նաև հին Հայաստանում գործածված կշիռներն ու չափերը: Դա շատ անհրաժեշտ ու օգտակար, բայց և դժվար ու բարդ մի աշխատանք էր, որը հաջողությամբ կատարում է անվանի գիտնականը: Չափագրությանն են նվիրված նրա «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում»[13], «Էրատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը»[14], «О градусных измерениях меридиана и земной поверхности по древнеармянским источникам»[15] աշխատությունները: Նշված հետազոտությունները, որոնք կատարված են Հայաստանի հարևան երկրների համեմատական նյութի լայն ընդգրկումով, իրենց նշանակությամբ դուրս են գալիս հայագիտության շրջանակներից:

Հայաստանի տնտեսական կյանքին նվիրված՝ Հ. Մանանդյանը առաջին ընդհանրացնող աշխատանքը դառնում է 1930 թ. լույս տեսած «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XIV в. н. э.)» մենագրությունը, որի վերամշակված և լրացված հրատարակությունը կատարվում է 1954 թ., համալսարանի հրատարակչության կողմից: Դա, հայ պատմագրության մեջ Հայաստանի քաղաքներին նվիրված առաջին ուսումնասիրությունը լինելով, ինքնին մեծ արժեք ու հետաքրքրություն է ներկայացնում: Հեղինակը այստեղ հայկական, հունական, հռոմեական, արաբական, պարսկական և այլ սկզբնաղբյուրներից բերված և քննարկված փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տալիս տարբեր դարաշրջաններում Հայաստանի քաղաքների, առևտրի ու արհեստների զարգացումը, Հայաստանի վրայով կատարվող միջազգային տարանցիկ առևտուրը, առևտրական ճանապարհները, միջնադարյան քաղաքների ներքին կառուցվածքը, արտահանվող և ներմուծվող ապրանքները և այլն: Այս աշխատության հիմնական սխալն այն է, որ Հայաստանի քաղաքների առաջացումը, զարգացումն ու անկումը առաջին հերթին բացատրված է ոչ թե երկրի ներքին կյանքում տեղի ունեցած սոցիալական տեղաշարժերով և արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, այլ տարանցիկ առևտրով և մասամբ նաև երկրի քաղաքական իրավիճակով: Չնայած դրան, այս գիրքը, ինչպես ճիշտ կերպով նկատել է Գ. Սարգսյանը, մինչև այժմ հանդիսացել է և դեռ երկար ժամանակ կմնա իբրև անհրաժեշտ մի ուղեցույց Հայաստանի քաղաքների պատմությունն ուսումնասիրողների համար[16]:

Նախապատրաստական բնույթ ունեցող իր ուսումնասիրություններից հետո Հ. Մանանդյանը հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ավելի խոր, ամբողջական և ընդհանրացնող հետազոտությունը տալիս է 1934 թ. հրատարակված «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» (Արշակունիների ու մարզպանության շրջան) դասական աշխատության մեջ: Եթե Ն. Ադոնցը իր «Армения в эпоху Юстиниана» նշանավոր գրքում քննարկել ու պարզել էր հայկական նախարարությունների ծագումը, նրանց մոտավոր քանակը և տոհմային կալվածքների կամ իշխանությունների աշխարհագրական տեղադրությունը, իսկ նրանց էությանը և առանձնահատկություններին անդրադարձել էր համառոտ կերպով, ապա Հ. Մանանդյանը այս աշխատության մեջ, ընդհակառակն, մանրամասն վերլուծում ու պարզաբանում է նախարարական (ֆեոդալական) կարգի ներքին բովանդակությունը և նրա էական բոլոր առանձնահատկությունները: Աշխատության մեջ համոզիչ փաստերով ցույց է տրված հայկական

---

10 *Տե՛ս «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1926, № 1, էջ 3—44, նույնը առանձին հրատ., Երևան, 1926:*

11 *1-ին մասը տե՛ս «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2, էջ 29—42, նույնը առանձին հրատ., Երևան, 1927, 2-րդ մասը տե՛ս «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1928, № 4, էջ 43—82, նույնը առանձին հրատ., Երևան, 1928:*

12 Тифлис, 1932:

13 *Երևան, 1930:*

14 *Երևան, 1934:*

15 *Տե՛ս* «Вестник Древней истории», 1950, № 2 (32, էջ 202—219:

16 *Տե՛ս* Г. Х. Саркисян, Яков Амазаспович Манандян, էջ 26:

ֆեոդալական (նախարարական) հասարակության դասակարգային, դասային և հիերարխիկ բնույթը, նախարարությունների և նրանց տիրույթների ներքին կառուցվածքը, հողատիրության ձևերը, վասալական հարաբերությունները, մանր ազնվականության՝ «ազատների» ու «ոստանիկների», ինչպես և հոգևորականության իրավական-տնտեսական դրությունը: Այստեղ ավելի հանգամանորեն, քան իր առաջին հոդվածներում, քննարկելով գյուղացիության՝ շինականների սոցիալական, իրավական ու տնտեսական դրությունը, Հ. Մանանդյանը գալիս է այն եզրակացության, որ Արշակունիների և մարզպանության շրջանում գյուղացիները թեև ամրացված են եղել հողին և կախման մեջ են գտնվել հողատերերից, հարկեր են վճարել և պարհակներ կատարել, բայց լրիվ կերպով ճորտացված չեն եղել և կոռային աշխատանք չեն կատարել, որովհետև նախարարները իրենց կողմից վարվող սեփական խոշոր տնտեսություններ չեն ունեցել, այլ նրանք եղել են սոսկ հողատերեր: Մատենագրական վկայություններով ցույց է տրված նաև, որ Մերձավոր Արևելքի երկրների նման Հայաստանում ևս գոյություն են ունեցել գերեվարված և պարտքի դիմաց ստրկացված զգալի թվով ստրուկներ, որոնց աշխատանքը կիրառվել է տնային ծառայության ու գյուղատնտեսության մեջ: Սույն ուսումնասիրության խոշոր արժանիքներից մեկն էլ այն է, որ այնտեղ վերլուծված և ճշտված են սոցիալ-տնտեսական բազմաթիվ տերմինների ծագումը, նրանց իմաստային զարգացումը և հայկական ֆեոդալական միջավայրում նրանց ունեցած իրական նշանակությունը:

Բացառիկ նշանակություն տալով տարանցիկ առևտրին, հասկանալի է, որ Հ. Մանանդյանը ձեռնամուխ պետք է լիներ նաև Հայաստանի առևտրական, ուստի և ռազմական ճանապարհների ուսումնասիրմանը: Նախ՝ նրա ուսումնասիրման առարկան է դառնում 4-րդ դարում կազմված հռոմեական ճանապարհացույց-քարտեզի կամ «Պևտինգերյան քարտեզի» Հայաստանին վերաբերող մասը: 1931—1932 թթ. այս թեմային նվիրված երկու հոդվածներ[17] գրելուց հետո, նա ավելի ուշ՝ 1936 թ., հրատարակում է իր «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի» արժեքավոր մենագրությունը: Այստեղ պատմական ու ժամանակակից մեծ թվով տեղանունների համադրությամբ և բանասիրական հմտալից աշխատանքով որոշված և Հայաստանի քարտեզի վրա տեղադրված են Արտաշատից դուրս եկող ու դեպի Սատաղ, Տիգրանակերտ, Սեբաստապոլիս, Պարսկաստան գնացող ճանապարհները, ճշտված ու վերականգնված են այդ ճանապարհների վրա «Պևտինգերյան քարտեզում» նշված, բայց հետագա արտագրողների կողմից խիստ կերպով աղավաղված կայարանների անունները, տրված է կայարանների միջև եղած հեռավորությունը և այլն: Գրքի հավելվածում հետազոտված ու ճշտված է նաև Դվինից—Պարտավ ճանապարհի երթուղին: Հետագա տարիներին Հ. Մանանդյանը պատմական-աշխարհագրական ուշագրավ մանր հետազոտություններ է գրում նաև Հայասա, Նաիրի, Ուրուատրի երկրների և Դարեհ I-ի արձանագրության մեջ հիշատակվող Արմինա երկրի տեղադրության, ինչպես և Ասորեստանի Սալմանասար 3-րդ ու Սարգոն 2-րդ թագավորների դեպի Ուրարտու, Պոմպեոսի դեպի Անդրկովկաս և Հերակլ կայսեր դեպի Պարսկաստան կատարած արշավանքների երթուղիների մասին[18]:

Հ. Մանանդյանին մեծ չափով հետաքրքրել և հուզել է նաև Մովսես Խորենացու ժամանակի հարցը: Նա այդ խնդրին անդրադարձել է մի քանի անգամ և նրան է նվիրել իր «Խորենացու առեղծվածի լուծումը» (Երևան, 1934), „Когда и кем была составлена „Армянская география", приписываемая Моисею Хоренскому"[19] և «Նոր դիտողություններ Խորենացու պատմության բառապաշարի մասին»[20] բանասիրական ուսումնասիրությունները:

Մեծ մասամբ հենվելով Խորենացուն վերագրված «Աշխարհացույցի» տվյալների վրա, պատմահոր նախորդ քննադատներից շատերը այն սխալ կարծիքն էին հայտնել, որ Մովսես Խորենացին ոչ թե 5-րդ դարի, այլ 7-րդ դարի պատմիչ է: Ընթանալով այս նույն ճանապարհով և իր կողմից բերելով մի շարք չհիմնավորված փաստարկումներ ու համեմատություններ, Հ. Մանանդյանը գալիս է այն եզրակացության, որ Մովսես Խորենացին 9-րդ դարի պատմիչ է: Հակառակ իր այս սայթաքիչ սխալին, Հ. Մանանդյանը շատ բարձր

---

[17] *Հայաստանի հին ճանապարհները.* Artaxata—Satala և Artaxata—Tigranocerta *ըստ Պևտինգերյան քարտեզի, «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1931, № 5: Մանր հետազոտություններ. Պևտինգերյան քարտեզի* Hariza *կայարանը, Երևան, 1932:*

[18] *Պատմական աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944,* Круговой путь Помпея в Закавказья, „Вестник древ. истории", 1939, № 4. Маршрут л персидских походов императора Ираклия, „Византийский временник", т. III, 1950:

[19] «Византийский временник», т. I, 1947.

[20] *«Էջմիածին», 1955, № 5:*

կարծիք է ունեցել Մ. Խորենացու և նրա կոթողային Հայոց պատմության մասին: Դրա լավագույն ապացույցն այն է, որ նա իր պատմագիտական գրեթե բոլոր աշխատություններում լայնորեն օգտագործել է պատմահոր տվյալները հայոց հին պատմության դժվարին ու մութ հարցերը լուսաբանելու համար: Մ. Խորենացու Հայոց պատմության կարևորագույն աղբյուրներից մեկին է վերաբերում նաև Հ. Մանանդյանի „Начальная история Армении Мар-Абаса"[21] հետմահու հրատարակված հոդվածը: Պատմահայրը ինքն է հայտնում, որ իր երկի առաջին և երկրորդ գրքերի շարադրման համար իբրև հիմնական աղբյուր օգտագործել է ասորի գիտնական Մար-Աբաս Կատինայի «Հայոց նախնական պատմություն» աշխատությունը: Կասկածանքով մոտենալով ու ժխտելով այն ամենը, ինչ կապված է Խորենացու անվան հետ, «գերքննադատներից» ոմանք հանգել էին այն եզրակացության, որ Մար-Աբաս Կատինան և նրա աշխատությունը իրականության մեջ գոյություն չեն ունեցել, և դրանք մտացածին կերպով հնարվել են Մովսես Խորենացու կողմից: Հակառակ այդ կարծիքին, Հ. Մանանդյանը իր հոդվածում ապացուցում է, որ Մար-Աբաս Կատինան ասորի իրական հեղինակ է եղել, որը ապրել է 4-րդ դարում Հայաստանի Մծուրն քաղաքում (դրա համար էլ կոչվել է նաև Մծուրնացի), և որ նրա «Հայոց նախնական պատմությունից» օգտվել են Մովսես Խորենացին, Սեբեոսը և Պրոկոպիոս Կեսարացին:

Հ. Մանանդյանի հետաքրքրությունների շրջանակը շատ մեծ էր: Իր հիմնական մենագրություններին զուգընթաց նա գրում է նաև պատմական առանձին դեպքերի ժամանակագրության ճշտման[22], Արմավիրում ու Գառնիում հայտնաբերված հունարեն արձանագրություններին[23] և հայ ժողովրդի պատմության հարցերին[24] նվիրված զգալի թվով արժեքավոր ուսումնասիրություններ:

Հ. Մանանդյանի աշխատությունները մեծ հեղինակություն են ընտեղծում նրա համար ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև Սովետական Միության գիտական լայն շրջաններում: 1939 թ. նա ընտրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Դա ականավոր գիտնականի աշխատությունների արժեքավորումը, նրա վաստակի գնահատումն էր: Երբ 1943 թ. հիմնադրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, Հ. Մանանդյանը հաստատվում է ակադեմիկոսների առաջին կազմում:

Կրկնվող հիվանդության (ջերմախտ) և առաջացած տարիքի պատճառով թեև Հ. Մանանդյանը, հատկապես թոշակի անցնելուց հետո (1931 թ.), զգալի չափով կտրված էր հասարակական կյանքից և խուսափում էր ամեն տեսակի ժողովներից, բայց հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի նշանակալից հոբելյաններին միշտ մասնակցում էր գիտական զեկուցումներով:

«Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ նա կարդում է «ժողովրդական ապստամբությունները արաբական տիրապետության դեմ» (Երևան, 1939), Սովետական Հայաստանի 20-ամյակի առթիվ՝ «Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность» (Ереван, 1941), Երևանի պետական համալսարանի 20-ամյակի առթիվ՝ «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում» (Երևան, 1940), իսկ 25-ամյակի առթիվ՝ «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ» (Երևան, 1946) արժեքավոր գիտական զեկուցումները:

1940 թ. Հ. Մանանդյանը ընտրվում է Երևանի քաղաքային սովետի դեպուտատ: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թ. հունիսի 13-ի հրամանագրով նա պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: 1948 թ. դեկտեմբերի 2-ին Սովետական Հայաստանի գիտական հասարակության կողմից հանդիսավոր կերպով նշվում է ակադ. Հ. Մանանդյանի ծննդյան 75-ամյակը:

Իր կյանքի վերջին տարիներին ակադ. Հ. Մանանդյանը գրում է «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր կապիտալ աշխատությունը: Առաջին հատորն ընդգրկում է հայ

[21] *Տե՛ս* «Палестинский сборник», вып. 2 (64—65), 1956:

[22] *Տե՛ս ա) Մանր հետազոտություններ, 3. Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ), Երևան, 1932, բ)* Новые данные о времени разрушения Ганджи монголами, Изв. Азерб. фил. АН СССР, 1934, № 7, էջ 79—80:

[23] *Տե՛ս ա) Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, բ) Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, գ)* Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, *«Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ., 1951, № 4, էջ 9—35:*

[24] *Տե՛ս ա)* Возрожденная Армения (ист. очерк), «Советская наука», 1939, № 12, *էջ* 141—145, *բ)* Актуальные вопросы историография древней Армении, «Историк Марксист.», кн. 6, *էջ* 3—8, *գ) Համառոտ տեսություն հին Հայաստանի պատմության, «Լրաբեր», 1956, №№ 6, 7, 8, 9, 11, 12, 1957, № 1:*

ժողովրդի ծագումից մինչև Արշակունյաց թագավորության հաստատումը (66 թ.): Երկրորդ հատորի առաջին մասը նվիրված է Արշակունյաց թագավորությանը, իսկ երրորդ հատորը՝ 11—15-րդ դարերի պատմությանը[25]: Երկրորդ հատորի երկրորդ մասը, որը նվիրված պետք է լիներ մարզպանության, արաբական խալիֆայության և Բագրատունյաց թագավորության տիրապետության շրջաններին, դժբախտաբար անվանի գիտնականը չհասցրեց գրել վերահաս մահվան պատճառով, թեև այդ մասի նյութերը ևս մեծ մասամբ պատրաստ էին:

Մանրազնին կերպով քննարկելով և հաճախ վերաարժեքավորելով սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, Հ. Մանանդյանը «Քննական տեսության» բոլոր հատորներում ոչ միայն տվել է հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության ընդարձակ, սիստեմատիկ գիտական շարադրանքը, բացահայտել պատմական դեպքերի ներքին փոխադարձ պատճառական կապը, կատարել տեղագրական ու ժամանակագրական ճշտումներ, այլև նոր խոսք է ասել հանգուցային բազմաթիվ հարցերի կապակցությամբ: Թեև աշխատությունը մեծ մասամբ նվիրված է Հայաստանի քաղաքական պատմությանը, բայց դա, միաժամանակ, անվանի գիտնականի պատմագիտական նախորդ աշխատությունների փայլուն ընդհանրացումն ու հարդագումարն է: «Աշխատության հիմքը,—գրում է Հ. Մանանդյանը առաջին հատորի առաջաբանում,—կազմում են իմ՝ Երևանի պետական համալսարանում 1920—1930 թթ. կարդացած դասախոսությունները, որոնք հիմնովին վերամշակված են ու խիստ ընդարձակված համաձայն պատմագիտական հետագա իմ երկասիրությունների նոր տվյալների ու եզրակացությունների»[26]: Հ. Մանանդյանը «Քննական տեսության» մեջ, չնայած այստեղ ևս գոյություն ունեցող առանձին սխալներին, թերություններին ու վիճելի հարցերին, հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության գիտական ուսումնասիրությունը հասցրել է մի նոր, բարձր աստիճանի:

Հ. Մանանդյանը գիտության մեջ չի ընթացել տրորված ճանապարհներով: Հին և ժամանակակից բազմաթիվ լեզուներին տիրապետելը, բանասիրական, պատմագիտական, իրավագիտական ու տնտեսագիտական փայլուն գիտելիքները, կուռ տրամաբանությունը, խորաթափանց ու որոնող միտքը նրան միշտ հնարավորություններ են տվել նոր խոսք ասելու իր գրած բոլոր երկասիրություններում:

[25] *Երևան, Ա. հատոր, 1945, Բ հատոր, առաջին մաս, 1957, Գ հատոր, 1952,*
[26] *Ա. հատոր, էջ 5:*

Հայ պատմագրության և բանասիրության մեծ երախտավոր ակադ. Հ. Մանանդյանը վախճանվեց 1952 թ. փետրվարի 4-ին, 79 տարեկան հասակում: Սովետական Հայաստանի կառավարության որոշումով նա թաղված է Երևանի պետական համալսարանի շենքի բակում:

Մեծ է և անգնահատելի ակադ. Հ. Մանանդյանի թողած գիտական ժառանգության արժեքը: Ճիշտ է նկատել սովետական ականավոր պատմաբան, ակադ. Բ. Գրեկովը, որ Հ. Մանանդյանը «իր հայրենի երկրի պատմության համար արել է ավելին, քան նրա շատ նախորդները»[27]:

* * *

95 թ. մ. թ. ա. հայկական գահն է բարձրանում հին Հայաստանի ամենանշանավոր պատմական դեմքերից մեկը՝ Տիգրան 2-րդը, որին պատմագրության մեջ հաճախ անվանում են նաև Տիգրան Մեծ (95—56): Նրա ժամանակ Հայաստանը հասնում է իր քաղաքական հզորության ամենաբարձր կետին և դառնում Առաջավոր Ասիայի ուժեղագույն տերություններից մեկը: Մ. Խորենացին, խոսելով Տիգրան 2-րդի մասին, բայց շփոթելով նրան Կյուրոս Մեծի ժամանակվա Տիգրան Երվանդյանի հետ, գրում է. «...Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջը: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց... Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. ոսկու, արծաթի, պատվական քարերի, զգեստների և զանազան գույների գործվածքների՝ հարստություններ... առհասարակ բազմացրեց»[28]:

Տիգրան 2-րդի ժամանակաշրջանը միաժամանակ քաղաքական բուռն ու փոթորկահույզ իրադարձությունների, փառավոր հաղթանակների ու դառն պարտությունների, Արևելքում Հռոմի նվաճողական քաղաքականության դեմ մղվող հերոսական պայքարի մի ժամանակաշրջան էր:

[27] *Տե՛ս «Բանբեր մատենադարանի», ժողովածու, գիրք Բ, կազմեց Ա. Աբգարյանը, Երևան, 1960, էջ 471:*
[28] *Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 110—111:*

Հայ ժողովրդի պատմության այս շատ նշանակալից, հանգուցակետային ժամանակահատվածի ուսումնասիրմանն է նվիրված ակադ. Հ. Մանանդյանի՝ 1940 թ. լույս տեսած «Տիգրան Բ և Հռոմը» մենագրությունը, որը հետագայում թարգմանվել է նաև ռուսերեն[29] ու ֆրանսերեն[30]:

Նախքան այս աշխատությունը, Տիգրան 2-րդի գահակալության ժամանակաշրջանի պատմությունը սեղմ և միջանկյալ կերպով ուսումնասիրվել է արևմտաեվրոպական պատմաբանների, հատկապես Թ. Մոմզենի, Թ. Ռեյնաքի և Գ. Ֆեռեռոյի՝ Հռոմի կամ Պոնտոսի պատմությանը նվիրված երկերում: Սրանք, անտեսելով փոքրասիականհելլենիստական չեզոք աղբյուրներում պահպանված վկայությունները և մեծ մասամբ հիմնվելով Հռոմի սպասարկու ու ջատագով, իսկ Հայաստանի ու Պոնտոսի նկատմամբ թշնամաբար տրամադրված հռոմեական պատմիչների հաղորդած կասկածելի, միտումնավոր, չարամիտ և գունավորված տեղեկությունների վրա, աշխատել են անտեսել հայկական պետության դերն ու նշանակությունը այդ ժամանակվա Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում, Տիգրան Մեծին համարել են պատմական մի աննշան դեմք, որը լոկ գործիք է եղել իր դաշնակցի՝ Միհրդատ Պոնտացու ձեռքին և գործել է նրա թելադրանքով: Սրանք պաշտպանել են նաև այն տեսակետը, որ Միհրդատ Պոնտացու և Տիգրանի պատերազմները Հռոմի դեմ հանդիսացել են բարբարոս, հետադեմ Արևելքի ընդվզումները քաղաքակրթող ու առաջադեմ հռոմեական էքսպանսիայի դեմ:

Հ. Մանանդյանը իր աշխատության մեջ հանդես է գալիս վերոհիշյալ գիտնականների հակապատմական կոնցեպցիայի դեմ:

Հ. Մանանդյանը առաջին պատմագետներից մեկն է, որ այս մենագրության մեջ նախ գիտական քննության և վերագնահատման է ենթարկում հռոմեական սկզբնաղբյուրները, ցույց տալիս Տիգրան Մեծի և Հայաստանի մասին նրանց հաղորդած տեղեկությունների միակողմանի, միտումնավոր, հաճախ նաև ստահոդ լինելը: Ինչպես իր բոլոր երկերում, նույնպես և այստեղ նա ոչ մի սկզբնաղբյուրի վկայություն չի օգտագործում, եթե չի պարզում դրա արժանահավատությունը, իրական կամ հավանական լինելը: Այդ նպատակով նա շատ հաճախ մեջ է բերում միևնույն պատմական դեպքի կամ հարցի մասին տարբեր սկզբնաղբյուրներում պահպանված բոլոր

[29] Я. А. Манандян, Тигран Второй и Рим, перев. А. А. Паповяна, Ереван, 1943.

[30] Hagop Manandian, Tigran II et Rome, trad. par H. Thorossian, Lisbonne, 1963.

վկայությունները, համեմատում է դրանք իրար հետ, քննարկում, ապա նոր միայն տալիս իր եզրակացությունը: Սկզբնաղբյուրների ու գիտական գրականության նկատմամբ քննական մոտեցում ունենալու, դրանք քննադատաբար օգտագործելու և պատմական իրադարձությունները նոր լուսաբանությամբ շարադրելու տեսակետից Հ. Մանանդյանի այս գիրքը դասական մի օրինակ է, որից շատ բան ունի սովորելու սովետահայ պատմաբանների նոր սերունդը:

Թ. Մոմզենի, Թ. Ռեյնաքի, Գ. Ֆեռեռոյի և եվրոպական մյուս պատմաբանների մոտեցման արատավոր կողմն այն է, որ նրանք Տիգրան 2-րդի գործունեությունը ուսումնասիրել են հայ ժողովրդի նախորդ դարաշրջանի պատմությունից բոլորովին կտրված, իբրև մի միջադեպ կամ հավելուկ Հռոմի կամ Պոնտոսի պատմության: Պատմագիտության մեջ Հ. Մանանդյանի սույն աշխատությունը առաջինն է, որտեղ Տիգրան 2-րդի դարաշրջանը տրված է ոչ միայն միջազգային հարաբերությունների լայն ֆոնի վրա, այլև հայ ժողովրդի նախորդ ժամանակաշրջանի պատմության, Հայաստանի տնտեսության, քաղաքների ու մշակույթի զարգացման հետ ունեցած սերտ ու փոխադարձ կապի մեջ:

Տալով Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I-ի ժամանակաշրջանի պատմության սեղմ, գիտական շարադրանքը, Հ. Մանանդյանը միանգամայն ճիշտ կերպով նկատում է, որ հայկական հողերի առաջին միավորողը, հայկական պետության հզորության սկզբնավորողը հանդիսացել է Արտաշես I-ը, և որ արդեն նրա ժամանակ Հայաստանը «դառել էր Առաջավոր Ասիայի հզոր պետություններից մեկը»[31]: Գրքում բերված փաստերից դժվար չէ եզրակացնել, որ Տիգրան Մեծի խոշոր նվաճումները, Հայաստանը Առաջավոր Ասիայի մեծ ու հզոր տերության վերածվելը ոչ միայն արտաքին նպաստավոր պայմանների, ոչ միայն Տիգրան Մեծի վարչական, ռազմական ու դիվանագիտական ընդունակությունների, այլև նախորդ դարաշրջաններում Հայաստանում կուտակված տնտեսական միջոցների, երկրի արտադրողական ուժերի, քաղաքների ու արհեստագործության զարգացման հետևանք էին: Տիգրան 2-րդը փաստորեն հանդիսանում էր իր պապի՝ Արտաշես I-ի վարած ներքին ու արտաքին քաղաքականության շարունակողը, սակայն այն տարբերությամբ, որ նա նոր պայմաններում այդ քաղաքականությունը վարում էր ավելի եռանդուն և ավելի մեծ մասշտաբներով: Պատմական փաստերին և տարրական տրամաբանությանն իսկ հակա-

[31] *Տիգրան Բ և Հռոմը, էջ 24:*

սում են և լոկ հերյուրանքներ են արևմտաեվրոպական պատմաբանների այն պնդումները, որ, իբր թե, Տիգրան 2-րդի նվաճումները և նրա ընդարձակ տերության առաջացումը միայն պատահականության արդյունք էին:

Գրքում նոր և ավելի ընդունելի լուսաբանություն է տրված մ. թ. ա. 93 թ. կնքված հայ-պոնտական դաշնագրին: Ըստ Հ. Մանանդյանի՝ այս դաշնագիրը ուղղված էր միայն Կապադովկիայի դեմ: Սակայն դժվար չէ նկատել, որ այն ուղղված էր նաև այդ երկրում գոյություն ունեցող հռոմեական ազդեցության, հետևաբար և Հռոմի դեմ: Կապադովկիան գրավելով և այն Պոնտոսին միացնելով, Միհրդատ Պոնտացին և Տիգրան Մեծը, անշուշտ, ձգտում էին նաև հարևան այդ երկրում վերացնել հռոմեական ազդեցությունը և ռազմա-ստրատեգիական ավելի նպաստավոր դիրք գրավել Հռոմի դեմ ապագա հնարավոր պատերազմի ժամանակ: Ճիշտ է նկատել Հ. Մանանդյանը, որ այս դաշնագիրը չէր վերաբերում հռոմեական-պոնտական հետագա պատերազմներին, ուստի սխալ է Թ. Մոմզենի, Ժ. Մորգանի և ուրիշների՝ Տիգրանի դեմ ուղղված այն մեղադրանքը, ըստ որի այդ պատերազմների ժամանակ Տիգրանը, չօգնելով Միհրդատին, խախտել է նրա հետ կնքած դաշինքը[32]:

Մենագրության տարբեր էջերում հաջող կերպով ցույց է տրված, որ հռոմեացիների Փոքր Ասիա ներխուժելուց դեռևս շատ առաջ Հայաստանում, առավել ևս Պոնտոսում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում զարգացած ու տարածված էին հելլենիստական մշակույթը և քաղաքակրթությունը, այդ երկրներում գոյություն ունեին բազմամարդ, վաճառաշահ, հարուստ ու փարթամ բազմաթիվ քաղաքներ, ճարտարապետական ու արվեստի հոյակապ հուշարձաններ: Այստեղից հետևում է, որ Մերձավոր Արևելքի ժողովուրդները հետադեմ բարբարոսներ չէին, ուստի և հռոմեական նվաճումները այստեղ ոչ մի առաջադիմական ու քաղաքակրթական նշանակություն չէին կարող ունենալ: Հ. Մանանդյանը իրավացիորեն գրում է, վերջին շրջանի հռոմեական-պոնտական, ինչպես և հռոմեական-հայկական «կռիվները, որ սկսել էին հանրապետական Հռոմի զորավարներն արևելյան երկրների ավազակային կողոպտման և ֆինանսական շահագործման նպատակով, մղվում էին ոչ թե բարբարոս միացյալ Արևելքի, այլ երկու կիրթ ու առաջադեմ միապետների դեմ, որոնք թե իրենց երկրներում և թե ամբողջ Մերձավոր Արևելքում աշխատում էին զարկ տալ հելլենիստական քաղաքային կենցաղի ու կուլտուրայի և առևտրի ու արդյունաբերության նոր բարգավաճման ու բուռն զարգացման»[33]: Պետք է ավելացնել նաև, որ այդ պատերազմները Հայաստանի և Պոնտոսի կողմից արդարացի պատերազմներ էին, այնքանով, որքանով որ հռոմեացիները ոչ թե կռվում էին այդ երկրների ժողովուրդների ազատագրության, այլ նրանց նվաճման, ստրկացման և դաժան շահագործման, նրանց պետական անկախության վերացման համար:

Թ. Մոմզենը և Թ. Ռեյնաքը Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը միայն Տիգրան 2-րդի մեծամիտ ու քմահաճ հրամանի արդյունքն են համարել: Այս կապակցությամբ նրանք Տիգրանին անվանել են նոր Սալմանասար կամ սուլթան, իսկ Տիգրանակերտը համեմատել են Բաբելոնի ու Նինվեի հետ[34]: Հ. Մանանդյանը շատ հեշտությամբ հերքում և ապացուցում է, որ Տիգրանակերտը ոչ թե հին արևելյան, այլ հելլենիստական տիպի քաղաք էր: Գրքում բերված բազմաթիվ փաստերից ընթերցողը ինքը ևս հեշտությամբ կարող է համոզվել, որ Տիգրան Բ-ն ոչ թե արևելյան տիպի բռնապետ էր, այլ հելլենիստական տիպի միապետ, որը մեծապես գնահատում ու հովանավորում էր հելլենիստական մշակույթը, սատարում քաղաքների զարգացմանը: Բացի գրքում բերված փաստերից, շատ ուշագրավ է նաև Հ. Մանանդյանին անհայտ մնացած այն փաստը, որ Ասորիքի Լաոդիկեա, Բերիտ, Ապամեա և այլ քաղաքներ իրենց ինքնավարական ազատությունն ու դրամ կտրելու իրավունքը վերստացել են Տիգրան Մեծից, որոնցից նրանք առաջներում զրկված են եղել[35]: Հայտնի է, որ Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը և Ասորիքի մի շարք քաղաքներ իրենք էին հրավիրել Տիգրան 2-րդին և հոժարակամ ընդունել նրա տիրապետությունը: Այս երևույթը, բացի գրքում նշված պատճառներից, անշուշտ, պետք է բացատրել նաև նրանով, որ Տիգրան 2-րդը բարյացակամ վերաբերմունք է ունեցել Ասորիքի հելլենիստական քաղաքների նկատմամբ:

Տիգրան 2-րդի կողմից Կապադովկիայի Մաժաք մայրաքաղաքից և իր տիրապետության տակ գտնվող երկրների հելլենիստական բազմաթիվ քաղաքներից մոտ 500000 բնակիչների բռնի ուժով Հայաստան տեղափոխելը և նրանց Տիգրանակերտում ու Հայաստանի մյուս քաղաքներում վերաբնակեցնելը Թ. Մոմզենը համեմատել է Սալմանասարի ու Նաբուգոդոնոսորի կողմից դեպի Նինվե ու Բաբելոն տարված հրեական մեծ գերեվարությունների հետ[36]: Այս հա-

[32] *Տիգրան Բ և Հռոմը, էջ 35:*

[33] *Նույն տեղում, էջ 11:*

[34] Т. Моммзен, История Рима, т. III, М., 1941, *էջ* 44; Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, *էջ* 345:

[35] *Տե՛ս Գ. Սարգսյան, Հելլենիստական գարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 50:*

[36] Т. Моммзен, *Նույն տեղում:*

մեմատությունը ևս հակապատմական է և սխալ: Եթե Նինվե կամ Բաբելոն տարված հրեաները ազատազրկված ու ստրկացված գերիներ էին, ապա Հայաստան բերված հույները, հրեաները, ասորիները և այլն, մեծ մասամբ ոչ թե գերեվարված ստրուկներ, այլ իրենց ընտանիքներով ու շարժական ունեցվածքով փոխադրված, իրենց նախկին գործերով զբաղվող, իրենց բնակության նոր քաղաքներում Տիգրան Մեծից հող, արտոնություններ, գուցե և բնակարաններ ստացած, անձնապես ազատ, բայց և իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու իրավունքից զրկված արհեստավորներ, առևտրականներ և քաղաքային բնակիչներ էին: Բացի այս, Ս. Կրկյաշարյանը արդեն ճիշտ կերպով ցույց է տվել, որ հելլենիստական երկրներում միապետների կողմից հին քաղաքների ու բնակավայրերի բնակչությունը բռնի կերպով կամ զանազան արտոնություններ տալու միջոցով իրենց հիմնադրած նոր քաղաքները տեղափոխելը տարածված ու սովորական մի երևույթ է եղել, որը հունարեն կոչվել է «սինոյկիսմոս», այսինքն՝ «համաբնակեցում»[37]: Դժվար չէ նկատել, որ Հայաստանում քաղաքային կյանքը զարգացնելու և իր հիմնադրած մայրաքաղաքը որակյալ բնակիչներով ապահովելու նպատակով Տիգրան Մեծը գուցե մի քիչ ավելի խիստ ու դաժան ձևերով կատարել է այն, ինչ որ գոյություն ուներ Արևելքի հելլենիստական մյուս երկրներում իրենից առաջ և իր ժամանակ:

Պատմական իրադարձությունների անկողմնակալ շարադրանքով Հ. Մանանդյանը համոզեցուցիչ կերպով ցույց է տվել նաև, որ Տիգրան Մեծը ոչ թե հլու մի գործիք է եղել Միհրդատ Պոնտացու քաղաքական նպատակների իրագործման համար, այլ վարել է միանգամայն ինքնուրույն, հայ իշխող դասակարգի և հայկական պետության շահերից բխող արտաքին քաղաքականություն:

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համեմատական քննությամբ գրքում ավելի ճիշտ և նոր լուսաբանությամբ են շարադրված հայ-հռոմեական պատերազմների, մղած ճակատամարտերի ընթացքն ու արդյունքները, ճշտված են կողմերի ունեցած ուժերը, բացահայտված են Տիգրանակերտի ճակատամարտում հայկական, իսկ Արածանիի ճակատամարտում հռոմեական բանակի պարտության ու նահանջի պատճառները, հանգամանորեն վերլուծված է հայ-հռոմեական հաշտության դաշնագիրը և նրա ունեցած բացասական նշանակությունը Հայաստանի համար և այլն: Հաջող կերպով ճշտված են նաև ինչպես Լուկուլլոսի դեպի Հայաստան,

[37] Ս. Մ. Կրկյաշարյան, *Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ*, Երևան, 1970, էջ 169—192:

նույնպես Պոմպեոսի դեպի Հայաստան, Իբերիա և Սղվանք կատարած ռազմական արշավանքների երթուղիները:

Միանգամայն ճիշտ քննադատության ենթարկելով Թ. Մոմզենի, Թ. Ռեյնաքի և Գ. Ֆեռեոյի հակագիտական տեսակետները, ինքը՝ Հ. Մանանդյանը սակայն, երբեմն իդեալականացնում է Տիգրան Մեծին և Միհրդատ Պոնտացուն, գերագնահատում նրանց պատմական դերը: Գրքում որոշ չափով մոայլ ու խտացված գույներով են տրված Հռոմի նվաճումները Արևելքում և դրանց հետևանքները, չափազանցված է Հռոմի բացասական դերը Մերձավոր Արևելքի երկրներում հելլենիստական քաղաքակրթության ու մշակույթի ոչնչացման բնագավառում: Նշված այս չափազանցությունները, անկասկած, մասամբ աշխատության շարադրանքի բանավիճային բնույթի հետևանք են:

Հ. Մանանդյանի կարևոր երախտիքներից մեկն այն է, որ նա իր այս և մյուս աշխատություններում հիմնավորապես ցույց տվեց, որ դեռևս մ. թ. ա. 3-րդ դարից հելլենիզմը մուտք էր գործել և իր ոլորտի մեջ էր առել նաև Հայաստանը. հայ իշխող դասակարգի ու քաղաքային բնակչության շրջանում զգալի չափով տարածված էր հունարեն լեզուն, հունական դասական գրականությունը, դիցաբանությունը, հելլենիստական մշակույթը ու արվեստը, հայկական արքունիքում էին ապրում և Տիգրան Մեծի կողմից հովանավորվում էին հելլենիստական մշակույթի մի շարք խոշոր ներկայացուցիչներ, Արտաշատում ու Տիգրանակերտում գոյություն ունեին հելլենիստական թատրոններ, որտեղ բեմադրվում էին հույն դասական դրամատուրգների, հավանաբար նաև Արտավազդ 2-րդի գրած ողբերգությունները, հայկական հեթանոսական պանթեոնը ստացել էր հելլենիստական տեսք, հայկական պանթեոնի աստվածները նույնացվել էին հունական համապատասխան ֆունկցիա ունեցող աստվածների հետ և անվանվում էին նրանց անունով, ինչպես, օրինակ, Արամազդը նույնացված էր Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Տիրը՝ Ապոլլոնի, Վահագնը՝ Հերակլեսի հետ: Հ. Մանանդյանը ցույց տվեց նաև, որ հելլենիզմի դարաշրջանում Մերձավոր Արևելքի երկրներում տեղի ունեցող քաղաքաշինարարության բուռն ու անընդհատ զարգացումը այս կամ այն չափով հատուկ է եղել նաև Հայաստանին, և որ Հայաստանում այս ժամանակաշրջանում առաջացել էին Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Արշամաշատ, Արկաթիոկերտ, Տիգրանակերտ, Զարիշատ, Զարեհավան, Վան, Նախճավան, Մծուրն, Վաղարշապատ խոշոր քաղաքներն ու մոտ երկու տասնյակ քաղաքատիպ ավաններ:

Որ իրոք հելլենիստական մշակույթը և արվեստը տարածված են եղել Հայաստանում՝ հաստատում են ոչ միայն այդ ժամանակաշրջանից մեզ հասած ճարտարապետական հուշարձանները, այլև Արմավիրի, Արտաշատի, Գառնիի, հին Վաղարշապատի և այլ վայրերի պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական իրերը:

Սովետահայ պատմաբանների նոր սերնդի ներկայացուցիչները հելլենիստական դարաշրջանի Հայաստանի հասարակական-դասակարգային, պետական, տնտեսական, տաճարական միավորումների կամ համայնքների կառուցվածքում, իշխող դինաստիայի պաշտամունքի և այլ բնագավառներում բացահայտեցին հարանման այնպիսի երևույթներ, որոնք հատուկ են եղել Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրներին: Նրանք ապացուցեցին նաև, որ հին Հայաստանի քաղաքները իրենց հիմնադրման ձևերով, ներքին կառուցվածքով, սոցիալ-դասակարգային բնույթով եղել են ոչ թե արևելյան կամ ֆեոդալական, այլ հելլենիստական տիպի քաղաքներ[38]: Արդեն այժմ կարելի է ասել, որ թեև ավելի թույլ զարգացած ձևով և տեղական առանձնահատկություններով հանդերձ, Արտաշեսյան թագավորության շրջանում Հայաստանում գոյություն են ունեցել հասարակական ու պետական նույն կարգերը, ինչ որ Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրներում:

Հետևելով արևմտաեվրոպական պատմագրությանը, Հ. Մանանդյանը հելլենիզմը համարում է լոկ մշակութային և քաղաքակրթական երևույթ, իսկ քաղաքները՝ արհեստագործության, առևտրի ու լուսավորության կենտրոններ, առանց հաշվի առնելու նրանց սոցիալական բովանդակությունը: Թեև նա ընդունում է հելլենիզմի ու

[38] *Տե՛ս* С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении эллинистический период, *ԳՀ «Տեղեկագիր», 1948, № 11*, *նույնի* О рабстве и рабовладении в древней Армении, «Вестник древней истории», 1950, *№ 1*, *նույնի* Развитие городов и городской жизни в древней Армении, «Вестник древней истории», 1953, *№ 3*, Г. Х. Саркисян, Градостительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев, *ԳՀ «Տեղեկագիր», 1955, № 2*, *նույնի* Из истории городской общины в Армении, «Вестник древней истории», 1955, *№ 3*, *նույնի* Тигранакерт, М., 1960, *Ֆ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, նույնի Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966*, А. Г. Периханян, Храмовы объединения в Малой Азии и Армении, М., 1959, *Ս. Մ. Կրկյաշարյան, Թագավորական իշխանությունը հին Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 3*, *նույնի Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970*:

ստրուկների առկայությունը, բայց և մերժում է ստրկատիրական հասարակարգի գոյությունը հին Հայաստանում: Նա այս աշխատության մեջ Արտաշեսյան թագավորության, ուստի և Տիգրան 2-րդի ժամանակաշրջանը համարում է ֆեոդալական, իսկ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» մեջ՝ «ռազմական դեմոկրատիայի շրջան», այսինքն՝ տոհմատիրական կարգերից դեպի դասակարգային հասարակության (իմա՝ ֆեոդալական հասարակարգի) անցման ժամանակաշրջան: Անվանի գիտնականի վերոհիշյալ տեսակետները գիտականորեն հիմնավորված չեն, ուստի և անընդունելի են:

Մարքսիստական պատմագրությունը հելլենիզմը համարում է ստրկատիրական հասարակարգի նոր և ավելի բարձր աստիճանը Արևելքում, որն առաջացել էր հին հունական և արևելյան սոցիալ-տնտեսական նույնատիպ, բայց առանձնահատուկ, ինքնուրույն գծեր ունեցող հարաբերությունների համաձուլումից: Ելնելով մեզ հասած տվյալներից, կարելի է եզրակացնել, որ Արտաշեսյան թագավորության ժամանակաշրջանում Հայաստանում տիրում էին հելլենիստական տիպի, բայց համեմատաբար ավելի թույլ զարգացած ստրկատիրական կարգեր: Զանց առնելով մյուս փաստերը, միայն կարելի է նշել, որ հին Հայաստանում մեծ թվով քաղաքների առաջացումն ու զարգացումը ոչ թե «ռազմական դեմոկրատիայի» կամ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջաններին, այլ ստրկատիրական կարգերին հատուկ ու բնորոշ երևույթ էր: Թե՛ «ռազմական դեմոկրատիայի շրջանը» և թե՛ վաղ ֆեոդալիզմը, լինելով բնամթերային, փակ ու մեծ մասամբ ինքնաբավ տնտեսության ժամանակաշրջաններ, հասկանալի է, որ նրանցում սոցիալ-տնտեսական անհրաժեշտ պայմաններ չկային մեծ թվով քաղաքների առաջացման համար: Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում քաղաքների առաջացումն ու զարգացումը հասարակական աշխատանքի բաժանման և ստրկատիրական հարաբերությունների հետագա խորացման, արտադրողական ուժերի ընդհանուր վերելքի, առևտրի ու դրամական շրջանառության զարգացման բնական հետևանքն էին: Քաղաքները հանդիսանում էին ոչ միայն արհեստագործության, առևտրի և հայկական հելլենիստական մշակույթի, այլև ստրկատիրության հիմնական կենտրոններ: «Կլասիկ հնության պատմությունը,—ասում է Կ. Մարքսը,—դա քաղաքների պատմությունն է, բայց քաղաքների պատմություն հիմնված հողային սեփականության և երկրագործության վրա»[39]:

[39] К. Маркс, Формы предшествующие капиталистическому производству, М., 1940, ст. 13.

Սակայն վերևում նշված մասնակի թերությունները երբեք չեն նսեմացնում գրքի գիտական խոշոր արժեքը: Թեև «Տիգրան Բ և Հռոմը» աշխատության առաջին հրատարակությունից անցել է ավելի քան 30 տարի, սակայն այն մինչև այժմ էլ մնում է Տիգրան Մեծի և նրա դարաշրջանի մասին գրված լավագույն մենագրությունը: Դա ակադ. Հ. Մանանդյանի գրած կոթողային ու դասական աշխատություններից, սովետահայ պատմագրության ոսկյա ֆոնդում նրա ներմուծած մնայուն արժեքներից մեկն է:

Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

1. ԱՌԱՋԱԲԱՆ

Հին Հայաստանի պատմությունը Տիգրան երկրորդի շրջանում ուսումնասիրված է սեղմ ու միջանկյալ կերպով, գլխավորապես եվրոպական գիտնականների այն երկերում, որոնց մեջ քննության է առնված ո՛չ թե հատկապես Հայաստանի, այլ հռոմեական հանրապետության և կամ պոնտական թագավորության պատմությունը: Պատմագիտական այդ աշխատություններից ամենից կարևորներն են—գերմանական, ֆրանսիական և իտալական երեք խոշորագույն գիտնականների՝ Մոմզենի, Ռեյնաքի և Ֆերռերոյի՝ համապատասխան երկերը[1]: Բացի այդ, Լուկուլլոսի հայկական արշավանքները մանրամասն ուսումնասիրված են նաև Լեման-Հաուպտի աշակերտ Կուրտ Էքհարդի ընդարձակ աշխատության մեջ, որը տպագրված է գերմանական «Կլիո» հայտնի հանդեսում (հատ. IX, 1909 թ. և հատ. X, 1910 թ.)[2]:

Պատմական և բանասիրական գրեթե բոլոր հայկական երկերում, ինչպես և հին Հայաստանի պատմությանը նվիրված Դոլենս-Խաչի, Տուրնեբիզի, Գևորգ Արսլանի, Մորգանի և Խալաթյանցի ֆրանսերեն ու ռուսերեն աշխատություններում, Տիգրան Բ-ի պատմությունը քաղված է համարյա անփոփոխ, մեծ մասամբ կամ Մոմզենի և կամ Ռեյնաքի վերոհիշյալ երկերից: Բացառություն են կազմում Ջամչյանը և դոկտ. Աստուրյանը, որոնք օգտվել են նաև հունական ու լատինական հին աղբյուրներից և ցույց են տվել տեղ տեղ նրանց թերությունները:

Ինչպես շատ ճիշտ դիտել և շեշտել են իրենք՝ եվրոպական գիտնականները, հիմնական սկզբնաղբյուրները, որոնք գրված

---

[1] Моммсен, Римская история, т. II—III, Москва, 1887, Th. Reinach, Mithridate Eupator, roi de Pont, Paris, 1890, Г. Ферреро, Величие и падение Рима, т. I, Москва, 1915.

[2] Գերմաներեն այս աշխատությունը լույս է տեսել նաև հայերեն թարգմանությամբ՝ Կուրտ Էքհարդ, Տիգրան Բ և հայ-լուկուլլյան պատերազմները: Աշխատասիրեց Հ. Գ. Գարանֆիլյան, Վիեննա, 1926, Ազգային մատենադ. ՃԺԳ:

են Տիգրան-Միհրդատի ժամանակաշրջանից մեկ կամ մի քանի դար հետո, մեծ մասամբ անվստահելի են և կասկածելի, որովհետև նրանք պատմական անցքերը նկարագրել են կողմնապահությամբ և հռոմայեցիների օգտին։ Հայտնի է արդեն, թե ի՛նչպիսի մեծ վարպետությամբ Հռոմը կարողացել էր ստեղծել իրեն սպասարկող ներքողական պատմագրություն, որը լուսից էր մատնում հակառակ պատմական ճշմարտության Հռոմի համար աննպաստ փաստերը[3]։ Հռոմեական պատմագիրների անարժանահավատ լինելն ընդգծել է դեռ առաջին դարում (մեր թվ. հ.) հռչակավոր հին մատենագիր Հովսեփոս Փլավիոսը։ Սա հրեական պատերազմի իր պատմության առաջաբանում առանձնապես մատնանշել է, որ մինչևիսկ ականատես հռոմեական հեղինակները մեծ չափով աղավաղել են փաստերի իսկությունը և, խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը, կամ ներքողներ են գրել ի հաճույս Հռոմի և կամ չարախոսություններ սրա թշնամիների մասին։

Պետք է ասել, որ հակառակ կողմը ևս, նաև Հայաստանն ու Պոնտոսը, ունեցել են այս ժամանակաշրջանում իրենց ուրույն պատմագրությունը։ Հին աղբյուրների մեջ հիշատակված է, օրինակ, Հռոմեասատյաց (Misoromacus) Մեսրոպոտոս Սկեփսացու ընդարձակ պատմությունը Տիգրան Երկրորդի մասին, որը համարվել է փայլուն ու տաղանդավոր աշխատություն։ Հիշատակված են նույնպես պատմական կարևոր երկերը Հերակլիդեսի, Տևկրոսի, Ապոլլոնիդեսի, Դիոփանեսի և ուրիշ շատ շատերի, որոնք եղել են Միհրդատին կուսակից հեղինակներ։ Սակայն Հայաստանի ու Պոնտոսի պարտությունից և հելլենիստական կուլտուրայի քայքայումից հետո այս երկրներում պահպանվել են, բնականաբար, գլխավորապես այն երկերը, որոնք հաճելի էին հաղթական Հռոմին։ Տիգրան-Միհրդատյան դարաշրջանի պատմությունը կարող էր, իհարկե, շատ կետերում բոլորովին այլ լուսաբանություն ստանալ, եթե պահպանված լիներին նաև վերոհիշյալ հակառակ կուսակցության գրվածքները։

Չնայած բուն հռոմեական աղբյուրների վերև մատնանշված թերություններին, որ քննության են առնված ու ընդգծված նաև իրենց՝ եվրոպական պատմագետների ու բանասերների գրվածքներում, այդ աղբյուրները, այնուամենայնիվ, միակ ու գլխավոր հիմքն են կազմել Մոմզենի, Ռեյնաքի ու մյուս պատմագետների ուսումնասիրություններին։ Սրանք անվերապահ կերպով օգտվել են մինչև իսկ Պլուտարքոսի կենսագրությունների կասկածելի ու անվստահելի վկայություններից, որոնց մեջ, ինչպես կտեսնենք, չարամտորեն տրված են Տիգրան Բ-ի ու նրա պետության ֆեոդալական կազմակերպության այլանդակ ծաղրանկարները։ Եվրոպական պատմագետները բավարարաչափ ուշադրության չեն առել, դժբախտաբար, որ Պլուտարքոսի և հռոմեական մյուս հեղինակների ստահոգ տեղեկությունները հերքվում են հաճախ փոքրասիական-հելլենիստական չեզոք աղբյուրներում պահպանված վկայությունների օգնությամբ, որոնք պարզ կերպով ցույց են տալիս այդ տեղեկությունների անհավաստիությունը։

Մեր այս եզրակացություններն ու դիտողությունները հարկադրելու էին մեզ, բնականաբար, նոր քննության ու վերագնահատման ենթարկելու բոլոր կարևորագույն սկզբնաղբյուրները։ Ինչպես մեր այս ուսումնասիրության ընթացքում կտեսնենք, օգտագործելով այդ աղբյուրները քննադատորեն ու մեծ զգուշավորությամբ՝ Տիգրան Բ-ի ու նրա դարաշրջանի պատմությունը միանգամայն հնարավոր է պարզել ու լուսաբանել ավելի ճշգրիտ ու ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված է նախկին աշխատություններում։

Եվրոպական պատմագետների վերոհիշյալ երկերում Միհրդատ-Տիգրանյան շրջանի պատմության լուսաբանությունն ունի նաև մի ուրիշ մեծ թերություն։

Այս պատմագետները, բացի այն, որ իրենց լուսաբանության հիմք են ընդունել հռոմեական աղբյուրների միտումնավոր ու գունավորված վկայությունները, իրենք ևս դեպի Արևելքն ու արևելյան ժողովուրդներն ունեցել են աչառու ու անբարյացակամ վերաբերմունք։ Նրանց համակրանքը ո՛չ թե Միհրդատի կամ Տիգրանի, այլ պարզ կերպով Հռոմի ու նրա զորավարների կողմն է, որոնց նրանք աշխատել են հերոսացնել ու իդեալականացնել։

Իտալական գիտնական Ֆեռեռոն, օրինակ, որը խոշոր պատմաբանի հռչակ ունի, Լուկուլլոս զորավարին, որն ավերողն ու գերեզմանափորը եղավ Պոնտոսի հելլենիստական փարթամ կուլտուրայի և շքեղ ու հոյակապ հելլենական քաղաքների, անվանում է հելլենիզմի պաշտպան ու երկրպագու։ «Ամեն տեղ,—ասում է Ֆեռեռոն,—Լուկուլլոսը կողոպտում էր մեծամեծ հարստություններ և կատարում էր հրճվանքով հելլենիզմի մեծ հովանավորի իր դերը»[4]։ Մոմզենը և Ռեյնաքը ո՛չ միայն ուշադրության չեն

[3] Տե՛ս Cicero, De imperio Cn. Pomp, IX, 25։

[4] Տե՛ս „Величие и падение Рима", т. 1, Москва, 1915, էջ 184։

տել Տիգրան Բ-ի կուլտուրական ու բարենորոգչական ձեռնարկումները հետամնաց Հայաստանում, այլ նրանք մինչևիսկ Տիգրանակերտ քաղաքի հիմնումը, որը կենտրոն ու նեցուկ էր լինելու Հայաստանի հելլենականացման ու քաղաքակրթման՝ վերագրում են բռնակալ Տիգրանի գոռոզ ու քմահաճ կամակորության։ Մոմզենի պատմության մեջ առանձնապես նկատելի է, բացի այդ, նրա շեշտված հակակրանքը դեպի Արևելքն ու ասիացիները։ Նա մատնանշում է, օրինակ, որ Արևելքում ամեն մի հպատակ «հավատարիմ է ու կեղծ, ինչպես շունը»[5]։ Նրա կարծիքով «Ասիացիների հատկությունն է նրանց պատրաստակամությունը ստանձնելու դահճի դեր ի հաճույս սուլթանի»[6]։ Ուշագրավ է հենց այն, որ Մոմզենը Միհրդատին ու Տիգրանին, որոնք հելլենիստական տիպի առաջադեմ միապետներ էին, հնարավոր է համարում անվանել սուլթաններ։

Հռոմի իդեալականացումը և, ընդհակառակը, Արևելքի ստորացումը, որ որոշակի նշմարելի են եվրոպական պատմագետների վերոհիշյալ երկերում՝ հակագիտական ակնբախ մի տենդենց են, որ չէին կարող, իհարկե, նրանց կուլան ծառայել Տիգրան-Միհրդատյան դարաշրջանի ճշգրիտ գնահատման։

Կտրականապես պետք է մերժել եվրոպական պատմագիտության մեջ գերիշխող նաև այն կարծիքը, որ իբր թե՝ ինչպես վերջին շրջանի պոնտական-հռոմեական, նույնպես և հայկական-հռոմեական կռիվները կարելի է բնորոշել իբրև բարբարոս ու միացյալ Արևելքի ընդվզում ընդդեմ քաղաքակրթված Արևմուտքի։ Մոմզենը պարզ կերպով շեշտում է, որ այդ կռիվները սկիզբն էին ասիացիների ազգային ռեակցիայի ու ապստամբության՝ ընդդեմ հռոմայեցիների և արևմտյան ժողովուրդների[7]։ Նմանապես և Ռեյնաքը մատնանշում է, որ այդ կռիվները վերակենդանացումն էին «Ասիայի ու Եվրոպայի հակամարտության»[8]։

Սակայն, իրապես, այդ կռիվները, որ սկսել էին հանրապետական Հռոմի զորավարներն արևելյան երկրների ավազակային կողոպտման ու ֆինանսական շահագործման նպատակով՝ մղվում էին ո՛չ թե բարբարոս միացյալ Արևելքի, այլ երկու կիրթ ու առաջադեմ միապետների դեմ, որոնք թե իրենց երկրներում

[5] Տե՛ս „Римская история", т. II, Москва, 1887, էջ 271։

[6] Տե՛ս նույնը, էջ 290։

[7] Տե՛ս նույնը, էջ 273։

[8] Տե՛ս Mithridate Eupator, էջ XI։

և թե ամբողջ Մերձավոր Արևելքում աշխատում էին զարկ տալ հելլենիստական քաղաքային կենցաղի ու կուլտուրայի և առևտրի ու արդյունաբերության նոր բարգավաճման ու բուռն զարգացման։

Այս տեսակետից միանգամայն ճիշտ պետք է համարել ֆրանսիական գիտնական Մորգանի հետևյալ դիտողությունը. «Ջախջախելով Միհրդատին և Տիգրանին,— ասում է Մորգանը,— հռոմայեցիները վերջ էին դնում մակեդոնական կուլտուրային Ասիայում, ուր բոլոր այն պետություններից, որոնք ստեղծվել էին Աղեքսանդրի նվաճումներից հետո, մնացել էին միմիայն փլատակներ ու միմիայն թագավորիկներ, որոնք անկարող էին զորավիգ լինել հելլենական փառքին։ Պոնտոսի և Հայաստանի երկու մեծ թագավորները վերջիններն էին, որոնք կկարողանային վերանորոգել իրենց պետություններում Հելլադայի գեղեցիկ քաղաքակրթությունը»[9]։

Առաջավոր Ասիայի հետագա կուլտուրական հետադիմության համար ամենամեծ պատասխանատվությունն ընկնում է պարզապես Հռոմի վրա։ Սա ո՛չ միայն կողոպտել ու ավերել էր Արևելքը ռազմական արշավանքների, այլև ֆինանսական ու վաշխառուական շահագործման միջոցով։ Արևելքից գրեթե անընդհատ Իտալիա ու Հռոմ էին ուղարկվում իբրև ավար ու շահույթ երկրի հարստությունները և իբրև ստրուկ՝ աշխատանքային որակյալ ուժերը։ Դժվար չէ հետևաբար ենթադրել, որ առելության ու հակամարտության այն մեծ վիհը, որ հաջորդ դարերում գոյություն ուներ իրանական Արևելքի և հռոմեական Արևմուտքի միջև՝ մեծապես խորացրել էր հենց ինքը Հռոմը Տիգրան-Միհրդատյան շրջանում։

Մեր այս ընդհանուր առաջաբանի վերջում անհրաժեշտ է նաև մատնացույց անել, որ Տիգրան Բ-ի պատմությունը, որը Մոմզենի, Ռեյնաքի և Ֆեռեռոյի վերոհիշյալ երկերում քննարկված է իբրև մի միջադեպ ու հավելուկ Հռոմի կամ Պոնտոսի պատմության՝ սույն մենագրության մեջ առաջին անգամ ուսումնասիրված է Հայաստանի պատմության շրջանակի մեջ, որը բավականաչափ ծանոթ չէ եղել օտար պատմագետներին։

Նոր է մեր ուսումնասիրության մեջ, բացի սկզբնաղբյուրների վկայությունների քննական ու համեմատական լուսաբանումներից, նաև այն, որ մեզ հաջողվել է, շնորհիվ պատմականաշխարհագրական նախորդ մեր աշխատությունների՝ ճշտել այժմ

[9] J. de Morgan, Histoire du peuple arménien. Paris, 1919, p. 80։

Լուկուլլոսի ու Պոմպեոսի արշավանքների ճանապարհները և լուսաբանել տեղագրական այն վիճելի ու մութ խնդիրները, որոնք դեռ մինչև այժմ պարզված չեն աղբյուրների բացակայության պատճառով։ Հին այդ ռազմուղիների պարզորոշ բացատրության համար այս աշխատությանը կցված են մանրամասն ու հատուկ քարտեզներ։

2. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԳՐԱՆ Բ-ԻՑ ԱՌԱՋ

Առաջավոր Ասիայի պատմության համար Աղեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տիրապետությունը սկիզբն եղավ ո՛չ միայն նրա տնտեսական զարգացման ու արագ վերելքի, այլ մասամբ նաև նրա սոցիալական կերպափոխման։

Մակեդոնական տիրապետությունն արտակարգ մի շրջան դառավ այստեղ առևտրի, արհեստների ու արդյունագործության բուռն բարգավաճման, բազմաթիվ հունական գաղութների ու քաղաքների հիմնարկման և հելլենիստական քաղաքային կուլտուրայի առաջացման, որով միանգամայն նոր ընթացք տրվեց Մերձավոր Արևելքի հետագա զարգացման։

Հելլենական Արևմուտքը, նվաճելով 334—330 թվերին (մեր թվ. առաջ) ամբողջ Մերձավոր Արևելքը և հիմնելով այստեղ աշխարհակալ մի մեծ պետություն, որը տարածվում էր մինչև Հնդկական օվկիանոսը և Իրանի հյուսիս-արևելյան շրջանները, հարուստ այս երկիրը դարձել էր հելլենական գաղթավայր և իրեն նպատակ էր դրել, կերպարանափոխելով Արևելքը, հելլենիստական ինքնավար քաղաքների ու գաղութների միջոցով՝ միաձուլել նրան իր հետ։ Աղեքսանդր Մակեդոնացուց և նրա հաջորդներից հետո Արևելքի հելլենականացման նույն քաղաքականությունը վարեցին նաև Սելևկյանները, մանավանդ իրենց տիրապետության առաջին շրջանում։

Սակայն հելլենականացման այդ քաղաքականությունը, ինչպես և լայնատարած Արևելքի տևական միացումը, չափազանց դժվար ձեռնարկություններ էին, որ վեր էին իշխող հելլենների համեմատաբար անհամաչափ ու փոքր ուժերից։

Արդեն Սելևկյան ամենազոր թագավորների ժամանակ բռնկվեց հետզհետե նրանց մեծ ու աշխարհակալ պետության անդամատումը և քայքայումը։ Մոտավորապես 305 թվին Սելևկյանները կորցրին նախ և առաջ իրենց հնդկական գավառները։ Այնուհետև մոտ 255 թվին Սելևկյան թագավորությունից անջատվեցին

Բակտրիան և Սոգդիանան։ Նույն այդ ժամանակներում կարողացան պահպանել իրենց անկախությունը կամ ինքնուրույնությունը Կապադովկիան, Պոնտոսը, Հայաստանը և Ատրպատականը։ Այնուհետև երրորդ ու երկրորդ դարերում (մեր թվ. առաջ) Սելևկյանների դեմ հանդես եկան նրանց նոր ախոյանները՝ Պարթև Արշակունիները և Հռոմը։ Այս երկու հզոր պետությունները ժառանգելու էին հետզհետե նրանց ամբողջ թագավորությունը։

Պարթևական թագավորության հիմնադիրն է համարվում Արշակ Ա-ն, ծագումով պարթևներին ազգակից Ապարն կամ Պարն թափառական ցեղից։ Մոտավորապես 250 թվին (մեր թվ. առաջ) սա ապստամբել էր իր ցեղակիցների հետ Սելևկյանների դեմ և սպանել էր նրանց սատրապին։ Արշակ Ա-ից հետո՝ նրա եղբայրը և հաջորդը, Տրդատը կամ Արշակ Բ-ն, հաղթելով Սելևկոս Բ Կալլինիկոսին (248—210 թ.)՝ վերջնականապես հաստատվեց Պարթևստանում և նվաճեց շուտով նաև հարևան Վրկանը, որի կենտրոնն էր Զադրակարտա քաղաքը՝ այժմյան Ասդրաբադը։

Պարթևական թագավորությունը, որ կազմվեց Սելևկյան մեծ պետության հյուսիս-արևելյան սահմանում, սկզբում, ինչպես տեսնում ենք, մեծ չէր։ Նրա աշխարհակալական ընդարձակումը, որով վերջ դրվեց Սելևկյանների իշխանության ու հելլենիզմի տարածմանն իրանական արևելքում՝ սկսվեց Միհրդատ Ա-ի ժամանակ (171—138 մեր թվ. ա.)։ Սա օգտվեց Սելևկյանների ներքին երկպառակություններից և նվաճեց նրանց արևելյան երկրները՝ հնդկական Կովկասից մինչև Եփրատ գետը և Կապադովկիայի սահմանները[1]։ Արևմտյան հելլենիզմը հարկադրված եղավ այսպիսով քաղաքական ու կուլտուրական իր դիրքերը զիջելու արևելյան իրանիզմին, և այնուհետև Սելևկյանների իշխանության տակ առժամանակապես մնացին միայն հյուսիսային Ասորիքը և Կիլիկիան։

Հենց նույն այս երկրորդ դարում, երբ պարթևները տեր էին դառնում Սելևկյանների արևելյան երկրներին, արևմուտքում ևս հելլենական մանր պետությունների և Սելևկյան թագավորության դեմ հանդես եկավ Հռոմը։

Նրա ծավալումը Միջերկրական ծովի արևելյան երկրներում սկսվել էր արդեն փյունիկյան երկրորդ պատերազմից հետո (218—201 թթ.)։ Անտիոքոս Մեծի մագնեսիայի մոտ կրած վճռական ու ծանր պարտությունը 190 թվին հռոմայեցիներին հնարավորություն տվեց ամրացնելու իրենց ազդեցությունը Փոքր Ասիայի մանր պետությունների վրա։ Ինչպես Հունաստանում, նույնպես և այստեղ՝ Հռոմը հրապարակ եկավ սկզբում իբրև ազատարար ու հովանավոր մանր պետությունների ու ճնշված ժողովուրդների։ Սակայն, իրապես, նրա քաղաքականության նպատակն էր դրգռել ու թշնամացնել իրար դեմ բարեկամ այդ պետությունները և ուժասպառ անելով բոլորին՝ հաստատել ամենուրեք իր տիրապետությունը։

Դառնալով տեր ու տնօրեն Հունաստանի ու Մակեդոնիայի՝ նա շուտով պատռեց անշահասեր ազատարարի իր կեղծ դիմակը և 133 թվին ոտք դրեց Փոքր Ասիա որպես նվաճող և հաստատեց իր իշխանությունը Պերգամոնում։ Հռոմեական նենգ ու ճարպիկ դիվանագիտության եռանդուն գործունեությանը պետք է վերագրել, հավանորեն, Պերգամոնի թագավոր Ատտալոս Գ-ի կրտակը, որի համաձայն նա իր թագավորությունն ու ամբողջ հարստությունը թողեց իբրև ժառանգություն Հռոմին։ Պերգամոնը դառավ այնուհետև հռոմեական նահանգ և անվանվում էր «պրովինցիա Ասիա»։

Իմպերիալիստական Հռոմի այս մուտքն Ասիա, ինչպես կտեսնենք, սկիզբն էր այն մեծ ավերածության ու աղետի, որն իր հետևանքներով ահավոր ու կործանարար եղավ հելլենիստական Արևելքի տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման համար։ Հելլենական աշխարհակալները ևս նվաճել էին Արևելքը շահագործման նպատակով, սակայն նրանք, ինչպես ասացինք, հիմնելով այստեղ հարյուրավոր քաղաքներ ու գաղութներ և բարեխղճելով բարեհաջող պայմաններ առևտրի, արհեստների և արդյունագործության աճման ու զարգացման համար՝ մեծապես նպաստել էին նրա առաջադիմությանը։ Մինչդեռ հռոմեական հանրապետության տիրապետությունն առաջին դարում (մեր թվ. առաջ) աղետալի մի դարաշրջան էր արևելյան երկրների տնտեսական ու կուլտուրական հետադիմության՝ անհաշիվ հարստությունների և անթիվ ստրուկների փոխադրման Արևելքից Արևմուտք և, ընդհանրապես, տեղական հելլենիստական պետությունների ու քաղաքների կողոպտման ու կործանման։

Հարկավոր է նաև մատնանշել, որ Ասիայի կողոպտիչներն ու ավերիչներն էին ո՛չ միայն հռոմեական հանրապետության հռչակավոր զորավարները, պաշտոնյաները և կապալառուները,

[1] Տե՛ս Justini M. Juniani, Epitoma historiarum Philippicarum Pompei Trogi, XLI, 5, 8:

որ ուղարկվում էին Արևելք, այլև նրա անվանի ու առաջադեմ համարվող քաղաքական գործիչները։ Ժողովրդական տրիբուն Կայոս Գրաքխոսի առաջարկությամբ 123—122 թվերին հրատարակվել էին մի շարք օրենքներ, որոնք թեև մեծ մասամբ անմիջական կապ չունեին Արևելքի հետ, սակայն մեծապես սաստկացրել էին պրովինցիա Ասիայի անողոք շահագործումը։ Հենց նրա հայտնի հացահատիկային օրենքը (lex frumentaria), որի համաձայն հռոմեական քաղաքացիները ստանում էին մայրաքաղաքում էժան հաց՝ հարկադրել էր նրան գանձել պրովինցիա Ասիայից ուղղակի ու անուղղակի նոր ու ծանր հարկեր։ Բացի այդ, նա հատուկ օրենքով կարգադրել էր, որ հարկահավաքումն Ասիայում տրվի կապալով հեծվոր դասին։ Նա այդ արել էր պարզապես այն դիտավորությամբ, որպեսզի ապահովե դրամատեր հարուստ այս դասի համագործակցությունն ընդդեմ ազնվականության։ Բացի հարկահավաքումից Սեմպրոնիուսի 123 թվի օրենքով (lex Sempronia judicaria) հեծվոր դասին էր հանձնվել նաև դատական իշխանությունը քրեական գործերում։

Միանգամայն հասկանալի է, իհարկե, որ վերոհիշյալ օրենքների շնորհիվ պրովինցիա Ասիան տնտեսապես հյուծվելու ու արնաքամ էր լինելու հռոմեական կապալառուների ու վաշխառուների քմահաճ կամայականությունների ցանցում[2]։ Ասիական նահանգի ու հռոմայեցիների դաշնակից փոքրասիական պետությունների ծանր դրությունն անկեղծորեն մատնանշված է Լիվիուսի պատմության մեջ։ Նրա ասելով՝ այնտեղ ուր մուտք էին գործում հռոմեական կապալառուները, անզոր էր դառնում հանրային իրավունքը և վերանում էին դաշնակիցների ազատությունները[3]։

Հռոմից ու Իտալիայից եկած խոշոր ու մանր վաշխառուները և հռոմեական բանկերի գործակալները դաժանորեն շահագործում էին ոչ միայն պրովինցիա Ասիան, այլև կեղեքում էին նաև Փոքր Ասիայի մանր պետությունները՝ Բիթանիան, Գալատիան և Կապադովկիան։ Հռոմի այս դաշնակիցները ևս վաղ թե ուշ, կորցնելով իրենց խաբուսիկ անկախությունը՝ զոհ էին դառնալու հռոմեական գիշատիչ իմպերիալիզմին։

Թե որքան ծանր էր հռոմեական տիրապետությունն Ասիայում՝ այդ ցայտուն ու պատկերավոր կերպով մատնանշել է գերմանական պատմագետ Թ. Մոմզենը։

«Կայոս Գրաքխոսի վերոհիշյալ օրենքների գործադրումից հետո,— ասում է Մոմզենը,—հռոմեական առանց այն էլ ծանր տիրապետությունը վերածվեց [Արևելքում] այնպիսի անտանելի մի ճնշման, որ ո՛չ արքայական թագը և ո՛չ էլ շինականի խրճիթն ապահով չէին գրավումից. ամեն մի հասկ աճում էր այնտեղ հարկահավաքների համար և ամեն մի երեխա ծնվում էր, հավանորեն, իբրև զոհ սարսափազդեցիկ հռոմեական կուռքերի համար։ ...Եվ եթե այդ խաղաղ երկրներում և այնտեղ ապրող փափկակյաց ժողովուրդների մեջ երևան գար մի մարդ, որն ընդունակ լիներ ազդանշան տալու ընդհանուր ապստամբության՝ կարելի էր ապասել, որ այնտեղ տեղի կունենան զարմանալի ու զարհուրելի անցքեր»[4]։

Շուտով, իրապես, ինչպես կտեսնենք, բռնկվեց նախ Փոքր Ասիայում և ապա նաև Հունաստանում մեծ ապստամբություն, որը հետզհետե փոխարկվեց սոցիալական հեղափոխության։ Հրահրողը պատմական այդ ցնցող դեպքերի Միհրդատ Պոնտացին էր՝ հռոմայեցիների հզոր ու անհաշտ ախոյանը։

Պոնտական թագավորությունը, որը գլխավոր մասնակիցն էր այդ մեծ անցքերի, գտնվում էր Սև ծովի հարավային կողմում՝ Բիթանիայի, Գալատիայի, Կապադովկիայի և Փոքր Հայքի միջև։ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ այս երկիրը, որի մեջ ապրում էին սեմական, արիական և բնիկ փոքրասիական ցեղեր՝ մեծ չափով ենթարկվել էր իրանական կենցաղի ու կուլտուրայի ազդեցության։ Նրա ծովափնյա շրջաններում՝ Սինոպում, Ամիսոսում, Տրապիզոնում և մյուս քաղաքներում հաստատվել էին դեռ Աքեմենյանների աշխարհակալ տիրապետությունից առաջ հունական գաղութներ, որոնք զորեղ նեցուկներ էին հելլենական քաղաքակրթության ու լեզվի տարածման։ Պարսկական ազնվականությունը, որը գրավել էր այստեղ հողեր ու կալվածներ, կազմում էր զգալի մասը իշխող դասի։ Պարսկական ազնվական ամենաբարձր տոհմից էր նաև Միհրդատ Ա-ն (302—266 մեր թվ. առ.), որը հիմնադիր է համարվում Պոնտական թագավորության։

Նոր հիմնված այս թագավորությունը, որ բավական ընդարձակվել էր Միհրդատ Ա-ի հաջորդների ժամանակ՝ իր հզո-

---

[2] Համմ. Victor Chapot, La province romaine proconsulaire d'Asie, Paris, 1904, էջ 41—49։

[3] Տե՛ս XLV, 18։

[4] Տե՛ս «Римская история», т. II, перевод Неведомского, Москва, 1887, էջ 269։

րության ու փառքի գագաթնակետին հասավ առաջին դարի բուկրզներում (մեր թվ. առաջ) Միհրդատ Եվպատորի թագավորության ընթացքում (111—63 թ.), որին անվանում են նաև Մեծ։ Պոնտոսի այս հզոր թագավորը կարճ ժամանակում նվաճել էր հին Կողքիսը՝ մինչև Դիոսկուրիա և մինչև այժմյան Սուրամը, նաև այժմյան հարավային Ռուսաստանում՝ Տավրիկյան Խերսոնեսը ու նրա հարևան սկյութական երկրները և Պոնտոսի հարավ-արևելքում՝ Փոքր Հայքը, որը նվաճումից առաջ առանձին թագավորություն էր։ Այս մեծ նվաճումներից հետո Պոնտոսը մեծագույն պետությունն էր դառել Փոքր Ասիայում և ամենահզոր հակառակորդը իմպերիալիստական Հռոմի։

Պոնտոսի և Փոքր Հայքի հարավում գտնվում էր Կապադովկիան, որը սահմանակից էր հայկական հին Ծոփքին և տարածվում էր հարավում մինչև Կիլիկիա, արևմուտքում՝ մինչև Լիկաոնիա և հյուսիս-արևմուտքում՝ մինչև Գալատիա։ Այստեղ ևս, ինչպես և Պոնտոսում, Սելևկյանների տիրապետության առաջին տարիներում կազմակերպվել էր առանձին թագավորություն, որի հիմնադիրն էր Արիարաթ Բ-ն (հավանորեն, 301—280 թ.), ծագումով, ինչպես և Պոնտոսի թագավոր Միհրդատ Ա-ն, պարսկական ազնվականության բարձր տոհմից։ Դիոդորոս Սիկիլիացու վկայությամբ[5] Արիարաթ Բ-ն կարողացել էր տիրել Կապադովկիային օգնական զորքերի աջակցությամբ, որ նա ստացել էր արմենների Արդոատես (Ἀρδοάτης) թագավորից։ Կապադովկիայում ևս, ինչպես և Պոնտոսում, իշխող դասակարգը բաղկացած էր, մեծ մասամբ, կալվածատեր պարսիկ ազնվականներից և երկիրը Աքեմենյան տիրապետության ժամանակ ենթարկվել էր իրանական պետականության և իրանական կուլտուրայի ազդեցության։ Սակայն նաև այստեղ հելլենականությունը հաստատվել էր քաղաքներում, և նրա ազդեցությունը զորեղ էր, գլխավորապես, ժողովրդի բարձր խավերի շրջանում։

Բացի Պոնտոսից և Կապադովկիայից Միհրդատ-Տիգրանյան շրջանի պատմական անցքերին մասնակից էին նաև Բիթանիան և Գալատիան։

Բիթանիան գտնվում էր Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան անկյունում՝ Սև ծովի, Բոսփորի ու Պրոպոնտիսի ափերին, և տարածվում էր արևելքում մինչև Պափլագոնիա, հարավ-արևելքում՝ մինչև Գալատիա, իսկ հարավում՝ մինչև Միսիա։ Այս երկիրը

[5] Տե՛ս XXXI, 19, 5։

կոչվում էր Բիթանիա Բրակիական բիթանների անունով, որոնք Բրակիական ուրիշ ցեղերի հետ գաղթել էին Փոքր Ասիա Բալկանյան թերակղզուց։ Այս գաղթականները հիմնել էին այստեղ Բիթանիայի թագավորությունը, որն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ կիսանկախ էր և կազմակերպվել էր իբրև անկախ պետություն երրորդ դարի սկզբներում։ Ինչպես և Փոքր Ասիայի մյուս արևմտյան շրջանները՝ Բիթանիան ևս մեծ չափով ենթարկվել էր հելլենական կուլտուրայի ազդեցության։

Փոքր Ասիայի կենտրոնում գտնվում էր Գալատիան, որը սահմանակից էր Բիթանիային, Պոնտոսին և Կապադովկիային։ Իր անունը սա ստացել էր գալատներից կամ կելտերից, որոնք 277—276 թ. մեր թվ. առաջ Թրակիայի վրայով եկել էին Փոքր Ասիա և այստեղ բնակություն էին հաստատել Փռյուգիայում։ Այս եկվոր ու ռազմիկ ժողովուրդը, որ բաղկացած էր երեք ցեղային հատվածներից և բաժանված էր առանձին տոհմերի՝ չէր կարողացել ստեղծել միասնական ու միահյուս պետություն և խաղալիք էր դառել հռոմեական ճարպիկ դիվանագիտության ձեռքին։

Գալատները և Բիթանիայի ու Կապադովկիայի թագավորությունները, ինչպես ներքև կտեսնենք, հլու և հնազանդ դաշնակիցները դառան արշավող հռոմեական իմպերիալիզմի և հռոմեական զորքերի հետ մասնակից եղան թե հռոմեա-պոնտական և թե հայ-հռոմեական բոլոր մեծ պատերազմների։

3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԻԳՐԱՆ ԵՐԿՐՈՐԴԸ

Աքեմենյան Պարսկաստանի անկումից հետո ո՛չ Ալեքսանդր Մակեդոնացին, ո՛չ էլ Սելևկյանները չկարողացան ուիրել Հայաստանին երկարատև ու հաստատուն կերպով։

Պարսկական երկու սատրապությունների փոխարեն հիմնվեցին այստեղ երեք առանձին իշխանություններ՝ Փոքր Հայքը, Ծոփքը և Մեծ Հայքը, որոնց կառավարիչները կամ նախկին սատրապների հետնորդներն էին և կամ բնիկ իշխաններ։ Հայկական այս իշխանությունները, թեև Սելևկյան թագավորության սատրապություններ էին համարվում, սակայն նրանց վասալական կախումը Սելևկյաններից եղել է հաճախ գրեթե անվանական։

Անտիոքոս Մեծի Մագնեսիայի մոտ կրած պարտությունը (190 թ. մեր թվ. առ.) անկախության ընդհանուր շարժման աղբյուրն եղավ ո՛չ միայն Փոքր Ասիայում, այլև Հայկական լեռնաշխարհում։ Այդ պարտությունից հետո, ինչպես վկայում է Ստրաբոնը[1] Անտիոքոս Մեծի երկու զորավարները, որոնք կառավարում էին Մեծ Հայքը և Ծոփքը Անտիոքոսի հավանությամբ՝ անցան Հռոմայեցիների կողմը և հայտարարեցին իրենց անկախ թագավորներ։

Այսպիսով երկրորդ դարի առաջին կիսում արմենական երկրները մնացին դարձյալ բաժանված երեք անջատ մասերի, որոնք ունեին իրենց առանձին թագավորները։ Փոքր Հայքում իշխում էր Փառնակ Պոնտացու (190—169 թ.) դաշնակից Մհերդատ թագավորը, Մեծ Հայքում՝ Արտաշեսը և Ծոփքում, Ակիսեններում, Օդոմանտիսում և մի քանի ուրիշ գավառներում՝ Զարեհը։

Այս թագավորություններից ամենազորեղն ու ամենաընդարձակը, ինչպես երևում է նշանավոր հույն պատմագիր Պոլիբիոսի ուշագրավ մի վկայությունից, Մեծ Հայքն էր։ Վերոհիշյալ Արտաշեսին Պոլիբոսն անվանում է «Արմենիայի մեծագույն մասի կառավարիչ»[2]։ Նույնը հաստատում է նաև Ստրաբոնը հետևյալ իր վկայության մեջ.

> *«Պատմում են,— ասում է Ստրաբոնը,— որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաշեսի ու Զարեհի միջոցով։ ...Սրանք ընդարձակել էին իրենց երկրների սահմանները և շրջակա ժողովուրդներից գրավել էին հետևյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոբեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Քորձեենեն և Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալիբներից ու մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Քսերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամոնիտիսը»[3]։*

Մեջբերված այս վկայությունից երևում է, որ Արտաշեսը նվաճել էր Կասպյան երկիրը կամ Փայտակարանը (=Κασπιανή), Վասպուրականը (=Βασοροπέδα), Փավնիտիսը (?), Պարիադրեսի լեռնալանջերը (այսինքն՝ Տայքը), Կղարջքը (=Χορζηνή)[4], Գուգարքը (=Γωγαρηνή), Կարնո գավառը (=Καρηνῖτις), Դերջանը (=Ξερξηνή)[5] և Տմորիքը (=Ταμωνῖτις)[6], իսկ Զարեհը՝ Եկեղյաց գավառը (=Ακιλισηνή) և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը։ Նույն վկայության շարունակության մեջ Ստրաբոնը հաղորդում է նաև, որ ընդարձակված այս Արմենիայի մեջ նրա ժամանակ բոլորը համալեզու էին, այսինքն՝ խոսում էին հայերեն։ Ստրաբոնի այս տեղեկությունը կարելի է ընդունել որոշ, իհարկե, վերապահությամբ։ Հայաստանի զանազան շրջաններում, ինչպես հայտնի է, նույնիսկ Սասանյանների ժամանակ և անգամ նրանց տիրապետությունից հետո կային օտարալեզու ցեղեր։ Ուրեմն՝ Ստրաբոնի վկայությունը պետք է, ըստ երևույթին, ենթադրել այն իմաստով, որ Հայաստանում նրա ժամանակ տարածված ու գերիշխող լեզուն եղել է հայերենը։

[1] *Տե՛ս XI, 14, 15։*

[2] *Տե՛ս* «Всеобщая история в 40 книгах», перевод Мищенка, т. I—III, Москва, 1890—1899, XXV, 2, 12:

[3] *Տե՛ս* XI, 14, 5 (528):

[4] Χορζηνή *Մարկվարտն առաջարկում է ուղղել և կարդալ* Χολαρζηνή, *տե՛ս* Eranschahr nach der Geographie des Ps. Moses Xor., Berlin, 1901, *էջ 116։*

[5] Ξερξηνή-*ն պետք է ուղղել* Δερξηνή *(ըստ Պլինիոսի* Nat. Hist. 5, 83— Derxene, Derzene), *տե՛ս Հ յ ո ւ բ յ մ ա ն, Հին Հայոց տեղւոյ անունները, թրգմ. Հ. Բ. Պ ի լ ե կ ի կ ե ա ն ի, Վիեննա, 1907, էջ 21։*

[6] *Ստրաբոնի հունարեն բնագրում գրված է* Ταμωνῖτις, *փխ.* Ταμωρῖτις, *տե՛ս* Markwart, Eranschahr, *էջ 170։*

Ընդարձակվել էր նույն այս երկրորդ դարում (մեր թվ. առ.) բացի Մեծ Հայքից ու Ծոփքից նաև Փոքր Հայքը, որը նվաճել էր արևմտյան Պարիադրեսի և հյուսիս-արևելյան Պոնտոսի ծովափնյա շրջանները և հասցրել էր իր սահմանները մինչև Սև ծովը։

«Փոքր Հայքը,— ասում է Ստրաբոնը,— բավական պտղաբեր երկիր է։ Այստեղ ևս, ինչպես և Ծոփքում, միշտ կառավարում էին երկիրը սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին արմեններին և կամ իրենց գործերը վարում էին առանձին ու անկախ։ Փոքր Հայքն իրեն հպատակեցրել էր խալդայներին և տիբարեններին, այնպես որ նրա իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն ու Փառնակիա»[7]։

Հայաստանում և Կապադովկիայի հյուսիսում կազմվել էին, ինչպես տեսնում ենք, փոխանակ միահար ու միաձույլ մեծ պետության՝ երեք արմենական անկախ թագավորություններ։ Եվ միանգամայն հասկանալի է, իհարկե, որ արմենների ցրվածությունն ու այս բաժանումը արգելք էին հանդիսանալու նրանց ընդհանուր ու համերաշխ գործակցության։

Արմենական երկրների միացման կարևորությունը, հավանորեն, գիտակցվել է առավելապես նրանց քաղաքական վերելքի այս շրջանում։ Հայտնի է, որ Արտաշես Ա-ն, որն անշափ ընդարձակել էր Մեծ Հայքը՝ ուզեցել էր նաև նվաճել հարևան Ծոփքը։ Սակայն Մեծ Հայքի զորեղացումը և արմենական երկրների քաղաքական միաձուլումը չէին կարող հանդուրժել Կապադովկիան և Պոնտոսը։ Փոքր Հայքն ու Ծոփքը, որոնց անկախությանը Արտաշեսյան հզոր թագավորության կողմից վտանգ էր սպառնում՝ սերտ կերպով հարեցին օտար այս պետություններին և ապավինեցին սրանց օգնությանը։ Դիոդորոս Սիկիլիացին վկայում է[8], որ Արտաշեսին չհաջողվեց իր թագավորությանը միացնել Ծոփքը, շնորհիվ Կապադովկիայի Արիարաթ Ե թագավորի միջամտության։ Այս վերջինի օգնությամբ ստացավ իր հայրենի թագավորությունը Զարեհի որդին՝ Մեհրուժանը, որն Արտաշեսի հարձակման ժամանակ փախել էր Կապադովկիա։

Արտաշեսյան Մեծ Հայաստանի մասին մատենագրական աղբյուրները տալիս են, դժբախտաբար, միայն պատահական ու կրճատուր տեղեկություններ։ Այդ տեղեկություններից առանձնապես կարևոր են Ստրաբոնի և Պլուտարքոսի վկայությունները Արտաշատ մայրաքաղաքի մասին, որը հիմնել էր Արտաշես Ա-ն, հավանորեն, 166 թվին (մեր թվ. առաջ)[9]։

«Հայաստանի քաղաքներն են,— ասում է Ստրաբոնը,— Արտաքսատան (որն անվանում են նաև Արտաքսասատա և որը հիմնել էր Աննիբալն Արտաշեսի համար) և Արքսատան։ Երկու քաղաքն էլ գտնվում են Արաքսի ափին՝ Արքսատան Ատրպատականի սահմանում, իսկ Արտաքսատան Արաքսի դաշտի մոտ։ Այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է։ Նա գտնվում է գետածոցում, որը նման է ցամաքակղզու, և նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջև ձգվում է պարիսպը, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»[10]։

Որ Արտաշատը շինված էր Աննիբալի խորհրդով և նրա ցուցմունքներով՝ այդ մանրամասն հաղորդում է նաև Պլուտարքոսը հետևյալ իր վկայության մեջ։

«Պատմում են,— ասում է Պլուտարքոսը,— որ երբ Անտիոքոսը պարտություն կրեց հռոմայեցիներից՝ Կարթագենացի Աննիբալը եկավ Արտաշես արմենի մոտ և հրահանգիչ ու խորհրդատու դառավ բազմաթիվ օգտավետ գործերում։ Նկատելով, բացի այդ, այս երկրում չօգտագործված ու անտես արված հարմարագույն ու խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը։ Աննիբալը տարավ Արտաշեսին, ցույց տվեց հատակագիծը և համոզեց հիմնել այդ տեղում քաղաք»[11]։

Պատմագետներից շատերը կասկածելի են համարում թե Արտաշատի հիմնումն Աննիբալի խորհրդով և թե Աննիբալի փախուստը Հայաստան։ Սակայն, այնուամենայնիվ, վերոհիշյալ վկայությունները խիստ կարևոր են, որովհետև նրանք պարզ ու որոշ հաստատում են, որ Արտաշատը հիմնված է եղել երկրորդ դարում Արտաշես Ա-ի ժամանակ։ Առանձնապես հետաքրքիր են ու կարևոր Արտաշատի տեղադրության ու ամրությունների մասին Ստրաբոնի հաղորդած տեղեկությունները։

Արտաշատի հիմնումն Արարատյան դաշտում կարելի է համարել Արտաշես Ա-ի կարևորագույն գործերից մեկը։ Այս դաշտն այնուհետև դառավ Հայաստանի քաղաքական ու կուլտուրական միավորման կենտրոնը։

---

[7] Տե՛ս XII, 3, 28։

[8] Տե՛ս De virt. et vitiis, հատված XXXI, 22։

[9] Տե՛ս Fabricius, Theophanes von Mitylene und Q. Dellius als Quellen der Geographie des Strabons, Strassburg, 1888, էջ 32 և 131։

[10] Տե՛ս XI, 14, 6։

[11] Տե՛ս Lucullus, XXXI, 5։

Քաղաքավայրի ընտրությունը հաջող էր կատարված թե ռազմական և թե տնտեսական տեսակետներից։ Գտնվելով Հայկական լեռնաշխարհի կենտրոնում՝ Արտաշատը ավելի էր պաշտպանված արշավող թշնամիներից, քան լեռնաշխարհի սահմաններում գտնվող շրջանները։ Բացի այդ, նրա միջով էր անցնում տարանցիկ առևտրի մեծ ճանապարհը, որը գալիս էր Միջին Ասիայի ու Չինաստանի կողմերից և Արտաշատի մոտով գնում էր դեպի Սև ծովի նավահանգիստները։

Ինչպես տեսնում ենք, Արտաշեսյան հարստության հիմնադիրն առաջին կազմակերպողն է պատմական Մեծ Հայաստանի, և ընդարձակված այս պետությունն արդեն նրա ժամանակ համարյա ամփոփվել էր բնական իր սահմանների մեջ և տարածվում էր Հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետը և Աստղաստանից մինչև Ծոփքը և Փոքր Հայքը։ Այս նոր թագավորությունը, որ դառել էր Առաջավոր Ասիայի ուժեղ պետություններից մեկը՝ այժմ հաշվի էր առնվում և որոշ դեր էր կատարում միջպետական հարաբերություններում։ Պոլիբիոսը, որն իր պատմության մեջ մանրամասն հիշատակել է Փառնակ Պոնտացու և Փոքր Հայքի Միհրդատ թագավորի 180 թվի կռիվն ընդդեմ Պերգամոնի, Կապադովկիայի և Բիթինիայի թագավորների՝ մեջ է բերում սրանց ստորագրած խաղաղության դաշինքը և վկայում է, որ այդ դաշնագրության մասնակից է եղել նաև «Արմենիայի մեծագույն մասի կառավարիչ Արտաշեսը»[12]։

Արտաշեսյան անկախ ու միաձույլ Հայաստանի այս զորեղացումը վտանգավոր համարեց Սելևկյան թագավորությունը, որը հայկական երկրների նախկին սյուզերենն էր։ Ինչպես վկայում են Դիոդորոս Սիկիլիացին և Ապպիանոսը[13], մոտավորապես 165 թվին (մեր թվ. առ.) Հայաստան արշավեց Անտիոքոս Դ-ն (175—164)։ Սակայն Արտաշես Ա-ն, թեև պարտություն էր կրել, կարողացավ շուտով վերականգնել իր հին իրավունքները։

Դիոդորոս Սիկիլիացու մի այլ վկայությունից[14] հայտնի է դարձել, որ Սելևկյանների սատրապ Տիմարքոսը, որն ապստամբել էր ու հայտարարել իրեն Մարաստանի թագավոր (161 թ.)՝ դաշն էր կնքել Արտաշես Ա-ի հետ և սրա օգնությամբ ընդարձակել էր իր թագավորության սահմանները մինչև Սելևկիա և Զևգմա։

Աղբյուրների աղքատիկ ու պատահական այս տեղեկությունները չեն տալիս, իհարկե, պարզ ու լրիվ պատկեր այն մեծ շրջադարձի, որ տեղի էր ունեցել Արտաշես Ա-ի ժամանակ։ Սակայն վերոհիշյալ կցկտուր հիշատակություններն անգամ ցույց են տալիս, որ Արտաշեսյան անկախ ու հզոր Հայաստանի կազմակերպումը սկիզբն էր հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի։

Ուշագրավ է ու առանձնապես հետաքրքիր, որ Արտաշեսյան այս շրջանի պատմական մեծ դեպքերը նյութ էին դառել վիպական հին երգերի և ավանդությունների, որոնցից օգտվել է Մովսես Խորենացին։ Որ Արտաշատը հիմնած է եղել Արտաշեսը՝ այդ հայտնի է եղել Խորենացուն, ինչպես ինքն է վկայում, «ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան»[15]։ Բացի այդ, ինչպես մատնանշել եմ իմ նախորդ աշխատություններից մեկում[16], Խորենացու մոտ պահպանված են որոշ հիշողություններ պատմական այն անցքերի ու պատերազմների մասին, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում Որոնտաս-Երվանդի և Արտաշես Ա-ի ժամանակաշրջանում և որոնք նրան հայտնի են եղել նմանապես վիպասանքից կամ հին ղրույցներից։ Նոր այս ենթադրությանը կարող են թերևս նեցուկ ծառայել Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունները, որոնք, դժբախտաբար, մինչև այժմ դեռ չեն հրատարակված։

Արտաշես Ա-ից հետո մենք գրեթե տեղեկություններ չունենք Մեծ Հայքի և արմենական մյուս թագավորությունների մասին մինչև Տիգրան Երկրորդը (95—55 թ. մեր թվ. առ.)։ Յուստինոսի կարևոր մի վկայությունից հայտնի է միայն, որ Պարթևական մեծ պետությունը, որը նվաճել էր հետզհետե Հայաստանի սահմանակից Սելևկյան երկրները՝ պատերազմ էր մղել նաև հայոց Արտավազդ թագավորի դեմ։ Այս Արտավազդը, հավանորեն, այն Արտավազդն է, որը հայկական վեպի մեջ հիշատակված է իբրև որդի և հաջորդ Արտաշես Ա-ի[17]։

Վերև մատնանշված վկայության մեջ Յուստինոսը հաղորդում է, որ

> «Արտավանին հաջորդեց նրա որդին՝ Միհրդատը, որն իր գործերի համար կոչվեց Մեծ։ ...Սա մեծ քաջությամբ վարեց հարևանների հետ բազմաթիվ պատերազմներ և միացրեց Պարթևական թագավորությանը շատ ժողովուրդներ։

[12] Տե՛ս XXV, 2, 12։

[13] Տե՛ս Müller, Fragm. hist. graec. II, էջ X և Appianos, Syr., 45 և 46։

[14] Տե՛ս Müller, FHG, II, էջ XII։

[15] Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, II, գլ. 49։

[16] Տե՛ս «О торговле и городах Армении», Эривань, 1930, էջ 97։

[17] Տե՛ս Խորենացի, I, գլ. Լ և II, գլ. Ը, ՃԱ—ՃԳ, ՃԵ, ԿԱ և ԿԲ։

Նույնպես և Սկյութացիների հետ նա մի քանի անգամ աջողությամբ պատերազմեց և վրեժխնդիր եղավ նախորդների վիրավորանքների համար։ Վերջը կռվեց արմենների թագավոր Արտավազդի հետ»[18]։

Ո՛չ միայն այս, այլև մատենագրական և ուրիշ վկայություններից հայտնի է, որ հենց Միհրդատ Բ Մեծի ժամանակ միայն (123—88 թ. մեր թվ. առ.) պարթևները կարողացել էին վերջնականապես նվաճել Միջագետքի երկրները և Ատրպատականը։ Կարելի է, ուրեմն, վստահորեն ենթադրել, որ նրա արշավանքն Արտավազդի դեմ տեղի էր ունեցել Հայաստանի հարևան երկրների նվաճումից հետո, ըստ երևույթին, Ատրպատականի կողմից և, ինչպես ենթադրել է Մարկվարտը, դաշնակից ու վասսալ Ատրպատականի թագավորի մասնակցությամբ[19]։

Հայ-պարթևական այս պատերազմի ժամանակ, թեև պարթևներին չէր հաջողվել նվաճել Հայաստանը, սակայն, հավանորեն, նրանք պարտության էին մատնել հայերին և, ինչպես վկայում են Յուստինոսը և Ստրաբոնը, պատանդ էին վերցրել Տիգրան Բ-ին[20]։

Որ Հայաստանը նվաճված չէ եղել Միհրդատ Մեծի արշավանքի ժամանակ՝ այդ երևում է դարձյալ Ստրաբոնի հետևյալ վկայությունից.

«Պարթևները,—ասում է Ստրաբոնը,—տիրեցին մեդացիների և բաբելոնացիների երկրներին, բայց ո՛չ Արմենիային։ Թեև հարձակումներ հաճախ տեղի ունեցան, սակայն երկիրն ուժով չնվաճվեց։ Ընդհակառակը, Տիգրանը զորեղ կերպով դիմադրեց ու հաղթեց նրանց, ինչպես մենք ասացինք Արմենիայի մասում»[21]։

Պատանդ վերցված Տիգրանի մասին կարևոր են Ապպիանոսի և Ստրաբոնի վկայությունները։ Ապպիանոսի ասելով՝ Տիգրան Բ-ն որդին էր ո՛չ թե Արտավազդի, այլ Տիգրանի[22]։ Իսկ Ստրաբոնը, խոսելով Արտաշես Ա-ի և Զարեհի մասին՝ վկայում է, որ Տիգրան Բ-ն Արտաշես Ա-ի սերնդից էր[23]։

Պատմական ու բանասիրական նորագույն երկերում Արտաշես Ա-ի հաջորդների և Արտավազդի ու Տիգրան Բ-ի ազգակցության մասին հայտնվել են հակասական կարծիքներ։ Այդ կար-

[18] *Տե՛ս* Just. Epit. XLII, 2, 3—6։
[19] *Տե՛ս* Eranschahr, *էջ 109*։
[20] *Տե՛ս* Justin., XXXVIII, 3, 1 և Strabo, XI, 14, 15։
[21] Str., XVI, 1, 19.
[22] *Տե՛ս* App., Syr., 48։
[23] *Տե՛ս* Str., XI, 14, 15։

ծիքներից հավանական է ըստ իս Ռեյնաքի ենթադրությունը, որը Տիգրան Բ-ին համարում է համաձայն Ապպիանոսի վկայության Տիգրան Ա-ի որդին, իսկ Արտավազդին՝ եղբայր այս վերջինի[24]։ Պատմագետների ու բանասերների ուշադրությունից վրիպել է, որ Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը հաստատվում է Խորենացու պատմության համապատասխան վկայությունների ուշադիր քննությամբ։ Խորենացու մոտ, ինչպես վերև ասացինք, Արտաշեսյան տոհմի առաջին թագավորների մասին պահպանվել են ուշագրավ պատմական հիշողություններ, որոնք հայտնի են եղել նրան վիպասանքից կամ հին զրույցներից։ Հենվելով այդ զրույցների վրա՝ Խորենացին վկայում է, որ Արտաշեսի որդին ու հաջորդը, Արտավազդը, զավակ չէ ունեցել, և որ Արտավազդից հետո Հայաստանում թագավորել է նրա եղբայրը՝ Տիրանը[25]։ Պատմահոր հաղորդած կարևոր այս տեղեկությունները, ինչպես տեսնում ենք, համապատասխանում են Ապպիանոսի վերոհիշյալ վկայության։ Կարող ենք ըստ իս, համաձայն այդ տեղեկությունների, հավանական համարել, որ Արտաշես Ա-ին հաջորդել է նրա որդին, Արտավազդ Ա-ն, և ապա սրա եղբայրը՝ Տիգրան Ա-ն, որից հետո թագավորել է այս վերջինի որդին՝ Տիգրան Բ-ն։

Մեծ Հայաստանի մասին, ինչպես ասացինք, մենք ունենք մանրամասն տեղեկություններ Տիգրան Բ-ից սկսած։

Տիգրան Բ-ն, որը պատանդ էր պարթևների մոտ՝ գահ էր բարձրացել 95 թվին (մեր թվ. առ.)։ Գահակալության այս թվականը հայտնի է մեզ Պլուտարքոսի վկայությունից։ 70 թվին, երբ Ապպիոս Կլավդիոսը եկել էր նրա մոտ իբրև դեսպան՝ նա, ինչպես վկայում է Պլուտարքոսը[26], արդեն 25 տարի թագավորել էր։ Պատանդությունից ազատվելու և իր հայրենի թագավորությունը ստանալու համար նա, ինչպես վկայում է Ստրաբոնը[27], պարթևներին փրկանք էր տվել յոթանասուն հովիտներ, որոնք, Մարկվարտի կարծիքով[28], այն շրջաններն էին, որ Ատրպատականի կողմերում գրավել էր Արտաշես Ա-ն։

Երբ Տիգրանն ազատվեց ու վերադարձավ իր հայրենի երկիրը՝ նա արքայական իր թագը կապեց, ինչպես վկայում է Ապպիանոսը, Հայաստանի այն վայրում, ուր ինքը հիմնել էր հետո

[24] *Տե՛ս* Th. Reinach, Mithridate Eupator, *էջ 104* և Markwart, Eranschahr, *էջ 173*։
[25] *Տե՛ս Խորենացի, II, գլ. ԿԱ*։
[26] *Տե՛ս* Plut, Lucullus, 21.
[27] *Տե՛ս* Str., XI, 14, 15։
[28] Eranschahr, *էջ 109*։

Տիգրանակերտ քաղաքը։ Այս վկայությունից երևում է, որ հին Աղձնիքը, որի մեջ այժմյան Ֆարկինում որոշված է վերջերս հին Տիգրանակերտ քաղաքի տեղը՝ գտնվել է ո՛չ թե Ծոփքում, այլ Արտաշեսյան թագավորության մեջ՝ Մեծ Հայքում[29]։

Գահ բարձրանալուց հետո Տիգրան Բ-ի առաջին գործը եղավ հարևան Ծոփքի միացումն իր թագավորությանը։ Կապադովկիան, որը հազիվ էր հռոմայեցիների օգնությամբ պահպանում իր անվանական անկախությունը՝ անկարող եղավ պաշտպանել իր հին դաշնակցին ու բարեկամին։ Տիգրան Բ-ն հարձակվեց Ծոփքի վերջին թագավոր Արտանեսի վրա (94 թ. մեր թվ. առ.) և նրա երկիրը կցեց Մեծ Հայաստանին։

«Արտաշեսի սերնդից էր,—ասում է Ստրաբոնը,—Տիգրանը. նա իշխում էր բուն Արմենիայում, որը սահմանակից էր Մարաստանին, Ադվանքին, Իբերիային մինչև Կողքիս և Սև ծովի մոտ գտնվող Կապադովկիային։ Իսկ Զարեհի սերնդից էր Ծոփաց երկրի Արտանեսը, որն իշխում էր Արմենիայի հարավային և, գլխավորապես, արևմտյան մասերում։ Տիգրանը սրան հաղթեց և դառավ ինքը տեր բոլոր այդ երկրների»[30]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Տիգրան Բ-ի իշխանության տակ միացան Արևելյան և Արևմտյան Արմենիան, որոնք Թե Աքեմենյանների և Թե Սելևկյանների ժամանակ առանձին ու ինքնիշխան երկրներ էին։ Արմենական երրորդ թագավորությունը, Փոքր Հայքը, որը Հայկական լեռնաշխարհի բնական սահմաններից դուրս էր գտնվում՝ Ծոփքի նվաճումից առաջ, արդեն երկրորդ դարի վերջերում նվաճել ու միացրել էր իր թագավորությանը Միհրդատ Պոնտացին։

Ծոփքի միացումից հետո Տիգրան Բ-ի հզոր ու ընդարձակ թագավորությունը սահմանակից էր դառնում արևմուտքում բացի Պոնտոսից նաև Կապադովկիային։ Հարավում և արևելքում Մեծ Հայաստանին հարևան ու սահմանակից էին պարթևների գերիշխանության տակ գտնվող մանր պետությունները՝ Օսրոենը, Կորդուքը, Ադիաբենը և Ատրպատականը, իսկ հյուսիսում՝ Աղվանքը և Իբերիան։

94 թվից հետո շուտով սկսվեց Արևելքում Հռոմի ու Պոնտոսի երկարատև ու համառ պայքարը, որին, ինչպես կտեսնենք, մասնակից եղավ նաև Տիգրան Բ-ի հզոր պետությունը։

[29] Տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 119։

[30] Տե՛ս Str., XI, 14, 15։



Միհրդատ Պոնտացի

4. ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ՏԻԳՐԱՆ Բ-Ի ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿԱՊԱԴՈՎԿԻԱ

Առաջին դարի սկզբներում (մեր թվ. առ.) հզոր ու մեծ պետություն էր դառել, ինչպես վերև տեսանք, Պոնտոսը, որը խիստ ընդարձակվել էր Միհրդատ Եվպատորի ժամանակ, որին անվանում են նաև Մեծ։

Պոնտոսը կամ հին Պոնտական Կապադովկիան, որը Աքեմենյանների ժամանակ միացած էր բուն կամ Մեծ Կապադովկիային՝ ուներ այս վերջինի հետ կուլտուրական ու կրոնական և մասամբ նաև ցեղային որոշ կապեր։ Պոնտոսի հարևան Կապադովկիան ուներ, բացի այդ, ստրատեգիական մեծ նշանակություն, որովհետև նրա հյուսիս-արևելյան ընդարձակ սահմանները տարածվում էին մինչև Փոքր Հայքը և մինչև Պոնտոսի գրեթե թիկունքը։ Դժվար չէ, ուրեմն, հասկանալ, թե ինչո՛ւ Միհրդատ Մեծն ամեն կերպ աշխատում էր ցեղակից ու կրոնակից այս երկիրը միացնել իր թագավորությանը։

Կապադովկիայի փաստական՝ նվաճումը Միհրդատը հաջողացրել էր 99 թվին (մեր թվ. առաջ) և թագավոր էր դրել այստեղ իր ութնամյա որդուն՝ Արիարաթ Թ-ին։ Սակայն շուտով, 95 թվին, Հռոմեական ծերակույտի կարգադրությամբ պոնտական զորքերը հարկադրված եղան մաքրել այդ երկիրը և Կապադովկիայի թագավոր ընտրվեց Արիոբարզան Ա. Հռոմեասերը։

Հռոմայեցիների հենց այս բարեկամի թագավորության ժամանակ Տիգրան Բ-ն գրավել էր 94 թվին Ծոփքը, որը, ինչպես ասացինք, սահմանակից էր Կապադովկիային և հին դաշնակիցն էր ու բարեկամն Արիարաթների թագավորության։ Իբրև նախկին պաշտպանն ու հովանավորը Ծոփաց Զարեհյան թագավորության՝ Կապադովկիան այժմ, բնականաբար, վտանգավոր հարևան էր համարվելու Մեծ Հայաստանի։ Հասկանալի է նույնպես, որ Արիոբարզան Ա-ն, Հռոմեական քաղաքականության հլու և հնազանդ սպասավորը, խոչընդոտ էր դառնում պոնտական քաղաքա-

կանության վերոհիշյալ ձգտումների իրագործման, որոնցից չէր կարող հրաժարվել Միհրդատ Եվպատորը։

Առաջին դարի սկզբներին Կապադովկիան, ինչպես տեսնում ենք, ընդհանուր թշնամի էին համարելու և Տիգրանը, և Միհրդատը, և միանգամայն բնական է, որ նրանք աշխատելու էին միանալ իրար հետ ընդդեմ հարևան այդ թագավորության։ Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ռուսերեն իմ աշխատության մեջ[1], հենվելով Ռեյնաքի ենթադրության վրա՝ ես մատնանշել էի, բացի այդ, որ պոնտական թագավորների և հատկապես Միհրդատ Եվպատորի բարեկամական քաղաքականությունը Հայաստանի, Ատրպատականի և Իբերիայի հանդեպ բացատրվում է պոնտական մեծ առևտրի շահերով[2]։ Այս երկրների բարեկամությունը խոշոր նշանակություն ուներ Պոնտոսի համար, որովհետև նրա մեծ նավահանգիստները հավաքատեղեր էին և հանգուցակետեր համաշխարհային մեծ առևտրի և միջազգային տարանցիկ ճանապարհների, որոնք գալիս էին Հեռավոր Արևելքից ու Միջին Ասիայից և Եկբատանայի ու Արտաշատի վրայով գնում էին, գլխավորապես, պոնտական Ամիսոս և Սինոպ քաղաքները։

Բարեկամական այս հարաբերությունները, որ գոյություն ունեին Պոնտոսի և Մեծ Հայաստանի միջև, Տիգրան Բ-ի ժամանակ դառել էին ավելի սերտ ու մտերիմ։ Աչքի առաջ ունենալով իրենց երկրների կենսական շահերը՝ Տիգրան Բ-ն և Միհրդատ Եվպատորը 95 կամ 94 թվին կնքեցին հատուկ դաշնագրություն, որի նպատակն էր ո՛չ թե նախապատրաստվող հայ-պոնտական պատերազմն ընդդեմ Հռոմի, ինչպես գունավորված ու շփոթ կերպով պատմում է Յուստինոսը, այլ, հավանորեն, Տիգրան Բ-ի ռազմական աջակցությունը Միհրդատին ընդդեմ հարևան Կապադովկիայի։ Կնքված դաշինքի համաձայն, որն ամրապնդել էին Տիգրանի ամուսնությամբ Միհրդատի աղջկա՝ Կլեոպատրայի հետ, երկու թագավորները պայմանավորվել էին, որ նվաճված քաղաքներն ու շրջանները պատկանելու են Միհրդատին, իսկ գերիներն ու շարժական գույքը՝ Տիգրանին։

Յուստինոսի վկայությունն այս դաշինքի մասին հարկ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։

«Այդ ժամանակ Արմենիայի թագավորն էր,—պատմում է Յուստինոսը,—Տիգրանը, որը պատանդ էր տրվել վաղուց

[1] Տե՛ս «О торговле и городах Армении», էջ 48։

[2] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 78 և 234։

պարթևներին և քիչ առաջ հետ էր ուղարկվել իր հայրենի թագավորությունը։ Սրան շատ էր ուզում Միհրդատը դաշնակից անել ընդդեմ հռոմայեցիների, որոնց հետ նա վաղուց հետե մտադիր էր պատերազմ սկսել։ Եվ թեև Տիգրանը հռոմայեցիների կողմից չէր կրել որևէ անարգանք՝ նա դրդում է նրան Գորդիոսի միջոցով, որ հարձակվի Արիոբարզանի վրա, որը խիստ թույլ էր։ Իսկ որպեսզի չերևա, որ որոշ խորամանկություն կա դրա տակ՝ նա ամուսնացնում է նրա հետ իր աղջկան՝ Կլեոպատրային[3]։ Տիգրանի առաջին հենց հարձակման ժամանակ Արիոբարզանը վերցնում է իր գույքը և փախչում է Հռոմ։ Եվ այսպիսով Տիգրանի օգնությամբ Կապադովկիայում սկիզբ է դրվում նորից Միհրդատի իշխանության։ Նույն այս ժամանակ մեռնում է Նիկոմեդեսը և նրա որդուն, որի անունը նույնպես Նիկոմեդես էր, դուրս է վտարում թագավորությունից Միհրդատը։ Երբ սա Հռոմ է գալիս որպես աղաչավոր՝ ծերակույտը վճռում է, որ երկուսն էլ պետք է վերահաստատվեն իրենց թագավորություններում։ Այս գործի համար ուղարկվում են իբրև լեգատներ Մ. Ակվիլիոսը և Մանլիոս Մալթինոսը։ Երբ այս բանն իմացվում է՝ Միհրդատը դաշն է կնքում Տիգրանի հետ, որպեսզի պատերազմ սկսե հռոմայեցիների դեմ։ Նրանք պայմանավորվել էին իրար հետ, որ քաղաքները և հողերը պատկանելու են Միհրդատին, իսկ մարդիկ և ինչ որ հնարավոր է տանել՝ Տիգրանին»[4]։

Յուստինոսի այս վկայությունը, որ եվրոպական պատմագիտության մեջ հիմք է ծառայել անհավանական եղրակացությունների, ինչպես շատ ճիշտ նկատել է Ռեյնաքը, այնքան խառնաշփոթ է, որ կարելի է համարել կասկածելի[5]։

93—89 թվերի վերոհիշյալ պատմական անցքերը, որ խառն ու հակիրճ կերպով պատմված են Յուստինոսի վկայության մեջ՝ տեղի էին ունեցել, իրապես, ինչպես երևում է անկախ Յուստինոսից մատենագրական նաև մյուս աղբյուրների վկայություններից՝ հետևյալ հաջորդականությամբ։

[3] Տիգրանի ամուսնության մասին Կլեոպատրայի հետ համեմատ նաև Պլուտարքոս, Լուկուլլոս, 22 և Ապպիանոս, Միհրդատականք, 104։

[4] Տե՛ս Յուստինոս, XXXVIII, 3, 1—5։

[5] Տե՛ս Mithridate Eupator, էջ 115, ծանոթ. 3։

93 թվին (մեր թվ. առ.), Ծոփքի միացումից անմիջապես հետո, Տիգրան Բ-ն, ինչպես վկայում է Յուստինոսը, Միհրդատի հորդորմամբ հարձակվել էր Կապադովկիայի վրա, գրավել էր ամբողջ երկիրը և Արիոբարզան Ա-ն փախել էր Հռոմ: Վերջինիս փոխարեն, նույն 93 թվին, վերահաստատվեց այստեղ իրեն թագավոր Միհրդատի փոքրահասակ որդին՝ Արիարաթը, որի խնամակալն էր Գորդիոսը: Կապադովկիան նվաճելուց հետո, ինչպես տեսնում ենք, Տիգրանն ինքը վերադարձել էր Հայաստան և իր գրաված ամբողջ երկիրը հանձնել էր Միհրդատի որդուն: Հենց ինքն այս փաստը հիմք է տալիս ըստ իս եզրակացնելու, որ Յուստինոսի մատնանշած վերոհիշյալ դաշինքը, որի համաձայն «քաղաքներն ու հողերը պատկանելու էին Միհրդատին», կնքված է եղել, հավանորեն, 93 թվից առաջ:

Հռոմեական ծերակույտի հրամանով, ինչպես հայտնի է Պլուտարքոսից[6], շուտով Կապադովկիա եկավ Կիլիկիայի փոխպրետորը՝ Սուլլան: Սա պարտության մատնեց Գորդիոսի և Տիգրանի զորքերը և նորից հաստատեց Կապադովկիայի գահի վրա դաշնակից Արիոբարզան Ա-ին: Երբ Սուլլան գտնվում էր Եփրատ գետի մոտ՝ նրա մոտ էր եկել այնտեղ (92 թվին) պարթևների թագավոր Միհրդատ Բ-ի դեսպանը, Որոբազոսը, որը, ինչպես հաղորդում են աղբյուրները[7], բարեկամական բանակցություններ էր վարել Սուլլայի հետ և առաջարկել էր, որ Եփրատ գետը լինի սահման երկու պետությունների միջև: Այս վկայությունը պարզ ցույց է տալիս, որ միանգամայն սխալ է Կուրտ Էքհարդի կարծիքը, որը Տիգրան Բ-ի կռիվները պարթևների դեմ և Միջագետքի ու պարթևական մանր վասսալ պետությունների միացումը Հայաստանին դնում է 92 թվից առաջ[8]:

Հավանորեն 91 թվին՝ Սուլլայի հեռանալուց անմիջապես հետո՝ Միթրաոսը և Բագոասը, որոնք, ըստ երևույթին, Տիգրան Բ-ի զորավարներն էին՝ նորից հարձակվեցին ու գրավեցին Կապադովկիան: Արիոբարզանն այս անգամ ևս փախավ Հռոմ և նրա գահը նորից տրվեց Միհրդատի Արիարաթ որդուն[9]:

[6] Սուլլա, 5:

[7] Տե՛ս Պլուտարքոս, Սուլլա, 5, Ապպիանոս, Միհրդատ., 57 և Ջլորուս, 70:

[8] Տե՛ս K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio Bd. IX, 4, էջ 403:

[9] Ապպիանոս, Միհրդատ., 10:

Նույն 91 թվին, Նիկոմեդես Բ-ի մահից հետո, երկպառակություններ էին ծագել նաև Բիթանիայում: Հռոմն այստեղ թագավոր էր հաստատել Նիկոմեդես Բ-ի մեծ որդուն՝ Նիկոմեդես Գ-ին: Սակայն նրա կրտսեր որդին, Սոկրատեսը, ապավինելով Միհրդատ Եվպատորին և ստանալով սրանից պոնտական զորքեր՝ կարողացավ ինքը գրավել Բիթանիան, իհարկե, առանց Հռոմի համաձայնության:

Երկու հալածված թագավորները՝ Արիոբարզան Ա-ն և Նիկոմեդես Գ-ն՝ եկան, ինչպես վկայում են Յուստինոսը և Ապպիանոսը[10], Հռոմ և օգնություն խնդրեցին հռոմայեցիներից: Հռոմեական ծերակույտն այս անգամ ուղարկեց Արևելք Մանիուս Ակվիլիոսին և Մանլիոս Մալթինոսին, որոնք 89 թվին, առանց կռվի ու որևէ հակառակության, վերահաստատեցին նրանց իրենց թագավորություններում:

Մեջ բերված փաստական այս տեղեկությունները, որ վերաբերվում են 93—89 թվերի վերոհիշյալ պատմական անցքերին՝ պարզ ցույց են տալիս, որ Յուստինոսի վկայությունը ո՛չ միայն խիստ համառոտ է, այլև տեղ-տեղ վիճելի է ու անհավաստի:

Յուստինոսի մոտ հիշատակված է Տիգրան Բ-ի առաջին միայն հարձակումը Կապադովկիայի վրա և բաց է թողնված Միթրաոս և Բագոաս զորավարների երկրորդ արշավանքը: Նրա վկայությունից ստացվում է պարզապես այն տպավորությունը, որ Նիկոմեդես Գ-ն ևս, ինչպես և Արիոբարզանը, փախել էր Հռոմ 93 թվին: Բացի այդ, համաձայն նրա վկայության, Միհրդատի ու Տիգրանի դաշնակցությունը վերաբերվում է ո՛չ թե 93 և 91 թվերի արշավանքներին, երբ Տիգրանն ու Միհրդատը գործում էին, իրապես, համաձայն այդ դաշինքի, այլ 88 թվի հռոմեական-պոնտական մեծ պատերազմին, որին Տիգրանը, ինչպես կտեսնենք, բնավ չէր մասնակցել:

Եվրոպական պատմագետները, հավատ ընծայելով Յուստինոսի կասկածելի այս վկայություններին՝ Տիգրան Բ-ի մասնակցությանը 93—84 թվերի անցքերին տվել են, իմ կարծիքով, միանգամայն վիճելի ու անհավաստի լուսաբանություն: Բավականաչափ հիմնավորված չէ ըստ իս, նախ և առաջ, ընդհանրացած այն կարծիքը, որ իբր թե Տիգրանը հզու և անխոս մի գործիք է եղել Միհրդատ Եվպատորի քաղաքական նպատակների իրա-

[10] Յուստ., XXXVIII, 3, 4 և Ապպիանոս, Միհրդատ., 9—11:

գործման[11]։ Մենք ասացինք արդեն վերև, որ Տիգրանի մասնակցությունը 93 թվի Կապադովկիայի նվաճմանը բացատրվում է պարզապես նրանով, որ Մոփքի միացումից հետո այդ երկիրը վտանգավոր հարևան էր դառել Մեծ Հայաստանի արևմտյան սահմանում։ Դժվար չէ կռահել, որ նաև 91 թվի արշավանքը կարևոր նշանակություն ուներ Հայաստանի համար, որովհետև պարթևների բարեկամական բանակցություններին Սուլլայի հետ (92 թվ.) մասնակցել էր, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[12], նաև Կապադովկիայի թագավոր Արիոբարզան Ա Հռոմեասերը։ Իսկ պարթևների, Հռոմի և Կապադովկիայի բարեկամական համաձայնությունը չէր կարող ցանկալի լինել, իհարկե, Տիգրան Բ-ին։ Եվ հասկանալի է, որ նա, հանձնելով Կապադովկիայի թագավորությունն Արիարաթին և Գորդիոսին՝ ապահովում էր իր թիկունքն արևմուտքում և ամրացնում էր իր քաղաքական դիրքերը հայ-պարթևական կռիվների համար։

Մի մեծ թյուրիմացություն է, բացի այդ, Մոմզենի, Մորգանի և ուրիշների կարծիքը[13], որ իբր թե Տիգրան Բ-ի և Միհրդատ Եվպատորի դաշնագրությունը վերաբերվել է ո՛չ միայն Կապադովկիայի, այլև հռոմեական-պոնտական 88—84 թվերի մեծ կռիվներին, որ նախապատրաստում էին վաղօրոք Միհրդատը և Տիգրանը։ Այս ենթադրությունը նրանց հիմք է ծառայել մեղադրելու Տիգրան Բ-ին, որ սա խախտել է այդ կռիվների ընթացքում Միհրդատի հետ կնքած դաշինքը[14]։ Մենք կտեսնենք սակայն ներքև, որ իննսնական թվականների վերջերում (մեր թվ. առ.) ո՛չ Միհրդատը և ո՛չ էլ Տիգրանը որոշած չէին կարող լինել պատերազմել հռոմայեցիների դեմ։ Միանգամայն նաև անհավանական է, որ հայ-պարթևական կռիվներից առաջ Տիգրան Բ-ն համաձայնած լիներ անմիտ ու արկածախնդրական մեծ պատերազմ սկսելու ընդդեմ հզոր ու աշխարհակալ Հռոմի։

Ինձ թվում է, որ ավելի քան հավանական կարելի է համարել, որ Յուստինոսի օգտագործած հռոմեական աղբյուրը, մատնանշելով, որ Միհրդատի ու Տիգրանի դաշինքը կնքված է եղել Մանիոս Ակվիլիոսի Արևելք գալուց հետո, այսինքն՝ 88—84 թվերի հռոմեական-պոնտական պատերազմից առաջ, հավանորեն հատուկ միտում է ունեցել հետագա կռիվների պատասխանատվությունը վերագրելու Միհրդատին ու Տիգրանին։ Սակայն, իրապես, ինչպես ներքև կտեսնենք, այդ մեծ պատերազմի առիթ տվողը ո՛չ թե Միհրդատն էր, այլ Մանիոս Ակվիլիոսը։ Իսկ Տիգրանը, որ ամենևին չէր մասնակցել այդ կռիվներին՝ բոլորովին անհիմն կերպով է մեղադրվում դաշնադրության խախտման համար։ Վերոհիշյալ դաշինքով նա պարտավորություններ էր հանձն առել ո՛չ թե հռոմեական-պոնտական պատերազմի, այլ միմիայն Կապադովկիայի նկատմամբ։

Որ Յուստինոսի՝ դաշնակցության մասին վկայությունը սխալ է և միտումնավոր՝ այդ ցույց են տալիս, ինչպես կտեսնենք, բոլոր հետագա պատմական փաստերը։

---

[11] Համեմատե Th. Reinach, Mithridate Eupator, էջ 105, K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, IX, I, էջ 403—404, Dolens et Khatch, Histoire des anciens Arméniens, Genève, 1907, և ուրիշները։

[12] Տե՛ս Պլուտարքոս, Սուլլա, 5։

[13] Տե՛ս Моммсен, Римская история, т. II, Москва, 1887, էջ 286, J. Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919, էջ 70, В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918, էջ 24 և այլն։

[14] Տե՛ս, օրինակ, Reinach, Mithridate Eupator, էջ 311։

5. ՄԻՀՐԴԱՏՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (88—84 ԹԹ.)

Միհրդատյան այս պատերազմը և սոցիալական մեծ հեղափոխությունն Արևելքում ու Հունաստանում ես հույս ունեմ, որ կկարողանամ ընդարձակ կերպով քննության առնել հաջորդ իմ ուսումնասիրություններից մեկում։ Իսկ այժմ այդ անցքերի վրա ես կանգ եմ առնելու համառոտ կերպով ու հատկապես այն նկատառումով, որ եվրոպական պատմագեաններից ոմանք, օրինակ, Շպիգելը և Մոմզենը, այս պատերազմին սխալմամբ մասնակից են դարձրել նաև Տիգրանյան Մեծ Հայաստանը[1]։

88—84 թվերի պատերազմի մասին գերիշխող է դառել նաև այն կարծիքը, որ իբր թե Միհրդատ Եվպատորը կամ Մեծը հնամառ կերպով զինվել ու նախապատրաստվել էր կովի ընդդեմ հռոմայեցիների, նպատակ էր դրել իրեն վտարել նրանց Ասիայից և այդ նպատակով կովից առաջ դաշն էր կնքել Տիգրան Բ-ի հետ։

Այս ենթադրությունները, իմ կարծիքով, կարոտ են վերաքննության։ Աղբյուրների փաստական վկայություններից պարզ երևում է, որ Միհրդատն ամեն ջանք գործ էր դրել, որպեսզի կարողանա խույս տալ ահեղ այս պատերազմից։ Նա հսկայական գումարներ էր ծախսել Հռոմում, որպեսզի կաշառված ծերակուտականների միջոցով վիճելի խնդիրները լուծվեն խաղաղ ճանապարհով։ Մշտական գժտությունների առիթ տվող այդպիսի հարցեր էին ո՛չ միայն Կապադովկիայի, այլ, մանավանդ, նաև Բիթանիայի թագավորության խնդիրը, որի բարեկամությունն ու չեզոքությունը չափազանց կարևոր էին Պոնտոսի համար նրա հյուսիս-արևելյան սահմանում գտնվող Բոսփորյան նեղուցի պատճառով։ Միհրդատի ծավեզբյա պետության համար, որի հոյակապ ու հարուստ հելլենիստական քաղաքները խոշոր կենտրոններ էին համաշխարհային տարանցիկ առևտրի, սևծովյան նեղուցներից

[1] Տե՛ս F. Spiegel, Eranische Alterthumskunde, Leipzig, 1878, Bd. III, էջ 92 և Моммсен, Римская история, т. II, перевод Неведомского, Москва, 1887, էջ 286 և 287։

հարցն ուներ, բնականաբար, կենսական նշանակություն։

Որ Միհրդատը 88 թվին չէր ուզում, իրոք, պատերազմել Հռոմի հետ՝ այդ պարզ երևում է հենց իրենց իսկ հռոմեական աղբյուրների վկայություններից։ Այդ աղբյուրներից մենք գիտենք, որ՝ չնայած Կապադովկիայի ու Բիթանիայի խնդիրների քաղաքական ու տնտեսական բացառիկ կարևորությանը Պոնտոսի համար՝ Միհրդատը, այնուամենայնիվ, խուսափելով պատերազմից՝ չհակառակեց, որ Նիկոմեդեսը և Արիոբարզանը վերահաստատվեն իրենց թագավորություններում։

88—84 թվերի պատերազմի համար պատասխանատու է, անտարակույս, ո՛չ թե Միհրդատը, այլ հռոմեական դեսպան Մանիոս Ակվիլիոսը։ Սա էր, որ դրդեց Նիկոմեդեսին հարձակվելու և կողոպտելու Պոնտոսի հյուսիս-արևելյան շրջանները մինչև Սմաստրիս ու ստիպեց նրան պոնտական թալանված բնակչության հաշվին վճարել իրեն և հռոմեական ֆինանսիստներին նրա հակակալության համար արված ծախսերը։

Միհրդատը չդիմադրեց և չկռվեց մինչևիսկ այս ավազակային հարձակման ժամանակ։ Նա շարունակեց իր խաղաղ բանակցությունները և խնդրեց միայն, որ իրեն թույլ տրվի պաշտպանվել և կռվել Նիկոմեդեսի դեմ։ Եվ երբ հռոմեական դեսպանները մերժեցին նաև այս դիմումը՝ նա համոզվեց, որ բանակցություններն այլևս անօգուտ են, և ինքնապաշտպանության միակ միջոցը պատերազմն է։

> «Չէ՞ որ ավազակի դեմ,—բացականչել էր նա,—ամեն ոք զենքի է դիմում, եթե ոչ փրկվելու՝ գոնե վրեժ առնելու համար»[2]։

Միհրդատի խաղաղ բանակցությունները, ինչպես միանգամայն ճիշտ բացատրել է Մոմզենը, ո՛չ թե դիվանագիտական խորամանկ խաղեր են եղել, այլ անկեղծ ձգտում խուսափելու պատերազմից, որը նա չէր ցանկանում և համարում էր դժվար ու վտանգավոր։

> «Թեև բանակցությունների խղումը,—ասում է Մոմզենը,—չէին ուզում ո՛չ հռոմեական ծերակուտը, ո՛չ Միհրդատ թագավորը և ո՛չ էլ Նիկոմեդես թագավորը՝ սակայն այդ ցանկանում էր Ակվիլիոսը, և պատերազմը սկսվեց»[3]։

Ընդունելով սակայն, որ Միհրդատը չէր ուզում պատերազմել Հռոմի հետ՝ Մոմզենը, այնուամենայնիվ, ենթադրում է, որ

[2] Տե՛ս Յուստինոս, XXXVIII, V, 2։

[3] Տե՛ս «Римская история», II, Москва, 1887, էջ 286։

իբր թե պատերազմը սկսելուց առաջ նա կնքել էր նոր ու ավելի սերտ դաշնադրություն Տիգրանի հետ և ստացել նրանից օժանդակ մի զորաբանակ[4]։

Մոմզենի ենթադրությունը նոր դաշինքի կնքման մասին, որ հիմնված է պարզապես Յուստինոսի վերոհիշյալ վկայության վրա, ինչպես տեսանք, միանգամայն անհավանական է։ Թյուրիմացության արդյունք է նույնպես, ինչպես մատնացույց է արել իր հոդվածներից մեկում Ռեյնաքը[5], նաև Մոմզենի մյուս ենթադրությունը, որ իբր թե պատերազմից առաջ Միհրդատը Տիգրանից ստացել էր օժանդակ զորաբանակ։

Արմենների զորագունդը, որը մասնակցել էր այս պատերազմին և բաղկացած էր 10.000 հոգուց՝ հիշատակված է, իրոք, Ապպիանոսի մոտ[6]։ Վերջինս բացի Միհրդատի բուն զորքից (τὸ οἰκεῖον)՝ 250.000 հետևակ և 40.000 ձիավոր՝ առանձնապես մատնանշում է նաև Փոքր Հայքի օգնական 10.000 հեծելազորը (συμμαχικὸν)։ Այս այրուձին, ինչպես հայտնի է աղբյուրներից՝ մասնակցել էր Միհրդատի որդի Արիարաթի և, հավանորեն, Նեմանես կամ Նայմանես արմեն զորավարի առաջնորդությամբ հաղթական երկու մեծ կռիվներին Ամնիաս գետի և Պրոտոպաքիոնի մոտ։ Բայց այս զորքը ո՛չ թե Տիգրանի ուղարկած օժանդակ զորաբանակն էր, այլ հեծելագունդն էր Փոքր Հայքի, որն այդ ժամանակ, հավանորեն, միացված էր Արիարաթի Կապադովկիայի թագավորության[7]։

Ամնիասի և Պրոտոպաքիոնի մոտ Միհրդատի առաջին հաղթություններից հետո կռիվը Փոքր Ասիայում ստացավ հետզհետե նախ ազգային և ապա սոցիալական հեղափոխության բնույթ։ Պոնտական զորքերի հաղթական մուտքն արևմտյան Փոքր Ասիա մեծ ոգևորություն առաջացրեց, գլխավորապես, հելլեն ազգայնականների և, մանավանդ, դեմոկրատների շրջանում։ Այս վերջիններն անշուշտ ատում էին հռոմեական դաժան իշխանությունը, որը վերացրել էր հելլենների անկախությունը և, պաշտպան կանգնելով ազնվականության ու հարուստների՝ կեղեքում էր սրանց հետ միասին ռամիկ ժողովրդին։ Թե ո՛րքան վայրագ էին այս կեղեքումները՝ այդ վկայում են իրենք հենց հռոմայեցիները։

[4] Տե՛ս նույնը, էջ 286 և 287։

[5] Տե՛ս Revue des études grecques, II, էջ 384։

[6] Տե՛ս Միհրդատ., 17։

[7] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 122, ծանոթ. 1։

Օրինակ, Կիկերոնը մատնանշում է, որ հռոմայեցիների անունն Ասիայի համար նողկալի էր, իսկ հարկերը, տասանորդը և մաքսերը միջոցներ էին մահվան։

Միհրդատը, որը պատերազմից առաջ ճանապարհորդել էր ծպտված և ծանոթացել Փոքր Ասիայի ներքին այդ դրությանը՝ արդեն պատերազմի սկզբում աշխատեց պաշտպան ու հովանավոր լինել կեղեքված փոքրասիական ժողովրդին։ Գերված ասիացի զինվորներին նա ո՛չ միայն ազատում և տուն էր ուղարկում, այլ նրանց տալիս էր նաև ճանապարհածախս։

88 թվին Միհրդատն ամենակարճ ժամանակում նվաճեց գրեթե ամբողջ Փոքր Ասիան։ Բնակչությունն ընդունում էր նրան գերկաբաց և պատվում էր նրան՝ իբրև ազատարարի ու նոր Դիոնիսոսի։ Նրան համարում էին Աղեքսանդր Մակեդոնացու նման հելլենական-ասիական մի նոր աշխարհակալության հիմնադիր։

Հռոմեական իմպերիալիզմի ավելի քան քառասուն տարի տևող անողոք կեղեքումները, ինչպես ասացինք, առաջ էին բերել Փոքր Ասիայում կատաղի ու անզուսպ ատելություն դեպի Հռոմը և, մանավանդ, դեպի նրա վարձակալներն ու վաշխառուները։ Եվ միանգամայն հավանական կարելի է համարել անգլիական պատմաբան Մերիվելի կարծիքը[8], որ մոտ 80.000 իտալացիների կոտորածը Փոքր Ասիայում ավելի շուտ պետք է վերագրել այս ատելությանն ու ոխակալությանը, քան Միհրդատի կանխամտածված թաքուն հրահանգներին։

Արդեն 88 թվին ապստամբության հրդեհը հետզհետե տարածվեց Փոքր Ասիայում և ազատագրված երկրում շուտով տարերային կերպով բռնկվեց սոցիալական ամենամեծ հեղափոխություններից մեկը, որն անցավ նաև Հունաստան։

88 թվի ամառը Հունաստանում ոտքի ելան և ապստամբեցին աթենացիները, որոնց Փոքր Ասիայից նրանց դեսպանը հայտնել էր, որ՝ թոթափելով Հռոմի իշխանությունը՝ նրանք կազատվեն պարտքերից և կվերականգնեն նախկին դեմոկրատիան ու իրենց հին ազատությունները։

88 թվի վերջերում պոնտական զորքերը, Միհրդատի որդու՝ Արիարաթի առաջնորդությամբ, անցան Եվրոպա և գրավեցին Թրակիան ու Մակեդոնիայի մի մասը։ Այս Արիարաթի հետ, որը Կապադովկիայի և, ըստ երևույթին, նաև Փոքր Հայքի թա-

[8] Տե՛ս General history of Rom, 1875։

գավորն էր՝ այստեղ ևս կռիվներին մասնակցել էր արմենական վերոհիշյալ հեծելազորը։ Բացի Թրակիայից և Մակեդոնիայի մի մասից, Աթենքի ապստամբությունից հետո Միհրդատի կողմն անցան Հելլադայի գրեթե բոլոր մանր պետությունները և էգեյան ծովի բոլոր կղզիները, բացի Հռոդոսից։

Պետք է ասել, որ եվրոպական պատմագիտությունն այս մեծ անցքերը ներկայացրել է զունավորված ձևով և Միհրդատյան շրջանի խոշոր դեմքերը նկարագրել է որոշ կողմնապահությամբ։ Խիստ բնորոշ է այս տեսակետից, որ մինչևիսկ հռոմայեցիները, որոնք որերիմ թշնամիներն էին Միհրդատի, ավելի դրական ու ավելի անաչառ կերպով են ավել սրա բնութագիրը, քան եվրոպական նորագույն պատմագետները։ Կիկերոնը Միհրդատ Եվպատորին համեմատում էր Աղեքսանդր Մակեդոնացու հետ և նրան համարում է ամենամեծ թագավորն Աղեքսանդր Մակեդոնացուց հետո[9]։ Յուստինոսը վկայում է, որ Միհրդատն այնպիսի մի մեծություն էր, որն իր վեհությամբ գերազանցում էր բոլոր թագավորներին թե իր և թե հետագա ժամանակների[10]։ Ընդհակառակը, Մոմզենը Միհրդատին անվանում է ամենաստվորական կարգի խստասիրտ, ննջգաղրուժ և անխիղճ արևելցի[11], իսկ Ռեյնաքը համարում է նրան հելլենական դիմակ հագած բարբարոս և առող միջերկրական քաղաքակրթության[12]։

Միհրդատի անձնավորության նորագույն թե այս և թե նրման գնահատականները միանգամայն անհավանական են և անհիմն։ Դժվար չէ կռահել, որ եվրոպական վերոհիշյալ պատմագետների հակակրանքը Միհրդատի նկատմամբ բացատրվում է մասամբ նրանով, որ նա փորձ էր արել քայքայել հռոմեական իմպերիալիզմը ո՛չ միայն զենքով, այլև սոցիալական դասակարգային հեղափոխությամբ, որը պատմագետների մեծագույն մասը մահացու մի հանցանք է համարում ընդդեմ քաղաքակրթության։

Արդեն իր տիրապետության սկզբներում Միհրդատն ուզեց թևթևացնել Փոքր Ասիայի տնտեսական ծանր դրությունը և ազատեց իր գրաված ամբողջ երկիրը թե հարկային հին ապարքներից և թե հետագա հինգ տարվա հարկերից։ Մոմզենն անմրցություն է համարում նույնիսկ Միհրդատի այս մեծագործությունը[13]։ Փոքր Ասիայի կեղեքված ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցան, բացի այդ, նաև նրա 87 և 86 թվականների սոցիալական և տնտեսական ձեռնարկումները տեղական պլուտոկրատիայի դեմ, որը մասնակից էր Հռոմի հետ միասին Փոքր Ասիայի շահագործմանը և կողմնակից էր, բնականաբար, հռոմեական իմպերիալիզմի իշխանության։

Իբրև պաշտպան և հովանավոր փոքրասիական ժողովրդի՝ Միհրդատն ազատություն տվեց իրեն հնազանդվող քաղաքներին ու քաղաքացիության իրավունքներ տվեց տեղական բնակչությանը և օտարականներին։ Նրա կարգադրությամբ ոչնչացված հայտարարվեցին բոլոր պարտքերը, բաժանվեցին հողեր չքավորներին, և սարուկները ստացան ազատություն։

Մոտ 15.000 ազատագրված սարուկներ, ինչպես հայտնի է աղբյուրների վկայություններից, կռվում էին հռոմայեցիների դեմ Հունաստան ուղարկված պոնտական զորքերի շարքերում։ Ուշագրավ է նույնպես, որ հռոմայեցիների կողմնակից Քիոս կղզու բնակիչներին աքսոր էին ուղարկել Կողքիս, հանձնելով նրանց սեփական սարուկների հսկողության։

Հեղափոխության պատճառով պատերազմը շարունակվեց հռոմայեցիների դեմ քաղաքացիական և դասակարգային կռիվների հետ զուգընթաց։ Եվ պոնտական պատերազմող բանակի թիկունքում Միհրդատի իշխանության դեմ շուտով ոտքի ելան Փոքր Ասիայի և Հունաստանի ազնվական ու գրամատիրական իշխող դասակարգերը։

Երբ 87 թվի սկզբներում Սուլլայի զորաբանակը Հռոմից եկավ Բեովոտիա, Հունաստանի մեծագույն մասը, որի մեջ ուժեղ էին հակադեմոկրատական տարրերը, անցավ Հռոմի կողմը։ Հասկանալի է, ուրեմն, որ Սուլլայի հաղթական կռիվները Հունաստանում, ինչպես և հռոմեական բանակների հաջողությունները Փոքր Ասիայում՝ պետք է վերագրել ո՛չ միայն պրոֆեսիոնալ և մարզված հռոմեական զորքերի գերազանցությանը կամ պոնտական Արքելայոս զորավարի դավաճանությանը, այլև ներքին հակահեղափոխական ապստամբություններին ընդդեմ Միհրդատի։ Թե ո՛րքան մեծ է եղել ապստամբների աջակցությունն ու գայրույթը դեպի Միհրդատը՝ այդ երևում է աղբյուրների համապատասխան վկայություններից, որոնց մեջ մատնանշված է, որ մոտ 1600 մարդ

---

[9] Տե՛ս Acad. II, 1, 3;

[10] Տե՛ս Յուստինոս, XXXVII, 1, 7։

[11] Տե՛ս «Римская история», II, Москва, 1887, էջ 272:

[12] Տե՛ս Mithridate Eupator, էջ 299։

[13] Տե՛ս «Римская история», II, Москва, 1887, էջ 290:

մահվան էին դատապարտվել Փոքր Ասիայում, մեղադրվելով իբրև Միհրդատի դեմ մահափորձի դավակիցներ։

Միհրդատյան առաջին պատերազմը վերջացավ 84 թվին և համաձայն Դարդանոսում ընդունված բանավոր դաշինքի պայմանների Միհրդատը հրաժարվեց իր բոլոր նվաճումներից և պարտավորվեց վճարել Սուլլային 2000 տաղանդ ոսկեդրամ և հանձնել նրան 70 կամ 80 ռազմանավ։

Վերոհիշյալ պատմագետները, ենթադրած լինելով, որ Տիգրան Բ-ն մասնակցած է եղել այս պատերազմին՝ անհասկանալի են համարում և տարօրինակ, որ Դարդանոսի դաշնագրության մեջ չէ հիշատակվում Մեծ Հայաստանը։

«Այս դաշնագրության մեջ,—ասում է Մոմզենը,—բոլորովին չէր շոշափված հռոմայեցիների վերաբերմունքը դեպի Հայաստանի Տիգրան թագավորը, որի հետ նրանք փաստորեն պատերազմել էին։ Միանգամայն հիմնավոր կերպով Տիգրանն ընդունեց այդ հանգամանքն իբրև լռելյան համաձայնության նշան, որ նրան թույլատրվում է գրավել Փոքր Ասիայում հռոմեական երկրները։ Քանի որ չէր կարելի թույլ տալ, որ այդ երկրները զոհ դառնան բարբարոսներին՝ անհրաժեշտ էր կամովին կամ ուժով համաձայնության գալ Ասիայի նոր այդ ուժեղ տիրակալի հետ»[14]։

Մոմզենի այս դիտողությունները չեն կարող ընդունելի համարվել և պարզապես թյուրիմացության արդյունք են։ Տիգրանը, ինչպես վերև տեսանք, չէր մասնակցել և պարտավորություններ չէր ստանձնել մասնակցելու այս պատերազմին, ուստի և միանգամայն հասկանալի է, որ հռոմայեցիները հիմք չունեին մասնակից դարձնելու նրան Դարդանոսի դաշնագրության։

Հռոմեական իմպերիալիզմի վերահաստատումը Փոքր Ասիայում սոսկալի և աղետալի եղավ այս երկրի համար։ Հեղափոխությունն այստեղ ճնշվեց ամենադաժան կերպով, մի շարք քաղաքներ ենթարկվեցին ավերածության ու կողոպտման, անթիվ քանակությամբ նոր ստրուկներ ուղարկվեցին Իտալիա և Հռոմ։ Ի պատիժ իր անհավատարմության՝ Փոքր Ասիան վճարելու էր 2000 տաղանդ ոսկեդրամ և, բացի այդ, նաև նախորդ հինգ տարվա (88—84 թ.) հարկերի ամբողջ գումարը։ Հռոմեական զորքերը մոտ վեց ամիս լիառատ ապրեցին Փոքր Ասիայի քաղաքներում, որի բնակչությունը պարտավոր էր ամենաճոխ կերպով

[14] Տե՛ս «Римская история», III, Москва, 1887, էջ 32։

պահել ու կերակրել նրանց և վճարել յուրաքանչյուրին նրա սովորական ոռճիկի ավելի քան քառասնապատիկը։

Այսպիսով՝ 84 թվից սկսած Փոքր Ասիան շահագործվեց ու թալանվեց այն աստիճան, որ հարկադրված եղավ ծախել բոլոր իր հարստությունները և մինչևիսկ աշխատավոր որակյալ իր ժողովուրդը։ Նա անկարող եղավ, այնուամենայնիվ, վճարել ո՛չ միայն վերոհիշյալ վիթխարի պարտքերը, այլև այդ պարտքերի տոկոսները։

Միհրդատյան առաջին այս պատերազմն անհրաժեշտ էր համառոտ կերպով հիշատակել, որովհետև այդ պատերազմի մասին աղոտ հիշողություններ պահպանված են Խորենացու պատմության և աշխարհագրության մեջ։ Կարևոր այդ վկայությունները, որ կարող են հատուկ քննության՝ մեջ եմ բերում ամբողջությամբ։

1. Խորենացի II, գլ. ԺԲ, էջ 123 (Տփղիս, 1913)՝

«Բայց Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զովկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս։ Քանզի մեծ յոյզք խռովութեանց եղեալ ի Հռոմ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս։ Այլ ո՛չ գիտեմ ասել յո՛րիսի ազգմանէ, ահագին իմն ազմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, թագաւորեալ ամս քսան և հինգ։

Բայց և յելլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրդեմիտեայ, զԱթենայ, զՀեփեստոս, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զբօթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին ձեռն լինելով, դադարեն առ նոսա»։

2. Խորենացի, II, գլ. ԺԴ, էջ 124՝

«և յառաջ քան յԱսիայ հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ [Արտաշէս]»։

3. Խորենացի, «Աշխարհացոյց», հրտր. Սուքրյանի, Վենետիկ, 1881, էջ 17՝

«Եւբիւս մեծ կղզի, և Աստալանդ փոքրիկ կղզեակ ի մէջն. զոր ասեն գտեալ զօրացն Արտաշէսի Հայոց արքայի, զի մի՛ նաւք ռոճկացն յամիցեն, մինչև պաշարեալն էր զդղեակն

Զարմանալի. զի ջուրք յանպատճառս այսր անդր հոսէին. և ասեն անդ մեռեալ Արտաշեսի»:

Այս վկայությունների մեջ Զարմանալի դղյակը, ինչպես ուղիղ նկատել է Մարկվարտը[15], *Աթենքն է, որը պաշարել էր Սուլլան, իսկ Եվբեա մեծ կղզին գրավել էին, իրապես, Միհրդատի զորքերը: Միանգամայն ճիշտ է նմանապես, որ 88 թվին՝ Թրակիայի, Մակեդոնիայի և Հելլադայի նվաճման ժամանակ՝ Հռոմը չկարողացավ «հզօրապէս ընդդիմանալ» պոնտական զորքերին ներքին մեծ խռովությունների պատճառով:*

Սակայն Խորենացին, որին ծանոթ չեն եղել Միհրդատյան պատերազմներին վերաբերող հռոմեական և հունական աղբյուրները՝ չէ կարողացել, բնականաբար, տալ պատմական այս շրջանի ճշգրիտ պատմությունը և, շփոթելով դեպքերը, ենթադրել է ինքը, որ վերհիշյալ անցքերը կարող էին տեղի ունեցած լինել Կրեսոս թագավորի և Արտաշես Աշխարհակալի ժամանակ:

Վերև մեջ բերված առաջին հատվածի վերջում ուշագրավ է Խորենացու վկայությունը, որ Հելլադայից Հայաստան էին բերվել Դիոսի, Արտեմիդեի, Աթենասի, Հեփեստոսի և Ափրոդիտեի արձանները: Այդ արձանների մասին ֆրանսիական գիտնական Ա. Կարիերը կարծիք է հայտնել, որ «հունական կուռքերի Հայաստան մուծվելը ո՛չ թե իրական որևէ մի դեպքի է համապատասխանում, այլ արդյունք է Խորենացու խորհրդածող երևակայության»[16]:

Կարիերի այս պնդումը, ինձ թվում է, ավելի քան վիճելի է: Ագաթանգեղոսի և Խորենացու վկայություններից մեզ հայտնի է, որ Դիոսի, Արտեմիդեի, Աթենասի և Հեփեստոսի արձանները գտնվում էին Անի-Կամախում, Երզում, Թիլում և Բագարիճում, որոնք Միհրդատյան պատերազմի ժամանակ դեռ չէին կցվել Հայաստանին և պատկանում էին Միհրդատի պոնտական թագավորության[17]: *Միանգամայն հնարավոր է ըստ ես, որ այդ արձանները կարող էին բերված լինել, ինչպես վկայում է Խորենացին, Հունաստանից Միհրդատյան առաջին պատերազմի ժամանակ, որի մասին Խորենացու մոտ պահպանվել են նաև վերոհիշյալ պատմական հիշողությունները:*

[15] Eranschahr, Berlin, 1901, *էջ 4:*

[16] *Տե՛ս Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ համեմատ, թարգմ. Հ. Վ. Տաշյանի, Վիեննա, 1899, էջ 39:*

[17] *Տե՛ս* Markwart, Die Genealogie der Bagratiden, Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930, *էջ 63:*

6. ՏԻԳՐԱՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Ինչպես վերև տեսանք, իննսնական թվականների վերջերում (մեր թվ. առ.) Տիգրան Երկրորդը դաշն էր կնքել և բարեկամություն հաստատել Միհրդատ Եվպատորի հետ և ապահովել էր իր թիկունքն արևմուտքում:

Այս դաշնագրությունից և Կապադովկիայի 93 և 91 թվականների արշավանքներից հետո, Տիգրանն օգտվեց ներքին խառնակություններից, որոնք ծագել էին Միհրդատ Բ-ի մահից հետո (90 կամ 88 թ. մեր թվ. առ.) պարթևական թագավորության մեջ, և սկսեց իր հաղթական կռիվներն ընդդեմ թշնամի ու մրցակից պարթև Արշակունիների: Այս կռիվների, ինչպես և Տիգրանի հետագա մեծ նվաճումների ճշգրիտ թվականները և նրանց ժամանակագրական հաջորդականությունը՝ պատմագիտական ու բանասիրական երկերում հաճախ խառնաշփոթված և սխալ են որոշված:

Պատերազմ սկսելով պարթևների դեմ՝ Տիգրանը, նախ և առաջ, ետ վերցրեց այն յոթանասուն հովիտները, որ նա իբրև փրկանք տվել էր նրանց պատանդությունից ազատվելու համար: Մարկվարտի կարծիքով, այս հովիտներն այն շրջաններն էին, որ գրավել էր Արտաշես Ա-ն Ատրպատականի կողմերում[1]: *Ստրաբոնի ուշագրավ մի վկայությունից երևում է*[2], *որ Տիգրանը նվաճել էր այժմ բացի յոթանասուն հովիտներից նաև Մեծ Աղբակ գավառը, այսինքն՝ այժմյան Բաշքալեի շուրջը գտնվող երկիրը, որը հետո ատրպատականցիները ետ առան հայերից 33 թվին (մեր թվ. առ.)*[3]: *Ստրաբոնի համապատասխան վկայության մեջ Σομβάκη աղավաղված ընթերցվածը Մարկվարտն առաջարկում է ուղղել և կարդալ Ἀλβάκη:*

«Մարաստան-Ատրպատականի հզոր հարևաններն են,—

[1] *Տե՛ս* Eranschahr, *էջ 109:*

[2] *Տե՛ս XI, 13, 2:*

[3] *Տե՛ս* Markwart, Eranschahr, *էջ 109:*

ասում է Ստրաբոնը,—արմենները և պարթևները, որոնք հափշտակում էին հաճախ նրա երկրամասերը։ Սակայն սա դիմադրում էր և ետ էր առնում խլվածը. հենց այդպես նա ետ էր վերցրել հռոմեական իշխանության տակ գտնվող արմեններից Աղբակը [=Σύβαχην] և բարեկամություն էր հաստատել ինքը Կեսարի հետ»[4]։

Հավանորեն, Աղբակի գրավումից հետո էր տեղի ունեցել Տիգրանի արշավանքը Ադիաբեն, ուր նա ավերածության էր ենթարկել Նինուեի և Արբելայի շրջանները[5]։ Հետաքրքիր է ու ուշագրավ, որ մինչևիսկ այս հեռավոր երկրում, ինչպես վկայում է Ստրաբոնը, բնակություն էին հաստատել արմենները, որոնք կազմում էին այստեղ բնակչության մի սուվար մասը։

«Ադիաբենի մեծագույն մասը,—ասում է Ստրաբոնը,—դաշտային է։ Լինելով Բաբելոնիայի մասը՝ սա ունի իր սեփական կառավարիչը. բայց երբեմն միացված է եղել և Արմենիային։ Մեդացիները, արմենները և բաբելոնացիները, որոնք ամենամեծ թիվը կազմող ժողովուրդներն էին միշտ այստեղ՝ սկզբից հենց այնքան էին հակառակ իրար, որ հարմար դեպքում միմյանց վրա էին հարձակվում ու նորից հաշտվում»[6]։

Ադիաբենը և Մարաստան-Ատրպատականը նվաճելուց և իր իշխանությանը ենթարկելուց հետո՝ Տիգրանը հարավ-արևվելքում կարողացավ հասնել մինչև պարթև Արշակունիների ամառային նստավայր Եկբատանա մայրաքաղաքը և այրեց այստեղ նրանց Ադրաբանան ամրոցը, որը Եկբատանայից գտնվում էր մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա[7]։

Պարթևների պարտությունն ունեցավ, բնականաբար, այն հետևանքը, որ Հայաստանի բոլոր հարևան պետությունները, որոնք մինչ այդ վասսալներն էին պարթև Արշակունիների՝ հարկադրված եղան ընդունել Տիգրանի գերիշխանությունը։ Հայաստանի սահմանակից երկրների՝ Ադիաբենի, Կորդուքի, Մարաստան-Ատրպատականի թագավորները ենթարկվեցին այնուհետև Տիգրանի իշխանության և, ըստ երևույթին, պարտավոր էին նրան վճարել հարկ և օգնել զորքով պատերազմի ժամանակ։ Կասսիոս Դիոնը

[4] Տե՛ս IX, 13, 2։
[5] Տե՛ս Ստրաբոն, XI, 14, 15։
[6] Տե՛ս նույնը, XVI, 1, 19.
[7] Տե՛ս Իսիդոր Խար., § 6—C. Müller, Geogr. graeci min. I, 250։

վկայում է նույնպես, որ Ատրպատականի Միհրդատ թագավորն ամուսնացել էր Տիգրանի աղջկա հետ[8]։

Հաղթված և պարտված պարթևները ո՛չ միայն հաշտվեցին այս բոլորի հետ, այլ նաև ստիպված եղան Տիգրանին տալ ամբողջ Միջագետքը և նրա մեջ գտնվող Միգդոնիան և Օսրոյենը։ Միևնույն ժամանակ, ինչպես դժվար չէ կռահել Յուստինոսի մի վկայությունից[9], նրանք կնքեցին նրա հետ դաշնակցության հատուկ պայմանագիր և հրաժարվեցին «թագավորների թագավոր» տիտղոսից, որը կրելու էր այնուհետև Տիգրան Բ-ն։

Տեր դառնալով Հայաստանի հարավային սահմանների մոտ գտնվող Միջագետքին՝ Տիգրանը փոխադրեց հարավային Միջագետքից և բնակեցրեց Օսրոյեն-Եդեսայի շրջաններում արաբական թափառական ցեղեր։ Սրանց նա հանձնարարեց, ինչպես վկայում են Պլուտարքոսը և Պլինիոսը[10], տրանզիտային առևտրական ճանապարհների վերահսկողությունը։ Տիգրանի համար նրանք մաքս էին գանձելու, գլխավորապես, եփրատ գետի անցքի մոտ, որը գտնվում էր Զևգմայի արևմտակողմում։ Օսրոյենի հարևան Միգդոնիան, որի մեջ սարատեգիական մեծ կարևորություն ուներ Մծբինը, Տիգրանը կազմակերպել էր, ըստ երևույթին, իբրև առանձին իշխանություն, որի վերակացությունը նա հանձնել էր իր Գուրաս եղբորը։

Ինչպես երևում է աղբյուրների ուշադիր քննությունից, հայ-պարթևական կռիվները և Տիգրանի վերոհիշյալ նվաճումները տեղի էին ունեցել մեծ մասամբ Միհրդատյան առաջին պատերազմի տարիներում, մոտավորապես 89—85 թվականներին։ Սխալ է, անտարակույս, Ասատուրյանի ենթադրությունը, որը պարթևական երկրների նվաճումը դնում է Ասորիքի միացումից և 84 թվից հետո[11]։ Գուտշմիդը շատ ուղիղ մատնանշել է, որ Ասորիքը, որը սահմանակից չէր Հայաստանին՝ կարելի էր գրավել նախապես պարթևներին հաղթելուց և Միջագետքը նվաճելուց հետո[12]։

Հայ-պարթևական կռիվներից հետո, մոտավորապես 84 կամ 83 թվին (մեր թվ. առ.), Տիգրան Բ-ն կարողացավ տիրել նաև ամ-

[8] Տե՛ս XXXVI, 14։
[9] Տե՛ս XL, 3։
[10] Տե՛ս Պլուտ., Լուկուլլոս, 21 և Պլինիոս, VI, 28, 142։
[11] Տե՛ս «Քաղաքական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի և Հռոմայ», Վենետիկ, 1912, էջ 39։
[12] A. von Gutschmid, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Petersb., 1887, էջ 20, ծանոթ. 1։

բողջ վերին Ասորիքին բացի Անտիոքի մոտ գտնվող Սելևկիա քաղաքից։ Ասորիքի գրավման մասին առանձնապես ուշագրավ է Յուստինոսի հետևյալ վկայությունը.

«երբ հղրայրների փոխադարձ առելության և ծնողների թշնամությունների պատճառով,— ասում է Յուստինոսը,— որ շարունակում էին նաև որդիները՝ Ասորիքի և թագավորները, և թագավորությունը ուժասպառ եղան համառ կռիվներում, ժողովուրդն ապավինեց դրսի օգնության և սկսեց փնտրել իր համար օտարերկրյա թագավորներ։ Արդ՝ ժողովրդի մի մասը կարծում էր, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մի մասն էլ՝ Եգիպտոսից Պտղոմեոսին, իսկ ոմանք առարկում էին, որ Միհրդատը խճճվել է հռոմեական պատերազմի մեջ, և Պտղոմեոսը միշտ թշնամի է եղել Ասորիքին. բոլորը, սակայն, համաձայնության եկան Հայաստանի Տիգրան թագավորի նկատմամբ, որն ուներ իր սեփական ուժերը և միաժամանակ պարթևների դաշնակիցն էր և Միհրդատի փեսան էր»[13]։

Ասորիքի և Փյունիկիայի մասին կարևոր է նաև Ստրաբոնի վկայությունը, որը հակառակ Յուստինոսի տեղեկության մատնանշում է, որ այս երկրները Տիգրանը գրավել էր ո՛չ թե խաղաղ կերպով, այլ զենքի ուժով։

«Իսկ նրա [Տիգրանի] բախտը,— ասում է Ստրաբոնը,— եղել է փոփոխական. սկզբում նա պարթևների մոտ պատանդ էր. հետո նրան հաջողվեց վերադառնալ հայրենիք, տալով նրանց յոթանասուն հովիտ Հայաստանում։ Նա այնուհետև գորացավ և ո՛չ միայն ետ վերցրեց այդ հովիտները, այլև ավերեց նրանց երկիրը Նինուեի և Արբելայի շուրջը։ Նա հպատակեցրեց իրեն Ատրպատականը և Կորդուքը և սրանց հետ միասին նաև Միջագետքի մնացած մասը։ Բացի այդ, անցնելով Եփրատ գետը՝ նա նվաճեց բռնությամբ Ասորիքը և Փյունիկիան»[14]։

Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնի հաղորդած այս տեղեկությունը հակասում է Յուստինոսի վկայությանը, որը պարզ ու որոշ ասում է, որ Տիգրանն Ասորիքին տիրել էր բնակիչների հոժարակամ առաջարկությամբ։ Այս հակասության մասին միանգամայն հավանական կարելի է համարել Աստուրյանի բացատրությունը։ Նրա կարծիքով՝ վերոհիշյալ երկու վկայությունն էլ կարող են ուղիղ լինել, որովհետև Տիգրանը՝ հրավիրված լինելով որոշ կուսակցության կողմից՝ պետք է իրեն հպատակեցրած լիներ զենքով մյուս կուսակցությունը[15]։

Ըստ երևույթին, Տիգրանի կողմնակիցներն են եղել Անտիոք քաղաքը և միջազգային տարանցիկ առևտրի հետ կապված վաճառականները։ Ասորիքի միացումը Հայաստանին նրանց համար տնտեսական կարևոր նշանակություն ուներ, որովհետև Ջևգմայի վրայով անցնող համաշխարհային գլխավոր ճանապարհը գտնվում էր, Միջագետքի նվաճումից հետո, Տիգրանի ձեռքում։

Հյուսիսային Ասորիքը գրավելուց հետո՝ Տիգրանն այնուհետև նվաճեց նաև արևելյան Դաշտային Կիլիկիան (Cilicia Pedias), որը Սելևկյան պետության հյուսիս-արևմտյան մասն էր, և, բացի այդ, նույնպես և Կոմագենի փոքր թագավորությունը, որը գտնվում էր Դաշտային Կիլիկիայի արևելակողմում։

Այսպիսով նա իր պետության արևմտյան սահմաններում անմիջական հարևանը դառավ հռոմայեցիների, որոնք 102 թվին (մեր թվ. առ.) գրավել էին արևմտյան Լեռնային Կիլիկիան (Cilicia Tracheia)։

Անտիոքը, որը Սելևկյանների մայրաքաղաքն էր և ուներ մոտ կես միլիոն բնակչություն՝ դառավ հարավում Տիգրանի գլխավոր գահանիստ քաղաքը և այստեղ նրա անունով ու պատկերով տպվում էին այն գեղեցիկ դրամները, որոնք մեծ քանակությամբ պահպանվել են և պահվում են այժմ թանգարաններում։ Իսկ Սելևկյան Ասորիքը նա դարձրեց առանձին կուսակալություն և այնտեղ կառավարիչ նշանակեց, ինչպես վկայում է Ապպիանոսը[16], իր Բագարատ (Μαγαδάτης=*Βαγαδάτης) զորավարին։ Մարկվարտի կարծիքով՝ հայկական ավանդությունը, որը պահպանված է Մար Աբասի մոտ՝ Բագրատունիների նախարարական տոհմի նախահայր է համարում հենց այս Բագարատին[17]։ Սուլլայի և Միհրդատի դաշնագրության հետևյալ տարին, ուրեմն՝ արդեն 83 թվականին, ասորական տարեգրերը, ինչպես մատնանշում է Մոմզենը[18], Տիգրանին համարում են տեր իրենց ամբողջ երկրի

---

[13] Տե՛ս Յուստինոս, XL, 1, 1—3։

[14] Տե՛ս XI, 14, 15։

[15] Տե՛ս Աստուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 34, ծան. 3։

[16] Տե՛ս Սիրիականք, 48։

[17] Տե՛ս Eranschahr, էջ 174։

[18] «Римская история», т. III, перевод А. Веселовского, Москва, 1887, էջ 40։

և Կիլիկիան ու Ասորիքը հիշատակում են որպես հայկական սատրապություն Բագարատի իշխանության տակ։

Ասորիքում հաստատված հայկական տիրապետության մասին հետաքրքիր է Ռևչնաքի հետևյալ դիտողությունը[19].

«Ասորիքը,—ասում է նա,—ազատ շունչ քաշեց. և թեպետ նա ենթարկվեց նվաստացուցիչ օտար իշխանության, սակայն տասնչորս տարվա ընթացքում[20] նա ունեցավ խաղաղություն, ապահովություն և բարեկեցություն»։

Աղբյուրների պատահական ու կցկտուր տեղեկություններից երևում է, որ Ասորիքին 84/83 թվին տիրելուց հետո Տիգրան Բ-ն երկար ժամանակ կռիվներ է վարել արևելյան Փոքր Ասիայում և Փյունիկիայում, գլխավորապես ամուր ու անառիկ քաղաքների դեմ։ Փյունիկիայում և հարավային Ասորիքում դիմադրությունը կազմակերպել էր նրա դեմ Սելևկյան Կլեոպատրա կամ Սելենե թագուհին։ Եվ ավելի քան հավանական է, որ Ասորիքի այս մասերը և Փյունիկիայի ծովափնյա քաղաքները նա գրավել էր հետզհետե, համառ ու երկարատև կռիվներից հետո։

Սուլլայի մահից հետո (78 թ.) և Միհրդատյան երրորդ պատերազմից առաջ (74—71 թ.) Տիգրանը նորից էր արշավել Կապադովկիա, ըստ երևույթին, դարձյալ իր աներոջ՝ Միհրդատի սադրանքով։ Այս անգամ Կապադովկիան, ինչպես մատնանշում է Ապպիանոսը[21], ընկել էր իբր ցանցի մեջ՝ նա այժմ շրջապատված էր հայկական նոր գրավված երկրներով ո՛չ միայն Ծոփքի, այլև Կոմագենի ու Դաշտային Կիլիկիայի կողմերից։ Տիգրանին հաջողվեց գրավել այս արշավանքի ժամանակ Կապադովկիայի Մաժաք մայրաքաղաքը և բազմաթիվ նաև այլ հելլենիստական քաղաքներ, որոնց բնակիչներին՝ մոտ 300.000 հոգի՝ նա փոխադրեց իր նորակառույց Տիգրանակերտ քաղաքը[22]։

Անհավանական պետք է համարել սակայն Մոմզենի կարծիքը, որ իբր թե, դեռևս այս արշավանքից առաջ՝ Տիգրանը միացրել էր Ծոփքին Մելիտենե քաղաքը և ամբողջ շրջանը[23]։ Այս ենթադրությունը, որն ընդունելի են համարել նաև Խալաթյանցը[24] և ուրիշները, չէ կարող ճիշտ լինել, որովհետև Սալլուստիոսի և Տակիտոսի վկայություններից հայտնի է, որ 69 թվի Լուկուլլոսի արշավանքի ժամանակ Եփրատ գետի արևմտակողմը և Մելիտենե քաղաքը գտնվել են ո՛չ թե Տիգրանի, այլ Կապադովկիայի թագավորության սահմաններում[25]։

Բացի կապադովկիական քաղաքների բնակչությունից, Տիգրանակերտ ու Հայաստան էին բերվել նաև Դաշտային Կիլիկիայի քաղաքների և, մասնավորապես, ծովափնյա Սոլի քաղաքի բնակիչները[26]։

Տիգրան Բ-ի կռիվները Փյունիկիայում և, հատկապես, Պրտղոմայիդ քաղաքի նվաճումը հիշատակված են Հովսեփոս Փլավիոսի մոտ։ Պտղոմայիդի նվաճումը տեղի էր ունեցել ո՛չ թե 74 թվին, ինչպես մատնացույց է արել Մոմզենը[27], այլ Լուկուլլոսի Հայաստան արշավելուց առաջ՝ 70 թվին (մեր թվ. առ.)[28]։

Հովսեփոսի համապատասխան վկայությունը մեջ եմ բերում ամբողջությամբ։

«Այդ ժամանակ լուր ստացվեց,—ասում է Հովսեփոսը,—որ Հայոց Տիգրան թագավորը 300.000 զորքով ներս է մտել Ասորիք և գալու է նաև Հրեաստան։ Տեղեկանալով այս մասին՝ սարսափահար եղան, բնականաբար, Հրեաստանի թագուհին և ժողովուրդը։ Նրանք ուղարկեցին Տիգրանի մոտ, որը պաշարել էր Պտղոմայիդը, դեսպաններ բազմաքանակ ու արժանավայել ընծաներով։ Իսկ Սելենե թագուհին, որի անունն էր նաև Կլեոպատրա և որն իշխում էր Ասորիքում՝ գրգռում էր բնակիչներին, որ դիմադրեն Տիգրանին։ Դեսպանները եկան նրա մոտ և աղաչեցին, որ բարի ու ողորմած լինի դեպի իրենց թագուհին և ժողովուրդը։ Եվ այդ ժամանակվանից Տիգրանը հոգատար վերաբերմունք ունեցավ նրանց նկատմամբ և քաջալերեց նրանց ու հուսադրեց։ Երբ Տիգրանն արդեն վերցրել էր Պտղոմայիդը՝ նրան հայտնեցին, որ Լուկուլլոսը՝ հետապնդելով Միհրդատին՝ չի կարողա-

19 Տե՛ս Mithridate Eupator, էջ 312։

20 83—69 թ., տե՛ս Ա պ պ ի ա ն ո ս, Սիրիականք, 48։ Համաձայն Յուստինոսի (XL, 1, 4) Տիգրանի տիրապետությունը տևել է Ասորիքում 17 տարի։ Նիգեն կարծում է, որ Յուստինոսի տված XVII թիվը կարող է լինել վրիպակ (XVII փխ. XIII), տե՛ս Н и з е, Очерк римской истории и источниковедения, С. Петербург, 1910, էջ 288։ Ռևչնաքի կարծիքով՝ հայկական տիրապետությունը Յուստինոսը ցույց է տվել մինչև Տիգրանի վերջնական պարտությունը 66 թվին, տե՛ս Mithridate Eupator, էջ 312, ծան. 6։

21 Տե՛ս Միհրդատականք, 67։

22 Տե՛ս նույնը, 67, համեմատե՛ նաև Ս տ ր ա բ ո ն, XII, 2, 9 (539)։

23 Տե՛ս «Римская история», III, Москва, 1887, էջ 39:

24 «Очерк истории Армении», Москва, 1910, էջ 160:

25 Տե՛ս S a l l. IV, frg., 59 և T a c., Annales, 15, 27։

26 Տե՛ս Պ լ ու տ., Պոմպ. 28, 4. համեմատե՛ նաև Պիոն Կասսիոս XXXVI, 37։

27 Տե՛ս «Римская история, III, էջ 40:

28 Համեմատե՛ Պ լ ու տ, Լուկուլ., 21, 2։

ցել նրան բռնել, և վերջինս փախել է Իբերիա։ Նրան նմանապես ապդարարեցին, որ Լուկուլլոսը պաշարել է և ավերում է Հայաստանը։ Երբ Տիգրանն այս իմացավ՝ վերադարձավ իր բուն երկիրը»[29]։

Ինչպես վկայում է նաև Ստրաբոնը, Ասորիքում և Փյունիկիայում տեղի ունեցած այս կռիվների ժամանակ Տիգրանը գերի էր վերցրել Սելեւկե-Կլեոպատրա թագուհուն։ Վերջինս բանտարկվեց Զևգմայի դիմաց գտնվող Սելևկիա բերդում և գլխատվեց Տիգրանի հրամանով Լուկուլլոսի 69 թվի արշավանքից առաջ[30]։

Իր քառնևհինգ տարվա թագավորության ընթացքում (95—70 թ. մեր թվ. առ.) Տիգրան Բ-ն, ինչպես տեսնում ենք, կարողացել էր անշափ ընդարձակել իր երկիրը, որն այժմ տարածվում էր Կասպից ծովից և Կուր գետից մինչև Միջերկրական ծովն ու Եգիպտոսի սահմանները և Մեծ Մարաստանից մինչև Հռոմեական Լեռնային Կիլիկիան ու Կապադովկիան։ Թեև Հովսեփոսի վկայությունից երևում է, որ Տիգրանը Պաղեստինի վրա չէր հարձակվել, սակայն այդ երկիրը ևս, ըստ երևույթին, որոշ չափով ընդունել էր նրա գերիշխանությունը։ Ուշագրավ է այս տեսակետից Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը[31], որի համաձայն Տիգրանի գերիշխանությանը ենթարկված է եղել ամբողջ Ասորիքը մինչև Եգիպտոսի սահմանները։

Գրաված լինելով Դաշտային Կիլիկիան ու Կոմագենը՝ Տիգրանն արդեն ոտք էր դրել Փոքր Ասիա և հարևան էր դառել, ինչպես ասացինք, Հռոմեական Լեռնային Կիլիկիային։ Կապադովկիան, որը Հռոմայեցիների դաշնակիցն էր՝ շրջապատված էր այժմ Պոնտոսի, Սոփքի, Կոմագենի և Դաշտային Կիլիկիայի կողմերից ու զրեթե անպաշտպան էր ստրատեգիական աննպաստ իր դրության պատճառով։

Տիգրանի նվաճումները Միջերկրական ծովի ափերին և, մանավանդ, Հռոմի դաշնակից Կապադովկիայի վերոհիշյալ ավերածությունը, վարկաբեկում էին, բնականաբար, Հռոմեական հանրապետության հեղինակությունն արևելյան երկրներում։ Սակայն չնայած դրան՝ Հռոմը չեզոքություն պահպանեց և չպաշտպանեց մինչևիսկ իր դաշնակից Կապադովկիային։

Հռոմի չեզոքությունը միանգամայն հասկանալի է, որովհետև Տիգրանի նվաճումները տեղի էին ունեցել կամ Միհրդատյան պատերազմների ժամանակ և կամ Սուլլայի արյունահեղ դիկտատուրայի ընթացքում, երբ Հռոմը թույլ էր ու անզոր ներքին երկպառակությունների պատճառով։ Ինքը՝ Տիգրանը չուներ, իհարկե, որևէ պատճառ պատերազմելու Հռոմայեցիների դեմ, քանի որ սրանք չէին միջամտում և չէին խանգարում Հայաստանի աշխարհակալ ընդարձակումը։

Ահա այս բարենպաստ պայմաններն էին պատճառը, որ 95—70 թվերին Հայաստանը հետզհետե կարողացավ դառնալ հզոր ու մեծ պետություն։

---

[29] Տե՛ս «Հնախոսություն», XIII, 16, 4. համեմատե նաև «Հրեական պատերազմ», I, 5, 3։

[30] Տե՛ս Ստրաբոն, XVI, 2, 3։

[31] Տե՛ս Սիրիականք, 48—49։

7. ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Տիգրան Բ-ի մեծ ու լայնարձակ աշխարհակալությունը, որը խայտաբղետ մի խառնուրդ էր ցեղերի, լեզուների և տարբեր մշակույթների՝ չի կարող, իհարկե, համարվել միահար, կայուն ու ամուր մի պետություն: Տիգրանի գերիշխանության տակ միացել էին թե տոհմա-ցեղային նահապետական շրջաններ, թե ֆեոդալական երկրներ և թե հելլենիստական քաղաքներ, որոնք ունեին իրենց հատուկ կազմակերպությունը:

Հայաստանի հարևան թագավորությունները, որոնք ճանաչել էին «թագավորների թագավոր» Տիգրանի գերիշխանությունը, ըստ երևույթին, պարտավոր էին նրան տալ որոշ հարկ, իսկ պատերազմի ժամանակ օգնելու էին նրան իրենց զորքով: Վասսալական այս թագավորությունները, ինչպես և բուն Հայաստանի իշխանական ինքնավար երկրները, պահպանում էին նախկին իրենց հատուկ կարգերը և իրենց ուրույն կազմակերպությունը:

Տիգրանի այս հայկական մեծ պետության մեջ առաջնակարգ դեր էր կատարում, անտարակույս, կալվածատեր հայ ազնվականությունը, որը նրա գլխավոր հենարանն էր, ինչպես վերոհիշյալ հաղթական կռիվներում, նույնպես և պետական ու կառավարչական գործերում: Եվ հիրավի, մենք տեսանք վերև, որ Մծբինի վերակացությունը նա հանձնել էր իր Գուրաս եղբորը, իսկ Անտիոքում կառավարիչ էր նշանակել Բագարատ հայ իշխանին:

Հենց Հայաստանի տիրող կալվածատիրական ու զինվորական ազնվականության զորեղացմամբ և, գլխավորապես, Հայաստանի քաղաքական ու տնտեսական անարգել ու առաջընթաց զարգացմամբ բացատրվում են, հավանորեն, Տիգրան Բ-ի գլխապտույտ հաջողությունները և նրա աշխարհակալման ձգտումները:

«Տիգրան Մեծի հաջողությունները,—ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Գր. Խալաթյանցը,—պետք է վերագրել տնտեսական այն կուտակված մեծ ուժերին, որ հավաքվել էին Հայաստանում դարերի ընթացքում—պարսիկների խաղաղ տիրապետության շրջանում, Սելևկյանների ժամանակ և ավելի ուշ»[1]:

«Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն իմ աշխատության մեջ մանրամասն նույնպես ցույց էր տրված[2]*, որ հայ ժողովրդի աճման ու տնտեսական զարգացման տեսակետից Հայաստանը խիստ անբարենպաստ պայմանների մեջ էր գտնվում Պոմպեոսի հաղթությունից հետո (66 թ. մեր թվ. առ.)՝ երբ նա դառել էր բուֆեր պետություն Արևմուտքի և Արևելքի մրցող մեծ պետությունների միջև: Մինչ այդ, Աքեմենյանների խաղաղ տիրապետության, ինչպես և Սելևկյանների ու Տիգրան Բ-ի նախորդների ժամանակ, Հայաստանում քաղաքական պայմանները միանգամայն բարեհաջող են եղել թե ժողովրդի աճման և թե երկրի տնտեսական զորեղացման համար:*

Կարելի է, իմ կարծիքով, վստահորեն ենթադրել, որ հայ ժողովրդի թիվն ավելի մեծ է եղել Արտաշեսյան թագավորության և Տիգրան Բ-ի ժամանակ, քան հետագա դարերում: Եվ, մասնավորապես, Ստրաբոնի վկայություններից ևս մենք գիտենք[3]*, որ նրա ժամանակ արմենները ո՛չ միայն գրաված են եղել ամբողջ Հայկական լեռնաշխարհը, այլ մեծ թիվ են կազմել նաև Ադիաբենում և հյուսիսային Միջագետքում:*

Հայաստանի բնակչության այս աճումը ևս, ինչպես և տնտեսական ու քաղաքական նրա խաղաղ զարգացումը նախորդ դարերում՝ մեծապես նպաստել էին, անշուշտ, նրա աշխարհակալական ընդարձակմանը Տիգրանի ժամանակ:

Նախորդ մեր աշխատություններից մեկում մենք, բացի այդ, հավանական էինք համարել, որ արդեն Արտաշես Ա-ի ժամանակ հին Հայաստանը գտնվել է նախնական ֆեոդալիզմի շրջանում և ունեցել է ֆեոդալական կազմակերպության հատուկ սաղմերը և առանձին հիմքերը[4]*: Պլինիոսի կարևոր մի վկայությունից հայտնի է, որ Հայաստանը բաժանված էր նրա ժամանակ (23—79 մեր թվ. հ.) 120 շրջանների, որոնք նա անվանում է*

---

[1] *Տե՛ս* «Очерк истории Армении», Москва, 1910, էջ 161:

[2] «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Эривань, 1930, էջ 50—53:

[3] *Տե՛ս XVI, 1, 19 և 26:*

[4] *Տե՛ս «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 248—251:*

ստրատեգիաներ, այսինքն՝ «զորավարություններ»[5]։ Մեծագույն մասն այս շրջանների, որոնք գոյություն ունեին, հավանորեն, արդեն Տիգրան Երկրորդի ժամանակ՝ համարվելու են, ինչպես այդ մատնանշել է Ապոնցը[6], նախարարական երկրներ, որոնց մեջ ընտեսապես և քաղաքականապես գերակշռող դեր էր կատարում կալվածատեր ազնվականությունը և, իմ կարծիքով, ո՛չ այնքան ստրուկ աշխատավորությունը, որքան կիսազատ և ազատ գյուղացիությունը։

Բացի Պլինիոսի վկայությունից ուշագրավ է նաև Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունը չորս թագավորների մասին, որոնք սպասարկում էին Տիգրանին։

«Շատ թագավորներ,—ասում է Պլուտարքոսը,—սպասավորում են Տիգրանին, բայց նրանցից չորսը միշտ նրա հետ էին լինում՝ որպես ուղեկիցներ և թիկնապահներ. և երբ նա գնում էր ձիով՝ նրանք կարճ խոհոններ հագած՝ վազում էին առջևից. իսկ երբ նստած էր լինում և պաշտոնական գործերով էր զբաղվում՝ նրանք կանգնած էին լինում նրա շուրջը՝ իրար ձեռքից բռնած»[7]։

Հիմնվելով Պլուտարքոսի այս հաղորդագրության վրա, որը չափազանցված մի ծաղրանկար է ֆեոդալական հանդիսակարգերի, Մարկվարտը կարծում է[8], որ վերոհիշյալ չորս թագավորները, հավանորեն, Հայաստանի չորս բդեշխներն են, որոնց ծագումը հավանական է ենթադրել Տիգրան Բ-ի ժամանակ։ Նիկ. Ադոնցը նմանապես հավանական է համարում, որ ֆեոդալական Հայաստանի չորս բդեշխությունները, որոնց մասին մանրամասն տեղեկություններ ունեն Ագաթանգեղոսը, Փավստոսը և Մովսես Խորենացին[9], նախկին փոքր ու ինքնուրույն թագավորությունների միապետներ են, որոնք Տիգրան Բ-ի ժամանակ ճանաչել էին հայ թագավորների քաղաքական գերիշխանությունը[10]։

Աղբյուրների թուրուկ ու պատահական տեղեկությունները, դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս մեզ հանգամանորեն քննության առնելու Հայաստանի ներքին կյանքը նախարշակունյան այս շրջանում։ Մեզ հայտնի է միայն, որ Տիգրան Բ-ի

5 Տե՛ս Plin., Nat. Hist. VI, 10, 2։

6 «Армения в эпоху Юстиниана», С.-Петербург, 1908, էջ 392։

7 Պլուտ., Լուկուլ., 21, 6։

8 Eranschahr, էջ 171—173։

9 Տե՛ս իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 34—36։

10 Տե՛ս «Армения в эпоху Юстиниана», էջ 283 և 410—411։

վերանորոգչական գլխավոր գործերն են եղել Տիգրանակերտի հիմնումը և հելլենիզմի ու հելլենիստական քաղաքային կուլտուրայի տարածման ու զարգացման նրա հատուկ քաղաքականությունը։ Նա հասկացել էր, ըստ երևույթին, որ նահապետական հայ կենցաղի տնտեսական ու կուլտուրական առաջադիմությանը կարող էր մեծապես նպաստել հելլենիստական տիպի քաղաքը, որը կենտրոն էր արհեստների, արդյունագործության ու առևտրի զարգացման։

Պետք է ասել, որ հելլենասիրությունը այդ ժամանակ ընդհանուր երևույթ էր նաև Հայաստանի հարևան երկրներում։ Դեռևս երկրորդ դարում Կապադովկիայի Արիարաթ Ե թագավորը (163—130 մեր թվ. առ.), որը երկար ժամանակ ճանապարհորդել էր Իտալիայում և Հունաստանում՝ հրավիրել էր կապադովկիա հույն արվեստագետներ ու գրողներ և իր երկրի Մաժաք ու Տիանա գլխավոր կենտրոնավայրերը դարձրել էր հելլենիստական տիպի ինքնավար քաղաքներ, որոնցից Մաժաքն ընդունել էր ու գործադրում էր, ինչպես վկայում է Սարաբոնը[11], Խարոնդասի օրենքները։

Հելլենական մշակույթը և հելլենիստական քաղաքների հատուկ վարչակարգն ավելի մեծ չափերով տարածվում էին Պոնտոսում, գլխավորապես, Միհրդատ Եվպատորի ժամանակ, որին եվրոպական պատմագետները հնարավոր են համարել համեմատել Պետրոս Մեծի հետ։

Այստեղ, Պոնտոսում արդեն հնագույն ժամանակներում հելլենական քաղաքակրթության ու լեզվի տարածման գլխավոր նեցուկներն էին հունական ծովափնյա քաղաքները՝ Ամաստրիսը, Սինոպը, Ամիսոսը, Տրապիզոնը և հունական մյուս ավելի փոքր գաղութները։ Միհրդատ Եվպատորի ժամանակ այս քաղաքները խիստ մեծացել էին և դառել միջազգային մեծ առևտրի նավահանգստային հարուստ կենտրոններ։ Հռոմեական նվաճումից առաջ, ասում է Ռեյնաքը[12], նրանք ո՛չ միայն իրենք էին հասել բարեկեցության ու կուլտուրական զարգացման բարձր աստիճանի, այլև, աջակցելով Պոնտոսի և Մեծ Կապադովկիայի տնտեսական առաջադիմությանը՝ սկսել էին հելլենիզմի կենդանարար աղբյուրը տարածել և այդ երկրներում։

Շնորհիվ Միհրդատի առատաձեռն ու հոգատար աջակցության՝ պոնտական բոլոր քաղաքներում կառուցվել էին հոյակապ

11 Տե՛ս XII, 2, 9։

12 Mithridate Eupator, էջ 246։

ու գեղեցիկ նոր շենքեր, մինչևիսկ ամբողջ թաղամասեր, և բուռն թափով զարգանում էին ամեն տեղ հելլենական գեղարվեստն ու գիտությունը, որոնք վայելում էին թագավորի հատուկ հոգատարությունը: Միհրդատ Եվպատորը պարզապես հետզհետե կերպարանափոխում էր իր երկիրը և տարածում ամենուրեք հունական քաղաքակրթությունը: Նրա ժամանակ ո՛չ միայն հին Ամասիա մայրաքաղաքը, այլ նույնիսկ որոշ ավանագյուղեր դառել էին արդեն հելլենիստական քաղաքներ: Հելլենական մշակույթի տարածման ու զորեղացման պարզ ցուցանիշներ են պոնտական Կոմանա, Կաբիրա, Գազիուրա, Պիմոլիսա և Տալավրա գյուղաքաղաքները, որոնք պղնձադրամներ էին կտրում հունարեն լեզվով և առասպելական հունական պատկերներով:

Ինչպես և Աղեքսանդր Մեծը, ըստ երևույթին, Միհրդատը ևս իրեն նպատակ էր դրել հաշտեցնել իրար հետ և միաձուլել արևելյան իրանական մշակույթը, որի ազդեցությանը մեծ չափերով ենթարկվել էր Պոնտոսը, արևմտյան հելլենական մշակույթի հետ, և սկսել էր արդեն վերակառուցել իր երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքն այդ նոր հիմքերի վրա:

Թե ո՛րքան զորեղ է եղել իրանիզմի և հելլենիզմի կուլտուրական մերձեցումը՝ այդ ցույց են տալիս, նախ և առաջ, այդ երկու մշակույթների կրոնական հաշտեցումը և պոնտական տեղական աստվածների միաձուլումը հունականների հետ, օրինակ՝ Մա և Որմուզդ աստվածների նույնացումը Արտեմիդեի և Զևս Ստրատիոսի հետ: Այդ մերձեցման մի պարզ ապացույց է նաև այն, որ Կոմանայում, որը պոնտական ամենահռչակավոր սրբատեղերից մեկն էր, Միհրդատի ժամանակ քրմապետ էր նշանակվել Դորիլաոսը, որը հույն էր:

Որ զուգընթաց կուլտուրական ու կրոնական այս մերձեցման տեղի էր ունենում նաև ցեղային զանազան խմբակցությունների մերձեցումը հույների հետ՝ այդ ևս պարզ երևում է պոնտական Ամասիայում ծնված խոշորագույն աշխարհագրագետ Ստրաբոնի կենսագրությունից (մոտավ. 64 թ. մեր թվ. առ.—19 մեր թվ. հ.): Սա իր նախնիների շարքում բացի հույներից հիշում է պարսիկ Մոաֆերնեսին և պափլագոնացի Տիբիոսին[13]:

Միհրդատ Եվպատորի թագավորության մեջ, ինչպես տեսնում ենք, իրագործվում էր Աղեքսանդր Մակեդոնացու սկսած այն մեծ գործը, որի նպատակն էր ըստ Դիոդորոսի[14] Ասիայի ու

[13] Տե՛ս Ստրաբոն, XI, 2, 18 և XI, 3, 4:

[14] Տե՛ս XVIII, 4, 4:

Եվրոպայի «միաբան համերաշխությունը և տոհմակցական բարեկամությունը»:

Հելլենիստական քաղաքային կուլտուրայի զարգացման և իր երկրի տնտեսական բարեկարգման ու բարգավաճման այդ նույն քաղաքականությունը վարել է նաև Տիգրան Բ-ն Մեծ Հայաստանում:

Վերանորոգչական այս շարժումը, ինչպես մանրամասն մատնացույց էի արել «Հին Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն իմ աշխատության մեջ[15], սկսվել էր դեռևս Տիգրանից առաջ, գլխավորապես Սոփրում, որն անմիջական հարևանն էր Սելևկյանների թագավորության: Սոփրի զարգացմանը մեծ չափով զարկ էր տվել տնտեսական ու կուլտուրական մեծ հեղաշրջումն Ասորիքում և Միջագետքում: Եվ Սոփրում էին հիմնվել, ինչպես հայտնի է, հին Հայաստանի հելլենիստական տիպի առաջին քաղաքները՝ Արշամաշատը և Կարկաթիոկերտը:

Հելլենիզմի ազդեցությունը Սոփրի և Մարասատանի կողմերից որոշ չափով թափանցած պիտի լիներ, բնականաբար, նաև Մեծ Հայքի հյուսիսային շրջանները: Այդ ազդեցության պարզ ապացույց են Արմավիրում գտնված սելևկյան շրջանի հունարեն արձանագրությունները: Այստեղ ևս Արարատյան դաշտում Արտաշես Ա-ն հիմնել էր, ինչպես տեսանք, Արտաշատ քաղաքը:

Սակայն ավելի լայն չափերով և ավելի վճռական կերպով հելլենիզմի ու հելլենիստական քաղաքային կուլտուրայի տարածումը տեղի ունեցավ Մեծ Հայաստանում Տիգրան Բ-ի ժամանակ:

Վերանորոգչական այս գործն ավելի դժվար էր, իհարկե, իրականացնել Հայաստանում, քան Պոնտոսում, որն ուներ արդեն հելլենական բազմաթիվ քաղաքներ: Քաղաքների ու քաղաքային կուլտուրայի զարգացման համար անհրաժեշտ էր կուլտուրական հարևան երկրներից Հայաստան փոխադրել ամբողջ քաղաքներ: Իսկ այդ հնարավոր էր միմիայն բռնի միջոցներով: Ուստի և Տիգրանը հարկադրված եղավ գաղթեցնել դրսից Հայաստան առևտրականներ, արհեստավորներ և այլ որակյալ աշխատավոր օտարականներ, որոնք հիմք էին դնելու նրա երկրում հելլենիստական քաղաքային կենցաղի և նեցուկ էին ծա-

[15] Տե՛ս «О торговле и городах Армении», էջ 25—31:

ռայելու Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման։

Ինչպես վերև տեսանք, հատկապես այդ նպատակով նա բռնի կերպով բնակեցրել էր Հայաստանում Կապադովկիայի, Կիլիկիայի և, հավանորեն, նաև Ասորիքի, Կորդուքի և Ադիաբենի[16] հելլենիստական այն քաղաքների բնակչությունը, որ նա գրավել էր իր արշավանքների ժամանակ։

Բացի վերև մատնանշված տեղեկություններից՝ այդ գաղթականության մասին կարևոր են ու հետաքրքիր նաև Ստրաբոնի հետևյալ վկայությունները։

1. Ստրաբոն, XI, 14, 15 (532)՝

«Երբ Տիգրանը զորեղացավ մինչ այդ աստիճան՝ նա հիմնեց մի քաղաք..., որն անվանեց Տիգրանակերտ և բերեց այդտեղ իր ավերած 12 հելլենական քաղաքների բնակչությունը»։

2. Նույնը, XII, 2, 9 (539)՝

«Վատ վարվեց Տիգրան արմենը մաժաքցիների հետ, երբ նա արշավել էր Կապադովկիա։ Նա ամբողջ բնակչությունը քշեց տարավ Միջագետք և նրանց բնակեցրեց մեծ մասամբ Տիգրանակերտում։ Սակայն հետագայում, Տիգրանակերտի նվաճումից հետո, ով որ կարող էր՝ վերադարձավ հայրենիք»։

Նույն գաղթականության մասին, որը բերված է եղել ո՛չ միայն Տիգրանակերտ, այլև Արտաշատ ու ուրիշ կենտրոնավայրեր՝ ունեն ուշագրավ վկայություններ նաև Փավստոսը և Մովսես Խորենացին, որոնց հաղորդած տեղեկությունները[17] մեջ են բերված և քննված են իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ[18]։

Տիգրան Բ-ի աշխարհակալական պետության քաղաքական ու կուլտուրական կենտրոնն էր լինելու նրա հիմնած Տիգրանակերտ քաղաքը։ Ո՛չ Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը, ո՛չ էլ Սելևկյանների Անտիոք քաղաքը, որոնք գտնվում էին նրա մեծ պետության ծայրամասերում, չէին կարող ծառայել այդ նպատակին։ Բացի այդ, ընտրելով Անտիոքն իբրև աթոռանիստ կենտրոն՝ նա

[16] Պլուտարքոս, Լուկուլ., 26, 2։

[17] Տե՛ս Փավստոս, IV, գլ. ԻԴ և ՆԵ, Խորենացի, II, գլ. ԺԶ, ԺԹ, ԽԲ, ԿԵ, III, գլ. ԼԵ։

[18] Տե՛ս էջ 216—219։

կկորցներ իր կապը Հայաստանի հետ, որը գլխավոր նեցուկն էր ու հիմքը նրա ռազմական հաջողությունների։

Տիգրանակերտ քաղաքի մասին բավականաչափ տեղեկություններ տալիս են հռոմեական ու հունական մատենագիրները, որոնք նկարագրել են Լուկուլլոսի արշավանքը Հայաստան և Տիգրանակերտի պաշարումն ու առումը։

Համաձայն Ապպիանոսի վկայության[19] Տիգրանակերտ քաղաքը շրջապատված էր 50 կանգուն բարձրությամբ պարիսպներով, որոնք այնքան լայն էին, որ նրանց մեջ շինել էին ձիերի համար ախոռներ և պահեստանոցներ։ Քաղաքի ներսում գտնվում էր ամուր ու անմատչելի միջնաբերդը։ Իսկ պարիսպներից դուրս Տիգրանը շինել էր ավել իր փառահեղ պալատը, որի շուրջը գտնվում էին պարտեզներ, զբոսարաններ, որսատեղեր և ձկնավազաններ։ Բացի այդ, այս տեղերի մոտ կառուցել էին նաև մի ամբողջ ամրոց։

Բռնի կերպով Տիգրանակերտ էին գաղթեցրել ո՛չ միայն վերոհիշյալ հելլենիստական քաղաքների բնակիչներին, այլև հայ ազնվականներին ու մեծամեծներին, որոնց գույքն ընդհիմնության դեպքում ենթարկում էին բռնագրավման։ Պլուտարքոսի վկայությամբ[20] թե այս ազնվականությունը և թե քաղաքի հասարակ ժողովուրդն աշխատում էին հաճոյանալ թագավորին և աջակցում էին քաղաքի կառուցման և բնդարձակման։

Մոմզենը[21] և հայագետ բանասերներից շատերը, որոնք օգտվել են նրա պատմությունից, հին Տիգրանակերտը համեմատել են Նինուեի և Բաբելոնի հետ։ Լեման-Հաուպտը նույնպես կարծում է, որ Տիգրանի հիմնած քաղաքն ըստ իր տիպարի ու հատակագծի նման է եղել ասորեստանյան քաղաքներին[22]։ Այս զուգադրումը, ինչպես ցույց ենք տվել «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն մեր աշխատության մեջ[23], ճիշտ չէ։ Բաբելոնը և Նինուեն ո՛չ ըստ իրենց տիպի և ո՛չ էլ ըստ իրենց հատակագծի չեն կարող, իհարկե, նման ու համապատասխան համարվել այն քաղաքներին, որոնք հիմնվում էին հելլենիստական պետություններում։ Ինչպես հայտնի է մատենագրական աղբյուրների նկարագրություններից՝ Բաբելոնում և Նինուեում անծայրածիր տարա-

[19] Տե՛ս Միհրդատականք, 84։

[20] Տե՛ս Լուկուլ., 26, 3։

[21] Տե՛ս «Римская история», III, Москва, 1885, էջ 41։

[22] Տե՛ս C. F. Lehmann-Haupt. Armenien einst und jetzt, Berlin 1910, էջ 396—399։

[23] Տե՛ս «О торговле и городах Армении», էջ 56։

ծության վրա և առանձին թաղամասերի միջև սփռված էին վաճառականներ, մարգագետիններ, այգիներ և մրգատու անտառակներ։ Այդ քաղաքների բնակիչների գլխավոր պարապմունքն էր ո՛չ այնքան առևտուրը և արհեստները, որքան գյուղական տնտեսությունը։ «Նինուէ,—վկայում է Հովնան մարգարեն,—էր քաղաք մեծ Աստուծոյ՝ իբրև գնացս երից աւուրցս ճանապարհի» (Գ, 2)։ Իսկ Բաբելոնի շրջապատը հավասար էր համաձայն Հերոդոտի վկայության[24] 480 ստադիոնի (=մոտ 85 կիլոմ.)։

Պարզ է ուրեմն, որ Տիգրանակերտը, որը 69 թվին շրջապատել ու պաշարել էին Լուկուլլոսի համեմատաբար փոքրաթիվ զորքերը, չի կարող բաղդատվել ու նույնացվել վերոհիշյալ քաղաքների հետ, այլ նա ըստ իր հատակագծի և առևտրական-արդյունագործական բնույթի նման ու համապատասխան կարող էր լինել հելլենիստական տիպի քաղաքներին։

Տիգրանակերտի տեղադրության մասին պատմագիտական երկերում հայտնված են հակասական կարծիքներ։ Նույն անհաշտելի տարաձայնությունները հատուկ են նաև մատենագրական հին աղբյուրներին։ Այդ աղբյուրներից ամենահինը, Ստրաբոնը, Տիգրանակերտի տեղը մատնացույց է անում Միգդոնիայում[25], Պտոլեմեոսը՝ Կորդուքում[26], իսկ Եվտրոպիոսը և Փավստոսը՝ Աղձնիքում[27]։ Առանձնապես ուշագրավ է Տակիտոսի վկայությունը, որը պարզ ու որոշ հաղորդում է, որ Տիգրանակերտի հեռավորությունը Մծբինից եղել է 37 հռոմեական մղոն (=մոտավ. 55 կիլոմ.)[28]։

Հիմնվելով Ստրաբոնի և Տակիտոսի վկայությունների վրա, Մոմզենը[29], ինչպես և ուրիշ գիտնականներ, Տիգրանակերտի տեղը ենթադրել են Մասիոս լեռան ու Տիգրիս գետի հարավում և Մծբին քաղաքի հյուսիսակողմում[30]։ Իսկ Հ. Կիպերտը, որը Տակիտոսի վկայությունը համարել էր աղճատված և առաջարկել septem et triginta («երեսուն և յոթը») ուղղել և կարդալ centum et triginta («հարյուր և երեսուն»), Տիգրանակերտի տեղը մատնացույց է արել հին Արզն քաղաքի ավերակների վայրում (այժմյան Սղերդի մոտ), որոնք գտնվում են Տիգրիս գետի ո՛չ թե հարավում, այլ հյուսիսում[31]։

Տիգրանակերտի տեղը որոշելու համար կարևոր են բացի վերոհիշյալ վկայություններից նաև Պլինիոսի և հին աշխարհագրական քարտեզների ցուցումները։ Այս վերջին վկայությունների մեջ ուշադրության արժանի է նախ այն, որ Նիկեփորիոս գետը, որն ըստ Տակիտոսի[32] գտնվել է Տիգրանակերտի մոտ, Պլինիոսի մոտ հիշատակված է՝ Պարթենիոս գետի հետ միասին՝ իբրև Տիգրիս գետի ձախակողմյան վտակ[33]։ Ուրեմն, ինչպես տեսնում ենք, համաձայն Եվտրոպիոսի և Փավստոսի ցուցումներին ու նաև Պլինիոսի այս վկայության Տիգրանակերտի տեղը որոշվում է Տիգրիս գետի ձախ կողմում և հին Աղձնիքում։ Նույնը հաստատում են նաև Պտոլեմեոսի և Պեւտինգերյան հին քարտեզները, որոնց մեջ Տիգրանակերտը նշանակված է դարձյալ Տիգրիս գետի հյուսիսակողմում։


Օգտագործելով աղբյուրների թե այս և թե նման տեղեկությունները՝ գերմանական գիտնականներ Լեմանը և Բելբը մանրամասն կերպով նայել ու քննել են տեղում բոլոր վերոհիշյալ վայրերը և որոշել են, որ հին Տիգրանակերտը գտնվել է, իրոք, Տիգրիս գետի հյուսիսակողմում և այժմյան Ֆարկին քաղաքի տեղում[34]։ Եվ հետաքրքրքիր է, որ նույն այս կարծիքը նրանցից առաջ հայտնած է եղել նաև գերմանական ֆելդմարշալ Մոլտքեն, ըստ երևույթին, որոշ ռազմագիտական նկատառումներով[35]։

Որ հին Տիգրանակերտի տեղը եղած պիտի լիներ, իրոք, այժմյան Ֆարկինում՝ այդ հաստատում են այժմ նաև իմ նոր դիտողությունները Պեւտինգերյան քարտեզի Zanserio և Cymiza կայարանների տեղադրության մասին, որոնք գտնվում էին պարզապես Տիգրանակերտի հյուսիսակողմում։ Հռոմեական քարտեզի Cymiza կայարանը, ինչպես մատնանշված է «Հայաստանի գլխավոր ճանապարհները» իմ աշխատության մեջ[36], այժմյան Կիլդիզն է (*CYΔΔIZA=CYMIZA), որը գտնվում էր Տիգրանա-

---

[24] Հերոդ., I, 178։
[25] Տե՛ս Ստրաբ., XVI, 1, 23։
[26] Պտոլեմ., V, 13, 22։
[27] Եվտրոպ., VI, 9, 1 և Փավ., IV, ԻԳ։
[28] Annales, XV, 5.
[29] Տե՛ս Die Lage von Tigranokerta, Hermes, IX, 1875:
[30] Տե՛ս նույնը։
[31] Տե՛ս Monatsberichte der Akademie der Wissenschaften zu Berlin, 1873.
[32] Annales, XV, 4.
[33] Տե՛ս Nat. Hist. VI, 31, 3, Paris, 1883. (Հրատ. M. Littré):
[34] Համեմատե Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, էջ 381—429 և 501—523։
[35] Տե՛ս Moltke H. von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei (1835—1839), Berlin, էջ 287։
[36] Տե՛ս էջ 90—92։

կերտից Արտաշատ տանող ճանապարհագծում և Տիգրանակերտ-Ծարկինից ճիշտ և ճիշտ 50 հռոմեական մղոն կամ մոտ 75 կիլոմետր հեռավորության վրա, ինչպես այդ ցույց է տրված Պևտինգերյան քարտեզում։



Ծարկին–Տիգրանակերտ բաղադր։

Տիգրանակերտ քաղաքի համար տեղի այդ ընտրությունը կարելի է համարել հաջող ու նպատակահարմար ո՛չ միայն քաղաքական, այլև նաև ստրատեգիական ու տնտեսական տեսակետներից։ Եվ իրավի, այժմյան Ծարկինը ընկնում է Տիգրանի հիմնած աշխարհակալության ճիշտ մեջտեղում և, գտնվելով Տավրոսյան լեռների հարավային սառրոտներում՝ բավականաչափ պաշտպանված է և պատսպարված։ Նաև առևտրական հաղորդակցությունների տեսակետից Տիգրանակերտի տեղադրությունը խիստ հարմար էր, որովհետև նա գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի արքունական մեծ ճանապարհի մոտ և զանազան ուղղություններով կապված էր առևտրական խոշոր կենտրոնների հետ։

Նոր հիմնած այս քաղաքը, ըստ երևույթին, կենտրոն էր դառնալու ո՛չ միայն միջազգային առևտրի, արհեստների ու արդյունագործության, այլև հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության։ Հայաստան էր հրավիրված, ինչպես վկայում

է Պլուտարքոսը[37], Աթենքից աքսորված նշանավոր հռետոր Ամփիկրատեսը, որը արհամարհանքով մերժել էր Սելևկյանների հրավերը և ապրում էր Տիգրանի արքունիքում։ Մետրոդորոս Սկեփսացին[38], որը հայտնի գրող էր ու փիլիսոփա և որին Պլինիոսն անվանում է «ստող հռոմայեցիների» (Misoromaeus)[39], քաղաքական ականավոր գործիչ էր նախ Պոնտոսում և ապա Հայաստանում։ Մետրոդորոսը, ինչպես հայտնի է, գրած է եղել Տիգրան Բ-ի ընդարձակ պատմությունը, որից, դժբախտաբար, որևէ հետք չի մնացել։ Տիգրանակերտում, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[40], կառուցված է եղել առանձին թատրոն, որի համար զանազան տեղերից հրավիրված են եղել հույն դերասաններ։ Պլուտարքոսի ուշագրավ մի վկայությունից հայտնի է, բացի այդ, որ Տիգրանի որդի Արտավազդը գրած է եղել հունարեն լեզվով ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը ծանոթ են եղել հռոմայեցիներին մինչևիսկ Պլուտարքոսի ժամանակ[41]։

Հատուկ ուշադրության արժանի է նաև այն, որ Հայաստանում ևս, ինչպես և Պոնտոսում ու հելլենիստական այլ երկրներում, հելլենիզմի ազդեցությամբ տեղի էր ունեցել կրոնների մերձեցում և հայ հեթանոսական աստվածները միաձուլվել էին հունականների հետ։ Արամազդը համապատասխան էր համարվել Զևսին, Միհրը՝ Հելիոսոսին, Անահիտը՝ Արտեմիդեին, Նանեան՝ Աթենասին, Աստղիկը՝ Աֆրոդիտեին, Տիրը՝ Ապոլոնին և Վահագնը՝ Հերակլեսին։ Կրոնական այս աղդեցությունն այնքան զորեղ էր, որ Տիգրան երկրորդի ժամանակ, ինչպես վերև տեսանք, հայկական մեհյաններում էին գետեղել Հունաստանից և Փոքր Ասիայից բերված հունական աստվածների արձանները։

Բոլոր այս փաստական տեղեկություններից, որ վերաբերվում են Տիգրան Բ-ի վերանորոգչական գործունեությանը՝ կարելի է հետևցնել, որ ո՛չ միայն Կապադովկիայում և Պոնտոսում, այլև սրանց հարևան Հայաստանում հակադիր հոսանք էր սկսվել ընդդեմ տիրող իրանիզմի և հիմք էր դրվել հին կենցաղի հելլենականացման։

---


37 Տե՛ս Լուկուլ., 22, 7։

38 Տե՛ս Պլուտ., Լուկ., 22, 3—6, Ստրաբոն, XIII, 1, 55 և Ապոլ. Հոդ., IV, 133։

39 Տե՛ս Nat. Hist., XXXIV, 16, 2:

40 Տե՛ս Լուկուլ., 29, 4։

41 Տե՛ս Պլուտ., Կրասոս, 33, 1։



Ֆարկին—Հյուսիսային պարսպի ավերակները:

Նույն այս փաստերը ցույց են տալիս, որ դժվար է համաձայնել Մոմզենի հետ, որը ինչպես հայ-հռոմեական, նույնպես և Միհրդատյան կռիվները բնորոշում է իբրև հետադիմական մի շարժում արևմտյան ժողովուրդների դեմ: Առավել ևս սխալ է, անշուշտ, նրա պնդումը, որ իբր թե Միհրդատը եղել է ասիական այդ ռեակցիայի առաջնորդն ընդդեմ հելլենիզմի[42]:

Տիգրան Բ-ի թագավորության ժամանակը բացառիկ մի շրջան էր հին Հայաստանի քաղաքական հզորացման և կուլտուրական ու տնտեսական ներքին զարգացման: Ուստի և հասկանալի է, որ վերոհիշյալ պատմական անցքերը նյութ էին դառել անգիր բանահյուսության, պատմվել ու երգվել էին հին Հայաստանում և նրանց հիշողությունները պահպանվել էին երկար դարերի ընթացքում:

Տիգրան Բ-ի մասին նույնիսկ Խորենացու ժամանակ գոյություն են ունեցել որոշ ավանդություններ և բանաստեղծական առանձին մի գրվածք («Զորս հազներդութիւնք»)[43], որի հեղինակն օգտված է եղել, հավանորեն, պատմական հին երգերից և ավանդություններից: Բայց Խորենացին այս աղբյուրների մեջ հիշատակված Տիգրանին, որը, անտարակույս, Արտաշեսյան տոհմի Տիգրան Բ-ն է, համաձայն իր սխալ ժամանակագրության համարել է դաշնակից պարսից Կյուրոս թագավորի:

Ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը[44], Տիգրանի մասին այն

[42] Տե՛ս «Римская история», II, Москва, 1887, էջ 273—275:

[43] Տե՛ս Խորենացի, I, գլ. ԽԱ և ԻԲ:

[44] Տե՛ս «Հայ ժողովրդական առասպելները», Վաղարշապատ, 1901, էջ 448—

ընդարձակ հիշողությունները, որ բերված են Խորենացու պատմության առաջին գրքի ԻԴ—ԼԱ գլուխներում, մեծ մասամբ պատմական են և համապատասխանում են օտար աղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Եվ հիրավի, ո՛չ միայն Մարաց տերության նվաճումը, այլև ներքև մեջ բերված վկայությունները վերաբերվում են պարզապես Տիգրան Բ-ին կամ Մեծին:

1. Խորենացի, I, գլ. ԻԴ, 71 (Տփղիս, 1913)՝

«Բայց անցցուք այսուհետև որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նմանէ գործք: Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և... զմարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկենացս ըղձալի ինքն և ժամանակ իւր»:

2. Խորենացի, I, գլ. ԻԴ, էջ 72՝

«Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք տգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք: Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոյ բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպադեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիունք՝ զիշնամիսն արտահալածել: Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զամենայն հասակ պարարեալ»:

3. Խորենացի, I, գլ. Լ, էջ 82—83՝

«Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ

—474, համեմատե նաև Հ. Գելցեր, Համառօտ պատմութիւն Հայոց, թարգմ. Գալեմքյարյանի, Վիեննա, 1897, էջ 8—9:



Ֆարկին—Աբևելյան պարսպի ավերակները։


ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ»։

4. *Խորենացի, III, ԻՀ, էջ 290՝*

«Եւ նգախարխար արարեալ զայն [զպարիսպն Տիգրանակերտի], որ ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին»։

Այս վկայություններից առաջինում ճշտությամբ արտահայտված ու պահված է Տիգրան Բ-ի կարճատև տիրապետությունը Սելևկյան թագավորության հույների վրա[45]։ Երկրորդ վկայության մեջ, որն առանձնապես կարևոր է ու հետաքրքիր, մատնացույց է

[45] *Տե՛ս Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 454։*



Աւշականի հայ թագավորի արձանագրությունը Ֆարկինի հյուսիսային պարսպի վրա։

արված հայկական զորաբանակի վերակազմությունը և նկարագրված են նաև Հայաստանի լիառատ ու բարեկեցիկ վիճակը և այն մեծ հարստությունները, որ կային երկրում Տիգրանի ժամանակ։ Երրորդ և չորրորդ վկայությունները ևս միանգամայն ստույգ են ու պատմական և վերաբերվում են Տիգրանակերտի շինության Աղճնիքում։

Վերոհիշյալ երկրորդ վկայության մեջ, ինչպես մատնանշել էինք ռուսերեն մեր աշխատության մեջ[46], «իւղով և մեղու զհասակս ամենեցուն պարարեալ» արտահայտությունը հռետորական մի չափազանցություն է, որը ճիշտ կարող է լինել, գլխավորապես, իշխող դասերի նկատմամբ։ Միանգամայն, սակայն, հնարավոր է և հավանական, որ հարստացած ու փարթամացած այս դասերի զորեղացման և սրանց իշխանության ու արտոնությունների ընդարձակման հետ միասին կարող էր ծանրացած լինել իրավական դրությունը շինական դասի։

Որ խորենացու մոտ պատմական են ու արժանահավատ նաև վերոհիշյալ հիշողությունները Հայաստանում կիտված դրամական ու այլ հարստությունների մասին՝ այդ հաստատում են, ինչպես կտեսնենք ներքև, Պլուտարքոսի վկայությունները հսկայական այն գումարների մասին, որ տարել էին Հայաստանից Լուկուլլոսը և Պոմպեոսը։

[46] Տե՛ս «О торговле и городах Армении», էջ 65—66։

8. ՄԻՀՐԴԱՏՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՓԱԽՈՒՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Միհրդատյան առաջին պատերազմից հետո Սուլլայի և Միհրդատի միջև կայացել էր միայն բանավոր համաձայնություն և Դարդանոսում կնքված դաշնագրությունն (84 թ. մեր թվ. առ.) ուներ ավելի շուտ ժամանակավոր զինադադարի բնույթ, քան հաստատուն ու տևական խաղաղության։

Թե ո՛րքան անկայուն էր բանավոր այս հաշտությունը՝ այդ նկատվեց դաշնագրությունից արդեն մեկ տարի հետո։

83 թվին Հռոմեական Ասիայի կառավարիչ Մուրենան, անտես առնելով Դարդանոսի դաշինքը՝ ինքնագլուխ կերպով, առանց Հռոմեական ժողովրդի ու ծերակուտի հավանության, վերսկսեց պատերազմը Միհրդատի դեմ։ Միհրդատյան այս երկրորդ պատերազմը, որը տևեց մոտ երեք տարի (83—81 թ. մեր թվ. առ.), դադարեցվեց Սուլլայի հրամանով միայն այն ժամանակ, երբ Հռոմեական պարտված զորքերը հարկադրված էին ետ նահանջել Պոնտոսից։

Այս երկրորդ պատերազմից հետո՝ Միհրդատը, որն անկեղծ կերպով կողմնակից էր խաղաղության՝ ուղարկեց Հռոմ հատուկ դեսպանություններ (79 և 78 թվ.) և խնդրեց, որ Դարդանոսի դաշնագրությունը ձևակերպվի գրավոր կերպով և վավերացվի Հռոմեական ծերակուտի կողմից։ Եվ երբ նրա այս դիմումները մնացին անհետևանք՝ նա համոզվեց, որ կռիվն անխուսափելի կերպով վերսկսվելու է հակառակ իր ցանկության։

Եթե Միհրդատյան երրորդ պատերազմը բռնկվեց այս բանակցություններից հինգ տարի հետո՝ դրա պատճառն այն էր, որ Սուլլայի մահից հետո (78 թ. մեր թվ. առ.) Հռոմում կառավարության դեմ ոտքի էր կանգնել դեմոկրատական կուսակցությունը և Իսպանիայում վտանգավոր ընթացք էին ընդունել վտարանդի դեմոկրատների կռիվները Սերտորիուսի հանճարեղ ղեկավարությամբ։

Հինգ տարվա այս հանգիստը Միհրդատը մեծապես օգտագործեց և ամենաեռանդուն կերպով նախապատրաստվեց պատե-

րազմի, որն անխուսափելի էր։ Նախորդ կռիվների ժամանակ նա արդեն համոզվել էր, որ փոքր, բայց մարզված և ուժեղ զորքն ավելի կարևոր նշանակություն ունի, քան արևելյան մեծ զորաբանակները, որոնք՝ չնայած իրենց թվական գերակշռությանը՝ չեն կարող դիմադրել ու կռվել հռոմեական վարժված զորքի հետ։ Նա աշխատում էր այժմ ունենալ, մարզել և կազմակերպել իր բանակը հռոմեական զորքի նմանությամբ և այդ բանում նրան օգնում էին իտալացի վարարանդինները, որոնք ապաստան էին գտել նրա մոտ քաղաքացիական կռիվների ընթացքում։ Նրա նոր զորքը, թեև թվով այնքան շատ չէր ինչպես առաջին պատերազմի ժամանակ, սակայն իր որակով նա չէր մնում հռոմեական լեգեոնական զորքերից։

Ապպիանոսը վկայում է, որ Միհրդատը, բացի այդ, հրամայել էր պատրաստել մեծ քանակությամբ նավեր ու զենքեր և մթերել էր տվել զորքի պարենավորման համար երկու միլիոն մեդիմն ցորեն (=մոտ 5 միլիոն փութ)։

«Միհրդատի պատերազմակիցներն էին,—ասում է Ապպիանոսը,—բացի նախկին ուժերից խալկուբները, արմենները, սկյութները, տավրերը, հույները, հենիոքները, սպիտակ ասորիները և նրանք, որոնց երկիրը գտնվում է Թերմոդոնդ գետի շրջանում և անվանվում է ամազոնուհիների երկիր»[1]։

Ապպիանոսի այս վկայության մեջ արմենները, որ հիշատակված են խալկուբներից հետո՝ ակներևաբար Փոքր Հայքի արմենները են, որոնք, ինչպես վերև տեսանք մասնակցել էին նաև Միհրդատյան առաջին պատերազմին։

Հետաքրքիր է առանձնապես և ուշագրավ, որ ինչպես Միհրդատյան առաջին պատերազմից, նույնպես և այս երրորդ պատերազմից առաջ, Տիգրանը, ինչպես վերև մանրամասն հիշել էինք, նորից հարձակվել էր Կապադովկիայի վրա[2] և Հայաստան էր գաղթեցրել Մաժաք ու այլ քաղաքների բնակչությունը։ Այս հարձակումը, որը տեղի էր ունեցել ընդհանուր թշնամու՝ Արիոբարզան Ա-ի դեմ, ըստ երևույթին Միհրդատի խնդիրքով, պետք է, հավանորեն, ապահովեր այս վերջինի թիկունքը Կապադովկիայի կողմից։ Հռոմի դաշնակից այս թագավորության երկիրը, ինչպես վերև ասացինք, նրա համար ռազմական նշանակություն ունեցող

[1] Տե՛ս Ապպ., Միհրդատականք, 69։

[2] Ըստ Ռեյնաքի 77 թվին մեր թվ. առ., տե՛ս Mithridate Eupator, էջ 313։

կարևոր մի միջանցք էր և պատերազմի ժամանակ վտանգավոր էր թե Պոնտոսի և թե Հայաստանի համար։

Մենք վերև նույնպես տեսանք, որ հայ-պոնտական դաշինքը վերաբերվել է ո՛չ թե հռոմեա-պոնտական պատերազմներին, այլ Կապադովկիային։ Թեև պատմագիտական երկերում գերիշխում է այն կարծիքը, որ իբր թե Տիգրանը պարտավորվել էր ըստ այդ դաշինքի պատերազմել Միհրդատի հետ հռոմայեցիների դեմ, և որ նա հռոմեա-պոնտական երրորդ պատերազմում լքել էր Միհրդատին և խախտել իր կնքած դաշինքը՝ սակայն այս պնդումները միանգամայն անհավանական են և չեն հաստատվում սկզբնաղբյուրների ուշադիր ու քննական ուսումնասիրությամբ։

Միհրդատի դաշնակիցը եղել է երրորդ պատերազմում ո՛չ թե Տիգրանը, որի նոր հիմնած մեծ պետությունն ապահովված չէր պարթևական հարձակումների վտանգից, այլ հռոմեական դեմոկրատիայի առաջնորդ Սերտորիուսը, որը հավաքել ու կազմակերպել էր Իսպանիայում Հռոմի պահպանողական կառավարության դեմ հզոր մի զորաբանակ։ Միհրդատը շատ լավ հասկանում էր, որ վիթխարի ու զորեղ Հռոմը գրեթե անպարտելի է։ Նա որոշել էր չկռվել այժմ երկու հռոմեական կուսակցությունների հետ միաժամանակ, ինչպես նա այդ արել էր առաջին պատերազմի ընթացքում։ Նրա գլխավոր հույսն այժմ այն էր, որ նա կկարողանա փրկել մոտալուտ վտանգից իր երկիրը, դաշնակցելով ու համաձայնության գալով դեմոկրատական կուսակցության հետ ընդդեմ իշխող կառավարության։

Միհրդատին հաջողվեց համաձայնության գալ Սերտորիուսի հետ, ուղարկելով նրա մոտ Իսպանիա փախած Լուցիուս Փաննիուս և Լուցիուս Մագիուս հռոմայեցի սպաներին, որոնք Սուլլայի ու նրա կողմնակիցների կատաղի հակառակորդներն էին։ Դաշինքը նրա հետ կնքվեց հետևյալ պայմաններով՝ պրովինցիա Ասիան մնալու էր հռոմայեցիների իշխանության ներքո, իսկ Բիթանիան, Պափլագոնիան և Կապադովկիան, որոնք մշտական կռվախնձոր էին Հռոմի և Պոնտոսի միջև և որոնք Պոնտոսի համար ունեին կենսական նշանակություն՝ ստանալու էր Միհրդատը։ Այս վերջինն ուղարկեց Սերտորիուսին՝ Իսպանիա 40 նավ և 3000 տաղանդ դրամական նպաստ։

Միհրդատյան երրորդ պատերազմի առիթ էր ծառայել Բիթանիայի միացման խնդիրը Հռոմին։ 74 թվի[3] վերջերում վախճանվել

[3] Միհրդատյան երրորդ պատերազմի ժամանակագրության վերաբերյալ վիճելի հարցերը քննության են առնված Ֆեհեռոյի պատմության առաջին հատորի

էր Բիթանիայի Նիկոմեդես թագավորը և իր թագավորությունն ու հարստությունները կտակել էր Հռոմին։ Բիթանիան, որն արդեն վաղուցհետե շահագործում ու հարստահարում էին հռոմեական կապալառուներն ու վաշխառուները, ուներ արգավանդ հողեր, ձկնորսարաններ, հանքատեղեր, հարուստ քաղաքներ, նավահանգիստներ ու շահութաբեր մաքսատներ։ Բնական է, որ այդ հարստությունները ձեռքից բաց չէին թողնելու շահագրգռված խոշոր դրամատերերը։ Թեև Բիթանիայի գրավումը խախտում էր Դարդանոսի դաշնագրությամբ հաստատված քաղաքական հավասարակշռությունը և համազոր էր պատերազմի հայտարարության Միհրդատին՝ նրանք ամեն ջանք գործ դրին և հաջողեցրին այդ գրավումը ծերակույտի որոշմամբ։

Հռոմը, հաստատելով այժմ իր տիրապետությունը Բիթանիայում՝ ո՛չ միայն դառնում էր Պոնտոսի անմիջական հարևանը, այլև տեր ու տնօրենն էր դառնում սևծովյան նեղուցների։ Այնուհետև նա երբ ուզենար՝ կարող էր փակել նեղուցները և քայքայել Պոնտոսի ու Բոսփորի առևտրական մեծ քաղաքների տնտեսական բարեկեցությունը։

73 թվի գարնանը, երբ հռոմայեցիները չունեին դեռևս Փոքր Ասիայում բավականաչափ զորք՝ պոնտական զորքերը հանկարծակի շարժվեցին, առանց պատերազմ հայտարարելու, դեպի Կապադովկիա և դեպի Բիթանիա, իսկ նավերը՝ Բիթանիայի ափերով դեպի նեղուցները։ Կապադովկիա ուղարկված զորաբանակը, ըստ երևույթին, պետք է պաշտպաներ Պոնտոսի թիկունքը հարավից՝ հռոմեական Կիլիկիայի կողմից։ Իսկ երկրորդը, գլխավոր ու գործող բանակը, իրեն նպատակ էր դրել գրավել Բիթանիան և տիրապետել նեղուցներին։

Մեծ այս երկրորդ զորաբանակն ամենակարճ ժամանակում անցավ Պափլագոնիայի և Գալատիայի միջով և մտավ անակնկալ կերպով Բիթանիա, փախուստի մատնելով հռոմեական ֆինանսիստներին ու պաշտոնյաներին, որոնք առելի էին դառել տեղական բնակչությանը։ Հռոմեական զորքերն ու նրանց զորավարը, պրոկոնսուլ Կոտտան, որոնք գտնվում էին Բիթանիայում, ամրացան Բոսփորի ափի մոտ Քաղկեդոն քաղաքում։ Իսկ Հռոմեական մյուս զորավարը, պրոկոնսուլ Լուկուլլոսը, որին Կոտտա-

---

վերջում, տե՛ս „Величие и падение Рима", I, էջ 338—343։ Սակայն ըստ իս ավելի հավանական են ժամանակագրական դիտողություններն ու ճշտումները Ռեյնաքի ուսումնասիրության մեջ, տե՛ս Mithridate Eupator, էջ 321 ծան. և այլն։

յի հետ միասին հանձնարարված էր պատերազմի վարումը և որն այդ ժամանակ գտնվում էր իր զորաբանակով Փռյուգիայում՝ շտապեց օգնության հասնել իր ընկերոջը։

Սակայն Կոտտան չուզեց հաղթության պատիվը բաժանել Լուկուլլոսի հետ։ Եվ նա, հենվելով միայն իր զորքի վրա՝ ընդունեց մարտը Քաղկեդոնի պարիսպների մոտ և Բոսփորի նեղուցում։ Այս կռվում հռոմեական զորքը ծանր պարտություն կրեց ցամաքի և ծովի վրա։ Հռոմը կորցրեց այստեղ իր ռազմածովային նավատորմը, որ բաղկացած էր ավելի քան վաթսուն նավերից։ Նա չուներ այնուհետև Պրոպոնտիսում և ո՛չ մի նավ։ Միհրդատի նավերն աղատ կարող էին անցնել նեղուցներով Պրոպոնտիս և այստեղից էգեյան ծով։ Հաղթական հակատամարտն ունեցավ նաև այն հետևանքը, որ ամբողջ Բիթանիան անձնատուր եղավ Միհրդատին։

Նույնպիսի արագությամբ պոնտական մյուս բանակը ևս, հաղթանորեն, գրաված է եղել Կապադովկիան։ Մնում էր, ուրեմն, նվաճել նաև պրովինցիա Ասիան և այնտեղ հաստատել, համաձայն Սերտորիուսի հետ կնքված դաշինքի, հռոմեական դեմոկրատների իշխանությունը։

Քաղկեդոնի մոտ հաղթություն տանելուց հետո՝ թվում էր, որ այդ ևս ունի հաջողության որոշ հավանականություն։ Այս երբորդ պատերազմի ժամանակ պոնտական զորքերը մտնում էին հռոմեական պրովինցիան ո՛չ թե նվաճողական նպատակներով, ինչպես առաջին պատերազմում, այլ իբրև Սերտորիուսի դաշնակիցներ։ Նրանց ուղեկցում էր Մարկուս Մարիուս զորավարը, որը նշանակված էր պրովինցիա Ասիայի կառավարիչ և պրոկոնսուլ։

Ինչպես և առաջին պատերազմի ժամանակ՝ Միհրդատն այս անգամ ևս աշխատեց հռոմեական Փոքր Ասիայում առաջ բերել դասակարգային կռիվ և ոտքի հանել ժողովրդի ճնշված ու կեղեքված ստորին խավերն ընդդեմ Սուլլայի հաստատած դաժան կառավարության։ Նա ուղարկում է այդ նպատակով զանազան ուղղությամբ հեծելազորի թռուցիկ ջոկատներ, որոնք, իրապես, ապստամբություն առաջ բերին Փոքր Ասիայի հարավում՝ հռոմեական Կիլիկիայում, Իսավրիայում և Պիսիդիայում։ Որոշ հաջողություն ունեցավ նաև պրոկոնսուլ Մարկուս Մարիուսը պրովինցիա Ասիայի հյուսիս-արևմտյան շրջաններում։ Այստեղ մի շարք քաղաքներ, օրինակ՝ Լամփսակուսը, Պարիումը, Պրիապուսը և ուրիշներ նրան անձնատուր եղան։ Մարկուս Մարիուսը, մտնելով այս քաղաքները՝ ազատություն էր շնորհում նրանց Սերտորիուսի անունից և զեղչում պարտքերի որոշ մասը։

Պետք է, սակայն, ասել, որ հեղափոխությունն այս անգամ շտաբածվեց նույն արագությամբ, ինչպես առաջին պատերազմի ժամանակ։ Բնակչության բարձր ու հարուստ խավերն ամեն կերպ աշխատեցին խոչընդոտել ու կանխել ապստամբությունը։ Եվ որովհետև այս խավերն ուժեղ ու ազդեցիկ էին խոշոր քաղաքներում, ուստի և մեծ քաղաքներից գրեթե ո՛չ մեկը չհարեց ապստամբությանը։ Լուկուլլոսի զորաբանակի համար, որը Կոստայի պարտությունից հետո մեն մենակ պետք է պաշտպաններ Հռոմեական Ասիան՝ սրանց հավատարմությունը և օգնությունն ուներ, իհարկե, մեծ նշանակություն։

Քաղկեդոնի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտից հետո՝ Միհրդատի զորքերը, շարժվելով դեպի հարավ՝ մտան պրովինցիա Ասիա, գրավեցին այստեղ Լամփսակուս քաղաքը և տեղավորվեցին Պրոպոնտիսի և Հելլեսպոնտի երկարությամբ։ Լուկուլլոսը, որ մոտից հետևում էր Միհրդատի զորքերի տեղաշարժումներին՝ որոշեց խուսափել վճռական ընդհարումից։ Նա գիտեր, որ Բոսպորում զորքերը իրենց որակով ետ չեն մնում հռոմեականից և թվով ավելի շատ են, քան իր զորքը։ Եվ որովհետև Միհրդատի բանակի ամենաթույլ կողմը պարենի մատակարարման դժվարություններն էին, ուստի և նա, վստանգավոր համարելով կռիվը բաց ճակատամարտում՝ որոշեց խանգարել ու կասեցնել պարենի հայթայթումը նրա բանակին։

Եվ նրան այդ իսկապես հաջողվեց։ Միհրդատի բանակի պարենավորումը խիստ դժվարացավ ցամաքով, իսկ ծովով՝ Լամփսակուսի վրայով ստացվող սննդամթերքը չէր բավարարում զորքի պահանջները։ Պարենավորման դժվարացման պատճառով Միհրդատը պետք է կամ ետ քաշվեր սեծովյան իր նավահանգիստները և կամ գրավեր Պրոպոնտիսում նաև մի ուրիշ ավելի մեծ նավահանգիստ, ուր կարելի լիներ բեռնաթափել Պոնտոսից բերվող պարենամթերքը։

Հպարտ ու համարձակ թագավորը, փոխանակ ետ նահանջելու՝ որոշեց պաշարել ու գրավել Կիզիկոս քաղաքը, որն ամենամեծ նավահանգիստն էր և ամենաուժեղ ամրությունն այժմյան Մարմար ծովի ափին։ Սակայն այստեղ՝ Կիզիկոսի առջև սկսեց բախտը դավաճանել նրան։ Կիզիկոսի պաշարման հենց ընկզմում սոսկալի փոթորկի պատճառով խիստ վնասվեցին Միհրդատի պատերազմական մեքենաները և զորքի հետ միասին ջրասույզ եղան քաղաքը պաշարող նրա նավերը։ Բացի այդ, փոթորիկների պատճառով սկսեց ընդհատվել պարենի փոխադրումը ծովով և պաշարող զորքերը հետզհետե ուժասպառ եղան սովից

ու հիվանդություններից։ Վերջ ի վերջո, պոնտական հյուծված զորաբանակը հարկադրված եղավ ետ նահանջել դեպի Լամփսակուս և Բիթանիա։ Եվ այդ նահանջի ժամանակ նա դարձյալ մեծ կորուստներ կրեց Լուկուլլոսի հետապնդող լեգեոններից։

72 թվի գարնանը Միհրդատն իր մեծ զորքի մնացորդների հետ կարողացավ պատսպարվել Լամփսակուս և Պարիում քաղաքներում։ Բայց այնուհետև ևս շար ճակատագիրը դարձյալ ուղեկցում էր նրան։ Պոնտական հարյուրավոր նավեր նորից խորտակվեցին փոթորկի պատճառով Կիզիկոս և Պարիում քաղաքների մոտ։ Չնայած դրան Միհրդատը դեռ էլի մոտ վեց ամիս շարունակեց պատերազմը ծովի վրա։ Եվ միայն իր նավատորմի վերջնական պարտությունից հետո նա ստիպված եղավ ետ քաշվել Պոնտոս։

Բայց նրա ռազմական ուժերի համար աղետալի ու կորստաբեր եղավ նաև այս վերջին նահանջը։ Բոսփորից դուրս գալուց հետո նորից փոթորկի զոհ դառան նրա ավելի քան վաթսուն նավերը և մոտ տասը հազար զորքը։ Եվ նա հազիվհազ կարողացավ վերադառնալ իր երկիրը գրեթե մեն մենակ։

Կովի բեմը դառավ այնուհետև Միհրդատի բուն երկիրը, Պոնտոսը, որն այժմ գրեթե անպաշտպան էր։

72 թվի երկրորդ կեսին Լուկուլլոսը ներս մտավ Պոնտոսի արևմտյան մասերը և թույլ տվեց իր զինվորներին ավերել ու կողոպտել հարուստ ու բարելից այս շրջանները։ Պլուտարքոսի վկայությամբ[4], պատերազմական ավարն այնքան շատ էր այնտեղ, որ հռոմեական բանակում մեկ եղն արժեր 1 դենար (=մոտ 35 կոպ. ոսկի փողով)[5], իսկ մեկ ստրուկը՝ 4 դենար (=մոտ 1 ռբ. 40 կոպ.)։ Այստեղից Լուկուլլոսի զորքերն առաջ շարժվեցին և պաշարեցին պոնտական երկու նավահանգիստ՝ Ամիսոսը և Թեմիսկիրան։

Միհրդատը թողեց, որ իր քաղաքները պաշտպանվեն իրենց սեփական ուժերով, իսկ ինքը սկսեց հավաքել նոր զորքեր և, ամրանալով իր երկրի լեռնային շրջաններում՝ աշխատեց նախապատրաստել նոր դիմադրություն։ Միևնույն ժամանակ նա օգնություն խնդրեց իր որդուց՝ Մաքարեսից, որը Բոսփորի փոխարքան էր, նաև պարթևներից, սկյութներից ու Տիգրան Բ-ից։

Սակայն նրա նոր նախաձեռնությանն այլևս ո՛չ ոք հավատա

---

4 Լուկուլ., 14, 1։

5 Տե՛ս Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin, 1882, էջ 711 (=0,702 Mark)։

չէր ընծայում պոնտական զորքերի ծանր անհաջողություններից հետո։ Թշնամու կողմն էին անցնում այժմ շատերը մինչեւիսկ Պոնտոսի մեծամեծներից։ Նրան դավաճանում էին նույնիսկ սեփական իր դեսպանները։

Միհրդատի հարազատ որդին՝ Մաքարեսը, ո՛չ միայն չօգնեց հորը, այլ ինքը հարմար առիթ էր սպասում և հռոմայեցիների հետ ուզում էր կնքել անջատ հաշտություն։

Տիգրանի մոտ ուղարկված դեսպանության մասին Պլուտարքոսը պատմում է հետևյալը։

«Մետրոդորոսը Միհրդատի կողմից,—ասում է Պլուտարքոսը[6],—ուղարկված էր Տիգրանի մոտ իբրև դեսպան խնդրելու օգնություն հռոմայեցիների դեմ։ Սրան հարցրել էր Տիգրանը՝ «իսկ դու ինքդ, ո՛վ Մետրոդորոս, ի՞նչ խորհուրդ կտաս այդ մասին»։ Եվ նա՝ կամ Տիգրանին օգտակար լինելու համար և կամ չցանկանալով, որ Միհրդատը փրկվի՝ ասում է—«իբրև դեսպան խորհուրդ եմ տալիս, իսկ իբրև խորհրդատու՝ խորհուրդ չեմ տալիս»։

Միհրդատի դիմումի մասին Տիգրանին ուշագրավ մի վկայություն ունի նաև Մեմնոնը։

«Միհրդատը.. ուղարկեց,—վկայում է Մեմնոնը[7],—դեսպաններ սկյութացոց թագավորների, պարթևաց թագավորի և յուր փեսայի՝ Տիգրան արմենի մոտ։ Սակայն առաջիններից նա ստացավ մերժում, իսկ Տիգրանը, որին շարունակ անհանգստացնում էր ու աղերսալից խնդրում Միհրդատի դուստրը՝ վերջ ի վերջո խոստացավ օգնել»։

Տիգրանի այս խոստումը մնացել էր, ըստ երևույթին, իբրև սոսկ խոստում։ Սկզբնաղբյուրների մեջ նրա իրական օգնության ու աջակցության մասին ո՛չ միայն չկան որևէ տեղեկություններ, այլ ընդհակառակը՝ կան ակնարկներ նրա չեզոքության մասին, որ նրանք համարում են աննեղելի մի սխալ։ Ռեյնաքի կարծիքով, Տիգրանին են վերաբերվում, հավանորեն, Սալլուստիուսի հետևյալ խոսքերը՝

«Դու չգիտես, որ եթե որևէ տներ կրակն ուժգնորեն հրդեհել է, այնքան էլ հեշտ չէ կանխել, որպեսզի չայրվեն նաև հարևան տները». [„non tu scis, si quas aedes ignis cepit acriter, haud facile sunt defensu quin et comburantur proximae“][8]։

Ինչպես ենթադրում է դարձյալ Ռեյնաքը, հենց այս տողերի ազդեցությամբ գրված է, հավանորեն, նաև Հորացիուսի հետևյալ տողը՝

«երբ հարևան պատն այրվում է՝ վտանգը քեզ էլ է վերաբերվում» [„tua res agitur paries cum proximus ardet“][9]։

Պատմագիտական նորագույն երկերում ևս Տիգրանի չեզոքությունը համարում են քաղաքական մեծ սխալ, որովհետև այժմ վճռվում էր ո՛չ միայն Պոնտոսի, այլև Հայաստանի ու Առաջավոր Ասիայի բախտն ու ապագան։

Այս գնահատությունը, իհարկե, ուղիղ է, սակայն Տիգրանին դատապարտողները պետք է նկատի ունենան միևնույն ժամանակ նրա դժվար կացությունը։ Հանդես գալով հռոմայեցիների դեմ՝ նա հարկադրված պիտի լիներ պատերազմելու ո՛չ միայն սրանց, այլ նաև իր ոխերիմ թշնամիների՝ պարթևների դեմ[10]։ Չպետք է նաև մոռանալ, որ հռոմեական նենգ ու ճարպիկ դիվանագիտությունն աշխատել էր իր հերթին, ինչպես դժվար չէ կռահել Պլուտարքոսի վկայություններից[11], տպավորություն ստեղծել իր խաղաղ տրամադրության մասին Տիգրանի հանդեպ։

71 թվի գարնանը կռիվը Միհրդատի դեմ վերսկսվեց Պոնտոսի կենտրոնական շրջանում, Կաբիրայի մոտ (այժմ՝ Նիկսար կամ Նեոկեսարիա—Կեկիդ-Լիկոս գետի ափին)։ Միհրդատը կարճ ժամանակվա ընթացքում կարողացել էր հավաքել ու կազմակերպել այստեղ մի նոր զորաբանակ տեղացիներից ու սկյութական վարձկաններից։

Լուկուլլոսի առաջխաղացումը դեպի Կաբիրա բավական ծանր էր ու վտանգավոր, որովհետև նրա բանակի պարենավորմանը դժվարություններ ու արգելքներ էր հարուցանում Միհրդատի հեծելազորը, որը խիստ ուժեղ էր և թվով ավելի շատ էր, քան հռոմեականը։

---

[6] Տե՛ս Լուկուլլոս, 2, 4,

[7] Տե՛ս Գլ. 43, Lipsiae, 1816, էջ 64։

[8] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 335, ծան. 1, նաև Sallustius, fr. III, 37։

[9] Տե՛ս նույնը, էջ 335, ծան. 1։

[10] Գուշմիդը կարծում է նույնիսկ, որ Տիգրանի վերջին կռիվը պարթևների դեմ շարունակվում էր նաև յոթանասնական թվականների սկզբներին՝ երբ Միհրդատի դեսպանները նկել էին օգնության խնդրելու նրանցից, տե՛ս Geschichte, Irans, Tübingen, 1888, էջ 82—83։

[11] Պլուտ., Լուկուլլոս, 14, 4—7։

Թեև Կաբիրայի մոտ սկզբում Միհրդատն ունեցավ որոշ հաջողություններ, սակայն շուտով նրան դավաճանեցին զորավարներից մի քանիսը, որոնց կաշառել էր Լուկուլլոսը։ 71 թվի ամառը պոնտական զորքերը ծանր պարտություն կրեցին Կաբիրայի մոտ, և Միհրդատը հազիվ կարողացավ փախչել փոքրաթիվ զորախմբով նախ Կոմանա, և ապա այստեղից Տալավրայի վրայով, որի տեղադրությունը դեռևս բավարար կերպով լուսաբանված չէ, եկավ Հայաստան ու խնդրեց իր փեսայից տալ իրեն օգնություն և ապաստարան։

Հայաստանում նրան տրվեց, իրոք, ապաստարան, սակայն Տիգրանը, կամենալով չեզոքություն պահպանել՝ նրան չհրավիրեց իր մոտ արքունիք, այլ հրամայեց թագավորավայել պատիվներ մատուցանել աներոջը և պահել նրան իր պետության հեռավոր ու սահմանային երկրներից մեկում[12]։

Պատմագիտներից ոմանք, հավատ ընծայելով Պլուտարքոսի անհավատի տեղեկություններին՝ մեղադրում են Տիգրանին, որ նա չի ուզեցել հանդիպել ու մխիթարել իր դժբախտ աղգականին, և որ նա ուղարկել է Միհրդատին վատառողջ ու ճահճային մի վայր[13]։ Նրանք աչքաթող են արել, որ Պլուտարքոսի թե այս և թե այլ նման գունավորված տեղեկությունները, որոնք չեն համապատասխանում մյուս աղբյուրների վկայություններին, հավանորեն, հնարովի հերյուրանքներ են և չունեն պատմական նշանակություն[14]։

Տիգրանի վարքագիծը պարտված ու իր մոտ փախած Միհրդատի հանդեպ ունեցել է, իրապես, քաղաքական դրդապատճառներ։ Տիգրանը ինչպես Միհրդատյան երրորդ պատերազմի ընթացքում, նույնպես և Միհրդատի վերջնական պարտությունից հետո, աշխատել էր պարզապես խույս տալ պատերազմից, հույս ունենալով, որ չեզոքության պահպանմամբ նա կկարողանա պահպանել նաև խաղաղությունը Հռոմի հետ։

Որ այս սխալ ու կարճատես քաղաքական հաշիվ էր՝ այդ ցույց տվեց մոտ ապագան։

---

[12] Տե՛ս Մ ա մ ն ո ն, գլ. 46 և Ա պ պ ի ա ն ո ս, Միհրդատականք, գլ. 82։

[13] Տե՛ս Պ լ ու տ., Լուկուլ., 22, 1։

[14] Պլուտարքոսի վերոհիշյալ անհավատի վկայություններին հավատ են ընծայել Ռեյնաքը, էքհարդը և ուրիշներ, տե՛ս Reinach, Mithridate, Eupator, էջ 346, Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus Klio, IX, 4, էջ 402 և ուրիշ.։

9. ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՀԱՆՁՆԵԼ ԻՐԵՆ ՄԻՀՐԴԱՏԻՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ

Միհրդատի վերջնական պարտությունից հետո հռոմեական զորքերը տարածվեցին Պոնտոսի կենտրոնական ու արևելյան շրջաններում և Փոքր Հայքում։ Ազնվականությունը և պաշտոնեությունը գրեթե ամեն տեղ անձնատուր եղան հռոմայեցիներին և հանձնեցին նրանց երկրի հարստությունները։ Շարունակում էին, սակայն, կռվել ու համառ դիմադրություն էին ցույց տալիս հելլենական մեծ քաղաքները։

71—70 թվ. ձմեռը Լուկուլլոսը անցկացրեց իր նոր նվաճած Կաբիրա քաղաքում Հայաստան փախած Միհրդատի պալատում։ Կաբիրայի մոտ տեղի ունեցած մեծ կռվից հետո, հավանորեն, 71 թվի վերջերին, նա ուղարկեց Տիգրանի մոտ իր կնոջ եղբորն՝ Ապպիոս Կլավդիոսին և պահանջեց, որ Տիգրանը հռոմայեցիների ձեռքը հանձնի պոնտական թագավորին։

Այս դեսպանության մասին մանրամասն տեղեկությունները հաղորդում է Պլուտարքոսը Լուկուլլոսի կենսագրականում, որի մեջ նա հերոսացրել ու փառաբանել է Լուկուլլոսին և աշխատել է նվաստացնել ու անվանարկել նրա հակառակորդներին։ Եվրոպական և հայկական գրեթե բոլոր պատմական ու բանասիրական նոր երկերում առանց սուզման մեջ են բերված, գլխավորապես, հենց այդ կասկածելի տեղեկությունները։ Պատմագետները, դրժբախտաբար, ուշադրության չեն առել, որ Պլուտարքոսի խեղաթյուրումները հեշտությամբ երևան են գալիս ուշադիր քննությամբ։

Պլուտարքոսի համապատասխան այդ վկայությունները, որ կարող են վերաքննության մեջ ենք բերում առանց կրճատումների։

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, 19, 2՝

«Եվ նա [Լուկուլլոսը] նվաճեց խալդայներին և տիբարեններին, գրավեց նաև Փոքր Հայքը և իրեն ենթարկեց ամրոցներն ու քաղաքները։ Այնուհետև նա ուղարկեց Ապպիոսին Տիգրանի մոտ պահանջելու Միհրդատի հանձնու-

մը, իսկ ինքը գնաց Ամիսոս, որի պաշարումը դեռևս շարունակվում էր»։

2. Նույնը, Լուկուլլոս, 21, 1—2՝

«Ապպիոս Կլավդիոսին, որն ուղարկված էր Տիգրանի մոտ (Կլավդիոսը Լուկուլլոսի այն ժամանակվա կնոջ եղբայրն էր)՝ ուղեկցում էին սկզբում թագավորի առաջնորդները, որոնք անտեղի կերպով նրան ման էին ածում երկրի վերին կողմերում ինչ որ մանվածապատ զարտուղի ու երկար ճանապարհներով։ Իսկ հետո, երբ սարկուբյունից ազատ արձակված մի մարդ, ազգով ասորի, ցույց տվեց նրան ուղիղ ճանապարհը՝ նա ետ դարձավ երկար ու սխալ այս ճանապարհից, արձակեց բարբարոս առաջնորդներին և մի քանի օրում անցավ Եփրատ և հասավ Անտիոք, որն անվանվում է էպիդափնե։ Ապպիոսին հրաման տրվեց սպասել Տիգրանին, որը բացակա էր և նվաճում էր Փյունիկիայի մի քանի քաղաքները։ Այդ միջոցին Ապպիոսն իր կողմը գրավեց իշխանավորներից շատերին, որոնք ներքուստ մեծ դժվարությամբ էին հնազանդվել Տիգրան արմենին։ Սրանցից մեկն էր և Զարբիենոսը՝ Կորդվաց թագավորը։ Նաև Տիգրանի նվաճած քաղաքներից շատերին, որոնք նրա մոտ ծածուկ սուրհանդակներ էին ուղարկել՝ Ապպիոսը խոստացավ, որ Լուկուլլոսը կօգնե նրանց, բայց հրամայեց, որ այժմ դեռ հանգիստ մնան»։

3. Նույնը, Լուկուլլոս, 21, 7—9՝

«[Տիգրանին ներկայանալուց հետո] հենց որ խոսքը տրվեց Ապպիոսին՝ նա ուղղակի ասաց, որ եկել է Միհրդատին տանելու, որը հարկավոր է Լուկուլլոսի հաղթահանդեսի համար։ Հակառակ դեպքում՝ հայտարարում է Տիգրանին պատերազմ։ Թեև Տիգրանը նրա խոսքերն աշխատում էր լսել ժպտերես ու կեղծ ծիծաղով, սակայն ներկա եղողների համար աննկատելի չմնաց, որ նրա դեմքը, երիտասարդ Ապպիոսի համարձակ ճառը լսելիս, այլայլվեց։ Չէ՞ որ նա միայն այժմ ազատ խոսք էր լսում քսաննհինգ տարվա ընթացքում. հենց այդքան ժամանակ էր նա թագավորել կամ ավելի ճիշտ սանձարձակ կերպով մոլեգնել։ Այնուհետև նաև Տիգրանը պատասխանեց Ապպիոսին, որ նա մտադիր չէ հանձնել Միհրդատին։ Իսկ եթե հռոմայեցիները պատերազմ կսկսեն՝ ինքը կպաշտպանվի։ Տիգրանը բարկացած լինելով Լուկուլլոսի վրա, որ սա իր գրության մեջ անվանել էր իրեն թագավոր և ո՛չ թագավորների թա-

գավոր՝ ինքը ևս իր պատասխանի մեջ նրան չէր անվանել իմպերատոր։ Իսկ Ապպիոսին նա ուղարկեց փարթամ նվերներ, և որովհետև սա չէր վերցնում՝ ավելացրեց ուրիշ նվերներ ևս։ Սակայն Ապպիոսը, որպեսզի չկարծեն, թե ինքը թշնամաբար է մերժել՝ վերցրեց միայն մեկ գավաթ, իսկ մյուս նվերները ետ ուղարկեց ու շտապեց վերադառնալ Լուկուլլոսի մոտ»։

Պլուտարքոսի այս վկայություններից, նախ և առաջ, անհավասար է ու հնարովի նրա հաղորդած հիմնական տեղեկությունը, որ իբր թե Ապպիոս Կլավդիոսը, մերժում ստանալով Տիգրանից՝ նրան հայտարարել էր պատերազմ։ Այդ չի կարող ճիշտ լինել, որովհետև հռոմեական ծերակույտը, ինչպես հայտնի է, չէր լիազորել Լուկուլլոսին պատերազմ հայտարարելու Տիգրանին։ Միանգամայն անհավանական է, բացի այդ, որ 71 թվի վերջերին Լուկուլլոսը պատերազմ հայտարարած լիներ Տիգրանին, որովհետև նա դեռևս չէր նվաճել պոնտական խոշոր քաղաքները և չէր ապահովել իր թիկունքը։ Եվ վերջապես, կարո՞ղ էր միթե Լուկուլլոսն այնքան անհեռատես ու անզգույշ լինել, որ հայկական իր արշավանքը սկսելուց մոտ մեկ ու կես տարի առաջ պատերազմ հայտարարեր Տիգրանին, ժամանակ տալով նրան ու հնարավորություն նախապատրաստելու ռազմական իր ուժերը պատերազմի համար։

Պլուտարքոսի վերոհիշյալ վկայության սխալ լինելն այնքան ակներև է, որ նրա այդ տեղեկությունն անտես է արված գրականավոր պատմագետների երկերում, օրինակ՝ Մոմզենի, Ռեյնաբի և ուրիշների ուսումնասիրություններում։ Այդ սխալը մեջ է բերված, սակայն, էքհարդի, Աստուրյանի և Դոլենս-Խաչի աշխատություններում[1]։

Ապպիոս Կլավդիոսի ընդունելության մասին Անտիոքում ավելի վստահելի են, անտարակույս, Մեմնոն Հերակլեացու հաղորդած տեղեկությունները, որովհետև սա, պատկանելով փոքրասիական հույն հեղինակների խմբին՝ Հռոմի հակառակորդների նկատմամբ չունի այն միտումնավորությունն ու աչառու վերաբերմունքը, որ հատուկ է հռոմեական պատմագրիներին։ Եվ ուշագրավ է, որ պատերազմի հայտարարության մասին Մեմնո-

1 *Տե՛ս* K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, X, 1, էջ 74 և 75, գ ո կ տ. Հ. Յ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ Հայաստանի և Հռոմի, էջ 49 և ն. Դոլենս և Ա. Խաչ, Պատմություն հին հայերի, պրակ Գ, Թիֆլիս, 1910, էջ 43։

նը, ըստ երևույթին, ոչինչ չգիտեր։ Բայց նա հանգամանորեն մեջ է բերում Տիգրանի պատասխանն Ապպիոսին, որը միանգամայն հիմնավոր էր ու արդարացի, և հավանորեն, հենց այդ պատճառով չէ հիշատակված Պլուտարքոսի ու հռոմեական պատմագիրների երկերում։

«Լուկուլլոսը,—վկայում է Մեմնոնը[2],—ուղարկել էր Տիգրանի մոտ իբրև դեսպան Ապպիոս Կլավդիոսին և պահանջում էր իրեն հանձնել Միհրդատին։ Սակայն Տիգրանը չտվեց, ասելով որ բոլոր մարդիկ իրեն կպատիարակեն, եթե նա Լուկուլլոսի ձեռքը հանձնեն իր կնոջ հորը։ Այլ թե ինչպիսի վատ մարդ է Միհրդատը՝ այդ ինքն էլ գիտեր. սակայն խաղաղ ու խայտառակ կլինի իր ազգականության առջև։ Նա նաև նամակ է գրում Լուկուլլոսին, որ բովանդակում էր իր մեջ նրա ասած այդ խոսքերը»։

Ուշադիր քննության ենթարկելով Պլուտարքոսի նաև մյուս վկայությունները՝ դժվար չէ նույնպես կռահել, որ անհավանական է նմանապես նրա այն տեղեկությունը, որ իբր թե Տիգրանի ուղարկած առաջնորդները դիտավորյալ կերպով մանեն ածել Ապպիոսին երկար ու զարտուղի ճանապարհներով։ Իսկ իրապես, Ապպիոսը հենց ինքն էր շահագրգռված այս բանում և ինքն էր, հավանորեն, ճարպիկ կերպով կազմակերպել իր շրջագայությունը լրտեսության հատուկ նպատակով։

Պլուտարքոսի վկայություններից կարելի է վստահորեն հետևցնել, որ Ապպիոսը գաղտնի հրահանգ էր ունեցել գրգռելու ու ապստամբեցնելու Տիգրանի դեմ Ասորիքի հունական քաղաքները և Տիգրանին հպատակված օտար ժողովուրդներին։ Պլուտարքոսն աշխատել է, ըստ երևույթին, քողարկել դեսպանի լրտեսական շրջագայությունը Հայաստանում միանգամայն անհաջող ու անմիտ կերպով բացատրում է, որ Ապպիոսին դիտավորյալ կերպով սխալ ճանապարհով էին առաջնորդել Տիգրանի ուղարկած ուղեկիցները։

Ապպիոսը, ինչպես մատնանշում է վերոհիշյալ իր վկայության մեջ Պլուտարքոսը, հաջողությամբ էր կատարել Լուկուլլոսի հանձնարարությունները։ Նա հռոմայեցիների կողմն էր գրավել, հավանորեն իր շրջագայության ժամանակ, դժգոհ իշխաններից ոմանց, որոնց թվումն էր Կորդվաց Զարբիենոս թագավորը։ Իսկ Ասորիքի մի քանի քաղաքներին, որոնք խոստացել էին ապըստամբել Տիգրանի դեմ՝ նա խորհուրդ էր տվել սպասել մինչև Լուկուլլոսի գալը։

Ապպիոսի Հայաստան եղած ժամանակ շարունակվում էր դեռ պոնտական մեծ քաղաքների՝ Ամիսոսի և Սինոպի պաշարումը, որոնք կատաղի կերպով դիմադրում էին և չէին համաձայնում անձնատուր լինել հռոմայեցիներին։ Հելլենական քաղաքների այս հավատարմությունը և նվիրվածությունը Միհրդատին խիստ ուշագրավ ու պերճախոս մի փաստ է, որը ցույց է տալիս, որ Միհրդատը եղել է, իրապես, պաշտպան ու հովանավոր հելլենիզմի և հելլենական քաղաքների։ Նրա հելլենիստական ու առաջադիմական քաղաքականությունը և նրա հելլենական քաղաքային կուլտուրայի տարածման ջանքերը, որ վերև մանրամասն մատնանշել էինք, չէին կարող, իհարկե, հաճելի լինել Պոնտոսի կալվածատեր պահպանողական ազնվականությանը։ Եվ, ըստ երևույթին, հենց այդ է պատճառը, որ Միհրդատին հաճախ դավաճանում էր, գլխավորապես, ազնվականությունը, որը առանց որևէ լուրջ դիմադրության հանձնել էր հռոմայեցիներին երկրի ամրությունները և հաղորդությունները։

70 թվի գարնանը հռոմայեցիները երկար պաշարումից հետո կարողացան գրավել Հերակլեան և Սինոպը, իսկ 70 թվի աշնանը՝ նաև Ամիսոսը։ Այս քաղաքների անկումից հետո Հռոմը տեր էր դառնում ամբողջ Պոնտոսի, և պատերազմը Միհրդատի դեմ կարելի էր համարել վերջացած։

Նվաճված երկիրը, մանավանդ, նրա հելլենական հարուստ ու շքեղ քաղաքները մատնվեցին անխնա կողոպուտի։ Հռոմեական զորքերը հրդեհեցին ու իսպառ ավերեցին փարթամ ու հոյակապ Հերակլեա քաղաքը և հռչակավոր ու գեղեցիկ Ամիսոսը, որը համարվում էր Պոնտոսի Աթենքը։ Եվ բնորոշ ու հատկանշական է, որ պատմագիտական մեծահռչակ մի քանի երկերի մեջ զորավար Լուկուլլոսը, հռոմայեցի ամենախոշոր ավարառուն ու կողոպտիչը, որը քանդել ու հիմնովին կործանել էր հելլենիստական մեծ ու ճոխ կուլտուրան Պոնտոսում՝ համարվում ու անվանվում է պաշտպան հելլենական քաղաքակրթության և «հելլենիզմի ջերմ երկրպագու»[3]։

[2] Տե՛ս գլ. XLVI։

[3] Տե՛ս, օրինակ, Ферреро, Величие и падение Рима, I, перевод А. Захарова, Москва, 1915, էջ 161 և 184։ Նման երկերի ազդեցությանը պետք է վերագրել Միհրդատի ու Լուկուլլոսի սխալ բնութագրերը Կովալևի դասագրքում։ Միհրդատին Կովալևը համարում է «հունական կրթություն ստացած խորամանկ ու

Քաղաքները նվաճելուց հետո Լուկուլլոսը նույն այս 70 թվին վերադարձել էր Պոնտոսից պրովինցիա Ասիա։ Եվ շատ ուշագրավ է ու հետաքրքիր, որ նա Հայաստան արշավելուց առաջ անհրաժեշտ էր համարել թեթևացնել հռոմեական Ասիայի տնտեսական հուսահատական դրությունը։

Այս նահանգն առաջին Միհրդատյան պատերազմից հետո (88—84 թվ.), ինչպես վերև տեսանք, վճարելու էր ի պատիժ իր անհավատարմության, բացի հինգ տարվա հարկերից, նաև քսան հազար տաղանդ ռազմատուգանք։ Նա այժմ կատարելապես անանկացել ու արյունաքամ էր եղել, վճարելով հսկայական իր պարտքի վաշխառուական տոկոսները։ Հռոմեական ֆինանսիստները, որոնք դրամական փոխատվություն էին տվել աղքատացած այս երկրին՝ իրենց ստանալիք տոկոսների դիմաց բռնագրավում էին այստեղ տները, վարելահողերը, այգիները, հասարակային շենքերը, հափշտակում ու Իտալիա էին տանում արվեստի իրերը, արձանները, պատկերները, տնակահույքը, ոսկեղենն ու արծաթեղենը և վերցնում էին, բացի այդ, նաև պարտապանների երեխաներին կամ հենց իրենց՝ պարտապաններին ու որպես ըստրուկ ուղարկում նույնպես Իտալիա։ Ջնայած սակայն ամբողջ այս նահանգի կատարյալ սնանկացման՝ նրա սկզբնական քսան հազար տաղանդ պարտքը 84 թվից հետո ո՛չ միայն չէր պակասել, այլ դառել էր 70 թվին քառասուն հազար տաղանդ։ Ընդունելով ըստ Հուլշի, որ մեկ տաղանդը հավասար է եղել այդ ժամանակաշրջանում մոտավորապես 4200 գերմանական ոսկի մարկի՝ ամբողջ այդ պարտքը կլինի 168 միլիոն մարկ կամ 84 միլիոն ոսկի ռուբլի[4]։

Վճարել այս հսկայական գումարը և նրա վրա բարդվող տոկոսները հռոմեական Ասիայի ուժերից վեր էր և այլևս հնարավոր չէր։ Հարստահարվող բնակչությունը չափից դուրս գրգռված էր հռոմայեցիների և, բնականաբար, նաև հռոմեական իշխանության դեմ։ Լուկուլլոսն անհրաժեշտ համարեց հանդարտացնել բնակչության այդ դժգոհությունը և աշխատեց թեթևացնել նրա տնտեսական դրությունը, որ դառել էր արդեն անտանելի։ Նա սահմանեց տուրք տների ու ստրուկների վրա, նաև 25 % եկամտահարկ[5]։ Մասնավոր պարտքերի համար նա արգելեց վերցնել 12 %-ից ավելի, արգելեց նմանապես ավելացրել չվճարված տոկոսների վրա նոր տոկոսներ և կարգադրեց, բացի այդ, որ պահանջվող տոկոսների գումարը չպետք է ավելի լինի քան սկզբնական պարտքի գումարը[6]։ Եթե պարտապանները չէին վճարում իրենց պարտքերը՝ պարտատերերն իրավունք ունեին վերցնելու նրանց եկամուտի միայն մեկ քառորդ մասը[7]։

Եվրոպական գիտնականներից շատերը, օրինակ, Ֆեռեռոն և Շապոն, Լուկուլլոսի ֆինանսական այս միջոցառումները են թվագրում են Միհրդատյան երրորդ պատերազմի առաջին տարվա ընթացքում, այսինքն՝ 73 թվին[8]։ Այս եզրակացությունը միանգամայն անհիմն է։ Թե Պլուտարքոսը և թե Ապպիանոսը, որոնք գլխավոր ու միակ աղբյուրներն են վերոհիշյալ վկայությունների՝ պարզ կերպով մատնանշում են, որ Լուկուլլոսի վերադարձը հռոմեական Ասիա և վերևում նշված նրա բարեփոխությունները տեղի էին ունեցել Ամիսոս քաղաքի գրավումից և Ապպիոս Կլավդիոսին Հայաստան ուղարկելուց հետո[9]։

Որ իր բարենորոգումները և հռոմեական Փոքր Ասիայի խաղաղացումը Լուկուլլոսը կարևոր ու անհրաժեշտ էր համարել Հայաստան արշավելուց առաջ՝ այդ ուշագրավ մի փաստ է, որն ուշադրության չէ առնվել պատմագիտական երկերում։ Շատ պարզ է, որ նա, որոշած լինելով պատերազմել Տիգրանի դեմ՝ պետք է ապահովեր իր թիկունքն արևմուտքում, որոշ դիջումներ անելով հռոմեական Փոքր Ասիայի հուսահատված ու հուզված բնակչությանը։

Պատմագիտական երկերում բնավ չէ լուսաբանված նաև Լուկուլլոսի Հայաստան արշավելու նենգ ու խորամանկ ծրագիրը, որն առանց դժվարության քողազերծվում ու մերկացվում է բուկրղնաղբյուրների ուշադիր քննությամբ։

Տիգրանի դեմ իր արշավանքը Լուկուլլոսը կազմակերպում էր բոլորովին թաքուն կերպով։ Նա աշխատել էր ըստ իս քննեցնել Տիգրանի աշխարհագրությունը և ծրագրել էր հանկարծ ու անսպասելի

ճարպիկ բարբարոս», իսկ Լուկուլլոսը, նրա ասելով՝ «համոզված արիստոկրատ էր, խիստ հարուստ, հայտնի իր բնտիր հյուրասիրություններով («Լուկուլլյան խրնջույքներ»), և անձնապես աղնիվ մարդ էր...», տե՛ս С. И. Ковалев, История античного общества. Эллинизм и Рим, 1936, էջ 192 և 207։

[4] Տե՛ս Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin, 1882, էջ 298 և 711։

[5] Ապպիանոս, Միհրդատականք, 83։

[6] Պլուտարքոս, Լուկուլ., 20, 3։

[7] Նույն տեղը, էջ 20, 3։

[8] Տե՛ս Ферреро, Величие и падение Рима, т. I, էջ 340 և V. Chapot, La province romaine proconsulaire d'Asie, Paris, 1904, էջ 40—41։

[9] Տե՛ս Պլուտ., Լուկ., 19, 2 և Ապպիանոս, Միհրդ., 83։

հարձակվել ու չախչախել նրան, նախքան նա հավաքած ու նախապատրաստած կլիներ իր ցրված զորամասերը։

Միանգամայն բնական է ու հասկանալի, որ Լուկուլլոսի այդ հարձակումն առանց պատերազմի հայտարարության, որով ոտնահարվում էին միջազգային օրինականության կարգերը, չեն ուզում բացահայտ կերպով խոստովանել հռոմեական աղբյուրները և, մասնավորապես, Պլուտարքոսը, որը գրել էր Լուկուլլոսի ո՛չ թե անաչառ պատմությունը, այլ ներբողյանը։ Սակայն պարզ ակնարկներ կան այդ մասին Ապպիանոսի մոտ, որն իր պատմության այս մասում օգտվել էր, հավանորեն, ո՛չ թե հռոմեական, այլ փոքրասիական չեզոք հույն աղբյուրից։

Ապպիանոսի համապատասխան վկայությունից, որ ամբողջությամբ մեջ ենք բերում, երևում է, որ Լուկուլլոսը՝ վերադառնալով 70 թվին[10] հռոմեական Փոքր Ասիա՝ նախ աշխատել էր տպավորություն գործել, որ իբր թե պատերազմը վերջացել է և ապա շարժվել էր հանկարծ ու արագ երթերով դեպի Հայաստան։

> «Արդ՝ հենց այսպես,—պատմում է Ապպիանոսը,—Լուկուլլոսն ավերեց Սինոպը և Ամիսոսը։ Նա բարեկամություն հաստատեց Միհրդատի որդի Մաքարեսի հետ, որը Բոսփորի թագավորն էր և ուղարկել էր իրեն ոսկե պսակ։ Ապա նա Տիգրանից պահանջեց Միհրդատին։ Իսկ ինքը, վերադառնալով Ասիա, որը դեռ վճարում էր Սուլլայի սահմանած տուգանքները, որոշեց, որ վճարեն եկամուտի մեկ քառորդ մասը, և հարկ դրեց նաև տների ու ստրուկների վրա։ Այնուհետև նա իր հաղթության առթիվ զոհաբերության հանդիսատներ կատարեց, որպես թե պատերազմը հաջող կերպով ավարտված է։ Եվ զոհաբերություններից հետո նա ռազմի ելավ Տիգրանի դեմ, որը չէր տվել իր ձեռքը Միհրդատին»[11]։

Որ Լուկուլլոսն արշավել էր Հայաստան ծածկաբար ու հանկարծ՝ այդ ինչպես կտեսնենք, ակնարկում են նաև Սալլուստիուսը և Մեմնոնը։ Եվ ինձ թվում է, որ իր գաղտուկ ու գողաբար հենց հարձակման պատճառով Լուկուլլոսը, որի անունն աղճատված ձևով՝ պահվել է հայ ժողովրդական ավանդության մեջ[12] խիստ վատ հիշատակ է թողել Հայաստանում և հիշվում է Վայկուն անունով իբրև «ելուզակ», այսինքն, իբրև ավազակ, որը վրդովել էր հայ երկրի խաղաղությունը և հարկադրել էր Տիգրանին վերադառնալ Պաղոմայիդ քաղաքից Հայաստան։

Լուկուլլոս-Վայկունի մասին այդ հին ավանդությունը հիշատակված է Խորենացու պատմության հետևյալ հատվածում։

Խորենացի, II, գլ. ԺԴ, Տփղիս, 1913, էջ 128—129՝

> «Եւ նոյն հետայն դիմէ [Տիգրան] յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պաղոմայիդ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ Նորա առ հայր իւր յանցանաց։ Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ զՊաղոմայիդ քաղաքաւ։ Իսկ դշխոյն Հրէից Աղեքսանդրիայ, որ և Մեսալինայ, որ էր լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազումս տալով՝ դարձոյց զնա անտի։ Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յելուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յելուզակին կոչին Վայկունիք»։

Որ Լուկուլլոսն արշավել էր Հայաստան հանկարծակի ու առանց պատերազմ հայտարարելու՝ այդ կարելի է համարել, ինչպես կտեսնենք նաև ներքև, միանգամայն անվիճելի։

---

[10] Լուկուլլոսի վերադարձը Փոքր Ասիա պետք է ենթադրել ո՛չ թե Սինոպ ու Ամիսոս քաղաքների առումից առաջ 71 թվին, ինչպես Պլուտարքոսի հաղորդագրության համաձայն կարծում են Ռեյնաքը, Մոմզենը և ուրիշները (տե՛ս Mithridate Eupator, էջ 152 և „Римская история“, III, էջ 52), այլ այդ քաղաքների առումից հետո 70 թվին, ինչպես վկայում է Ապպիանոսը։

[11] Ա պ պ., Միհրդատականք, 83 և 84։

[12] Գրիգոր Խալաթյանցի ենթադրությունը, որ իբր թե Խորենացին կամայական կերպով Լուկուլլոսին դարձրել է «Վայկուն ելուզակ»՝ հավանական չէ։ Խորենացու այդ վկայությունը հիմնված է ըստ իս ժողովրդական ավանդության վրա. տե՛ս Г. Халатьянц, Армянские Аршакиды, Москва, 1903, էջ 64, 375։

10. ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ

Լուկուլլոսի ծրագրած հանկարծակի ու անսպասելի հարձակումը և պատերազմը Տիգրանի դեմ նախապատրաստվում էր, ինչպես ասացինք, թաքուն կերպով ու դավադրաբար։

Տիգրանը չէր սպասում և ամենևին չէր նախազգում իր երկրին սպառնացող մեծ վտանգը։ Նա գիտեր, ըստ երևույթին, որ Հռոմեական ծերակույտը չէր լիազորել Լուկուլլոսին նոր պատերազմ սկսելու Հայաստանում։ Նրան նաև հայտնի էր, հավանորեն, որ Հռոմեական ծերակույտը՝ վտանգավոր համարելով պատերազմը հզոր Հայաստանի դեմ՝ չէր համաձայնել միջամտել Ասորիքի գործերին և գահ բարձրացնել Սելևկյան օրինավոր ժառանգներին։ Ծերակույտի խաղաղասեր այդ հակումները, ինչպես և պատերազմի վերջացման առթիվ Լուկուլլոսի Եփեսոսում կազմակերպած հանդեսները՝ պիտի վստահություն ներշնչած լինեին Տիգրանին, որ պատերազմի վտանգը Հռոմայեցիների հետ կարելի է համարել կանխված։ Ուստի և նա ո՛չ միայն չէր նախապատրաստվում պատերազմի, այլ, ընդհակառակը, անհոգ ու հանգիստ ղբաղված էր Տիգրանակերտ քաղաքի շինարարության ավարտման աշխատանքներով։

Նրա միամիտ այս լավատեսությունը քաղաքական մեծ սխալ էր, որը, ինչպես կտեսնենք, օրհասական հետևանքներ ունեցավ Նրա մեծ պետության համար։ Այս սխալը դժվար կարելի է արդարացնել, որովհետև Միհրդատը, ինչպես աղբյուրների վկայություններից հայտնի է, նրան նախազգուշացրել էր, որ Հռոմեական վայրագ ու անկշտում իմպերիալիզմն անխուսափելի կերպով արշավելու է Հայաստան։ Եվ հիրավի, Հռոմը վաղ թե ուշ հաշիվ էր պահանջելու Տիգրանից Ասորիքի նվաճման ու Կապադովկիայի ավերածությունների համար, որոնք Նրա դաշնակիցներն էին։ Նա չէր կարող, իհարկե, թույլ տալ, որ փոքրասիական իր գաղութների թիկունքում՝ Կոմագենում, Արևելյան Կիլիկիայում և Միջերկրական ծովի ափերին՝ վերջնականապես կազմակերպվի ու ամրանա աշխարհակալ ու հզոր Հայաստանը, որը մշտական մի սպառնալիք էր լինելու Նրա տիրապետության համար Արևելքում։

Դժվար չէր, ուրեմն, կռահել, որ Հռոմեական զորեղ ու ռազմատենչ հանրապետության ամրացումն ու հարևանությունը Հայաստանի արևմտյան սահմաններում ավելի վտանգավոր էր լինելու հայկական նորակազմ աշխարհակալության համար, քան նրա արևելյան սահմաններում գտնվող համեմատաբար թույլ ու անկայուն Պարթևական թագավորության հարևանությունը։ Ուստի և Տիգրանը, ինչպես իրավացի կերպով ակնարկում են Հռոմեական աղբյուրները՝ չպետք է հանդուրժեր իր թիկունքն ապահովող Պոնտոսի խորտակումը և իր աներոջը՝ Միհրդատին օգնության պետք է ուղարկած լիներ Կաբիրայի կովից առաջ։

69 թվի գարնանը Լուկուլլոսը, առանց պատերազմ հայտարարելու Տիգրանին և հակառակ Հռոմեական ծերակույտի ցանկության՝ իր անձնական նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ, սկսեց հայկական արշավանքը։ Ինչպես հաղորդում է Սալլուստիուսը[1], ամենաարագ երթերով նա անցավ Կապադովկիայի միջով և շտապեց դեպի Եփրատ գետը, որը բաժանում էր Հայաստանին կցված հին Ծոփքը Արիոբարզանի թագավորությունից։ Այստեղ Մելիտենեի մոտ[2] Կապադովկիայի թագավորը ծածկաբար պատրաստել էր ավել ձմեռվա ընթացքում լաստանավեր[3], որոնցով Լուկուլլոսը հեշտությամբ անցավ Եփրատ գետը և դուրս եկավ Ծոփք։ Որ Լուկուլլոսը Եփրատ գետն անցել էր թաքուն ու անակնկալ կերպով՝ այդ բացի Սալլուստիուսից վկայում է նաև Մեմնոնը[4]։

Հռոմեական զորքը Մելիտենեից մինչև Եփրատ եկել էր, անշուշտ, կարավանների հին ճանապարհով, որը մանրամասն նկարագրված է Պաւսինգերյան քարտեզում։ Այդ ճանապարհը որոշվում է ճշտիվ այժմյան Իղոլուի (գրվում է նաև Իղոլի) և նշանավոր հին Տոմիսայի մոտով, որը գտնվում էր Եփրատի ձախ ափին։ Համաձայն Ստրաբոնի վկայության՝ Լուկուլլոսը նվիրել էր Տոմիսա ամրոցը Կապադովկիայի Արիոբարզան Ա թագավորին այն օգնության համար, որ ստացել էր նրանից պատերազմի ժամանակ[5]։

---

1 *Տե՛ս* fr. IV, 11 (Leipzig, 1856):

2 *Համեմատ* Tacitus, Annales, XV, 26–27։

3 *Մոմզենի ենթադրությունը, որ Տիգրանը նվաճած է եղել նաև Մելիտենեն, ինչպես վերև ասացինք, ճիշտ չէ։*

4 *Տե՛ս Մեմնոն, գլ. 56։ «Լուկուլլոսը,—ասում է այս վկայության մեջ Մեմնոնը,—դուրս գալով Կապադովկիա և ունենալով իբրև բարեկամ նրա Արիոբարզան իշխանապետին՝ անակնկալ կերպով անցավ ոտքով Եփրատը...»։*

5 *Տե՛ս Ստրաբոն, XII, 2, 1։*

Մեջ բերված այս փաստական տեղեկությունները, որոնք պատմական են և միանգամայն արժանահավատ՝ լռության են մատնված Պլուտարքոսի կողմից, որը, հավանորեն, աշխատել է սքողել այս արշավանքի գաղտագողի ու ելուզակային բնույթը, որ պատվաբեր չէր Լուկուլլոսի համար։ Այս տեղեկությունների փոխարեն, որոնք հայտնի են եղել իրեն, գլխավորապես, Սալլուստիուսի պատմական երկից՝ Պլուտարքոսը տալիս է հրաշքներով լի հեքիաթական մի պատմություն, որի սկզբնաղբյուրը կարող է եղած լինել, ինչպես ենթագրում է Ռեյնաքը[6], Արքիաս Անտիոքացու բանաստեղծական շինծու վիպերգը։

Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունները, որ սովորաբար մեջ են բերվում պատմագիտական երկերում, ավելորդ չեմ համարում տալ թարգմանաբար առանց կրճատումների։

«Լուկուլլոսը,—ասում է Պլուտարքոսը[7],—մեծ արագությամբ անցնելով Ճանապարհը մինչև Եփրատ գետը՝ գտավ այդ գետը խիստ հորդացած ու պղտորված անձրևների պատճառով։ Նա անհանգիստ էր, որովհետև հարկադրված էր ժամանակ վատնել ու աշխատանք գործ դնել և պետք է լաստանավեր շինել տար ու պատրաստել նավակամուրջ։ Սակայն երեկոյան դեմ ջուրը սկսեց իջնել և այնքան պակասեց գիշերվա ընթացքում, որ լուսաբացին Լուկուլլոսը գետի հունը տեսավ ցամաքած։ Երբ տեղական բնակիչները տեսան գետանցքում երևացող փոքրիկ կղզյակներ և նրանց մոտ ջուրը ծանծաղած՝ նրանք ծնկաչոք երկրպագեցին Լուկուլլոսին, որովհետև այդ առաջ քիչ էր պատահել, իսկ այժմ սանձահարված ու ընտելացած գետը հոժարակամ անձնատուր էր լինում նրան և նրա տրամադրության տակ էր դնում իր դյուրին ու անարգել անցքը։ Արդ՝ օգտվելով այս հաջող դեպքից՝ Լուկուլլոսը տեղափոխեց իր զորքը։ Գետն անցնելու ժամանակ նրան երևաց կարևոր մի նախանշան։ Այստեղ արածում էին սրբազան երինջները պարսկական Արտեմիսի, որին բարբարոսները, որ ապրում էին Եփրատի մյուս ափին՝ ավելի էին պաշտում, քան մյուս աստվածներին։ Նրանք այս երինջներից օգտվում էին միմիայն դոհաբերությունների համար, իսկ ընդհանրապես այդ տեղերում երինջներն ազատ շրջում էին, և ամեն մեկը կրում էր իր վրա խարանադրոշմ մի ջահ, որն աստվածուհու նշանն

[6] Mithridate Eupator, էջ 442։

[7] Տե՛ս Լուկուլ., 24, 2—8։



Տիգրան Երկրորդ

էր։ Եթե նրանցից մեկը հարկավոր լիներ՝ նրան այնքան էլ հեշտ չէր վերցնել և բավական մեծ աշխատանք էր պետք դրա համար։ Երբ զորքն անցնում էր Եփրատ գետը՝ դրանցից մեկը բարձրացավ սրբազան մի ժայռի վրա, որը նվիրված էր աստվածուհուն, կանգնեց նրա զազաթին և, խոնարհեցնելով գլուխը, ինչպես այդ անում են թոկով տարվող երինջները՝ տրամադրեց ինքն իրեն Լուկուլլոսին զոհաբերման համար։ Բարեհաջող գետանցի համար Լուկուլլոսը զոհաբերեց նաև Եփրատին մի ցուլ»։

Պլուտարքոսի հաղորդած այս տեղեկությունները չունեն հարկավ պատմական որևէ արժեք։ Եվ, իհարկե, իզուր են նրանք մանրամասն մեջ բերված պատմական նորագույն մի քանի երկերում առանց վերոհիշյալ փաստական ու արժանահավատ վկայությունների հիշատակության[8]։

Եփրատ գետն անցնելուց հետո հռոմեական զորքն առաջ շարժվեց Լուկուլլոսի առաջնորդությամբ և դարձյալ արագացրած երթով գնաց Ծոփքի միջով դեպի Տիգրիս գետը, նպատակ ունենալով հանկարծակիի բերելու Տիգրանին և անակնկալ կերպով հարձակվելու Տիգրանակերտ քաղաքի վրա։ Ծոփքի բնակչությունը ո՛չ միայն ցույց չէր տվել որևէ դիմադրություն, այլ, ըստ երևույթին, ինքը հոժարակամ հնազանդվել էր Լուկուլլոսին և, հայթայթելով հռոմեական բանակին անհրաժեշտ պարեն՝ մեծապես հեշտացրել էր նրա առաջխաղացումը դեպի Տիգրանակերտ։

Հռոմեական զորքի առաջշարժումը Ծոփաց աշխարհի միջով նկարագրված է Ապպիանոսի ու Պլուտարքոսի ներքև մեջ բերված վկայություններում, որոնք իրար հետ համեմատելիս են և իրար լրացնում են։

1. Ապպիանոս, Միհրդատականք, 84՝

«Եփրատ գետն անցնելուց հետո՝ Լուկուլլոսն առաջ շարժվեց բարբարոսների միջով, պահանջելով նրանցից միայն այն՝ ինչ որ հարկավոր էր։ Իսկ ժողովուրդն այս չէր կռվում և չէր ուզում որևէ վնաս կրել, մինչև որ Լուկուլլոսը և Տիգրանը կվերջացնեին իրար դեմ պատերազմը»։

2. Պլուտարքոս, Լուկուլլոս, 24, 8՝

«Եվ այդ օրը նա [Լուկուլլոսը] գիշերեց այստեղ [Եփ-

---

[8] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1917, էջ 406 և այլն, նաև Դոլենա և Խաչ, Պատմության հին հայերի, պրակ Գ, Թիֆլիզ, 1910, էջ 50—51 և ուրիշ։

բատի ձախ ափին], իսկ հետևյալ և հաջորդ օրերը նա առաջ շարժվեց Ծոփքի միջով առանց որևէ վնաս հասցնելու բնակիչներին, որոնք հարում էին նրան և հոժարությամբ ընդունում նրա զորքը։ Եվ երբ զինվորներն ուղեցին վերցնել մի բերդ, որի մեջ կարծում էին թե կան մեծ գանձեր՝ նա, ցույց տալով նրանց Տավրոսը հեռվում, ասաց՝ «Մենք պետք է ավելի շուտ խորտակենք այն բերդը, իսկ սրանք այստեղ կմնան հաղթողների համար»։ Եվ նա, արագացնելով իր երթը և անցնելով Տիգրիս գետը՝ ներխուժեց Հայաստան»։

Ուրագրավ է, որ մի ուրիշ վկայության մեջ ևս Պլուտարքոսն առանձնապես մատնանշում է, որ բացի արաբներից և կորդվացիներից Լուկուլլոսի կողմն էր անցել նաև Ծոփաց աշխարհի բնակչությունը[9]։ Այս վկայություններից անհավանական չի լինի եզրակացնել, որ հռոմեական դեսպան Ապպիոս Կլավդիոսի Հայաստան եղած ժամանակ ո՛չ միայն Կորդուքը, այլև Ծոփքը համաձայնած է եղել օգնելու Լուկուլլոսին։ Թե որքան մեծ կարևորություն ուներ սրա արշավանքի հաջողության համար հռոմեական ռազմերթի ճանապարհի վրա գտնվող այս երկու երկրների դավաճանական համագործակցությունը հռոմայեցիների հետ՝ այդ հասկանալի է ինքն ըստ ինքյան։

Արշավող զորքի ճանապարհի ուղղությունը Եփրատ գետից մինչև Տիգրիս գետը պատմագիտական երկերում որոշված է միանգամայն բավարար ճշտությամբ։ Լուկուլլոսի երթուղու այս մասը ենթադրում են այժմյան Խարբերդի դաշտի միջով ու Արղանայի վրայով դեպի Տիգրիս գետն Ամիդ-Դիարբեքիրի մոտ. ուրեմն՝ այն հին ճանապարհագծով, որն Աքեմենյան Պարսկաստանի «արքայական ճանապարհի» մի մասն էր[10] և համապատասխանում է Պևտինգերյան քարտեզում նկարագրված Melitene—ad Tygrem *ուղեգծին։*


Տիգրիս գետն անցնելուց հետո[11] հռոմեական զորքը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[12], ներս էր խուժել Հայաստան։ Այս կարևոր վկայությունը, որ բավականաչափ ուշադրության չի առնվել, լուսաբանում է հին Հայաստանի պատմական աշխարհա-

[9] *Պլուտ., Լուկուլ., 29, 8։*

[10] *Տե՛ս* „О торговле и городах Армении", *էջ* 14—15։

[11] *Էքհարդի կարծիքով, հռոմեական զորքը Տիգրիս գետն անցել էր, հավանորեն, այժմյան Ամիդ-Դիարբեքիրից մոտ քսան կիլոմետր հեռավորության վրա այժմյան Շաբխանի մոտ, տե՛ս* Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, *էջ 87 88։*

[12] *Տե՛ս Լուկուլ., 24, 8։*



գրության ամենամութ խնդիրներից մեկը։ Պլուտարքոսը, ինչպես պարզ երևում է նրա վկայություններից՝ Տոփքը, որը Տիգրան Բ-ն միացրել էր Մեծ Հայաստանին, համարում է առանձին երկիր ու նրա և բուն Հայաստանի սահման է ընդունում արևմտյան Տիգրիս գետը[13]։ Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ Տիգրիս գետի ձախ կողմում գտնվող Աղձնիքը, որի մեջ էր Տիգրանակերտ քաղաքը, գտնվել է ո՛չ թե Տոփաց Զարիադրեսի պետության մեջ, ինչպես այդ կարծում են Հյուբշմանը և Մարկվարտը[14], այլ եղել է Արտաշեսյան Հայաստանի հարավային երկրներից մեկը։

Մեր այս հետևությունն անուղղակի կերպով հաստատում է նաև Ապպիանոսը։ Նրա ասելով՝ Տիգրանակերտ քաղաքը հիմնված է եղել այն տեղում, որտեղ «Տիգրանը առաջին անգամ իր գլխին դրել էր Հայաստանի թագը»[15]։

Այս վկայությունից ևս երևում է, որ Ապպիանոսը, ինչպես և Պլուտարքոսը՝ Աղձնիքը ու նրա մեջ գտնվող Տիգրանակերտը համարում են բաղադրամաս Արտաշեսյան Հայաստանի։ Ուշագրավ է առանձնապես, բացի այդ, և այն, որ նաև ըստ հայկական ավանդության, որը մեջ է բերված Մար Աբասի և Խորենացու պատմական երկերում, հայերի հնագույն գաղթավայրը ցույց է տրված հենց նույն այս կողմերում Հայկական Տավրոսի հարավում։

Ուրեմն՝ Մեծ Հայաստանի հարավային սահմանը Տիգրան Մեծի և նրա նախորդների ժամանակ կարող էր եղած լինել, իրապես, ինչպես վկայում է Պլուտարքոսը՝ Տիգրիս գետը։

Տիգրիս գետից մինչև Տիգրանակերտ (այժմյան Ֆարկինը), ուր շտապում էր հասնել Հռոմեական զորքը, ընդամենը միայն մոտ 150 կիլոմետր էր[16]։ Լուկուլլոսի նենգ ու խորամանկ ծրագիրը իրականանում էր, ինչպես տեսնում ենք, ամենամեծ հաջողությամբ։ Թշնամին կիպ մոտեցել էր Տիգրանակերտին, և ահավոր վտանգը կախված էր արդեն Հայաստանի գլխին, իսկ Տիգրանը

[13] Համեմատ. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, էջ 83։

[14] Տե՛ս Հյուբշման, Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 77 և Markwart, Franschahr, Berlin, 1901, էջ 178։ Համեմատ. սակայն, Մարկվարտի ճիշտ կռահումը նրա Südarmenien und die Tigrisquellen աշխատության մեջ՝ էջ 119։

[15] Ապպիանոս, Միհրդատ., 67։

[16] Հռոմեական զորքի ճանապարհը Տիգրիս գետից մինչև Ֆարկին-Տիգրանակերտ սխալ է լուսաբանված Մոմզենի, Խալաթյանցի և մի շարք այլ երկերում, որովհետև այդ աշխատություններում սխալ է որոշված Տիգրանակերտի տեղը։

դեռ ոչինչ այդ մասին չգիտեր և ո՛չ զորք էր հավաքել, ո՛չ էլ կարող էր որևէ կերպ սպառնացող այդ վտանգը կանխել։

Հռոմեական զորքի անակնկալ ներխուժման լուրը թվաց Տիգրանակերտում միանգամայն անհավատալի։ Ապպիանոսի վկայությամբ՝ Տիգրանն այդ լուրը տարածողին համարել էր գրգռիչ ու խռովարար։

«Տիգրանին,—վկայում է Ապպիանոսը[17],—ոչ ոք տեղեկություն չէր տվել Լուկուլլոսի ներխուժման մասին։ Առաջին մարդը, որն այդ ասել էր՝ կախաղան էր հանվել նրա հրամանով, որովհետև նա կարծել էր, որ այդ մարդը խուճապ է գցում քաղաքներում»։

Խիստ գունավորված ու չափազանցված ձևով լրաբերի մահապատժման մասին պատմում է Պլուտարքոսը, որի կասկածելի վկայություններն անտեղի կերպով մեջ են բերված, գլխավորապես, հայկական երկերում[18]։

«Որովհետև,—ասում է Պլուտարքոսը,—Լուկուլլոսի ժամանման մասին առաջին լուր տվողը ո՛չ միայն օգուտ չըստացավ, այլև գլխատվեց Տիգրանի հրամանով, ուստի և ոչ ոք այլևս նրան չէր հաղորդում այդ մասին, և երբ պատերազմի հուրն արդեն բորբոքվել էր՝ նա նստած էր անտեղյակ։ Այդ ժամանակ շողոքորթ խոսքեր էր նա լսում, որ մեծ հրամանատար կհամարվի Լուկուլլոսը, եթե կարողանա Տիգրան դիմակայել Եփեսոսում և եթե Ասիայից իսկույն չփախչի, տեսնելով նրա անհամար զորքերը»[19]։

Պլուտարքոսի այս վկայության մեջ հետաքրքիր է, գլխավորապես, այն, որ Տիգրանի արքունիքում, ըստ երևույթին, համոզված են եղել, որ Լուկուլլոսը դեռևս գտնվել է Եփեսոսում։ Ինձ թվում է, որ վերոհիշյալ մեր նոր հետևությունը, որ Լուկուլլոսը եկել էր Հայաստան ո՛չ թե Պոնտոսից, ինչպես մինչև այժմ ենթադրել են, այլ Եփեսոսից՝ անուղղակի կերպով ակնարկված է նաև Պլուտարքոսի սույն հատվածում։

Լրաբերի հաղորդած տեղեկության հաստատումն առաջ բերեց Տիգրանակերտում շփոթություն ու իրարանցում։ Տիգրանը, որը պատերազմի պատրաստություններ դեռ չէր տեսել՝ ստիպված եղավ մանակի կերպով քաղաքը պատարկել և հեռանալ ապահով

[17] Տե՛ս Միհրդատ., 84։

[18] Տե՛ս Լևո, Հայոց պատմություն, էջ 407 և Դոլհնս և Խաչ, Պատմություն հին հայերի, պրակ Գ, էջ 51—52։

[19] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 25, 1։

մի տեղ։ Որպեսզի կարողանա ժամանակ շահել՝ նա իր զորավարներից մեկին, Մհհրուժանին (=Mithrobouzenēs)[20] տվեց մի փոքր զորամաս և հրամայեց, որ նա, ինչ գնով էլ որ լինի, կանգնեցնե գոնե ժամանակավորապես Թշնամու շարժումը դեպի Տիգրանակերտ։

Մհհրուժանի զորամասի հռոմեական զորքի դեմ ուղարկման մասին միանգամայն վստահելի ու արժանահավատ տեղեկություն է հաղորդում դարձյալ Ապպիանոսը, որն, ինչպես վերև ասացինք, իր պատմության այս մասում օգտվել էր փոքրասիական չեզոք աղբյուրից։

«Երբ Տիգրանն այնուհետև,—վկայում է Ապպիանոսը[21],—հաստատ իմացավ [Լուկուլլոսի ներխուժման մասին], նա ուղարկեց Մհհրուժանին երկու հազար հեծելազորով, որպեսզի նա ուշացնե Լուկուլլոսի գրոհը։ Իսկ Մանկայոսին հանձնարարեց Տիգրանակերտի պաշտպանությունը»։

Պլուտարքոսը տալիս է նաև տեղեկություն Մհհրուժանի մահվան մասին հանդուգն ու անհավասար կռվում։ Սակայն թեև նրա այս վկայությունների հիմքը պատմական է, բայց որոշ մանրամասնությունները հնարովի ու անհեթեթ հերյուրանքներ են, որոնց միջոցով նա աշխատում է ըստ իր սովորության անվանարկել Տիգրանին։

«Նրա[Տիգրանի] բարեկամներից առաջինը Մհհրուժանն էր,—պատմում է Պլուտարքոսը[22],— որ համարձակություն ունեցավ նրան ճշմարտությունը հայտնելու։ Սակայն սրան ևս աղատ խոսքի շնորհն օգուտ չբերեց։ Սա իսկույն ուղարկվեց Լուկուլլոսի դեմ երեք հազար հեծելազորով և բազմաթիվ հետևակորով։ Եվ նրան հրաման տրվեց բռնել զորավարին ու բերել կենդանի, իսկ մյուսներին կոտորել։ Լուկուլլոսի զորքի մի մասն այդ ժամանակ տեղավորվում էր արդեն ճամբարում, իսկ մյուս մասը դեռ ճանապարհին էր։ Երբ հետախույզները նրան հայտնեցին բարբարոս զորքի մոտեցման մասին՝ նա վախեցավ, որ նրանք, հարձակվելով իր ցրված ու չկարգավորված զորքի վրա, կառաջացնեն շփոթմունք։ Ուստի և ինքը շարունակեց հարդարել ճամբարը, իսկ Սեքստիլիուս լեգատին, որն ուներ հազար վեց հարյուր հեծելազոր և մի փոքր ավելի ծանր զինված ու թեթև զինված հետևազոր՝ ուղարկեց Թշնամու դեմ և հրամայեց մոտ գնալ ու նրանց դիմադրել, մինչև որ լուր կստանա, որ իր հետ եղած զորքը տեղավորվել է արդեն ճամբարում։ Արդ՝ Սեքստիլիուսն ուզում էր հենց այդպես անել. սակայն նա ենթարկվեց հարձակման Մհհրուժանի կողմից, որն անվեհեր կերպով մտավ ձեռնակռվի։ Տեղի ունեցած ճակատամարտում Մհհրուժանը կռվելիս սպանվեց, իսկ մյուսները գրեթե բոլորը բացի քչերից մեռան փախուստի ժամանակ»։

Այս վկայության մեջ ակներև մի անհեթեթություն է Պլուտարքոսի հաղորդած սարքովի տեղեկությունը, որ իբր թե Մհհրուժանի փոքրաթիվ զորքին հրաման էր տրված կենդանի բռնել Լուկուլլոսին և ոչնչացնել հռոմեական ահագին զորաբանակը։ Նա ուղարկված էր, իրապես, ինչպես տեսանք, որպեսզի ուշացնի հռոմեական զորքի առաջխաղացումը դեպի Տիգրանակերտ։ Եվ բնորոշ է, որ անգամ Պլուտարքոսի այդ վկայությունը, որի անմիտ լինելը պարզ է ու անվիճելի, անվերապահ կերպով մեջ է բերված պատմագիտական երկերում[23]։

Պլուտարքոսի վերոհիշյալ վկայության մեջ սուտ է, անտարակույս, նաև այն, որ իբր թե Տիգրանը, ուղարկելով Մհհրուժանին Լուկուլլոսի դեմ՝ ուղեցել է նրան պատժել, որովհետև նա էր երկրորդ անգամ իրեն հայտնել հռոմեական զորքի հարձակման մասին։ Մհհրուժանը, ինչպես պարզել է Մարկվարտը՝ Ծոփքի թագավորական տան արքայազուններից էր[24], ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու նա էր ուղարկվել Լուկուլլոսի դեմ, որը գալիս էր Ծոփքի միջով։

«Այնուհետև Տիգրանը,—պատմում է Պլուտարքոսը,—թողնելով իր հիմնած Տիգրանակերտ մեծ քաղաքը՝ նահանջեց դեպի Տավրոս և սկսեց զանազան կողմերից հավաքել իր ուժերն այնտեղ։ Իսկ Լուկուլլոսը, ժամանակ չտալով նրան պատրաստվելու՝ ուղարկեց Մուրենային, որպեսզի նա զբաղվարացնե ու արգելե զորքերի համակենտրոնացումը Տիգրա-

---

[20] Որ Պլուտարքոսի ու Ապպիանոսի վկայություններում հիշատակված Mithrobarzanes անունը պետք է կարդալ Mithrobouzanēs՝ այդ համաձայն Ապպիանոսի ձեռագրերի ընթերցվածների քննության պարզաբանված է Մարկվարտի ուսումնասիրություններից մեկում (տե՛ս Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus, Bd. 55, էջ 68—69)։ Ինչպես բացատրված է նույն այդ ուսումնասիրության մեջ, Mithrobouzanēs անունը համապատասխանում է հայկական Մհհրուժանին։

[21] Տե՛ս Միհրդատ., 84։

[22] Տե՛ս Լուկուլ., 25, 3—6։

[23] Տե՛ս, օրինակ, Reinach, Mithridate Eupator, էջ 359, Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. 10, 1, էջ 90 և ուրիշ.։

[24] Տե՛ս Markwart, Eranschahr, էջ 176։

նի մոտ, և ուղարկեց նաև Սեքստիլիուսին, որպեսզի նա ևս մղե արաբական մեծ զորամասը, որը գնում էր թագավորի մոտ։ Արդ Սեքստիլիուսը անհապաղ հարձակվեց արաբների վրա, որոնք բանակ էին գնում, և նրանց մեծագույն մասը կոտորեց, իսկ Մուրենան հետապնդեց Տիգրանին նեղ ու անհարթ ձորում և, օգտվելով հարմար առիթից՝ գրոհեց նրա երկայնաձգված զորքի վրա։ Եվ Տիգրանը կարողացավ ինքը փախչել, թողնելով ամբողջ իր աղիքը. սակայն շատերը հայերից այդտեղ սպանվեցին, իսկ մեծագույն մասը գերի ընկան»[25]։

Ինչպես տեսնում ենք, Լուկուլլոսի վերոհիշյալ ծրագիրը, որով նա նախատեսել էր հանկարծակիի բերել Տիգրանին՝ իրագործված էր այժմ լիովին։ Հռոմեական զորքը գտնվում էր արդեն Տիգրանակերտ քաղաքի մոտ բուն Հայաստանում, իսկ Տիգրանն անկարող էր հակահարված տալ թշնամուն, որովհետև նա դեռ չէր տեսել պատերազմի որևէ պատրաստություն։

Հռոմեական աղբյուրների արհամարհական ակնարկները Տիգրանի նկատմամբ բացատրվում են, հավանորեն, նրանով, որ հռոմայեցիների զորավարը և հռոմեական ճարպիկ ու վարպետ դիպլոմատիան մեծ հաջողությամբ կարողացել էին նրան գլխահան անել ու խաբել։

[25] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 25, 7—8

11. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ԵՎ ՏԻԳՐԱՆԻ ՏԵՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՀՐԴԱՏԻ ՀԵՏ

Լուկուլլոսի հանկարծակի ու սրընթաց շարժումը դեպի Տիգրանակերտ առաջացրել էր այստեղ, ինչպես ասացինք, խուճապ ու շփոթ։ Տիգրանի փախուստը քաղաքից կատարվել էր այնքան արագ ու հապճեպ, որ նա չէր կարողացել հետը վերցնել իր կանանոցն ու գանձերը։

Նահանջելով Տավրոսյան լեռներով[1], հավանորեն, այժմյան Ներջիկի ու Շենիկի վրայով[2] դեպի իր թագավորության կենտրոնական ու հյուսիսային շրջանները՝ Տիգրանակերտի պաշտպանությունը Տիգրանը հանձնարարել էր Մանկայոս զորավարին։ Սա պետք է դիմադրեր ու պահեր քաղաքը, մինչև որ ինքը զանազան կողմերից կհավաքեր իր զորքերը և կգար նրան օգնության։

Լուկուլլոսի հանկարծակի հարձակումը և Տիգրանակերտ գալը տեղի էր ունեցել, իմ կարծիքով, ո՛չ թե 69 թվի ամառը, ինչպես ենթադրում է Ռեյնաքը[3], այլ 69 թվի գարնանը։ Ի նկատի ունենալով ընդհանուր տարածությունը, որ Եփրատ գետից մինչև Տիգրանակերտ-Ծարկինը մոտ 300 կիլոմետր է, պետք է ենթադրել, որ հռոմեական զորքը, Եփրատ գետն անցնելուց հետո (69 թվի գարնանը)՝ արագացրած երթով կարող էր հասած լինել Տիգրանակերտ առ առավելն երկու շաբաթվա ընթացքում, ո՛չ ուշ, քան մայիս ամսին։

Հավանական է, ուրեմն, որ հռոմայեցիները Տիգրանակերտը պաշարել էին արդեն 69 թվի գարնանը։ Քաղաքի պաշարման

[1] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 25, 7։

[2] Տիգրանակերտից Տարոն ու այնտեղից Արտաշատ տանող մեծ ճանապարհը, որը մանրամասն նկարագրված է հռոմեական հին աշխարհաքարտեզում, քննված է ու լուսաբանված իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ, էջ 85—114։

[3] Տե՛ս Mithridate Eupator, էջ 359։

նախապատրաստությունները Լուկուլլոսը հանձնարարել էր Սեքստիլիուսին, որը, ինչպես վկայում է Ապպիանոսը[4].

«Շրջափակելով Տիգրանակերտում Մանկայոսին՝ իսկույն գրավել էր թագավորական պալատը՝ որը գտնվում էր քաղաքի պարիսպներից դուրս, իսկ քաղաքը և միջնաբերդը պատել էր պատնեշով ու փոսով, պատրաստել էր մեքենաներ և պարսպի տակ փորել էր տվել ականներ»։

Բերդապահ զորքը բաղկացած էր, գլխավորապես, հույներից և կիլիկեցիներից։ Ըստ երևույթին, այս զորքը կազմված էր Տիգրանակերտի քաղաքացիական իրավունքներ ստացած նորաբնակներից, որոնց այստեղ էր գաղթեցրել Տիգրանը Կիլիկիայից ու Կապադովկիայից։

Հռոմայեցիների բոլոր ջանքերը գրավելու քաղաքը գրոհով և պատերազմական մեքենաների օգնությամբ մնացին ապարդյուն ու անհետևանք։

Մանկայոսի[5] առաջնորդությամբ բերդապահ զորքը համառ ու տոկուն կերպով դիմադրում էր հռոմայեցիներին, թափելով նրանց գլխին նետերի տարափ։ Իսկ պաշարման մեքենաների վրա պաշարվածները վերևից ածում էին այրվող նավթ, որը ոչնչացնում էր մեքենաները[6]։

Այսպիսով ամիսներ շարունակ Տիգրանակերտը մնաց կանգուն ու անպարտելի մինչև Տիգրանի վերադարձը նոր կազմված զորաբանակով։

Ուշագրավ է ու հետաքրքիր, որ Պլուտարքոսը ավելորդ է համարել մատնանշել հռոմեական զորքի սկզբնական այս անաջողությունը։ Նա ոչինչ չէ հաղորդում նաև հայկական հեծելազորի հաջող ու հաղթական այն գրոհի մասին, որ հանգամանորեն հիշատակված է եղել փոքրասիական չեզոք աղբյուրներում, որոնցից լայնորեն օգտվել էին Մեմնոնը և Ապպիանոսը։

Այդ արժանահավատ աղբյուրներից հայտնի է, որ Տիգրանակերտի պաշարման սկզբներում Տիգրանն այստեղ ուղարկել էր մի ընտիր հեծելագունդ, որին հանձնարարել էր պաշարված

[4] Միհրդատականք, 84։

[5] Մանկայոս անունը համապատասխանում է ըստ Ադոնցի հայկական Մամիկ անվան և, որովհետև այդ անունը հանդիպում է Մամիկոնյանների տոհմում և սրանց նախահոր անունն է, ուստի և Ադոնցը կարծում է, որ Մանկայոս-Մամիկը, հավանորեն, հայ զորավար էր Մամիկոնյանների տոհմից, տե՛ս Армения в эпоху Юстиниана, էջ 411 և 415։

[6] Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 1 b (հրատ. Boissevain-ի)։

քաղաքից ազատել իր կանանոցն ու մեծագին գանձերը։ Մեմնոնի ու Ապպիանոսի մոտ պահպանված այդ տեղեկությունը, որ անտես են արել հռոմեական աղբյուրները՝ թարգմանաբար մեջ եմ բերում առանց կրճատումների։

1. Մեմնոն, 56՝

«Երբ Հայաստանը շատ կողմերից այսպես պաշարված էր՝ Տիգրանը մարդ ուղարկեց և իր մոտ հրավիրեց Միհրդատին. նա նույնպես զորք ուղարկեց Տիգրանակերտ քաղաքը, որի մեջ գտնվում էր նրա կանանոցը։ Սրանք գալով այնտեղ և, կարելով նետաձգությամբ հռոմեական ճամբարից դուրս գալու ճանապարհը՝ դուրս բերին գիշերով նախապես Տիգրանի կանանոցն ու թանկագին ամենաարժեքավոր իրերը։ Իսկ լուսաբացին հռոմայեցիները և նրանց հետ նաև թրակացիներն արիաբար կռվեցին, շատերին հայերից սպանեցին և կենդանի բռնվածներից շատերին էլ գերի վերցրին։ Սակայն այն, ինչ որ նախապես ուղարկված էր՝ փրկվեց ու հանձնվեց Տիգրանին»։

2. Ապպիանոս, Միհրդատականք, 85՝

«Սեքստիլիուսը զբաղված էր հենց այս գործերով [Տիգրանակերտի պաշարմամբ], իսկ Տիգրանը, հավաքելով մոտ երկու հարյուր հիսուն հազար հետևազոր և մոտ հիսուն հազար հեծելազոր՝ ուղարկեց նախ նրանցից մոտ վեց հազար հոգի Տիգրանակերտ։ Սրանք բռնի կերպով հռոմայեցիների միջով անցան, գնացին դեպի միջնաբերդը, դուրս բերին այնտեղից թագավորի կանանց և վերադարձան։ Իսկ զորքի մյուս մասով Լուկուլլոսի վրա հարձակվեց ինքը Տիգրանը։ Եվ այդ ժամանակ նրա մոտ եկավ առաջին անգամ տեսնելու Միհրդատը և խորհուրդ տվեց, որ նա հռոմայեցիների հետ կռվի չբռնվի, այլ միայն հեծելազորով ասպատակի ու ավերի երկիրը և աշխատի, եթե կարելի է, նրանց սովածության մատնել. այնպես, ինչպես իրեն Լուկուլլոսն առանց կռվի ուժասպառ էր արել Կիզիկոսի մոտ և ոչնչացրել էր զորքը»։

Մեմնոնը և Ապպիանոսը, ինչպես տեսնում ենք, համերաշխ ու միաբան վկայում են, որ Տիգրանի ուղարկած զորամասը հաջողությամբ կատարել էր նրա հանձնարարությունը և, պատռելով Տիգրանակերտը պաշարող հռոմեական զորաշղթան՝ դուրս էր բերել այնտեղից թագավորի կանանոցը և գանձերը։ Հ. Աստուրյա-

նը կարծում է սխալմամբ, որ այս դեպքը տեղի էր ունեցել Ծոփքում, ուր հռոմայեցիները պաշարել էին Բնաբեղ բերդը[7]։

Հայկական հեծելազորի այդ մեծ հաջողությունը չէ հիշատակել Պլուտարքոսը, հավանորեն, այն պատճառով, որ նա, ինչպես մատնանշել է Ռեյնաքը[8], անպատվաբեր է համարել այդ դեպքը Լուկուլլոսի համար։

Վերոհիշյալ վկայություններից երկրորդի մեջ հայկական զորամասի գիշերային գրոհը Ապպիանոսը դնում է Տիգրանի հակահարձակման ժամանակ 69 թվի աշնանը։ Սակայն էքհարդը, հիմնվելով Մեմնոնի հաղորդած ավելի ստույգ տեղեկության վրա՝ ենթադրում է, որ այդ գրոհը տեղի էր ունեցել Տիգրանակերտից Տիգրանի հեռանալուց անմիջապես հետո, ուրեմն՝ 69 թվի գարնանը։ էքհարդը միանգամայն իրավացի կերպով մատնանշում է, որ Տիգրանակերտ ներս մտնելը համեմատաբար հեշտ կարող էր լինել և հնարավոր քաղաքի պաշարման սկզբում, երբ դեռևս չէին ավարտվել նրա շրջափակման աշխատանքները[9]։

Վերոհիշյալ վկայություններում առանձնապես ուշագրավ է նաև այն, որ թե Մեմնոնը և թե Ապպիանոսը, հենվելով պարզապես փոքրասիական չեզոք սկզբնաղբյուրների վրա՝ հաղորդում են, որ Միհրդատը հրավիրված է եղել Տիգրանի մոտ ո՛չ թե Լուկուլլոսի Հայաստան արշավելուց առաջ, ինչպես ենթադրել են, համաձայն Պլուտարքոսի սխալ տեղեկության, բոլոր օտար և հայ պատմագետները, այլ պատերազմը սկսվելուց հետո, երբ Տիգրանը, հեռանալով իր պետության ներքին նահանգները՝ սկսել էր նախապատրաստվել պատերազմի, այսինքն՝ 69 թվի գարնանը և կամ ամառը։

Ապպիանոսը, ինչպես վերև տեսանք (վկ. 2), պարզ ու որոշ վկայում է, որ Միհրդատն առաջին անգամ տեսության էր եկել Տիգրանի մոտ սրա Լուկուլլոսի վրա հարձակվելուց առաջ։ Նմանապես Մեմնոնի վերոհիշյալ հատվածում (վկ. 1) Միհրդատի հրավիրումը Տիգրանի մոտ ցույց է տրված դարձյալ Տիգրանակերտի պաշարումից անմիջապես հետո, թեև նրա մոտ այդ տեսակցության մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդված նաև նախորդ 55-րդ գլխում։

7 Տե՛ս Աստուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, Վենետիկ, 1912, էջ 53։

8 Տե՛ս Mithridate Eupator, էջ 360, ծան. 1։

9 Տե՛ս K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, 1, էջ 92։

Ջնայած, սակայն, Մեմնոնի ու Ապպիանոսի միանգամայն արժանահավատ այս վկայություններին՝ բոլոր պատմագետները, ինչպես ասացինք, գերադասություն են տվել Պլուտարքոսի տեղեկություններին։ Նրանք ուշադրության չեն առել, որ Պլուտարքոսը և կամ նրա սկզբնաղբյուրը դիտավորյալ կերպով խարդախել են պատմական իրական եղելությունը, որպեսզի թաքցընեն Լուկուլլոսի արշավանքի նենգ ու անիրավ բնույթը և ցույց տան, որ Տիգրանն ու Միհրդատը, դեռ Լուկուլլոսի արշավանքը չսկսված՝ իրար հետ գաղտնի բանակցություններ էին վարել և իրենք հենց նախապատրաստել էին ու սկիզբ դրել պատերազմական գործողությունների։

Որ Տիգրանի ու Միհրդատի տեսակցության մասին մեր նոր բացատրությունը միանգամայն ստույգ է՝ այդ պարզ ցույց է տալիս նաև ներքև մեջ բերված Մեմնոնի մի այլ կարևոր ցուցումը, որը բավարարաչափ քննված ու օգտագործված չէ եղել պատմագիտական նախորդ երկերում։

«Միհրդատը,—պատմում է Մեմնոնը[10],—մնալով մեկ տարի ու ութն ամիս Հայաստանի կողմերում՝ դեռևս չէր ներկայացել և չէր տեսնվել Տիգրանի հետ։ Եվ երբ Տիգրանը խնդրեց, որ Միհրդատը իրեն տեսության գա՝ նա նրան ընդունեց շքով և արժանի համարեց թագավորավայել պատիվների։ Մոտ երեք օր նա գաղտնի խորհրդակցություն ունեցավ Միհրդատի հետ և ապա բարեկամաբար նրան պարգևեց փարթամ ղդեստներ, տվեց տասը հազար հեծելազոր և ուղարկեց Պոնտոս»։

Մեմնոնի այս վկայության համաձայն Տիգրանի տեսակցությունը Միհրդատի հետ տեղի էր ունեցել վերջինիս Հայաստան գալուց քսան ամիս հետո։ Արդ՝ վերև մենք տեսանք, որ Միհրդատը Հայաստան եկել էր 71 թվի աշնանը[11], ուրեմն՝ նրա տեսակցությունը Տիգրանի հետ, համաձայն Մեմնոնի այդ վկայության, պետք է տեղի ունեցած լիներ ո՛չ թե պատերազմից առաջ,

10 Տե՛ս Մեմնոն, գլ. 55։

11 Համեմատած նաև Reinach, Mithridate Eupator, էջ 348։

այլ պատերազմը սկսվելուց հետո՝ 69 թվի գարնան վերջերին կամ ամառվա ամիսներին, ինչպես վերև մենք մատնանշել ենք։

Որ Տիգրանը միայն այժմ, մոտ երկու տարուց հետո միայն, թագավորական շքով ընդունեց Միհրդատին՝ այդ միանգամայն հասկանալի է, որովհետև Լուկուլլոսի անսպասելի արշավանքից և պատերազմը սկսվելուց հետո Տիգրանի զգուշավոր ու դուսպ դիրքը Հռոմի հանդեպ, ինչպես և նրա չեզոքությունը, որով նա մտածում էր պատերազմից խուսափել՝ կորցնում էին այլևս իրենց իմաստը։ Եվ բնական է, որ նա միայն այժմ, հասկացած լինելով իր քաղաքական սխալը՝ կարիք ուներ Միհրդատի օգնության ու գործակցության։

Տիգրանի ու Միհրդատի տեսակցության ժամանակ տեղի ունեցած զրույցի մասին Պլուտարքոսը տալիս է դարձյալ խիստ գունավորված ու կասկածելի տեղեկություններ։

«Արդ՝ գաղտնի զրույցի ժամանակ,—ասում է Պլուտարքոսը,—որ ունեցան [Տիգրանն ու Միհրդատը][՝] նրանք կասկածանքներ իրար հայտնեցին ի վնաս բարեկամների և սրանց համարեցին գժտությունների պատճառ։ Դրանցից մեկն էր և Մետրոդորոս Սկեփսացին, որն անհաճելի չէր իբրև խոսող և բազմակողմանի էր իբրև դիտնական։ Մետրոդորոսի բարեկամությունը Միհրդատի հետ այնքան սերտ էր, որ նա անվանվում էր թագավորի հայր։ Ինչպես պատմում են, սա Միհրդատի կողմից ուղարկված էր Տիգրանի մոտ հռոմայեցիների դեմ օգնություն խնդրելու։ Եվ Տիգրանը նրան հարցրել էր. «Իսկ դու ինքդ, ո՞վ Մետրոդորոս, ի՞նչ խորհուրդ կտաս այդ մասին»։ Իսկ նա, կամ Տիգրանին օգտակար լինելու համար և կամ չցանկանալով որ Միհրդատը փրկվի՝ ասել էր.—«Իբրև դեսպան՝ խորհուրդ եմ տալիս, իսկ իբրև խորհրդատու՝ խորհուրդ չեմ տալիս»։ Տիգրանն այս պատմեց Միհրդատին և մեղադրեց նրան, չմտածելով որ դրանով վտանգի է ենթարկվում Մետրոդորոսը։ Եվ սա իսկույնեեի սպանվեց, իսկ Տիգրանը զղջաց. բայց մտածեց, որ ինքը չէ միայն պատճառ Մետրոդորոսի դժբախտության, այլ այդ բանի խթան է հանդիսացել նաև Միհրդատի առելությունը նրա նկատմամբ։ Վաղուց ի վեր իրոք, Միհրդատը նրան քրշնամացել էր և այդ ակներև եղավ, երբ բռնագրավեցին Միհրդատի գաղտնի զրույցները, որոնց մեջ էր նաև Մետրոդորոսի սպանման կարգադրությունը։ Սրա դիակը Տիգրանը մեծ

շքով թաղել տվեց. նա ո՛չ մի ծախս չխնայեց մեռածի համար, որին կենդանության ժամանակ ինքը մատնել էր»[12]։

Պլուտարքոսի ընդարձակ այս վկայության մեջ, որը գրված է Տիգրանին վարկաբեկելու հատուկ նպատակով, սարքովի է ու սուտ, իմ կարծիքով, նախ և առաջ, Մետրոդորոսի սպանության վերաբերյալ տեղեկությունը։ Ստրաբոնի մի այլ վկայությունից, որ ներքև մեջ ենք բերելու, պարզ երևում է, որ Մետրոդորոսը վախճանվել էր 71 թվին։ Ուրեմն՝ շատ պարզ է, որ նա չէր կարող սպանված լինել Տիգրանի ու Միհրդատի տեսակցությունից հետո՝ 69 թվին (նախքան մեր թվ.)։

Ստրաբոնի վկայությունը թարգմանաբար մեջ եմ բերում ամբողջությամբ։

«Եվ [Սկեփսացի էր] բացի նրանից [Դեմետրիոսից],—ասում է Ստրաբոնը[13],—Մետրոդորոսը, որը փիլիսոփա էր և անցել էր քաղաքական կյանքի ասպարեզ։ Լինելով իր գրվածքներում առավելապես ճարտասան՝ նա գործ էր ածում ինչ-որ անսովոր նոր ոճ և զարմանք էր պատճառում շատերին։ Շքեղ հարսանիքի մեծամոլության պատճառով, որ տեղի էր ունեցել Քաղկեդոնում՝ նա աղքատ էր և համարվում էր քաղկեդոնացի։ Ծառայության մտնելով Միհրդատ Եվպատորի մոտ՝ նա իր կնոջ հետ գնաց նրա մոտ Պոնտոս. առանձնապես հարգված էր այստեղ և պաշտոն էր ստացել դատարանում, որի վճռի դեմ դատապարտվածն իրավունք չուներ վերադատության դանգատ տալու թագավորին։ Սակայն նրա բախտավորությունը հարատև չեղավ, այլ նա՝ գրգռելով իր դեմ անարդար մարդկանց թշնամությունը՝ թագավորի մոտից հեռացավ և գնաց իբրև դեսպան Տիգրան արմենի մոտ։ Իսկ սա դժկամությամբ եա ուղարկեց նրան Եվպատորի մոտ, որն արդեն փախչում էր հայրենի երկրից։ Մետրոդորոսը ճանապարհին մահացել էր՝ կամ թագավորի հրամանով և կամ հիվանդությունից։ Հաղորդում են թե այս և թե մյուս տեղեկությունը»։

Ստրաբոնը, ինչպես տեսնում ենք, պարզ վկայում է, որ Մետրոդորոսը վախճանվել էր Տիգրանի մոտից Պոնտոս վերադառնալիս, երբ Միհրդատն արդեն փախչում էր հայրենի երկրից, այսինքն՝ 71 թվին։ Ուրեմն՝ միանգամայն սխալ են Ռեյնաքի,

[12] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 22, 2—6։
[13] Ստրաբոն, XIII, 1, 55։

էքհարդի և այլ պատմագետների պնդումները[14], որոնք՝ հավատ ընծայելով Պլուտարքոսին՝ Մեսրոպոսի սպանությունը ենթադրել են Տիգրանի ու Միհրդատի հանդիպումից հետո, որը տեղի էր ունեցել 69 թվին (նախք. մեր թվ.)։

Պլուտարքոսի ու Սարաբոնի մոտ ըստ իս կասկածելի են և անհավատալի նաև նրանց վկայությունները Մեսրոպոսի սպանության մասին։ Այդ տեղեկությունները, որ վերև մեջ բերված վկայություններում խիստ հակասական են՝ բխում են, ըստ երևույթին, հակամիհրդատյան աղբյուրներից և հնարված են, հավանորեն, Միհրդատին վարկաբեկելու և անարգելու համար։ Ինձ թվում է, որ ավելի հավանական կարելի է համարել Սարաբոնի ձեռքի տակ եղած մյուս աղբյուրների տեղեկությունը, որոնք ոչինչ չգիտեն Մեսրոպոսի սպանության մասին և վկայում են, որ նա մահացել էր հիվանդությունից[15]։

Ուշագրավ է նաև, որ Պլուտարքոսի և Մեմնոնի վկայություններն իրար չեն համապատասխանում նույնպես մի այլ կարևոր կետում։ Մեմնոնը մատնանշում է, որ երեք օր տևող խորհրդակցությունից հետո Միհրդատը, ստանալով Տիգրանից տասը հազար հեծելազոր՝ գնաց Պոնտոս, իսկ Պլուտարքոսն այդ տեղեկությունը չունի։ Սակայն նա մի այլ հատվածում, որ ներքև մեջ ենք բերում, հաղորդում է, որ խորհրդակցությունից հետո Տիգրանը և Միհրդատը մտադիր էին Կիլիկիայի ու Լիկաոնիայի վրայով ներխուժել Հռոմեական Փոքր Ասիա։

> «Երբ Լուկուլլոսն իմացավ,—պատմում է Պլուտարքոսը,—որ Միհրդատը և Տիգրանը դեռ նոր են տեղափոխելու իրենց զորքերը Լիկաոնիա և Կիլիկիա, որպեսզի իրենք նախապես ներխուժեն Ասիա՝ նա զարմացավ, որ Տիգրան արմենը, որը մտադրություն էր ունեցել հարձակվելու Հռոմայեցիների վրա՝ Միհրդատին պատերազմի համար չէր օգտագործել, երբ նա դեռ հզոր էր, և չէր միացրել իր ուժերը նրա մեծ ուժերի հետ, այլ թույլ էր տվել, որ դրանք պարտվեն ու ջախջախվեն. իսկ այժմ, երբ այդ ուժերն անկարելի է արդեն վերականգնել՝ նա պատերազմը սկսել է չնչին հույսերով, մատնելով իրեն կորստյան»[16]։

[14] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 357, Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Bd. X, 1, էջ 89 և ուրիշ։

[15] Ռևյնաքը, հիմնվելով, ըստ երևույթին, ինչ որ աղբյուրի վրա, որ ինձ անծանոթ է, ենթադրում է, որ Մեսրոպոսն իրեն թունավորել և հանկարծամահ էր եղել, տե՛ս Mithridate Eupator, էջ 357։

[16] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 23, 6։

Պլուտարքոսի այս տեղեկությունը, որը ստույգ ու արժանահավատ է համարվել պատմագիտական բոլոր հին և նոր երկերում[17], ո՛չ միայն անհավանական է, այլ պարզապես սխալ է։ Տիգրանը, ինչպես վերև տեսանք, ոչ միայն չէր նախապատրաստվել պատերազմի, այլև չէր սպասում, որ Հռոմը պատերազմ է սկսելու նրա դեմ։ Շատ պարզ է, բացի այդ, որ Տիգրանը և Միհրդատը, որոնց հանդիպումը և խորհրդակցությունը տեղի էին ունեցել Լուկուլլոսի արշավանքից ու Տիգրանակերտի պաշարումից հետո՝ չէին կարող այդ արշավանքից առաջ ծրագրած լինել նախահարձակ լինելու և ներխուժելու Հռոմեական Փոքր Ասիա։

Պլուտարքոսը կամ այն աղբյուրները, որոնցից նա օգտվել էր՝ ցանկացել են, ըստ երևույթին, սարքովի այս տեղեկության միջոցով պատերազմի պատասխանատվությունը դնել Տիգրանի ու Միհրդատի վրա և ուզեցել են, հավանորեն, արդարացնել Լուկուլլոսի նենգ հարձակումը Հայաստանի վրա, որ նա սկսել էր հանկարծակի ու գաղտնաբար և առանց պատերազմ հայտարարելու։

[17] Տե՛ս Моммсен, Римская история, т. III, էջ 56, Reinach, Mithridate Eupator, էջ 358, Халатьянц, Очерк истории Армении, էջ 191 և ուրիշ։

12. ՄԵԾ ՁԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄՈՏ

Տիգրանակերտ քաղաքը, որը պաշարված էր 69 թվի գարնանը՝ ամիսներ շարունակ դիմացավ պաշարմանը և համառորեն դիմադրեց հռոմայեցիներին, սպասելով, որ իրեն օգնության կը-գա Տիգրանի նոր կազմակերպված զորաբանակը։ Իսկ այդ ժամանակ Տիգրանը հեռացհետե իր զորքերը հավաքեց զանազան շրջաններից, նաև իրեն ստորադրված վասսալական թագավորություններից և իշխանություններից։ Նրան օգնության եկան, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[1], Ատրպատականի ու Ադիաբենի թագավորները, նաև զորամասեր Աղվանքից, Վրաստանից, Արաբիայից և ուրիշ երկրներից։

69 թվի աշնանը Տիգրանը և նրա զորաբանակը ճանապարհ ընկան և Տավրոսյան լեռներով իջան հարավ ազատելու պաշարված Տիգրանակերտը։ Տիգրանի այս ճանապարհը էքհարդը ենթադրում է Մշո դաշտից դեպի այժմյան Ներջիկ և այնտեղից դեպի ձախ շեղելով՝ Բատման-սուի ձախ կողմով մինչև Ֆարկինսուի և Բատման-սուի գետախառնուրդը[2]։

Հենց նույն այս ժամանակ Տիգրանի մոտ եկան, ինչպես վկայում են Մեմնոնը և Պլուտարքոսը, Միհրդատի ուղարկած պատգամավորությունը և նրա հմուտ ու փորձված զորավար Տաքսիլեսը։ Սրանք նախազգուշացրին Տիգրանին, որ նա խուսափե վճռական պատերազմից, որովհետև հռոմեական մշտական ու մարզված զորքը գրեթե անպարտելի է։ Նրանք խորհուրդ տվին, որ նա արգելե, ըստ կարելույն, հռոմեական զորքի պարենավորումը և նրանց մատնե սովածության[3]։

[1] *Տե՛ս Լուկուլ., 26, 6։*

[2] *Տե՛ս* Eckardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, *էջ 94։*

[3] *Ապպիանոսի վկայությունը, որ Միհրդատն ինքն էլ էր մասնակցել Տիգրանակերտի ճակատամարտին և որ ինքն է տվել այդ խորհուրդը (տե՛ս Միհրդատական, 85)՝ չի համապատասխանում Պլուտարքոսի և Մեմնոնի վկայություններին (տե՛ս Պլ ու տ., Լուկ., 29, 1 և Մեմն., 58), ուստի և համարվում է անհավանական։*

Տիգրանին դժվար էր, սակայն, հետևել այդ խորհուրդներին, որովհետև նա, ըստ երևույթին, չէր ուզում և չէր կարող, երկարացնելով պատերազմը՝ զոհ բերել Տիգրանակերտ քաղաքը, որը կարիք ուներ շտապ ու անհապաղ օգնության։

Ինչպես վերև մենք տեսանք, հելլենիստական այս նոր քաղաքի կառուցման վրա, որ կուլտուրական մեծ ու հոյակապ մի գործ էր՝ ծախսված էին ու գործադրված հսկայական միջոցներ ու աշխատանք։ Այս քաղաքը, համաձայն Տիգրանի ծրագրի, լինելու էր նրա պետության լուսատու կենտրոնը և հետզհետե հեղաշրջելու և նորոգելու էր նրա հայրենի երկրի հետամնաց նահապետական կյանքը։ Տիգրանակերտը, ինչպես ասացինք, նպաստելու էր նաև առևտրի ու արդյունագործության զարգացմանը Հայաստանում և օժանդակելու էր նույնպես հելլենիստական քաղաքակրթության և հելլենական արվեստի ու գիտության տարածմանը։ Պարզ է, ուրեմն, ու հասկանալի, թե ինչո՛ւ Տիգրանը չհետևեց Միհրդատի ու նրա զորավարի խորհրդին և, օգնության շտապելով Տիգրանակերտին, ուզեց դադարեցնել նրա պաշարումը։

Ուշագրավ է, որ Լուկուլլոսն ինքը ևս, ինչպես վկայում է Պլուտարքոսը[4], պաշարելով Տիգրանակերտը՝ հասկացել ու նախատեսել էր, որ Տիգրանը չի կարող այդ հանդուրժել և անպայման գալու է և ճակատամարտ է տալու իր նոր մայրաքաղաքը փրկելու համար։

69 թվի հոկտեմբեր ամսի սկզբներին Տիգրանի զորաբանակը մոտեցավ Տիգրանակերտին, և ընդհարումը հռոմայեցիների հետ դառավ անխուսափելի։

Տիգրանակերտի ճակատամարտը տեղի էր ունեցել, ինչպես երևում է սկզբնաղբյուրների վկայություններից՝ Նիկեփորիոն գետի մոտ, որից մոտավորապես 750 մետր հեռավորության վրա գրտնըվում էր մի ցածր բլրակ։ Պլուտարքոսը վկայում է, որ պաշարված տիգրանակերտցիները տեսել և ցույց էին տվել հռոմայեցիներին ռազմադաշտի տեղը, ուր բանակել էին Տիգրանի զորքերը։

Հիմնվելով սկզբնաղբյուրների և, գլխավորապես, Պլուտարքոսի նկարագրության ու ցուցումների վրա՝ ճակատամարտի տեղը Ֆարկինի մոտ ենթադրաբար որոշել է գերմանական գիտնական Բելքը, որի հոդվածից[5] ավելորդ չեմ համարում մեջ բերել մի քանի հատվածներ։

«Ֆարկին-սուի լայնանիստ ձորադաշտից հանդարտ ցած

[4] *Տե՛ս Լուկուլ., 26, 4։*

[5] *Տե՛ս* Zeitschrift für Ethnologie, 1899, *էջ 272 և այլն։*

իջնելով դեպի հարավ-արևելք,—ասում է Բելքը,—մոտ քսան կիլոմետր անցնելուց հետո՝ հասնում ենք մի մեծ դաշտ, ջրբաուառատ Բաուման-սուի գետադաշտը, որը հյուսիսում սկըսվում է մեր գտնված տեղից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող մեծ կամուրջի տակից և շարունակվում է այնուհետև 12—15 կիլոմետր դեպի հարավ, և ապա վերջանում է։ Դաշտի լայնությունը տարբեր տեղերում մեկից մինչև երեք կիլոմետր է...։ Սա կատարյալ մի հարթավայր է առանց որևէ ելևէջների և այնքան ընդարձակ, որ կարող է իբրև բանակատեղ ծառայել ամենաստվար զորքի։ Իսկ գետը... որը պետք է անցներ Լուկուլլոսը՝ Բաուման-սուն էր, որը 30, 40 և կամ 50 մետր լայնությամբ, հանդարտ ու անաղմուկ, սակայն սրընթաց՝ հոսում և թափում էր իր հորդառատ ջրերը ավելի փոքր Դիարբեքիրի գետի մեջ։... Ուղիղ [Բաուման-սուի] դեմը... գտնվում է մի մեծ սարահարթ, որը գրեթե գահավիժորեն իջնում է արևմտյան ուղղությամբ դեպի Բաուման-սուն, որը սարահարթի ստորոտից հեռու է գտնվում մոտ 5—6 կիլոմետր, իսկ հարավ-արևմտյան ուղղությամբ ցածրանում է, ընդհակառակը, աստիճանաբար դեպի գետը... Այստեղ հենց, այս մեղմ սարալանջի վրա, բանակել էր Տիգրանի մեծ զորքը, որը 150—200 մետր համեմատական բարձրություն ունեցող այս կետից կարող էր տեսնել Տիգրանակերտը և պաշարող զորքի վրանները։ Նմանապես և պաշարվածները կարող էին սրանց տեսնել. որովհետև այն տեղից պարզ տեսնվում է ամբողջ տարածությունը՝ սարահարթը, մեղմ սարալանջը, Բաուման-սուն և հարթավայրը»։

Բելքի այս բացատրության համաձայն, որ ընդունելի է համարվում, Տիգրանակերտի ճակատամարտի տեղը ենթադրվում է, ուրեմն, Ֆարկին քաղաքի հարավ-արևելյան շրջանում, այժմյան Ֆարկին-սուի և Բաուման-սուի միավորման մոտ գտնվող Զորադաշտում։ Որ ճակատամարտը տեղի էր ունեցել, իրոք այժմյան Ֆարկին-սուի մոտ՝ այդ միանգամայն անկասկածելի է, որովհետև դասական հեղինակների մոտ այդ գետն անվանվում է Նիկեփորիոն կամ Նիկեփորիոս, այսինքն՝ «Հաղթաբեր», իսկ այդ անունը, ինչպես մատնանշել է Մարկվարտը[6], նա ստացել էր Լուկուլլոսի հաղթության պատճառով։

Երբ հայկական զորքն արդեն Տիգրանակերտի մոտ էր գըտ-

[6] Տե՛ս Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 132.

նըվում Լուկուլլոսն անհրաժեշտ համարեց, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[7], գումարել ռազմական խորհուրդ։ Խորհրդակցության ժամանակ ժողովականներից ոմանք առաջարկեցին վերացնել քաղաքի պաշարումը և բոլոր ուժերով գնալ թշնամու դեմ։ Իսկ ոմանք, վտանգավոր համարելով Տիգրանակերտի քաղաքային զորքի ներկայությունն իրենց թիկունքում՝ խորհուրդ տվին մնալ Տիգրանակերտի մոտ և ընդունել ճակատամարտը նրա պարիսպների տակ։

Պլուտարքոսի ասելով՝ Լուկուլլոսն այդ կարծիքներն ընդունելի չհամարեց և ինքը վճռեց զորքի մի մասով շարունակել Տիգրանակերտի պաշարումը, իսկ մյուս մասով արշավել Տիգրանի դեմ։ Տիգրանակերտի առջև նա թողեց 6000 զորք, նաև իր զորապետներից Մուրենային, իսկ մնացած բանակով, որը բաղկացած էր ըստ Պլուտարքոսի 10.000 հետևազորից, 3000 հեծելազորքից և 1000 թեթևազեններից, ինքը գնաց Տիգրանի դեմ։

Պլուտարքոսի այս թվերը և, ընդհանրապես, հնագույն աղբյուրների համապատասխան նաև մյուս վկայությունները հռոմեական ու հայկական զորքերի թվի մասին՝ կարոտ են, ինչպես իրավամբ մատնանշվում է նորագույն ուսումնասիրություններում, ուշադիր ու մանրազնին քննության ու ճշտման։ Ամենակարեվորներն այդ վկայություններից, որ մեծ չափով իրար հակասում են, մեջ ենք բերում ներքև մանրամասն կերպով։

Ա. Հայաստան արշավող հռոմեական զորքի թիվը.

1. *Պլուտարքոս* (Lucullus, 24, 1)՝
   12.000 հետևակ և մոտ 3000 ձիավոր։
2. *Եվտրոպիուս* (Breviarium, VI, 9, 1)՝
   18.000 ռազմիկ (milites)։
3. *Ապպիանոս* (Mithrid., 84)՝
   երկու ընտիր լեգեոն և 500 ձիավոր։

Բ. Հռոմեական զորքի թիվը Տիգրանակերտի կռվում.

1. *Պլուտարքոս* (Lucullus, 28, 2)՝
   24 վաշտ (cohors)՝ *ո՛չ ավելի քան 10.000 ծանրագեն, ամբողջ հեծելազորը, այսինքն՝ 3000 ձիավոր և 1000 պարսավոր ու աղեղնավոր։*
2. *Փրոնտինուս* (Strateg., II, 1, 14)՝
   15.000 զինվոր (armati)։

Գ. Հայ զորքի թիվը Տիգրանակերտի կռվում.

[7] Տե՛ս Լուկուլ., 27, 1։

1. Պլուտարքոս (Lucullus, 26, 9)՝
20.000 աղեղնավոր և պարսավոր, 55.000 ձիավոր, որոնցից 17.000 զրահավոր, 150.000 ծանրապեն հետևակ, 35.000 կամուրջ ու ճանապարհ շինող և այլ աշխատավորներ։

2. Ապպիանոս (Mithr., 85)՝
250.000 հետևակ և 50.000 ձիավոր։

3. Եվտրոպիուս (Breviarium, VI, 9, 1)՝
7.500 ձիավոր զրահավոր և 100.000 հետևակ։

4. Մամնոն, պ. 57՝
80.000 զորք։

5. Փլեգոն[8] (Olympiades, fr. 12, Müller, Fr. H. Gr. III, 606)՝ *30.000 ձիավոր և 40.000 հետևակ։*

Պատմագիտական ուսումնասիրություններից շատերում[9] վրատահելի ու արժանահավատ են համարել, գլխավորապես, Պլուտարքոսի վերոհիշյալ թվերը, որովհետև սա օգտված է եղել հռոմեական սկզբնաղբյուրներից՝ Սալլուստիուսից, Տիտուս Լիվիուսից և, հավանորեն, նաև այն պաշտոնական գրություններից, որ Տիգրանակերտի ճակատամարտից հետո Լուկուլլոսն ուղարկած է եղել ծերակույտին։ Հենվելով այդ թվական տվյալների, ինչպես և Պլուտարքոսի մոտ մեջ բերված Տիտուս Լիվիուսի վկայության վրա[10] Մոմզենը և նրան հետևելով նաև ուրիշ պատմագետներ Տիգրանի զորքի թիվը համարել են հռոմեական զորքի թվից քսան անգամ ավելի։

Սակայն պատմագիտական ավելի նոր ուսումնասիրություններում, օրինակ՝ Ռեյնաքի, Ֆեռեռոյի, էքհարդի երկերում՝ Պլուտարքոսի վկայությունը, հատկապես Տիգրանի զորքերի թվի մասին, համարվում է ակներև մի չափազանցություն[11] և գերադա-

[8] *Փլեգոնի այս վկայությունը վերաբերվում է, էքհարդի կարծիքով, ոչ թե Արածանիի, այլ Տիգրանակերտի ճակատամարտին, տե՛ս* Klio, Bd. X, Heft 1, *էջ 98, ծան. 3։*

[9] *Համեմատ.* Моммсен, Римская история, III, *էջ 57,* Нич, История римской республики, Москва, 1908 *և ուրիշները։*

[10] *Տիտուս Լիվիուսի ասելով՝ Տիգրանակերտի ճակատամարտում յուրաքանչյուր հռոմայեցի ունեցել է իր դեմ քսան թշնամի, տե՛ս Պլուտարքոս, Լուկուլ., 28, 12։*

[11] *Տե՛ս* Reinach, Mithridate Eupator, *էջ 360,* Ферреро, Величие и падение Рима, I, *էջ 182,* Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, *էջ 96—100։*

սություն է տրվում փոքրասիական չեզոք հեղինակների, Մամնոնի և Փլեգոն Տրալլացու, վերոհիշյալ վկայություններին, ըստ որոնց հայ բանակի զորաթիվը ցույց է տրված ո՛չ թե 260.000, այլ միայն 70.000 կամ 80.000։ Որ այս վերջին թվերը նախընտրելի են՝ այդ, իհարկե, անտարակուսելի է, որովհետև, ինչպես հայտնի է, հռոմեական զորավարներն իրենց պաշտոնական զեկուցագրերում թշնամու քանակի մասին տալիս էին միշտ չափազանցված ու սուտ տեղեկություններ։ Էքհարդը մատնանշում է, բացի այդ, որ տեղափոխել Տավրոսյան լեռներով ու նեղ արահետներով 260.000 զորք գրեթե անհնարին էր։

Հռոմեական զորքի թվի նկատմամբ գրեթե բոլոր պատմագետները համամիտ են և, հենվելով Պլուտարքոսի և Փրոնտինուսի վերոհիշյալ վկայությունների վրա՝ Տիգրանակերտի կռվին մասնակցողների ընդհանուր թիվը ենթադրում են 14.000—15.000։ Սակայն Ռեյնաքը և էքհարդն իրավացի կերպով մատնացույց են արել[12], որ Պլուտարքոսի վկայություններն իրար չեն բռնում։ Տիգրանակերտի ճակատամարտի առթիվ Պլուտարքոսի մոտ տըրված են, ինչպես տեսանք, հետևյալ թվերը՝ 6000 զորք Մուրենայի, իսկ Լուկուլլոսի հետ՝ 10.000 ծանրապեն, 3000 հեծելազոր և 1000 պարսավոր ու աղեղնավոր, ուրեմն՝ ընդամենը 20.000 զորք։ Իսկ Հայաստան արշավող հռոմեական ամբողջ զորքի քանակը նրա մոտ նշանակված է՝ 12.000 հետևակ և 3000 հեծելազոր, ընդամենը՝ 15.000։ Էքհարդի կարծիքով, այս վերջին թվի մեջ չեն հիշատակված Մուրենայի 6000 զորքը և 1000 թեթևազեններ։ Այս ուղղումն անելուց հետո Հայաստան արշավող հռոմեական զորքի թիվը սպացվում է նրա մոտ ո՛չ թե 15.000, այլ 22.000։

Եթե ընդունելու լինենք էքհարդի ուղղումը հավանական, ինձ թվում է, այնուամենայնիվ դժվար է համաձայնել, որ Լուկուլլոսը հնարավոր էր համարել փոքրաթիվ այդ ուժերով ռազմական մեծ արշավանք սկսել ընդդեմ Տիգրան Բ-ի, որին, ինչպես նա շատ լավ գիտեր, միանալու էր նաև Միհրդատը։ Պատմաբանները, ինչպես շատ ճիշտ նկատել է Աստուրյանը[13], աչքաթող են արել, որ հռոմեական աղբյուրները մատնանշել են միմիայն հռոմեական զորքերի թիվը, բայց չեն հիշատակել Հռոմի դաշնակիցների փոքրասիական զորքերը։ Իսկ որ այդ օգնական զոր-

[12] *Տե՛ս* Reinach, Mithridate Eupator, *էջ 358, ծան. 1 և* Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, *էջ 78—82։*

[13] *Տե՛ս «Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռոմայ», էջ 338—343։*

քերը գործուն մասնակցություն էին ունեցել հայկական կռիվներին՝ այդ երևում է հենց իրենց իսկ հռոմեական կամ նաև այլ աղբյուրներից։

Սարաբոնի ուշագրավ մի վկայությունից դժվար չէ, օրինակ, կռահել, որ Լուկուլլոսը, հավանորեն, օգնական զորքեր էր ստացել Կապադովկիայի Արիոբարզան թագավորից, որին ռազմական այդ գործակցության համար նա տվել էր իբրև վարձատրություն Ծոփաց երկրում գտնվող նշանավոր Տոմիսա բերդը[14]։ Մենք կտեսնենք ներքև, որ Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցել էին թրակացի և գալատացի թեթևազեն հեծելագունդերը, որոնք, հավանորեն, նույնպես օժանդակ զորքեր էին և չէին համարվում բաղադրիչ մասեր հռոմեական վերոհիշյալ զորքի։ Բացի այդ, Սալլուստիուսի մոտ ևս իբրև օգնական զորքեր հիշատակված են բյութանացիները, որոնք 68 թվի աշնանը հռոմեական մյուս զորամասերից առաջ հասել էին Արածանիի գետափին[15]։

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, փոքրասիական օգնական ու դաշնակից զորքերի մասնակցությունը հայկական կռիվներին միանգամայն անժխտելի է։ Օգնական այդ զորքերը, որոնցից որոշակի հիշատակված են գալատացիները, թրակացիները և բյութանացիները՝ կազմում էին, ըստ երևույթին, Լուկուլլոսի զորաբանակի նշանակալի մասը։ Ուստի և մենք սխալված չենք լինի, եթե Լուկուլլոսի ամբողջ զորքի թիվն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում ո՛չ թե 15.000 կամ 22.000, ինչպես այդ հիշատակվում է պատմագիտական երկերում, այլ անհամեմատ ավելի։

Այսպիսով հռոմեական ու հայկական բանակների վերոհիշյալ մեկ առ քսան հարաբերությունը, որ մատնանշված է Մոմզենի, Նիչի և այլ պատմագետների մոտ, ինչպես տեսնում ենք, ակներև մի սխալ է։ Ընդունելով, որ օգնական դաշնակից զորամասերի թիվը պակաս չէր լինի հռոմեական զորքերի թվից՝ դժվար չէ համոզվել, որ Տիգրանի զորքը կարող էր Լուկուլլոսի զորքից ավելի լինել ո՛չ թե քսան, այլ առ առավելն երկու անգամ։

Տիգրանակերտի ճակատամարտը տեղի ունեցավ, ինչպես հայտնի է, 69 թվի հոկտեմբերի 6-ին։ Մեծ այդ ճակատամարտի մասին կարևորագույն աղբյուրներն են՝ Պլուտարքոսը, Ապպիանոսը, Մեմնոնը և Փրոնտինուսը, որոնք թեև հիմնական որոշ կետերում իրար չեն հակասում, սակայն մանրամասնությունների նրբ-

[14] Տե՛ս Ստրաբոն, XII, 2, 1 (535)։

[15] Տե՛ս Sallustius, IV, fragm. 74։

կատմամբ իրար հետ բոլորովին անհաշտելի են։ Նրանց տարաձայնությունները, ինչպես կտեսնենք, այնքան են մեծ, որ միանգամայն անհնարին է մանրամասնաբար վերականգնել ճակատամարտի ամբողջ ընթացքը, թեև այդ վստահ ու անվերապահ կերպով արված է պատմագիտական բազմաթիվ երկերում[16]։

Ճակատամարտի ամենամանրամասն նկարագրությունը տվել է Պլուտարքոսը, որի պատմության այդ մասը համեմված է այնպիսի թատերական ու դրամատիկական միջադեպերով, որոնք հավանական ցուցանիշներ են համապատասխան այդ հատվածների անհավաստության։ Նման կասկածելի զրույցներից է, իմ կարծիքով, ճակատամարտի նկարագրության հենց սկզբում տրված նրա հետևյալ տեղեկությունը։ Ճակատամարտը դեռ չսկսված, պատմում է Պլուտարքոսը, երբ Լուկուլլոսի զորքը բանակ էր գցում գետի մոտ՝ Տիգրանը, տեսնելով փոքրաթիվ այդ զորքը՝ հեգնանքով բացականչել էր,—«Եթե դրանք իբրև դեսպաններ են եկել՝ շատ են, իսկ եթե իբրև զինվորներ՝ քիչ են»[17]։ Այս վկայությունը չի կարող ճիշտ լինել, որովհետև Պլուտարքոսի մատնանշած հռոմեական ու հայկական զորքերի վերոհիշյալ թվական հարաբերությունը, ինչպես տեսանք, չափազանցված ու սխալ է։

«Լուսաբացին,—ասում է այնուհետև Պլուտարքոսը,—Լուկուլլոսը ճամբարից դուրս բերեց իր զինված զորքը։ Բարբարոսական զորքերը գտնվում էին գետի արևելյան կողմում, և որովհետև սրա հոսանքը շեղվում էր դեպի արևմուտք, որտեղ նա հեշտությամբ անցանելի էր, և որովհետև Լուկուլլոսը հենց այդ ուղղությամբ արագորեն տանում էր իր զորքը թշնամու դեմ՝ Տիգրանը կարծեց, որ նա նահանջում է։ Տիգրանը ծիծաղելով կանչեց Տաքսիլեսին և ասաց,—«Մի՞թե դու չես տեսնում, որ հռոմեական զորքերը փախչում են առանց ճակատ տալու»։ Իսկ Տաքսիլեսը պատասխանեց,—«Ես կուզենայի, ո՜վ թագավոր, որ այդպիսի մի բան քո բախտից հանկարծ պատահեր, սակայն ճանապարհ գնալիս՝ ո՛չ փայլուն հանդերձանքներ են հագնում, ո՛չ էլ մաքրված վահաններ ու մերկ սաղավարտներ. ինչ-

[16] Տե՛ս Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, 1, էջ 100—104, Drumann, Geschichte Roms, Bd. IV, Berlin, 1899, էջ 147 և այլն, Sachau, Ueber die Lage von Tigranokerta, Abhandl. der kgl. Akademie der Wissensch. zu Berlin, 1880 և ուրիշ։

[17] Նույն այս վկայությունն ունի նաև Մեմնոնը (գլ. 57)։ Նրա մոտ Տիգրանակերտի ճակատամարտին վերաբերող ամբողջ հաղորդագրությունը հիմնված է, ըստ երևույթին, հռոմեական աղբյուրների վրա։

պես է, որ այժմ դուրս են հանված զենքերը կաշվե պատյանների միջից. այդ պայծառությունը սակայն սպասվող ճակատամարտի և, անշուշտ, թշնամու դեմ ելույտի համար է»[18]։

Տիգրանակերտի մեծ ճակատամարտը, որ այնուհետև տեղի ունեցավ գետի ձախ ափին, նկարագրել են, ինչպես ասացինք, Պլուտարքոսը, Ապպիանոսը, Մեմնոնը և Փրոնտինուսը, որոնցից հատկապես առաջին երկուսի ընդարձակ ու հիմնական վկայություններն այնքան խառնակ են ու իրար հակասող, որ միանգամայն անհնարին է տալ նրանց օգնությամբ ճակատամարտի ու պատերազմական իրադարձությունների ճշգրիտ ու մանրամասն պատկերը։ Ցույց տալու համար այդ հակասությունները, որ ներքև քննության ենք առնելու՝ մեջ ենք բերում վերոհիշյալ հեղինակների նկարագրությունները բառացի թարգմանությամբ։

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, 27, 7—9 և 28, 1—9՝


«Ուրեմն՝ մեծ աղմուկով զորքը դասավորվեց այսպես մարտակարգով։ Ինքը թագավորը վերցրեց կենտրոնը, Ադիաբենի թագավորին տվեց ձախ թևը, իսկ մեդացիների թագավորին՝ աջ թևը. առջևում սրա մոտ գտնվում էր նաև մեծագույն մասը զրահավոր հեծելազորի։ Երբ Լուկուլլոսն ուզեց գետն անցնել՝ զորագլուխներից ոմանք նրան խորհուրդ տվին զգուշանալ, որովհետև այդ օրն այն դժբախտ օրերից մեկն էր, որն անվանվում է սև. այդ օրը կոտորվել էր Կեպիոնոսի հետ միասին հռոմեական զորքը, որն ընդհարում էր ունեցել կիմբրացիների հետ։ Լուկուլլոսը սակայն նրանց պատասխանեց և ասաց հետևյալ անմոռանալի խոսքերը,—«Իսկ ես հռոմայեցիների համար այդ օրը կդարձնեմ բախտավոր»։ Եվ էր այդ հոկտեմբերյան տոների նախօրեին [=6 հոկտ.]։

Այդ խոսքերն ասելուց հետո՝ նա հրամայեց աշխուժ լինել, անցավ այնուհետև գետը և թշնամիների դեմ գնաց առաջինը։ Նա հագել էր երկաթե թեփուկապատ շողշողուն զրահ, ծոպազարդ թիկնոց և հանել էր անմիջապես մերկացրած սուրը, որովհետև պետք է իսկույն նետաձիգ մարդկանց դեմ գնար ձեռնակռվի և պետք է արագ ու բուռն գրոհով զրավեր նետամատչելի տարածությունը։ Երբ նա ապա տեսավ, որ զրահավոր հեծելազորը, որի մասին շատ էին խոսում, դասավորված է մի հարթ ու լայն գագաթ ունեցող բլրի տակ և տեսավ նաև, որ բլրի վերևլքը, որն ուներ չորս ստադիոն[19] երկարություն, ո՛չ առանձնապես թեք է և ո՛չ էլ դժվարամատչելի՝ նա հրաման տվեց թրակացի և գալատացի հեծելագունդին, որն ուներ իր հետ, որ նրանք զրահավորների վրա հարձակվեն կողքից և սրերով նրանց նիզակները մղեն ետ։ Միակ պաշտպանությունը զրահավոր հեծելազորի հետ այդ նիզակներն էին ուրիշ ո՛չ մի բան նրանք ո՛չ իրենց պաշտպանելու համար, ո՛չ էլ թշնամու դեմ չէին կարող գործածել. պատճառը հանդերձանքների ծանրությունն էր և ահագին այն զանգվածը, որի մեջ կարծես նրանք փակված էին իբր շենքերի մեջ։ Ինքը Լուկուլլոսը, իր հետ վերցնելով երկու վաշտ (cohors)[20], շտապեց դեպի բլուրը։ Նրա ետևից արիաբար գնացին նաև զինվորները, որովհետև սրանք տեսնում էին, որ Լուկուլլոսը՝ զինված ու հետիոտն՝ առաջինը հենց ինքն էր իրեն ենթարկում դժվարությունների և բոլոր ուժերով իրենց գործակցում։ Բլուրը բարձրանալուց հետո՝ Լուկուլլոսը կանգնեց բոլորի համար տեսանելի տեղում և, բարձր գոչելով՝ ասաց,—«Մենք հաղթում ենք, ո՛վ մարտակիցներ, մենք հաղթում ենք»։ Այդ ասելուց հետո՝ նա զորքը առաջնորդեց զրահավոր հեծելազորի դեմ և հրամայեց բոլորին տեղերը չգործադրել, այլ գնալ ձեռնակռվի և հարվածել թշնամիների ազդրերը և սրունքները (զրահավոր հեծյալների մարմնի այդ մասերն էին միայն մերկ ու անպաշտպան)։ Այս ճակատամարտը կարիք չուներ, իրոք, որևէ այլ գործողության, քանի որ սրանք չդիմացան հռոմայեցիների հարձակմանը, այլ մեծ աղմուկով ու ամենախայտառակ կերպով փախան թե իրենք և թե իրենց ձիերը ու ընկան խռնված հետևազորքի վրա, նախ քան սրա կռվի բռնվելը։ Այսպիսով առանց վերք ստացվելու և առանց արյուն թափելու բազմաբյուրավոր այս զորաբանակը կրեց պարտություն։ Այնուհետև սկսվեց արդեն փախչողների մեծ կոտորածը, մանավանդ նրանց, որոնք նոր էին ուզում փախչել։ Շարքերի խտության ու խորության պատճառով այս վերջիններն անկարող էին փախչել և արգելք էին հանդիսանում իրենք իրենց։ Իսկ Տիգրանը դեռ սկզբում, դուրս գալով քշերի հետ՝ փախավ, և տեսնելով, որ իր որդին

[18] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 27։


[19] Հռոմեական մեկ ստադիոնի երկարությունը մոտ 185 մետր էր։

[20] Կոհորտը լեգեոնի տասներորդ մասն էր և բաղկացած էր ամենաշատը 600 հոգուց։



Տիգրանակերտի ճակատամարտն ըստ Պլուտարքոսի և Էֆիարդի։

ևս հաղորդակից է նույն բախտին՝ վեր առավ գլխից խույրը և արտասվելով հանձնեց նրան ու հրամայեց, որ նա ինքն իրեն ազատե մի այլ ճանապարհով, ինչպես որ կարող է։ Իսկ պատանին չհամարձակվեց խույրը դնել իր գլխին, այլ սկսեց պահելու իր ամենահավատարիմ ծառային։ Սա պատահմամբ դերի ընկավ և տարվեց Լուկուլլոսի մոտ, ու այսպիսով մյուս ավարի հետ վերցրել էին նաև Տիգրանի խույրը։ Ասում են, որ հետևազորից կոտորվել էր ավելի քան 100.000 մարդ, իսկ հեծելազորից շատ քչերն էին ազատվել։ Հռոմայեցիներից վիրավորվել էին 100 մարդ և սպանվել 5 մարդ»։



Տիգրանակերտի ճակատամարտն ըստ Ապպիանոսի։

2. Ապպիանոս, Միհրդատականք, գլ. 85՝

«Լուկուլլոսը տեսնելով Տիգրանի թիկունքում հարմար մի բլուր՝ իր հեծելազորին հրամայեց, որ նա թշնամուն նեղի ճակատի կողմից, նրան քաշի դեպի իրեն և կամավոր կերպով ետ նահանջի, որպեսզի հետապնդող բարբարոսների շարքերը քայքայվեն։ Իսկ ինքը հետևազորի հետ միասին, անցնելով թշնամու թիկունքը՝ գաղտնաբար բարձրացավ բլուրը։ Եվ երբ նա տեսավ, որ թշնամիները հեծելազորը հալածելիս, իբրև թե հաղթած լինելով՝ բոլորովին ցրիվ էին եկել, բայց նրանց ամբողջ զրաստագումակը գրտնվում էր իր առջև՝ գոչեց,—«Մենք հաղթում ենք, ընկեր-

ներ», և ապա վազելով՝ նախապես հարձակվեց գումակի վրա։ Իսկ գրաստագումակն իսկույն աղմկելով փախավ և ընկավ հետևազորի վրա, և հետևազորը՝ հեծելազորի վրա։ Այնուհետև պարտությունը եղավ լիակատար, որովհետև հռոմեական հեծելազորը ևս ետ դառավ ու կոտորեց նրանց, որոնք հարձակվելիս ցրվել էին հետևները։ Իսկ գրաստագումակը, սեղմված լինելով՝ ընկել էր մյուսների վրա։ Եվ այդ մեծ խուճապի մեջ շատերը տրորվել էին ոտքերի տակ, բայց չփոտեին ճշտիվ, թե որտեղից էր սկսվել այդ արհավիրքը։ Կոտորածը շատ մեծ եղավ, որովհետև ոչ ոք ժամանակ չէր կորցնում կողոպուտի վրա. այդ խստիվ արգելել էր Լուկուլլոսը, ուստի և, ձեռք չտալով նույնիսկ ապարանջաններին ու մանյակներին՝ նրանք առաջ էին գնացել մոտ 120 ստադիոն, մինչև որ վրա էր հասել գիշերը։ Իսկ այնուհետև միայն նրանք վերադարձան ու կողոպտեցին դիակները, որովհետև այդ այժմ թույլ էր տվել Լուկուլլոսը»։

3. *Մեմնոն, գլ. 57*՝

«Սա [Տիգրանը], հավաքելով 80.000 զորք, իջավ ցած, որպեսզի հարստահարիչների ձեռքից Տիգրանակերտն առնե և թշնամիներին հեռացնե։ Կամենալով այդ շուտ վերջացնել և տեսնելով, որ հռոմայեցիների զորաբանակը սակավաթիվ է՝ նա ասաց,—«Եթե նրանք ուղում են որպես դեսպաններ ներկայանալ՝ մեծ բազմությամբ են եկել, իսկ եթե որպես թշնամիներ են եկել՝ չափազանց քիչ են»։ Եվ այդ ասելուց հետո՝ նա բանակ դրեց։ Իսկ Լուկուլլոսը վարպետությամբ ու հոգացողությամբ ճակատամարտի համար մարտակարգ կազմեց և, քաջալերելով իր զորքը՝ իսկույն փախուստի մատնեց աջ թևը, հետո սրա միջոցով ետ մղեց հաբեան զորքը և ապա հերթով՝ ամբողջ զորքը։ Հայերն ահաբեկված ու անղուսպ կերպով դիմեցին փախուստի, և մարդկանց թվի համեմատ էր նաև նրանց կոտորածը։ Իսկ Տիգրանն իր արքայական խույրը և ապարոշը տվեց որդուն և ինքը փախավ իր ամրոցներից մեկը»։

4. *Փրոնտինուս (*Strategmaton, *II, գլ. 1, 14)*՝

«Թեև Տիգրանակերտի մոտ Մեծ Հայաստանում Տիգրանի ու Միհրդատի դեմ ինքը Լուկուլլոսն ուներ ոչ ավելի քան 15.000 զինվոր (armati), իսկ թշնամին ուներ անթիվ բազմություն, որը նույն այդ պատճառով դժվարաշարժ էր,—նա թշնամու այս անհարմարությունից օգտվեց, հարձակվեց նրա դեռևս չկարգավորված մարտաշարքերի վրա և իսկույնևեթ այնպես ցրիվ տվեց, որ նույնիսկ իրենք թագավորները, դեն գցելով պատվանշանները՝ փախան»։

5. *Նույնը (*Strategmaton, *III, գլ. 2, 4)*՝

«Լուկուլլոսը, որը Տիգրանակերտի մոտ Մեծ Հայաստանում մարտնչելու էր Տիգրանի ու Միհրդատի դեմ՝ իսկույն իր զորքի մի մասով գրավեց մոտակա բլրի հարթ գագաթը, սլացավ ապա ցածում գտնվող թշնամիների վրա և հարձակվեց նրանց հեծելազորի վրա կողքից։ Անմիջապես հետամուտ լինելով խանգարված թիկունքից նաև նրանց հետևազորին՝ փայլուն հաղթություն տարավ»։

Ուշադիր կերպով ծանոթանալով բոլոր այս նկարագրություններին՝ դժվար չէ համոզվել, որ Տիգրանակերտի ճակատամարտի մասին մեր ձեռքը հասել են երկու տարբեր հաղորդագրություններ, որոնք հիմնված են երկու տարաձայն ավանդությունների վրա՝ հռոմեական և փոքրասիականը։ Հռոմեական ավանդությունը պահպանված է Պլուտարքոսի մոտ, որն օգտվել էր Սալլուստիուսի և Տիտուս Լիվիուսի պատմական երկերից, իսկ փոքրասիականը՝ Ապպիանոսի մոտ, որը Լուկուլլոսի արշավանքներին վերաբերող տեղեկությունները քաղել էր, գլխավորապես, փոքրասիական հելլենական որևէ աղբյուրից, թերևս, ինչպես են-թադրում է Ռեյնաքը[21], Նիկողայոս Դամասկացու պատմությունից։

Վերև մեջ բերված մյուս համառոտ վկայությունները համապատասխանում են հռոմեական ավանդությանը։ Փրոնտինուսի վկայությունները քաղված են, անտարակույս, Լիվիուսից։ Փրոնտինուսը ևս, հետևելով Լիվիուսին՝ սխալ տեղեկություն է հաղորդում, որ իբր թե Տիգրանի հետ միասին Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցել էր նաև Միհրդատ Եվպատորը։ Նմանապես և Մեմնոնի ամփոփ նկարագրությունը համաձայնում է ըստ էության ավելի շուտ հռոմեական ավանդության և Պլուտարքոսի վկայությունների հետ, քան Ապպիանոսի։

Տիգրանակերտի ճակատամարտի ամբողջ ընթացքը, ինչպես և Պլուտարքոսի ու Ապպիանոսի վերոհիշյալ ընդարձակ հաղորդագրությունները, վերջերս մանրամասն քննված ու հետազոտված են Լուկուլլոսի արշավանքներին նվիրված էքհարդի աշխատության մեջ[22]։ Էքհարդը, համաձայն չլինելով Դրումանի և Ռեյնաքի հետ, որոնք աշխատել էին լրացնել ու ճշտել Պլուտարքոսի հաղորդագրությունը Ապպիանոսի վկայությունների օգնությամբ, արժա-

[21] Տե՛ս Mithridate Eupator, էջ 443—449։

[22] Տե՛ս Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, 1, էջ 100—110։

նահավատ է ընդունում միայն Պլուտարքոսի տված նկարագրությունը։ Ճակատամարտի ընթացքը նա, հետևելով Պլուտարքոսին, հետևյալ կերպ է լուսաբանում։

Գետն անցնելուց հետո, ինչպես ասված է Պլուտարքոսի վերոհիշյալ հաղորդագրության մեջ՝ Լուկուլլոսը հրամայել էր թրակացի ու գալատացի հեծելագունդին, **որ նա կողքից** հարձակվի Թշնամու զրահավոր հեծելազորի վրա, որը գտնվում էր աջ թեվում։ Իսկ ինքը իր հետ վերցնելով երկու վաշտի հետևազոր՝ շտապել էր գրավել մոտակա բլուրը, որը խիստ կարևոր մի դիրք էր Տիգրանի զորքերի Թիկունքում։ Այստեղից նա ինքը ևս իսկույն հարձակվել էր զրահավոր հեծելազորի վրա ետևից։ Եվ ծանրաշարժ այս ձիավորները, չկարողանալով դիմանալ հռոմայեցիների հարձակմանը Թիկունքից ու աջ թևից՝ անկարգ կերպով մատնվել էին փախուստի և իրենց ձիերի հետ միասին ընկել էին խռնված ու խուճապի մատնված հետևակ զորքի վրա։ Այսպիսով Տիգրանի ամբողջ զորքը պարտություն էր կրել առանց ճակատամարտ տալու։ Ապպիանոսի տված հակառակ տեղեկություններն էքհարդը համարում է խառնաշփոթ ու անարժեք և ենթարկում է ամենախիստ քննադատության։

Ճակատամարտի Ապպիանոսի տված նկարագրությունը, ինչպես տեսանք, բոլորովին տարբեր է։ Համաձայն նրա տեղեկությունների Լուկուլլոսը ճակատամարտի սկզբում հրամայել էր իր հեծելազորին նեղել Թշնամուն ճակատի կողմից և, կեղծորեն ետ փախչելով՝ նրան հեռացնել ու ցրել։ Իսկ ինքը գաղտնաբար անցել էր իր հետևազորի հետ Թշնամու Թիկունքը և բարձրացել մոտակա բլուրը, որի ստորոտում գտնվում էր Թշնամու գրաստագումակը։ Հարձակվելով այդտեղից գրաստագումակի վրա՝ նա փախուստի էր մատնել սրան և ձգել հետևազորի վրա, որը բոլորովին բարոյալքված ընկել էր իր հերթին հեծելազորի վրա։ Այսպիսով Տիգրանի ամբողջ զորքը պարտվել էր առանց մարտի բռնվելու։

Կարելի՞ է արդյոք Ապպիանոսի այս նկարագրությունը մերժել, համարելով ճշգրիտ ու արժանահավատ հռոմեական միայն ավանդություն։

Իմ կարծիքով, իզուր է էքհարդը ենթադրում, որ Պլուտարքոսի նկարագրությունը պարզ է ու անառարկելի, իսկ Ապպիանոսինը՝ անհարիր է և լի է հակասություններով։ Ընդհակառակը, Ապպիանոսի անպաճուճ ու ավելի բնական հաղորդագրությունն արժանի է ավելի մեծ ուշադրության, քան թատերային միջադեպերով համեմված Պլուտարքոսի նկարագրությունը։

Միանգամայն ըստ իս հավատալի է ու հնարավոր, որ Լուկուլլոսը կարող էր, իրապես, Տիգրանին խաբելու համար նրա դեմ ճակատի կողմից ուղարկած լինել միմիայն իր արագաշարժ հեծելազորը, իսկ ինքը, վերցնելով հռոմեական ամբողջ հետևազորը, գեռ ռազմագաշտ չհասած՝ կարող էր անցած լինել Թշնամու Թիկունքը և հարձակված լինել այնտեղից գրաստագումակի վրա, ինչպես այդ վկայում է Ապպիանոսը։ Այս վկայությունն ավելի հավանական է թվում, քան Պլուտարքոսի տված տեղեկությունը, որ իբր Թե Լուկուլլոսը, մերկացրած սուրը ձեռին, գնացել էր ձեռնակռվի և աննկատելի կերպով անցել էր Թշնամու Թիկունքը։ Հավատալի՞ է միթե, որ Լուկուլլոսը, որն ուներ իր հետ երկու վաշտ հետևազոր, և որը գտնվում էր Թշնամուն դեմ առ դեմ՝ կարող էր Թաքուն կերպով գրավել բլուրը սրա Թիկունքում։ Եթե հռոմեական սկզբնաղբյուրները չեն հիշատակում Տիգրանի գրաստագումակը և Լուկուլլոսի ու հռոմեական ամբողջ հետևազորի հարձակումը գումակի վրա՝ այդ բացատրվում է, հավանորեն, նրանով, որ այդ գրոհը չէր կարող համարվել քաջարի և առանձնապես պատվաբեր մի գործ։

Լուկուլլոսի հաղթության բացառիկ ու առանձնահատուկ բնույթը մատնանշված է Սալլուստիուսի հատվածներից մեկում։ Միհրդատի՝ պարթևաց Թագավորին գրած նամակում, որ մանրամասն մեջ է բերված նրա մոտ՝ Տիգրանակերտի ճակատամարտին են վերաբերվում հետևյալ տողերը.

> «Որովհետև տեղի նեղվածությունը,—ասված է Միհրդատին վերագրված այդ նամակում,—զորքի բազմությանն արգելք էր հանդիսանում ճակատամարտ տալու՝ Տիգրանի անխոհեմությունը նրանք [հռոմայեցիները] ցուցադրում են իբրև հաղթություն»[23]։

Ռազմագաշտի այս նեղվածության առթիվ պետք է սակայն նկատի ունենալ, որ Տիգրանը, որն իր նոր մայրաքաղաքը կառուցել էր պաշտպանված ու դժվարամատչելի լեռնային տեղում՝ Տիգրանակերտի շրջակայքում չէր կարող, բնականաբար, ընտրել ավելի բաց ու ավելի արձակ տեղ։

Տիգրանի զորքերի կորուստների մասին հռոմեական հեղինակների տեղեկությունները հիմնապես հակասում են դարձյալ փոքրասիական չեզոք աղբյուրների վկայություններին։ Այդ կորուստների մասին, ինչպես վերև տեսանք, Պլուտարքոսը, հավանորեն, համաձայն Լուկուլլոսի պաշտոնական տեղեկագրի՝ տալիս

[23] Տե՛ս Sallust., IV, frgm. 69։

է միանգամայն սուտ ու չափազանցված թվեր։ Նրա ասելով՝ Տիգրանի հետևազորից կոտորվել էր ավելի քան 100.000 մարդ և հեծելազորից շատ քչերն էին աղատվել. իսկ հռոմայեցիներից վիրավորվել էին 100 մարդ և սպանվել 5 մարդ։ Ինչպես հայտնի է, նման սուտ թվերը սովորական էին նաև Սուլլայի պաշտոնական զեկուցագրերում։ Քերոնեայի 87 թվի ճակատամարտում պոնտական զորքերի կորուստը նա ևս ցույց էր տվել 60.000 մարդ, իսկ հռոմայեցիներինը՝ ընդամենը 14 մարդ։ Թե ի՛նչ արժեք ունեն հռոմեական զորավարների ինքնագործ ու սուտ հաշվետվությունները՝ այդ շատ լավ գիտեն բոլոր պատմագրիները։ Ուստի նրանք ևս հավատ չեն ընծայել վերոհիշյալ թվերին։

Ռեյնաքը և նրան հետևորդները՝ Գարագաշյանը, Դաղբաշյանը և ուրիշները՝ գերադասել են Օրոսիուսի տված տեղեկությունը[24], որի համաձայն սպանվածների թիվը հայ զորաբանակից ցույց է տրված ընդամենը 30.000 մարդ։ Սակայն այս տեղեկությունը ևս, որը հիմնված է զարձյալ հռոմեական աղբյուրների, հավանորեն, Տիտուս Լիվիուսի հաղորդագրության վրա՝ վերոհիշյալ իր ուսումնասիրության մեջ չի ընդունում էքհարդը։ Սրա կարծիքով, իրականին կարող է համապատասխան լինել ավելի շուտ Փլեգոն Տրալլացու վկայությունը, որի մոտ Տիգրանի զորքի ամբողջ կորուստը ցույց է տրված մոտավորապես 5000 մարդ[25]։ Այս փոքր թիվն ինձ ևս ավելի ստույգ ու գերադասելի է թվում, որովհետև Փլեգոնի տեղեկությունը ակներևաբար քաղված է փոքրասիական չեզոք աղբյուրից, իսկ այդ աղբյուրները, ինչպես մեր այս ուսումնասիրության ընթացքում տեսանք, ավելի արժանահավատ են, քան հռոմեական կողմնապահ ու աչառու երկերը։

Բացի վերոհիշյալ թվերից հռոմեական աղբյուրներում հնարովի են, անտարակույս, և սուտ, ինչպես այդ միանգամայն ճիշտ մատնանշել է Մոմզենը[26], նաև Տիգրանի արքայական խույրի վերաբերյալ պատմությունը։

Այդ միջադեպը, ինչպես վերև տեսանք, տարբեր կերպ է պատմված Մեմնոնի, Պլուտարքոսի և Փրոնտինուսի վկայություններում[27]։ Մեմնոնը, որն իր պատմության այս մասում օգտվել էր, հավանորեն, հռոմեական որևէ աղբյուրից՝ պատմում է, որ Տիգրանն արքայական իր խույրն ու ապարոշը տվել էր որդուն և ինքը փախել էր իր ամրոցներից մեկը։ Պլուտարքոսն ավելացնում է դրան, որ որդին՝ չհամարձակվելով իր գլխին դնել խույրը, տվել էր պահելու իր ամենահավատարիմ ծառային, և սրան արքայական խույրի հետ միասին գերի էր վերցրել Լուկուլլոսը։ Իսկ Փրոնտինուսը, ընդհակառակը, վկայում է, որ ո՛չ միայն Տիգրանը, այլև մյուս թագավորները ևս դեն էին գցել իրենց պատվանշանները և փախել։

Աղբյուրների այս տարաձայնություններն իրենք հենց հավանական մի նշան են մեջ բերված վկայությունների անհավատության։ Եվ միանգամայն իրավացի է ըստ իս Մոմզենը, որն այս միջադեպը, ինչպես և վերոհիշյալ շինծու թվերը, թխված ու հերյուրված է համարում Սուլլայի հատուկ ոճով։

Տիգրանի կրած պարտությունը Տիգրանակերտի մոտ, ինչպես երևում է մեր այս քննությունից, խիստ չափազանցված է թե հռոմեական աղբյուրներում և թե պատմագիտական նորագույն երկերում։ Այս ճակատամարտը, իրապես, ո՛չ թե իսկական արյունահեղ դիմամարտ էր, այլ խուճապ և փախուստ առանց կռվի։

Խիստ ծանր էին սակայն այս պարտության հետևանքները Տիգրանի նորաստեղծ աշխարհակալության համար։ Պարտության գլխավոր հետևանքը եղավ, ինչպես կտեսնենք, Տիգրանակերտ քաղաքի կորուստը և հայկական մեծ պետության քայքայումը։

[24] Տե՛ս Orosius, Historia adversus paganos, VI, 3, 6, նաև Reinach Mithridate Eupator, էջ 362։ Գարագաշյան, Քննական պատմություն, II էջ 145, Դաղբաշյան, Սուտ Հայոց պատմություն, էջ 93 և ուրիշ.։

[25] Տե՛ս fr. 12, Müller, Fr. Hist Gr., III, էջ 606։

[26] Տե՛ս „Римская история", III, էջ 57։

[27] Խույրի վերաբերյալ միջադեպը չի հիշատակված Ապպիանոսի մոտ, որը պատմության իր այս մասում օգտվել էր, ինչպես ասացինք, փոքրասիական չեզոք աղբյուրից։

13. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՌՈՒՄԸ ԵՎ ՏԻԳՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Հոկտեմբերի 6-ի մեծ ճակատամարտից և Տիգրանի զորաբանակի պարտությունից հետո Լուկուլլոսը, ապահոված լինելով իր թիկունքը՝ կարող էր Տիգրանակերտի պաշարումն աներկյուղ ու համարձակ շարունակել։

Այս քաղաքը, որը Մանկայոսի առաջնորդությամբ մոտ հինգ ամիս արիաբար դիմադրել էր հռոմայեցիներին՝ այլևս չէր կարող որևէ օգնություն ակնկալել արքայական բանակից։ Չնայած դրան, նա անձնատուր չեղավ և թշնամու դեմ շարունակեց համառորեն կռվել։ Եվ եթե հռոմայեցիներին, այնուամենայնիվ, հաջողվեց շուտով Տիգրանակերտը գրավել առանց արյունահեղ ընդհարումների ու մեծ կորուստների՝ դրա պատճառը, ինչպես միաձայն վկայում են Ապպիանոսը, Պլուտարքոսը, Մեմնոնը և Կասսիուս Դիոնը, հույն վարձկան զորքերի ապստամբությունն էր ու դավաճանությունը։

Մեջ բերված այս չորս կարևորագույն աղբյուրները թեև տարբեր կերպ են պատմում այդ մասին, սակայն նրանցից երեքը՝ Ապպիանոսը, Պլուտարքոսը և Դիոնը՝ հիմնականում գրեթե իրար չեն հակասում։

Ամենից ընդարձակ են Ապպիանոսի հաղորդած տեղեկությունները։ Նրա պատմելով՝ Տիգրանի պարտությունից հետո Մանկայոսն այլևս վստահություն չուներ հելլենական վարձկան զինվորների վրա և հրամայել էր նրանց զինաթափ անել։ Սակայն սրանք, ապստամբելով իրենց առաջնորդի դեմ՝ գրավել էին Տիգրանակերտի պարսպի երկու աշտարակի միջև եղող մասը և, բանակցության մեջ մտնելով հռոմայեցիների հետ՝ ներս էին թողել նրանց ու մատնել քաղաքը թշնամուն։ Պլուտարքոսը միայն հիշատակում է, որ Լուկուլլոսը կարողացել էր քաղաքը վերցնել շնորհիվ հույների ապստամբության։ Կասսիուս Դիոնն այդ ապստամբությունը վերագրում է քաղաքի օտար բնակչության, հատկապես, Կիլիկիայից գաղթեցրած հույներին, որոնք ներս էին մտցրել գիշերով հռոմայեցիներին և մատնել քաղաքը կողոպուտի։ Իսկ Մեմնոնը, լռելով հույն վարձկանների դավաճանության մասին՝ Տիգրանակերտի անկման համար պատասխանատու է համարում Միհրդատի զորավարներին, որոնք գտնվում էին այնտեղ և քաղաքը դավաճանաբար մատնել էին Լուկուլլոսին, գլխավորապես, իրենց անձնական փրկության համար։

Ավելորդ չեմ համարում մեջ բերել բոլոր վերոհիշյալ վկայությունները հունարենից բառացի թարգմանությամբ։

1. Ապպիանոս, Միհրդատականք, գլ. 86՝

«Մանկայոսը, որը տեսել էր Տիգրանակերտից տեղի ունեցած պարտությունը՝ կասկածելով հելլենների վրա, որոնք ծառայում էին նրա մոտ վարձով, բոլորին զինաթափ արեց։ Սրանք, վախենալով, որ իրենք կկայանավորվեն, բրերով զինված միաբին գնացին և բանակ դրին բացօթյա կում։ Իսկ երբ Մանկայոսը նրանց դեմ զինված բարբարոսներ ուղարկեց՝ նրանք, վերնազգեստները վահանների փոխարեն կապկպելով ձախ ձեռքերին՝ խիզախաբար հարձակվեցին դրանց վրա։ Եվ ում որ սպանում էին՝ իսկույն նրա զենքերը բաժանում էին իրար մեջ։ Իսկ երբ նրանք իրենց, որքան կարող էին, բավարարեցին՝ գրավեցին երկու աշտարակների միջև եղող պարսպի տարածությունը, կանչեցին դրսից հռոմայեցիներին և ներս թողին վեր եկողներին։ Այսպես առնվեց Տիգրանակերտը և նրա մեծ հարստությունները մատնվեցին կողոպուտի»։

2. Պլուտարքոս, Լուկուլ., 29՝

«Իսկ Տիգրանակերտ քաղաքում հելլեններն ապստամբել էին բարբարոսների դեմ և մատնել էին քաղաքը Լուկուլլոսին. ուստի և սա հարձակվեց նրա վրա և վերցրեց»։

3. Մեմնոն, գլ. 57՝

«Բայց Լուկուլլոսը, վերադառնալով Տիգրանակերտ՝ պաշարեց քաղաքն ավելի համարձակորեն։ Իսկ քաղաքում գտնվող Միհրդատի զորավարները, որ բոլորովին հուսահատվել էին՝ իրենց փրկելու համար հանձնեցին քաղաքը Լուկուլլոսին»։

4. Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 2, 3՝

«Բայց որովհետև հայերի դեմ ապստամբել էին օտարական բնակիչները՝ նրանցից Տիգրանակերտն առնվեց։ Ապստամբների մեծագույն մասը կիլիկեցիներ էին, որոնց բռնի կերպով գաղթեցրել էին այստեղ, և նրանք գիշերը ներս թողին հռոմայեցիներին։ Իսկ այնուհետև ամեն ինչ կողոպուտի մատնվեց բացի սրանց ունեցվածքից»։

Մեջ բերված այս վկայություններից, ինչպես տեսնում ենք, միայն երրորդը Տիգրանակերտի անկումը, հակառակ մյուս վկայություններին վերագրում է Միհրդատի զորավարների դավաճանության: «Միհրդատի զորավարներ» ասելով Մեմնոնը, հավանորեն, հասկանում է Միհրդատի նախկին զորավարներին, որոնք Պոնտական թագավորության նվաճվելուց հետո եկել էին, ըստ երևույթին, Տիգրանի մոտ և ստանձնել էին Տիգրանակերտում բարձր պաշտոններ: Ռեչնաքը ենթադրում է, որ Միհրդատի զորավարները հույն և կիլիկեցի զորքի հրամանատարներն էին[1]: Սակայն պատմագիտական գրեթե բոլոր մյուս երկերում Մեմնոնի վկայությունն անտես է արված և ավելի վստահելի ու արժանահավատ են համարված Ապպիանոսը, Պլուտարքոսը և Կասսիուս Դիոնը, որոնք համերաշխաբար վկայում են, որ քաղաքը հռոմայեցիներին մատնած են եղել հույն վարձկան զինվորները և կիլիկիայից գաղթեցրած նորաբնակները:

Հռոմայեցիները, մտնելով Տիգրանակերտ՝ անխնա կողոպտեցին քաղաքը: Պլուտարքոսի պատմելով[2]

«Լուկուլլոսը ինքը գրավել էր նրա մեջ գտնվող գանձերը, և քաղաքը, որը բացի այլ հարստություններից ուներ նաև ութ հազար տաղանդ դրամով, տվել էր կողոպտելու զինվորներին: Բացի այդ, պատերազմական ավարից ևս նա տվել էր նրանցից ամեն մեկին ութհարյուրական դրաքմե»:

Ութ հազար տաղանդն արծաթ դրամով հավասար կլինի, ինչպես երևում է գերմանական գիտնական Հուլշի հաշվումներից[3], մոտ 34 միլիոն գերմանական ոսկի մարկի, այսինքն՝ մոտ 17 միլիոն ոսկի ռուբլու, իսկ ութ հարյուր դրաքմեն կամ արծաթ դենարն այժմյան դրամով հավասար է մոտ 560 ոսկի մարկի կամ 280 ոսկի ռուբլու: Այս մեծ գումարները ցույց են տալիս, որ Տիգրանակերտը, չնայած որ նոր էր հիմնված, ուներ իր մեջ անչափ մեծ հարստություններ:

Տիգրանակերտում, ինչպես վկայում է դարձյալ Պլուտարքոսը[4], իր նորակառույց թատրոնի բացման համար Տիգրանը հավաքած է եղել բազմաթիվ հույն դերասաններ: Սրանք այժմ օգտագործվեցին Լուկուլլոսի հաղթության նվիրված հանդեսների և թատերախաղերի համար:

Տիգրանակերտի անկումով մահացու հարված ստացավ Տիգրանի ծրագրած ու սկսած այն առաջադիմական մեծ գործը, որի նպատակն էր զարգացնել հետամնաց Հայաստանում հելլենական քաղաքային կուլտուրան և հելլենիստական քաղաքակրթությունը: Լուկուլլոսն իրենց հայրենի քաղաքներն ու երկրներն ուղարկեց հույներին ու օտարականներին, որոնց, ինչպես վերև տեսանք, վերաբնակեցրել էր Տիգրանն իր նորակառույց մայրաքաղաքում:

Այդ մասին ունեն տեղեկություններ Պլուտարքոսը և Ստրաբոնը:

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, 29՝

«Հելլեններին նա [Լուկուլլոսը] ուղարկեց իրենց հայրենիքը, տալով նրանց ճանապարհածախս. նույնպես վարվեց և բարբարոսների հետ, որոնց բռնի կերպով բնակեցրել էին այստեղ: Այսպիսով թեև այդ մեկ քաղաքը քանդվեց՝ բնակչություն ստացան բազմաթիվ այլ քաղաքներ, որոնք նորից հյուրընկալեցին իրենց նախկին բնակիչներին: Եվ Լուկուլլոսը նրանցից մեծարվում էր իբրև բարեգործ ու վերահաստատող»:

2. Ստրաբոն, XI, 14, 15 (532)՝

«Երբ Տիգրանը զորեղացավ մինչ այդ աստիճան՝ նա հիմնեց Իբերիայի (՞) մոտ, նրա և Եփրատի ափին գտնվող Զևգմայի միջև՝ մի քաղաք, որն անվանեց Տիգրանակերտ և այդտեղ բերեց իր ավերած 12 հելլենական քաղաքների բնակչությունը: Սակայն շուտով վրա հասավ Լուկուլլոսը, որը պատերազմում էր Միհրդատի դեմ և նրա բնակիչներին արձակեց իրենց հայրենիքը: Իսկ քաղաքը, որը շինված էր կիսով չափ՝ նա գրոհ տալով քանդեց և նրա տեղ թողեց միայն մի փոքր գյուղ»:

3. Ստրաբոն, XII, 2, 9 (539)՝

«Վատ վարվեց Տիգրան արմենը մաժաքցիների հետ, երբ նա արշավել էր Կապադովկիա: Նա ամբողջ բնակչությունը քշեց տարավ Միջագետք և նրանց մեծ մասամբ բնակեցրեց Տիգրանակերտում: Սակայն հետագայում, Տիգրանակերտի նվաճումից հետո, ո՛վ որ կարող էր՝ վերադարձավ հայրենիք»:

Մեջ բերված վկայություններից ուշադրության արժանի է,

[1] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 363:

[2] Տե՛ս Լուկուլ., 29:

[3] Տե՛ս Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin, 1882, էջ 297—299 և 711:

[4] Տե՛ս Լուկուլ., 29:

մանավանդ, Ստրաբոնի հաղորդած առաջին վկայությունը (վկ. 2), որի մեջ մատնանշված է, որ Լուկուլլոսը քանդել էր Տիգրանակերտը և տեղը թողել էր միայն մի փոքր գյուղ։ Այս տեղեկությունը չպետք է ըստ իս հասկանալ տառացիորեն։ Տիգրանակերտը, ինչպես հայտնի է մատենագրական հետագա վկայություններից[5], նշանավոր բերդաքաղաք է համարվել և բազմամարդ մեծ կենտրոն է եղել նաև Լուկուլլոսի արշավանքից հետո։ Նրա բարձր ու անմատչելի պարիսպները հիշատակված են, օրինակ, Տակիտոսի «Տարեգրություններ»-ում[6]։ Դժվար չէ, ուրեմն, այդ վկայություններից եզրակացնել, որ 69 թվի աշնանը՝ Տիգրանակերտի առման ժամանակ, հավանորեն, քանդված չեն եղել ո՛չ նրա պարիսպները և ո՛չ էլ ամրությունները։ Ստրաբոնի վերոհիշյալ վկայությունը կարելի է թերևս հասկանալ այն իմաստով, որ հելլենների և այլ օտարականների ցրմամբ Տիգրանակերտը տարրալուծվել էր և կործանվել իբրև հելլենիստական քաղաք-«պոլիս», այսինքն՝ իբրև քաղաքային ինքնավար կազմակերպություն։ Այդ հոյակապ քաղաքը, որ Առաջավոր Ասիայի ամենամեծ հելլենիստական քաղաքների՝ Սելևկիայի ու Անտիոքի, մրցակիցն էր լինելու, կորցնելով այժմ իր օտար բնակչության մեծագույն մասը, նաև քաղաքային իր հատուկ հասարակարգը և կազմակերպությունը՝ դառնում էր, բնականաբար, մի փոքր գյուղ կամ ավան։ Ինչպես հայտնի է, գյուղ կամ ավան էին համարում և անվանում նաև հելլենիստական Սելևկիա քաղաք-«պոլիս»-ի մոտ գրտնվող Տիգրոնը, որը պարթևների գահանիստ կենտրոնն էր։

Տիգրանի աշխարհակալ մեծ պետության համար Լուկուլլոսի հաղթությունը և Տիգրանակերտի առումն ունեցան քաղաքական խիստ ծանր հետևանքներ։ Տիգրանի նվաճած բոլոր երկրները, որոնք Տավրոսյան լեռնաշղթայից և Տիգրիս գետից դեպի հարավ էին գտնվում՝ Հյուսիսային Միջագետքը, Կորդուքը, Կոմագենը, Ասորիքը և Արևելյան Կիլիկիան՝ անջատվեցին Մեծ Հայաստանից և ընդունեցին Հռոմի գերիշխանությունը։ Միայն Միջագետքի մի մասը և Մծբին քաղաքը մնացին առժամանակ Տիգրանի եղբոր՝ Գուրասի իշխանության տակ։

Տիգրանակերտի անկումից հետո Լուկուլլոսի մոտ եկան, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[7], և նրան հնազանդվեցին արաբների ցեղապետները։ Կասսիուս Դիոնի մոտ[8] այդ ցեղապետներից ամենահզորն անվանված է Ալքաուդոնիոս, որը նույն է, անտարակույս, Ստրաբոնի հիշատակած Հռամբայցոց վաչկատուն ցեղի համանուն Ալքայդամնոս ցեղապետի հետ[9]։ Լուկուլլոսին հպատակություն հայտնեց նաև Կոմագենի Անտիոքոս իշխանը, որը Սելևկյան Անտիոքոս Գրիպոսի թոռն էր։ Լուկուլլոսը սրան թագավոր կարգեց Կոմագենի։ Նմանապես նաև Սելևկյան Անտիոքոս Ասիացուն, որը Բագդատես հայ կուսակալի հեռանալուց հետո վերադարձել էր Անտիոք՝ Լուկուլլոսը և Հռոմեական ծերակույտը ճանաչեցին Ասորիքի թագավոր։ Այս Անտիոքոսը որդին էր Ասորիքի նախկին թագավոր Անտիոքոս Եվսեբեսի և Սելենե-Կլեոպատրայի, որն, ըստ Ստրաբոնի[10], բանտ էր դրված Սելևկիա ամրոցում, իսկ ապա՝ հայերի նահանջի ժամանակ Ասորիքից՝ սպանվել էր Տիգրանի հրամանով։

Տիգրանակերտի անկումից հետո, 69/68 թվին, Լուկուլլոսը և նրա զորքը ձմեռեցին Կորդուքում։ Մենք վերև արդեն տեսանք, որ Կորդուքը, ինչպես և Ծոփքը, դավաճանել էին Տիգրանին և գաղտնի կերպով համաձայնության էին եկել Ապպիոս Կլավդիոսի հետ ու անցել հռոմայեցիների կողմը։ Տիգրանը, որ դեռ Լուկուլլոսի արշավանքից առաջ տեղեկություն էր ստացել Կորդվաց Զարբիենոս թագավորի դավաճանության մասին՝ հրամայել էր նրան սրի անցկացնել ընտանիքի հետ միասին։ Հռոմեական զորքը կարողացավ այժմ հայերին թշնամացած այս երկրում ո՛չ միայն հանդիստ ու անհրկյուղ ձմեռել, այլև ստանալ պարենավորում և օգտվել այստեղ եղած հացի առատ պաշարներից։

Կորդուքում Լուկուլլոսը հանդիսավոր կերպով կատարեց իր դաշնակից Զարբիենոս թագավորի թաղումը և ի պատիվ նրան կառուցել տվեց շքեղ մի մահարձան։

Հռոմեական զորքի ձմեռման մասին Կորդուքում վերոհիշյալ տեղեկություններն ունի միմիայն Պլուտարքոսը, որի կարևոր այդ վկայությունները մեջ ենք բերում բառացի թարգմանությամբ։

Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ. 29՝

«Չէ՞ որ և արաբների թագավորները եկել էին նրա [Լուկուլլոսի] մոտ և հնազանդվել յուրայինների հետ միասին, նաև Ծոփքի ժողովուրդը հարել էր նրան, իսկ կորդվացիներին այնպես էր դեպի կրեն տրամադրել, որ նրանք ուզում

[5] Տե՛ս, օրինակ, Plinius, VI, 10 (հրատ. Littre, Paris, 1883)։
[6] Տե՛ս Tacitus, Annales, XV, 4։
[7] Տե՛ս Լուկուլ., 29։
[8] Տե՛ս գլ. 36, գլ. 2, 5։
[9] Տե՛ս Ստրաբոն, XVI, 2, 10 (753)։
[10] Տե՛ս XVI, 2, 3 (749)։

էին իրենց քաղաքները թողնել և ուղեկցել նրան երեխաների ու կանանց հետ միասին։ Նրանք այդ կամենում էին հետևյալ պատճառով։ Զարբիենոսը, Կորդվաց թագավորը, նեղվելով Տիգրանի բռնակալությունից, ծածկաբար, ինչպես ասում են, Ապպիոսի միջոցով լուկուլլոսի հետ բանակցություններ էր վարել դաշնակցության մասին։ Երբ այդ հայտնի եղավ՝ Զարբիենոսը սպանվեց և նրա հետ միասին սպանվեցին, նախքան հռոմայեցիների Հայաստան ներխուժելը, նաև նրա կինն ու երեխաները։ Այդ բանը լուկուլլոսը չէր մոռացել, ուստի և, գալով Կորդվաց երկիրը՝ նա կատարեց Զարբիենոսի թաղման ծեսը և, զարդարելով խարույկը զգեստներով, թագավորական ոսկեղենով և Տիգրանից առնված կողոպուտով՝ մոտեցավ ինքը խարույկին, վառեց և հանգուցյալի բարեկամների ու ընտանիքի անդամների հետ զոհ մատուցեց, անվանելով Զարբիենոսին իրեն ընկերակից և հռոմայեցիների դաշնակից։ Նա հրամայեց, բացի այդ, կանգնեցնել հանգուցյալին թանկարժեք մահարձան։ Զարբիենոսի արքունիքում գտել էին մեծ քանակությամբ ոսկի և արծաթ, իսկ պահեստներում կար երեք միլիոն մեդիմն ցորեն[11]։ Այսպիսով, և զինվորները հարստացան, և լուկուլլոսը զարմացավ, որ ինքը, մեկ դրամ անգամ չստանալով հասարակային գանձարանից, պատերազմը վարում էր միայն իր միջոցներով»։

Կորդուքում եղած ժամանակ լուկուլլոսը, ինչպես հաղորդում են Պլուտարքոսը, Եվտրոպիոսը և Ռուֆուսը[12], պատրաստվելիս է եղել պատերազմի ընդդեմ պարթևների։ Ինչպես վկայում է Պլուտարքոսը, նոր այս արշավանքին մասնակցելու համար նա հրամայել էր Պոնտոսում գտնվող իր Սորնատիոս տեղակալին, որ նա գա Կորդուք և միանա իրեն հռոմեական զորամասի հետ, որ ինքը թողել էր Պոնտոսում։ Սակայն, Պլուտարքոսի ասելով, այս արշավանքը գլուխ չէր եկել հռոմեական զորքի հակառակության ու ըմբոստության պատճառով։

Պարթևական արշավանքի մասին այս տեղեկությունները, որ չեն հիշատակված Մեմնոնի, Ապպիանոսի և Կասսիուս Դիոնի

[11] Երեք միլիոն մեդիմն ցորենը հավասար է այժմյան կշռով մոտ 120 միլիոն կիլոգր. կամ 120 հազար տոննի։

[12] Տե՛ս Պլուտարքոս, Լուկուլ., 30, Եվտրոպիոս, VI, 9 և Սեքստուս Ռուֆուս, գլ. 15։

մոտ, ստույգ և պատմական են ընդունել Ռեյնաքը, Ֆեռեռոն[13] և ուրիշները, սակայն միանգամայն արդարացի կերպով կասկածելի ու անվստահելի են համարել Մոմզենը և Էքհարդը[14]։ Ավելի քան անհավանական է, անշուշտ, որ Լուկուլլոսը հրամայած լիներ դուրս հանել Պոնտոսից հռոմեական պահապան զորքերը և, թողնելով իր թիկունքում Տիգրանին և Միհրդատին՝ ուզենար շարժվել դեպի Տիգրոն և սկսել մի նոր պատերազմ։ Ըստ երևույթին, վերոհիշյալ տեղեկությունը սարքովի մի հերյուրանք է, որի հեղինակը կարող է լինել Պլուտարքոսը։ Վերագրելով իր փառաբանած զորավարին նաև երրորդ պատերազմի նախապատրաստումը՝ Պլուտարքոսը, հավանորեն, կամեցել է ցույց տալ, որ Լուկուլլոսը ևս Աղեքսանդր Մակեդոնացու նման մեծ գործ կատարած կլիներ, եթե նրան խանգարած չլինեին հռոմեական զորքերը։

Մենք կտեսնենք ներքև, որ Լուկուլլոսը ո՛չ մի դիտավորություն չէր ունեցել պատերազմելու պարթևների դեմ, այլ, ընդհակառակը, ուզեցել էր, իր թիկունքն ապահովելու համար, կնքել նրանց հետ բարեկամական դաշինք։

[13] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 366 և Ферреро, Величие и падение Рима, 1, էջ 190։

[14] Տե՛ս Моммсен, Римская история, III, էջ 61 և Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 2, էջ 195։

14. 68 ԹՎԻ ԿՈՒՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ

Տիգրանակերտի մոտ կրած ծանր պարտությունից հետո՝ Տիգրանը և նրա անձնապահ հեծելազունդը կարողացան դուրս գալ մարտադաշտից և փախան ու պատսպարվեցին մոտակա մի ամրոցում։

Մեծ էին ու անսահման հուսահատությունը և լքումը հայկական արքունիքում։ Տիգրանի լայնածավալ, ծովից ծով տարածվող պետությունը, որ նա մոտ քսանհինգ տարվա ընթացքում մեծ դժվարությամբ ի մի էր համախմբել՝ այժմ արդեն կիսով չափ քանդված էր։ Թագավորների թագավորի ու Հայաստանի դեմ շուտով ոտքի կարող էին ելնել բոլոր թշնամիները և, առաջին հերթին, պարթևական թագավորությունը, որը Տիգրանը հիմնապես քայքայել և նվաստացրել էր։

Վհատության այս ծանր ժամին, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[1], Միհրդատ Եվպատորը, որն իր հեծելազորով դեռ նոր էր գալիս դեպի Հակատատեղին, պատահելով ճանապարհին փախստականների և վիրավորների խմբերին՝ լսեց Տիգրանի պարտության մասին և շտապեց գնալ նրա մոտ։ Միհրդատը Տիգրանին քաջալերեց և նրան հուսադրեց ապագայի նկատմամբ[2], և այնուհետև նրանք սկսեցին եռանդուն կերպով պատրաստվել նոր պատերազմի։ Համաձայն Մեմնոնի և Ապպիանոսի վկայություններին[3] Տիգրանն ուշադրության առավ Միհրդատի մեծ փորձառությունը, որ նա ձեռք էր բերել հռոմեական պատերազմներում, և նրան հանձնարարեց թե առաջիկա պատերազմի

---

1 Տե՛ս Լուկուլ., 29 համեմատե նաև Մեմնոն, գլ. 58։

2 Եվրոպական գիտնականները՝ Մոմզենը, Ռեյնաքը և ուրիշները (Моммсен, Римская история, III, էջ 58 և Reinach, Mithridate Eupator, էջ 363), նկարագրելով Միհրդատի ու Տիգրանի այս հանդիպումը՝ նշում են Տիգրանի անարիությունն ու փոքրոգությունը։ Այդ նախատինքներն անհիմն են ու կամայական և չեն համապատասխանում սկզբնաղբյուրների տված տեղեկություններին։

3 Մեմնոն, գլ. 58 և Ապպ., Միհրդ., գլ. 87։

նախապատրաստումը և թե, ընդհանրապես, ռազմական գործերի ղեկավարությունը։

Արդ՝ Միհրդատը, որն այժմ Տիգրանի ամենամոտ խորհրդատուն էր՝ աշխատեց, ամենից առաջ, հաշտեցնել իր փեսային նրա ոխերիմ թշնամիների՝ պարթևների հետ։ 70/69 թվին վախճանվել էր պարթևների Սանատրուկ թագավորը և նրան հաջորդել էր Հրահատ Գ-ն (70/69—57 թ. մեր թվ. առ.)։ Տիգրանը սրա մոտ ուղարկեց, Միհրդատի խորհուրդով, դեսպաններ, համաձայնեց ղիջել նրան բոլոր երկրները, որ ինքն առել էր պարթևներից՝ Միջագետքը, Ադիաբենը և «մեծ հովիտները»,—հավանորեն Ստրաբոնի հիշատակած «յոթանասուն հովիտները»[4],—և խնդրեց միանալ իր հետ ընդդեմ հռոմայեցիների[5]։ Դեսպանները զգուշացրին Հրահատին, որ եթե հռոմայեցիները Տիգրանին հաղթեն՝ նրանք այնուհետև պատերազմ կսկսեն նաև պարթևների դեմ[6]։

Այս բանակցությունների առնչությամբ Սալլուստիուսի մոտ բերված է Միհրդատի նամակը[7] Հրահատ Գ-ին, որը թեև, իհարկե, վավերական չէ, սակայն այնուամենայնիվ հետաքրքրական է, որովհետև արտացոլում է իր մեջ քաղաքական տիրող տրամադրությունները և հարաբերությունները։ Այդ նամակի մեջ Միհրդատը նկարագրում է հռոմայեցիների անզուսպ ու անկասելի առաջխաղացումը դեպի Արևելք, նրանց մեծ կռիվներն իր հետ, նվաճումների ու ավազակային կողոպուտների նրանց անհագ ծարավը, որին անխուսափելիորեն զոհ էին դառնալու նաև պարթևները, և աշխատում է Հրահատին համոզել, որ նա իրեն ու Տիգրանի հետ միանա ընդդեմ ընդհանուր թշնամու։

Պատերազմող կողմերի համար պարթևների բռնելիք դիրքն ուներ, անշուշտ, մեծ կարևորություն։ Ուստի նաև Լուկուլլոսը, լուր ստանալով հայերի բանակցությունների մասին պարթևների հետ՝ ուղարկեց Հրահատ Գ-ի մոտ իր նոր դաշնակիցներին և աշխատեց նրան գրավել հռոմայեցիների կողմը։ Լուկուլլոսը, ինչպես հաղորդում է Դիոնը[8], նպաստավոր խոստումներ տվեց Հրահատին և, հիշեցնելով նրան Միհրդատ Բ-ի 92 թվի բարեկամական համաձայնությունը Սուլլայի հետ, պահանջեց կամ իր հետ դաշնա-

---

4 Տե՛ս Ստրաբոն, XI, 14, 15։

5 Տե՛ս Մեմնոն, գլ. 58, Ապպիանոս, Միհրդատ., գլ. 87։

6 Տե՛ս Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 1, 1—2։

7 Սալլուստիուս, IV, frg. 20, Leipzig, 1856։

8 Տե՛ս գք. 36, գլ. 3, 1։

կից լինել և կամ չեզոք մնալ ու ամենևին չմասնակցել հռոմեական-հայկական պատերազմին[9]։

Խորամանկ պարթևը չներժեց Տիգրանի ու Միհրդատի առաջարկը, սակայն միևնույն ժամանակ Լուկուլլոսին պատասխան տվեց, որ նրա հետ պատրաստ է կնքելու բարեկամական դաշինք։ Շուտով Լուկուլլոսը դաշնագրության կնքման համար Տիգրոն ուղարկեց իր Սեքստիլիուս տեղակալին։ Բայց այս վերջինը, որն ավելի զինվորական էր, քան դիվանագետ՝ կասկածներ առաջացրեց, որ եկել է, ըստ երևույթին, իբրև լրտես և աշխատում է ծանոթանալ պարթևական երկրի ու, գլխավորապես, նրա ռազմական ուժերի հետ։ Հրահատ Գ-ն, կորցնելով վստահությունը դեպի հռոմայեցիները՝ այլևս չուզեց միանալ ու օգնել հռոմայեցիներին և վճռեց չեզոքություն պահպանել[10]։ Նրա կարծիքով, եթե պատերազմը երկու կողմերի միջև տեղի ունենար հավասար ուժերով ու առանց իր մասնակցության՝ այդ նպաստավոր ու շահավետ կլիներ հենց իր անվտանգության համար։

Պարթևների թագավորի այս անակնկալ որոշումն ընդունվեց Հայաստանում մեծ գոհունակությամբ։ Տիգրանն այժմ կարող էր որոշ չափով հույս ունենալ, որ առաջիկա պատերազմի ընթացքում նրա թիկունքը չէր ենթարկվի հարձակման պարթևների կողմից։

69/68 թվի ամբողջ ձմեռը Տիգրանը և Միհրդատը շտապ կերպով պատերազմի պատրաստություններ էին տեսնում։ Նրանք շրջում էին, ինչպես վկայում է Ապպիանոսը[11], ամբողջ երկրում և հավաքում էին նոր զորք, որի ղեկավարությունը Տիգրանը հանձնել էր հմուտ ու փորձված իր աներոջը։ Նրանք պատրաստել էին տալիս զենքեր և ռազմապիտույքներ և մթերում էին հարմար ու ամուր տեղերում ցորենի ու պարենի պաշարներ։

Ապպիանոսի ասելով՝ սկզբում Միհրդատը հրամայել էր զինվորագրել բոլոր երիտասարդ հայերին, բայց հետո զինվորության համար նրանցից ընտրել էր ամենաուժեղներին։ Հռոմեական զորքի ձևով նա բաժանել էր նոր բանակը ջոկատների ու վաշտերի և հանձնարարել էր իր հետ եկած պոնտական զինվորականներին, որ այդ բանակը վարժեցնեն ու մարզեն հռոմեական լեգեոնների նմանությամբ[12]։ Նախկին պատերազմների փորձը

[9] Տե՛ս Ապպիանոս, Միհրդատ., 87։

[10] Տե՛ս Դիոն, գր. 36, գլ. 3, 2—3։

[11] Միհրդատականք, գլ. 87։

[12] Տե՛ս Ապպիանոս, Միհրդ., 87 և Փլեգոն (Fragm. Hist. Gr. III, էջ 606)։ Փլեգոնի մոտ հայկական բանակի ուսուցումն ըստ նմանության հռոմեական զորքի սխալմամբ մատնանշված է Տիգրանակերտի ճակատամարտից առաջ։

համոզել էր նրան, որ արևելյան զորքերի մեծ բազմությունը ո՛չ միայն անօգուտ է, այլև արգելք է հանդիսանում ռազմունակ զորամասերի մարտական գործողություններին։

Տիգրանի նոր զորաբանակի մեջ բացի հայերից հիշատակված են[13] նմանապես դաշնակից իբերները, մարդերը և, հատկապես, նաև մեդացիները, որոնք կռվում էին Ատրպատականի Միհրդատ թագավորի առաջնորդությամբ, որը հայոց թագավորի փեսան էր ու հավատարիմ վասսալը։

Տիգրանի ու Միհրդատի հավաքած զորքի թիվն Ապպիանոսի մոտ[14] ցույց է տրված ավելի քան հարյուր հազար՝ յոթանասուն հազար հետևազոր և այս թվի կեսի չափ հեծելազոր։ Էքհարդի կարծիքով՝ թեև Ապպիանոսի մոտ այս զորաթվերը նախորդ տարվանից պակաս են ցույց տրված, սակայն պետք է համարվեն դարձյալ չափազանցված[15]։

68 թվի հռոմեական-հայկական պատերազմը Մոմզենը, ինչպես նաև Ռեյնաքը բնորոշել են իբրև ազգային և կրոնական պատերազմ միացյալ Արևելքի ընդդեմ Արևմուտքի[16]։

> «Կաբինետային պատերազմը,— ասում է Մոմզենը,— դառնալու էր այժմ ազգային ասիական պատերազմ։ Ասիայի թագավորները և ժողովուրդները միանալու էին ընդդեմ ամենազոր ու հանդուգն արևմտյան նվաճողների։ ...Այս պատերազմը դժվար չէր ներկայացնել իբրև ազգային կռիվ Արևելքի ընդդեմ Արևմուտքի, որովհետև պատերազմն ուներ հենց, իրապես, այդ բնույթը։ Կարելի էր հեշտությամբ նրան դարձնել նաև կրոնական և տարածել լուր, որ Լուկուլլոսի արշավանքի նպատակն է պարսկական Նանեայի կամ Անահիտի տաճարի գրավումը Ելիմայիսում կամ այժմյան Լուրիստանում։ Այդ տաճարն ամենից շատ մեծարված և հարուստ սրբավայրն էր Եփրատ գետի ամբողջ առափնյա շրջանում։ Ասիացիները խմբերով հավաքվում էին մոտից և հեռվից թագավորների դրոշների տակ, որոնք նրանց կանչել էին պաշտպանելու Արևելքը և նրա աստվածներին անաստված օտարերկրացիներից»։

[13] Համեմատ Պլուտ., Լուկուլ., 31։

[14] Միհրդատ., գլ. 87։

[15] Տե՛ս Klio, Bd. X, 2, էջ 197։

[16] Տե՛ս Моммсен, Римская история, III, էջ 58—60 և Reinach, Mithridate Eupator, էջ 365։

Մոմզենի այս կարծիքը, որ ընդունելի է համարվել և մեջ է բերվում նաև բազմաթիվ այլ երկերում[17] միայն վերջերս քննության է առնված ու մերժված էքհարդի աշխատության մեջ[18]։ Էքհարդն իրավացի կերպով մատնանշում է, որ 68 թվին հայերը պատերազմում էին հռոմայեցիների դեմ, գլխավորապես, իրենց սեփական ուժերով և ունեին իրենց հետ համեմատաբար ավելի քիչ դաշնակիցներ, քան 69 թվին։ Արևելքի մեծագույն մասը, օրինակ՝ Կորդուքը, Ծոփքը, արաբները, պարթևները՝ կամ անցել էին հռոմայեցիների կողմը, կամ մնացել էին չեզոք։ Բացի այդ, ասիացիների կրոնական միությունը ևս, ինչպես իրավամբ նշում է էքհարդը, թեև կարող է հարմար ու տեղին լինել Իսլամի սրբազան պատերազմների նկատմամբ, սակայն բնավ ո՛չ հին ժամանակների համար, երբ ամեն մի գավառ ուներ իր սեփական կրոնական կենտրոնավայրը։

Մոմզենի և Ռեյնաքի սխալ այդ դիտողությունները հիմնված են, հիրավի, բացառապես միայն մի վիճելի հատվածի վրա Կիկերոնի ճառից, որը թարգմանաբար մեջ եմ բերում առանց կրճատումների։

> «Երբ Լուկուլլոսը,—վկայում է Կիկերոնը[19],—մտավ իր զորքով նրա [Տիգրանի] թագավորությունը՝ շատ ցեղեր արդեն գրգռված էին մեր հրամանատարի դեմ։ Մեկ կողմից՝ ահով լցվել էին այն ցեղերը, որոնց երբեք հռոմեական ժողովուրդը մտադիր չի եղել անհանգստացնել կամ պատերազմի միջոցով նվաճել։ Իսկ մյուս կողմից՝ բարբարոս ցեղերի մեջ մի դաժան ու գրգռիչ կարծիք էր ստեղծվել և տարածվել, որ իբր թե մեր զորքը եկել էր այդ երկրները, որպեսզի կողոպտե ամենահարուստ ու ամենանվիրական սրբատեղին։ Այսպիսով բազմաթիվ և մեծ ցեղեր գրգռվել էին և նորից մատնվել ահ ու սարսափի»։

Կիկերոնի ճառի այս հատվածը, ինչպես տեսնում ենք, նշում է միմիայն այն ահ ու սարսափը, որը տիրել էր բազմաթիվ ցեղերին Լուկուլլոսի ո՛չ թե 68, այլ՝ ինչպես ճիշտ դիտել է էքհարդը[20] 69 թվի արշավանքի ժամանակ։ Նաև անկախ այս առարկությունից, ինձ թվում է, որ մեջ բերված հատվածի բո-

[17] *Տե՛ս, օրինակ,* Халатьянц, Очерк истории Армении, *էջ* 198, J. Morgan, Histoire du peuple armenien, *էջ 75, և ևս, Հայոց պատմություն, էջ 411։*

[18] *Տե՛ս* Klio, Bd. X, 2, *էջ 195—197։*

[19] *Տե՛ս* De imperio Cn. Pompeii, *գլ. 9, § 23։*

[20] *Տե՛ս* Klio, Bd. X, 2, *էջ 196։*

վանդակությունից ևս դժվար է եզրակացնել, որ իբր թե 68 թվի պատերազմը եղել էր կրոնական և ընդհանուր արևելյան։ Քաղաքների, տաճարների և հարստությունների կողոպտումը հռոմեական զորավարների ու զորքի կողմից, ինչպես հայտնի է, միշտ էլ եղել է հռոմեական արշավանքների հիմնական նպատակներից մեկը։ Ուստի ժողովուրդների գրգռմունքը և կրոնական հուզմունքը սովորական երևույթ էին բոլոր արշավանքների ժամանակ, և դրանից չէ կարելի, իհարկե, անել այն լուրջ հետևությունները, որ արված են 68 թվի պատերազմի նկատմամբ։

68 թվի գարնանը Լուկուլլոսը, տեսնելով, որ հույց թագավորը ո՛չ նոր ճակատամարտ է տալիս, ո՛չ էլ խնդրում է նրանից հաշտություն, պատերազմը վերսկսեց ինքը, հույս ունենալով, որ՝ ներս խուժելով ու ավերելով Հայաստանի հյուսիսային շրջանները և կամ սպառնալով Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքին՝ կհարկադրե հայերին տալ վճռական ճակատամարտ և կկնքե նրանց հետ վերջնական հաշտություն։

68 թվի գարնան վերջերին հռոմեական զորքը թողեց բարեկամ ու դաշնակից Կորդվաց երկիրը, ուր նա լիառատ ապրել ու հանգիստ ձմեռել էր, և ճանապարհ ընկավ Տիգրանակերտի մոտով և Տավրոսյան լեռներով դեպի Մշո դաշտը և Եփրատ-Արածանիի հովիտները։

Արշավանքի ճանապարհը Կորդուքից դեպի հյուսիս Մոմզենը, Խալաթյանցը և Լեոն[21] ենթադրել են այժմյան Բիթլիսի կիրճով և Վանա լճի արևմտյան ափերի մոտով։ Սակայն էքհարդը[22], որը հանգամանորեն քննության է առել այս խնդիրը՝ հանգել է այն եզրակացության, որ զորքերի շարժման համար ամենից հարմար ճանապարհն է այդտեղ ո՛չ թե Բաղեշի, այլ Ներջիկ—Շենիկի գիծը։ Հենց այս վերջին ճանապարհագծով գնացել էին, ինչպես համոզիչ կերպով լուսաբանել է գերմանական գիտնական Կարբեն[23], նաև Քսենոփոնը ու նրա հետ նահանջող հույները։ Էքհարդի ու Կարբեի այս եզրակացությունները հաստատվում են այժմ նաև Պևտինգերյան քարտեզի ուսումնասիրությամբ։ Այդ քարտեզի վրա, ինչպես մանրամասն պարզաբանված է իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ[24],

[21] *Տե՛ս* Моммсен, Римская история, III, *էջ* 61, Халатьянц, Очерк истории Армении, *էջ 200 և և ևս, Հայոց պատմություն, էջ 413։*

[22] *Տե՛ս* Klio, Bd. X, 2, *էջ* 202—206։

[23] *Տե՛ս* H. Karbe, Der Marsch der Zehntausend vom Zapates zum Phasis-Araxes, 1898։

[24] *Տե՛ս էջ 90—94։*

ռազմական հին ճանապարհն Աղձնիքում ցույց է տրված դարձյալ Ներջիկ—Կիլդիկի վրայով։


Երբ 68 թվի ամառը Լուկուլլոսի զորքն իջավ Տավրոսյան լեռներից այժմյան Մշո դաշտը՝ այստեղ, ինչպես վկայում է Պլուտարքոսը, հացաբույսերի ցանքերը դեռևս կանաչ էին[25], մինչդեռ Կորդվաց երկրում, որտեղից հռոմեական զորքը մեկնել էր մի քանի շաբաթ առաջ արդեն հնձի ժամանակ էր։ Հայկական բարձրավանդակի այս հատուկ կլիմայական երևույթը, որ Լուկուլլոսի համար անակնկալ մի նորություն էր, նրան մեծ անհանգստություն պատճառեց, որովհետև մեծապես դժվարանում էր նրա բանակի պարենավորման գործը։ Անսպասելի էր Լուկուլլոսի համար և խիստ հուսահատեցուցիչ նաև Միհրդատի ու Տիգրանի մարտավարության նոր եղանակը, որը գործադրվում էր այստեղ փորձված ու հնարամիտ Միհրդատի խորհրդով։

Մենք արդեն տեսանք վերև, որ Միհրդատը, որին հանձնարարված էր նոր հայկական զորքի նախապատրաստումը, ուշադրության էր առել զորքի ո՛չ թե քանակը, այլ որակը։ Դաշնակից թագավորները ո՛չ միայն այժմ ուժեղացրել էին իրենց հետևազորը, այլև աշխատել էին միաժամանակ, որ իրենց ձիավոր զորքը թվով ու մարտունակությամբ գերազանց լինի հռոմեական հեծելազորից, որը, ինչպես հայտնի է, հռոմեական զորքի համեմատաբար թույլ և տկար մասն էր։ Միհրդատի խորհրդով՝ այժմ հիմնովին փոխվել էր նաև հայկական զորքի պատերազմելու եղանակը։ Որոշված էր խույս տալ վճռական մեծ ճակատամարտից և վարել լեռնային պաշտպանողական և փոքր պատերազմ։ Երկու դաշնակիցները պարզապես ուզում էին հռոմեական զորքը քաշել երկրի ներսը, դժվարացնել նրա պարենավորումը և հետզհետե նրան ուժասպառ անել իրենց հզոր ու արագաշարժ հեծելազորի հանկարծակի հարձակումներով։

Ռազմական այս ծրագիրն իրագործելու համար դաշնակից թագավորները, ինչպես հաղորդում է Ապպիանոսը[26], բաժանել էին իրենց զորաբանակը երկու մասի։ Միհրդատը, որին հանձնված էր ամբողջ հետևազորը և հեծելազորի մի փոքր մասը՝ կրնկակոխ հետևում էր հռոմեական զորքին, սակայն՝ բանակ դնելով ու ամրանալով բլուրների վրա, նա համառորեն խուսափում էր վճռական ընդհարումից։ Իսկ Տիգրանը հեծելազորի մյուս մասով սրընթաց հարձակվում էր թշնամու վրա, խանգարում էր

[25] Լուկուլ., գլ. 31, համեմատե նաև Դիոն, գք. 36, գլ. 4, 2։

[26] Տե՛ս Միհրդատականք, գլ. 87։



Լուկուլլոսի ճանապարհը Կորդուքից Մշո դաշտ։

ու խափանում նրա պարենավորումը և հասցնում նրան զգալի կորուստներ։ Այսպիսով, Լուկուլլոսը և նրա զորքը շարունակ գտնվում էին Միհրդատի և Տիգրանի բանակների սրանքում, որոնցից որևէ մեկը նրանց սպառնում էր թիկունքից։

Ուշագրավ է, որ 68 թվի այս կռիվների մասին հռոմեական աղբյուրները, մեծ մասամբ, լուռ են և մունջ։ Միայն Պլուտարքոսը, որը Լուկուլլոսի փառաբանողն է ու գովերգուն, հիշատակել է իր հերոսի մի քանի աննշան հաջողությունները։

«Տավրոսն անցնելուց հետո,—պատմում է Պլուտարքոսը[27],—Լուկուլլոսը վհատվեց, որովհետև տեսավ, որ արտերը դեռևս կանաչ են (այստեղ ուշանում են այդքան օդի սառնության պատճառով հնձելու ժամանակները)։ Սակայն, այնուամենայնիվ, նա ցած իջավ, երկու կամ երեք անգամ ետ մղեց հայերին, որոնք նորից համարձակվել էին նրա դեմ դուրս գալ, անարգել կերպով ավերեց գյուղերը և, գրավելով Տիգրանի համար պատրաստված ցորենը՝ հակադարձեց թշնամիներին այն ծանր դրությունը, որից ինքը վախենում էր»։

Այս մասնակի հաջողությունները չունեին, ինչպես տեսնում ենք, ռազմական խոշոր նշանակություն, որովհետև նրանք բնավ չէին թուլացնում դաշնակիցների կենդանի ուժը։ Սակայն ինքը հռոմեական զորքը, որը հաճախ ենթակա էր Տիգրանի հնձելազորի հարձակումներին, կրում էր, ինչպես դժվար չէ հետևցնել աղբյուրների վկայություններից, զգալի կորուստներ։

Պլուտարքոսի և Դիոնի պատմելով[28] Լուկուլլոսն աշխատում էր ստիպել թշնամուն ճակատելու իրեն դեմ, որպեսզի նրա դիմադրական ուժը կարողանա խորտակել վճռական ճակատամարտում։ Թշնամու աչքի առջև նա ավերում էր այդ նպատակով նրա երկիրը։ Սակայն իզուր՝ թշնամին մնում էր անշարժ իր տեղում։ Նա պաշարեց այնուհետև Միհրդատի ճամբարը և սկսեց նրա շուրջը փորել խրամատներ։ Բայց իզուր էր նաև այս փորձը։ Միհրդատին անմիջապես օգնության հասավ Տիգրանը, սպառնալով հռոմայեցիներին թիկունքից, իսկ Միհրդատը, հավատարիմ մնալով իր ծրագրին՝ այս անգամ ևս տեղից չշարժվեց։

Լուկուլլոսի դժվարին ու ապարդյուն այս արշավանքը, որի ընթացքում նա ավելի ինքն էր կորուստներ կրել, քան թշնամին՝ տևել էր Վանա լճի հյուսիսային կողմերում առնվազն մոտ երկու ամիս։ Արդեն սկսվել էր աշունը և հռոմեական զորքի դրությունը, որն անսովոր էր Հայաստանի ցուրտ կլիմային՝ հետզհետե դառնում էր ավելի ու ավելի հուսահատական։ Եթե Լուկուլլոսն այժմ ետ նահանջեր, այդ համազոր կլիներ ամոթալի պարտության։ Եվ նա միայն այժմ, մոտ երկու ամիս ապարդյուն կորցնելուց հետո, ուղղվեց շտապ դեպի Արտաշատ, ուր գտնվում էին Տիգրանի օրինավոր կանայք և անչափահաս զավակները[29]։ Նա հույս ուներ, որ հին այդ մայրաքաղաքի նվաճմամբ կկարողանա վերականգնել իր զինվորական մեծ անունը և հեղինակությունը, որ սկսել էին արդեն նսեմանալ հռոմեական-հայկական այս նոր պատերազմում։ Նա միևնույն ժամանակ կարծում էր, որ Արտաշատին սպառնացող վտանգը Տիգրանին կստիպե իր հետ վճռական կռվի բռնվելու։

Եվ, հիրավի, ինչպես որ Լուկուլլոսը մտածում էր՝ այնպես էլ եղավ։ Երբ Տիգրանը տեղեկություն ստացավ, որ Լուկուլլոսն արագացրած երթով գնում է դեպի Արտաշատ՝ նա հասավ չորրորդ օրը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[30], հռոմեական զորքի ետևից և նրա առաջը կտրեց Արածանիի գետանցքի մոտ՝ գետի աջ ափին։ Լուկուլլոսը, որը դեռևս գետը չէր անցել՝ գտնվում էր հայկական զորքի դիմաց Արածանիի ձախ կողմում։

Էքհարդն իր ընդարձակ ուսումնասիրության մեջ[31] աշխատել է ճշտել թե Արածանիի ճակատամարտի այս տեղը և թե, ընդհանրապես, այն ճանապարհը, որոնցով եկած պիտի լիներին այդտեղ Լուկուլլոսը և Տիգրանը։ Նա իրավացի կերպով չի ընդունում Ռեյնաքի[32] ենթադրությունը, ըստ որի վերոհիշյալ գետանցքի տեղը մատնանշված է այժմյան Մանազկերտի մոտ։ Արածանին անցնելով այդ տեղում, ինչպես միանգամայն ճիշտ դիտել է Էքհարդը, կարելի էր գնալ Բասեն և Հասանղալա, բայց ո՛չ Արտաշատ։ Ինքն Էքհարդը կարծում է, որ հռոմեական զորքը գնացել էր, հավանորեն, Մանազկերտի մոտով դեպի հյուսիս և հասել էր Արածանիի ձախակողմն այժմյան Ղարաքիլիսեի մոտ։ Նույն այս ճանապարհով գերմանական գիտնականները ենթադրել են,

[27] Լուկուլ., գլ. 31։

[28] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., 31, Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 4, 2։

[29] Տե՛ս Պլուտ., Լուկուլ., գլ. 31։

[30] Լուկուլլոս, գլ. 31։

[31] Տե՛ս Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft, 2, էջ 221—226։

[32] Mithridate Eupator. էջ 368, ծանոթ. 1։

ինչպես հայտնի է, նաև Քսենոփոնի ու նրա հետ նահանջող հույների ուղեգիծը[33]:

Սակայն ինձ ավելի հավանական է թվում, որ ինչպես հույների նահանջի, նույնպես և Լուկուլլոսի 68 թվի արշավանքի ճանապարհը պետք է ենթադրել Պատինգերյան քարտեզում նշանակված Tsumbo—Didyma, *այսինքն Ծումբ—Դիդեմ հին հաղորդակցության գծով, որը մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» իմ նոր ուսումնասիրության մեջ*[34]: *Այս նոր ենթադրությամբ Եփրատ-Արածանիի ճակատամարտի տեղը որոշվում է ո՛չ թե ճշտիվ այժմյան Ղարաքիլիսեի մոտ, այլ այս գյուղից մոտ 20—30 կիլոմետր դեպի արևելք՝ այժմյան Դիդեմի հյուսիսակողմում:*

Արածանիի ճակատամարտի մասին միակ մեր աղբյուրներն են Պլուտարքոսի և Կասսիուս Դիոնի վկայությունները[35], *որոնք, ինչպես կտեսնենք, հիմնապես իրար հակասում են: Այդ երկու վկայությունները, որ կարոտ են լուրջ ու ուշադիր քննության՝ մեջ ենք բերում բառացի թարգմանությամբ:*

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ. 31՝


«Լուկուլլոսի արշավանքն Արտաշատի դեմ Տիգրանն այլևս չհանդուրժեց, այլ՝ վերցնելով հետը իր զորքերը՝ նա բանակեց չորրորդ օրը հռոմայեցիների մոտ, ունենալով նրանց ու իր միջև Արածանի գետը: Այդ գետը պետք է անհրաժեշտաբար հռոմայեցիներն անցնեին Արտաշատ գնալիս: Զոհ մատուցանելով աստվածներին և վստահ լինելով, որ արդեն հաղթությունն իր ձեռքումն է, Լուկուլլոսը մյուս ափին անցկացրեց զորքը, առջևում դասավորելով իր տասներկու կոհորտները, իսկ մյուսները՝ որպեսզի թշնամուց չդրջապատվի՝ տեղավորեց հետևում[36]: *Դեմ առ դեմ սրանց կանգնած էին բազմաթիվ ձիավորներ ու ընտիր զորքեր, իսկ նրանց առջև զանվում էին ձիավոր նետաձիգ մարդերը և նիզակակիր իբերները, որոնց բոլոր օտարականներից ավելի*

[33] *Համեմատեք* W. Belck, Der Weg Xenophons auf seinem Rückzuge bis in die Ebene von Alaschgert, Verhandl. d. Berl. antrhrop. Gesell., 1899 *էջ 661 և այլն:*

[34] *Տե՛ս էջ 103—114:*

[35] *Նույն այս ճակատամարտը համառոտակի հիշատակված է նաև Սալլուստիուսի պատմության մի հատվածում, տե՛ս* gg. I, VFragm. 74:

[36] *Զորքի այս հատուկ դասավորության մասին* (agmen quadratum) *տե՛ս* V. Chapot, La frontière de l'Euphrate, Paris, 1907, *էջ 173:*



Լուկուլլոսի ճանապարհը դեպի Արտաշատ:

էր Տիգրանը վստահում և համարում էր առանձնապես մարտունակ։ Բայց իսկապես սրանք որևէ փայլուն գործ չարին, այլ կռվի բռնվելով մի քիչ հռոմեական հեծելազորի հետ՝ չդիմացան հետո հետևազորի հարձակմանը և, փախչելով ու ցրիվ գալով այս ու այն կողմը՝ հարկադրեցին հռոմեական հեծելազորին իրենց հալածելու։ Երբ սրանք ցրվեցին, Լուկուլլոսը, տեսնելով Տիգրանի հետ առաջացող ձիավորների շքեղությունն ու բազմությունը՝ վախեցավ։ Նա ետ կանչեց իր հեծելազորը, որը թշնամուն հալածում էր, և առաջինն ինքը դեմ կանգնեց աւտոպատականցիներին, որոնք իր դիմացն էին լավագույն զորքի հետ, և, առաջ, քան Ձեռնակովի գնալը, նրանց ահաբեկեց և մատնեց փախուստի։ Երեք թագավորներից, որոնք միասին մասնակցում էին կռվին՝ ամենախաչատակ կերպով փախել էր, ինչպես ասում են, Միհրդատ Պոնտացին, որը չէր դիմացել մինչևիսկ հռոմայեցիների մարտական աղաղակներին։ Հետապնդումը շարունակվեց երկար տարածության վրա, և հռոմայեցիները ուժասպառ եղան, որովհետև ամբողջ գիշերը ոչ միայն սպանում էին թշնամուն, այլև տանում և բերում էին գերիներին ու նաև ավարը և ինչքը։ Լիվիուսն ասում է, որ թշնամու կորուստն ավելի մեծ էր եղել առաջին կռվում, սակայն այս կռվում սպանվել ու գերի էին բռնվել ավելի անվանիները»։

2. Կասսիուս Դիոն[37], գր. 36, գլ. 4—5՝

«Լուկուլլոսն արշավանքը սկսեց նույն տարվա ամառվա կեսին (որովհետև գարնանն անկարելի էր թշնամու երկրի վրա հարձակվել ցրտերի պատճառով) և երկրի որոշ մասերն ավերեց, որպեսզի ստիպե բարբարոսներին դիմադրել ու իր հետ պատերազմել։ Իսկ երբ նրանք չշարժվեցին իսկի տեղից՝ նա ինքը գնաց նրանց վրա։

Հարձակման ժամանակ թշնամու այրուձին խիստ նեղը գցեց հռոմեական հեծելազորին, բայց հետևակների հետ ոչ ոք նրանցից դուրս չելավ ձեռամարտի, այլ նրանք իսկույն ետ էին քաշվում, երբ Լուկուլլոսը հեծելազորին օգնության էր տանում վահանակիրներին։ Չնայած դրան՝ թըշնամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք, ետ դառնալով՝

[37] Թեև Դիոնի հատվածում չի հիշատակված ճակատամարտի տեղը, սակայն էքհարդը, հիմնվելով նրա բովանդակության վրա՝ հավանական է համարում, որ նրա մեջ հաղորդված տեղեկությունները վերաբերում են Արածանիի ճակատամարտին, տե՛ս Klio, 1910, Bd. X, 2, էջ 208։ Էքհարդի եզրակացությունը, իմ կարծիքով, միանգամայն հիմնավոր է ու համոզիչ։

նետեր էին արձակում հետապնդողների վրա, և շատերին իսկույն սպանեցին և շատերին էլ վիրավորեցին։ Իսկ վերքերը ծանր էին և դժվար էին բուժվում, որովհետև նետերն ունեին երկու ծայր, որոնք այնպես էին իրար կցված, որ թե վերքի մեջ մնալով և թե դուրս հանվելով՝ արագ կերպով մահ էին պատճառում։ Դրա պատճառն այն էր, որ նետի ծայրերից մեկը, որը ո՛չ մի կերպ չէր կարելի դուրս հանել՝ մնում էր մարմնի մեջ»։

Եվրոպական գիտնականներից շատերը, օրինակ, Ռեյնաքը, Նիպեն և Ֆեռերոն[38], հավատ ընծայելով Պլուտարքոսի վերոհիշյալ վկայություններին, կարծում են, որ Արածանիի ճակատամարտում Լուկուլլոսը հաղթություն էր տարել, և Տիգրանը Միհրդատի հետ կրել էին ծանր պարտություն։ Ռեյնաքը, հիմնվելով, բացի այդ, Փլեգոնի վկայության վրա[39], որը, ինչպես վերև տեսանք, վերաբերվում է ո՛չ թե Արածանիի, այլ Տիգրանակերտի ճակատամարտին, թյուրիմացաբար մատնացույց է արել, որ այս կռվում Տիգրանի զորքից սպանվել էին 5000 հոգի, իսկ մի մասը գերի էր վերցվել։

Լուկուլլոսի տարած այս հաղթության նկատմամբ համեմատաբար ավելի զուսպ են ու ձեռնպահ Մոմսենը և էքհարդը[40], սակայն սրանք ևս, գանվելով որոշ չափով Պլուտարքոսի վկայությունների ազդեցության տակ՝ բավարարաչափ չեն ընդգծել հռոմեական զորքի խիստ դժվարին վիճակը, որը պարզ կերպով մատնացույց է արված Դիոնի վերոհիշյալ հատվածում։

Արածանիի մոտ, ինչպես դժվար չէ հետևցնել Կասսիուս Դիոնի վկայությունից, Տիգրանը ո՛չ միայն պարտություն չէր կրել, այլ, ընդհակառակը, ինքն էր ծանր հարված հասցրել հակառակորդին։ Տիգրանի հեծելազորը, ինչպես պարզ վկայում է Դիոնը, ինքը որևէ վնաս չէր կրել թշնամուց, սակայն՝ ետ դառնալով և հետապնդող հռոմայեցիների վրա նետեր արձակելով՝ նրանցից շատերին սպանել և շատերին էլ վիրավորել էր։ Տեղի ունեցած ընդհարմանը մասնակցած է եղել, ինչպես միանգամայն

[38] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 367, Б. Низе, Очерк римской истории, С. Петербург, 1910, էջ 289 և Ферреро, Величие и падение Рима, I, էջ 196։

[39] Տե՛ս Müller, Fragm. Hist. Gr. էջ 606։

[40] Տե՛ս Моммсен, Римская история, т. III, էջ 61 և Eckhardt, Klio, Bd. X, Heft 2, էջ 208—213։

ճիշտ մատնացույց է արել էքհարդը[41], միմիայն Տիգրանի թեթև հեծելազորն առանց հետևազորի, որը չի հիշատակված, իրոք, ո՛չ Պլուտարքոսի և ո՛չ էլ Դիոնի վկայություններում։ Հայկական հետևազորի, ինչպես և Միհրդատի բացակայությունը՝ պետք է համարել միանգամայն հավանական, որովհետև վերոհիշյալ Պլուտարքոսի վկայությունից ևս երևում է, որ հռոմեական զորքին հետապնդել ու նրա հետևից հասել էր իր թեթև հեծելազորով Տիգրանը։ Անհնարին էր, իհարկե, որ դանդաղաշարժ հայ հետևակազորը ևս միաժամանակ հասած լիներ Արածանիի գետափը։

Աղբյուրների մեջ բերված վկայություններից երևում է նույնպես, որ այս կռվում ևս Տիգրանը գործադրել էր մարտավարության հին եղանակը, այսինքն՝ ուղեցել էր ո՛չ թե վճռական մարտի բռնվել, այլ հարված հասցնել թշնամուն գետից անցնելու ժամանակ։ Տիգրանի հեծելազորի փախուստը պարզապես կեղծ փախուստ էր, որի միջոցին նրա նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ էին տալիս թշնամուն։ Կռվելու արևելյան այդ ձևը գործադրել էին, ինչպես հայտնի է, նաև պարթևները Կրասոսի դեմ, որը կատարյալ պարտություն էր կրել 53 թվին։

Արդ՝ ընդունելով որ հայերի կողմից Արածանիի կռվին մասնակցել էր Տիգրանի միայն թեթևաշարժ հեծելազորը՝ դժվար չէ ըստ իս համոզվել, որ Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունները, որ իբր թե հռոմայեցիներն ամբողջ գիշերը ջարդել ու գերել էին թշնամուն, և որ իբր թե Միհրդատ Պոնտացին առաջինն էր փախել ռազմադաշտից՝ դիտավորյալ հերյուրանքներ են, որոնք ո՛չ միայն չեն հաստատվում, այլև միանգամայն հակասում են Դիոնի արժանահավատ ու անաչառ վկայություններին։

Արածանիի ճակատամարտը տեղի էր ունեցել 68 թվի սեպտեմբերի կեսերին։ Մոտենում էր արդեն Հայաստանի դաժան ձմեռն իր բուք ու բորանով, սակայն հռոմեական զորքը, դեռևս ո՛չ վճռական կռիվ էր ունեցել հայկական զորքի հետ, ո՛չ էլ որևէ զգալի հաջողություն։ Ընդհանուր տարածությունը Մշո դաշտից մինչև Արածանիի վերին հոսանքը, այսինքն՝ հին Պատրանա ավա-

[41] Տե՛ս Klio, Bd. X, 2, էջ 210։ Միանգամայն ուղիղ են ու հիմնավոր էքհարդի առարկությունները Մոմզենի և Ռեյնաքի դեմ, որոնց մոտ Արածանիի ճակատամարտը չի համապատասխանում աղբյուրների հաղորդած տեղեկություններին, տե՛ս Моммсен, Римская история, т. III, էջ 61 և Reinach, Mithridate Eupator, էջ 367։

նից մինչև Արածանիի գետանցքը Դիդեմի մոտ, ուր գտնվում էր այժմ հռոմեական զորքը, Պատինգերյան քարտեզում նշանակված մեծ ճանապարհով, որը մանրամասն լուսաբանված է աշխարհագրական իմ նոր ուսումնասիրության մեջ՝ ընդամենը մոտ 250 կիլոմետր էր[42], և այդ համեմատաբար փոքր տարածությունը հռոմեական զորքն անցել էր մոտ 2—3 ամսվա ընթացքում։ Եթե հռոմեական աղբյուրները մանրամասն մեզ չեն հաղորդում այս երկարատև արշավանքի բոլոր եղելությունները՝ այդ ինքնին արդեն հավանական մի նշան է, որ այդ դեպքերը նպաստավոր և պատվաբեր չէին հռոմեական զորքի համար։ Սակայն չնայած աղբյուրների լռության՝ կարելի է վերոհիշյալ աղբատիկ իսկ վկայություններից հետևցնել, որ Լուկուլլոսի զորքն այդ երկու կամ երեք ամսվա ընթացքում արդեն բավական հյուծվել ու թուլացել էր և, ըստ երևույթին, վերոհիշյալ փոքր գուպարածներում, ինչպես շատ ճիշտ դիտել է էքհարդը[43], ունեցել էր ավելի մեծ կորուստներ, քան նա կունենար վճռական մեծ ճակատամարտում։

Գետն անցնելուց հետո Լուկուլլոսն առաջնորդեց իր զորքը դեպի Արտաշատ։ Սակայն մի քանի օրից հետո, ինչպես վկայում է Պլուտարքոսը, զորքը կտրականապես հրաժարվեց առաջ գնալ և պահանջեց ետ դառնալ։ Զորքի մեջ ծագած այս ապստամբությանը, որ հարկադրել էր Լուկուլլոսին ետ նահանջել Հայաստանից՝ Պլուտարքոսի և Կիկերոնի մոտ տրված են տարբեր բացատրություններ։ Պլուտարքոսն ապստամբության պատճառ համարում է այն, որ սեպտեմբեր ամսին, աշնանային գիշերահավասարի ժամանակ, հանկարծակի ձյուն էր եկել, և Հայաստանում սկսվել էին անժամանակ ցրտերը։ Իսկ Կիկերոնը, որի մոտ զորքի այս ապստամբությունը պարզ կերպով ակնարկված է, բացատրում է, որ հռոմեական զորքը մերժել էր առաջ գնալ, որովհետև նա շատ էր հեռացել իր երկրից և կարոտել էր հայրենիքին։

Համապատասխան այդ վկայությունները մեջ եմ բերում բառացի թարգմանությամբ հունարենից և լատիներենից.

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ. 31՝

[42] Տե՛ս «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան 1936, էջ 92—114։ Տարածությունը *Patransauna-ից մինչև *Tsumbo ցույց է տրված հռոմեական քարտեզում 114 հռոմեական մղոն կամ մոտ 170 կիլոմետր, իսկ *Tsumbo-Ծումբից մինչև գետափը Didyma-Դիդեմի մոտ կլինի մոտ 80 կիլոմետր։

[43] Տե՛ս Klio, Bd. X, 2, էջ 207։

«Այնուհետև Լուկուլլոսը որոշեց վստահ ու համարձակ առաջ շարժվել դեպի երկրի ներսը և ընկճել բարբարոսներին։ Սակայն աշնանային դիշերահավասարի ժամանակ վրա հասան հանկարծակի ձմեռվա վատ եղանակները. շատ ձյուն էր գալիս և կամ պարզ եղանակներին նստում էր եղյամ և սառույց։ Եվ այս պատճառով ձիերը դժվարությամբ էին խմում գետերի ջուրը, որը չափից դուրս սառն էր, և նրանք դժվարությամբ էին անցնում գետերի վրայով, որոնց կարծր սառույցները ճղում և կտրում էին նրանց երակները։ Այդ կողմերի մեծագույն մասը խիտ ծածկված էր ծառերով, անտառապատ էր, և ճանապարհները նեղ էին։ Զինվորները, որոնք ձյունով ծածկվում էին ճանապարհին՝ շարունակ թրջվում էին և, որովհետև թաց տեղերում էին գիշերում՝ իրենց վատ էին զգում։ Արդ՝ ճակատամարտից հետո նրանք մի քանի օր հետևեցին Լուկուլլոսին, բայց հետո ընդդիմացան։ Սկզբում նրանք խնդրում էին և ուղարկում նրա մոտ որիբուններին, ապա՝ մեծ աղմուկով հավաքվում էին միասին և, վերջապես՝ սկսեցին գիշերը վրաններում աղաղակ բարձրացնել, որ նշան էր ապստամբական տրամադրության։ Եվ Լուկուլլոսը պնդում էր, իհարկե, համառորեն ու խնդրում, որ նրանք մի փոքր էլ համբերեն, մինչև որ կվերցնեն Հայաստանում Կարթագենը և կխորտակեն ամենամեծ թշնամու (այդպես էր նա անվանում Աննիբալին) գործը։ Սակայն չկարողանալով համոզել՝ ետ տարավ նրանց ու անցավ Տավրոսն այլ ճանապարհներով և իջավ Միդդոնիա»։

2. Կիկերոն, Պոմպեոսի հրամանատարության մասին, IX, 23—24՝

«Ինչ վերաբերում է մեր զինվորներին՝ նրանց հաջողվել էր, իրոք, վերցնել մեկ քաղաք, որը գտնվում էր Տիգրանի թագավորության մեջ, և հաջողվել էր նույնպես հաղթություն տանել մի քանի ճակատամարտերում, սակայն այն կողմերի անչափ հեռավորությունը վատ էր ազդել նրանց վրա և հայրենիքի կարոտը սկսել էր նրանց հաղթահարել։... Թե ի՛նչ պատահեց հետո՝ այդ մասին ես այլևս չեմ խոսի։ Բանը վերջացավ նրանով, որ մեր զինվորները, առաջ շարժվելու փոխարեն, պահանջեցին ետ դառնալ արագորեն»։

Ապպիանոսը և Կասսիուս Դիոնը տեղեկություններ են տալիս միայն Լուկուլլոսի նահանջի մասին, առանց հիշելու ապստամբության անպատվաբեր փաստը։ Ապպիանոսը նահանջի պատճառ

է համարում վրա հասնող ձմեռը[44], իսկ Դիոնը վիրավորների մեծ թիվը և սննդամթերքների պակասությունը[45]։

Մոմզենը, Ռեյնաքը, Ֆեռեռոն և ուրիշ պատմագետներ ընդունելի և արժանահավատ են համարել վերոհիշյալ հաղորդագրություններից, գլխավորապես, Պլուտարքոսի վկայությունը, որին աղբյուր էր ծառայում Լիվիուսը։ Նախապատվություն տալով Պլուտարքոսին՝ նրանք դժբախտաբար աչքաթող են արել Կասսիուս Դիոնին, որը թեև չէ հիշատակել հռոմեական զորքի ապստամբությունը, սակայն նահանջի մասին տվել է ուշագրավ ու միանգամայն վստահելի տեղեկություն։ Դիոնին նրա պատմության այս մասում աղբյուր էր ծառայել, անկասկած, Սալլուստիուսը, որը հռոմեական հնագույն պատմիչների մեջ համարվում է բոլորից լրջմիտը և անաչառը։

Բոլորովին ճիշտ են այս տեսակետից էքհարդի դիտողությունները[46], որը հիմնական պատճառ զինվորական ապստամբության համարել է ո՛չ այնքան անժամանակ ցուրտը, ինչպես այդ մատնանշված է Պլուտարքոսի մոտ, որքան հռոմեական զորքի մեծ կորուստները, վիրավորների շատությունը և սննդամթերքների պակասությունը, ինչպես այդ պարզ կերպով մատնացույց է արված Դիոնի մոտ։ Իրավացի է նույնպես և Աստուրյանը[47], որը կարծում է, թե նահանջի բուն պատճառը եղել է հռոմեական զորքի բարոյալքումը և վհատությունն իր լուրջ անհաջողությունների պատճառով։ Եթե միայն ցուրտը լիներ ապստամբության պատճառը՝ հռոմեական զորքը պետք է, ընդհակառակը, ո՛չ թե ետ նահանջեր, այլ առաջ գնար դեպի Արտաշատ, որն արդեն շատ մոտ էր և որը ո՛չ միայն կազատեր նրանց ցրտից, այլև կտար պատերազմական մեծ ավար։

Արտաշատի հեռավորությունը հռոմեական բանակի վերջին ճամբարակայանից կարելի է ըստ իս ճշգրիտ կերպով որոշել։ Համաձայն Պևտինգերյան քարտեզի տարածությունն Արածանիի գետանցքից մինչև Արտաշատ ընդամենը մոտ 170 կիլոմետր է։ Ըստ Պլուտարքոսի՝ Արածանիի ճակատամարտից հետո հռոմեական զորքը Արտաշատի ուղղությամբ առաջ էր շարժվել դեպի երկրի ներսը և ապստամբության ժամանակ, ինչպես երևում է նրա նկարագրությունից, դեռևս չէր հասել Արարատյան դաշտը։ Արա-

44 Տե՛ս Միհրդատ., գլ. 87։
45 Տե՛ս գք. 36, գլ. 6, 1։
46 Տե՛ս Klio, Bd. X, 2, էջ 213—216։
47 «Քաղաքական վերաբերություններ», էջ 63 և այլն։

ծանիի ափից նա կարող էր մի քանի օրում գնացած լինել, Պլուտարքոսի մոտ նկարագրված ծանր պայմաններում, առաւավելն 50—70 կիլոմետր։ Ուրեմն, դժվար չէ կռահել, որ Լուկուլլոսի զորքը, որը գնում էր Արտաշատ Պևտինգերյան քարտեզում նշված մեծ ռազմական ճանապարհով ու հին Բագավանի և Արուճի մոտով՝ իր առաջխաղացման վերջին օրում գտնվել էր, հավանորեն, ճանապարհի ամենադժվար մասում, այժմյան Կուջաղի կամ Կարվանսարայի լեռնանցքում՝ Արտաշատից ընդամենը մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա[48]։

Լուկուլլոսի նահանջի ճանապարհը Հայաստանից դեպի Միջագետք մանրամասն քննության է առնված էքհարդի աշխատության մեջ[49]։ Այդ ճանապարհը, մատնանշված է, ինչպես վերև տեսանք, Պլուտարքոսի մոտ։ Համաձայն սրա վկայության, Լուկուլլոսն իր զորքերը ետ էր տարել ո՛չ թե վերոհիշյալ հին ճանապարհով, այլ նոր ուղղությամբ։ Նա Տավրոսն անցել էր մի այլ լեռնանցքով և իջել էր Միգդոնիա նոր ճանապարհով։ Էքհարդն այս ճանապարհը ենթադրում է այժմյան Խոյի վրայով դեպի Բաշկալե և այնտեղից Ջուլամերկի, Զախոյի և Ջեզիրեի վրայով դեպի Մծբին։ Ինձ թվում է, որ նահանջի ճանապարհը, որը պետք է ենթադրել, անտարակույս կամ Բերկրիի ձորով և կամ հին Արտազ գավառի միջով՝ դժվար է ճշտիվ որոշել, ուրվհետև բացի Պլուտարքոսից չկան այդ մասին որևէ այլ տեղեկություններ։

Հյուսիսային Միջագետքում, ուր Տավրոսյան լեռներից իջել էր Լուկուլլոսը 68 թվի հոկտեմբեր ամսին՝ դեռևս ամառնային տաք եղանակներ էին։ Հայերի ձեռքին էր գտնվում այստեղ Մծբինը, որը նշանավոր բերդաքաղաք էր և շրջապատված էր կրկնակի՝ արտաքին և ներքին պարիսպներով։ Գերագույն իշխանությունը Մծբինում, որն ուներ ռազմական ու ստրատեգիական մեծ նշանակություն, Տիգրանը հանձնարարել էր, ինչպես վերև տեսանք, իր եղբորը՝ Գուրասին։

Արդ՝ ուշագրավ է ու հետաքրքիր, որ հռոմեական զորքը, որն ապստամբել էր և չէր ուզեցել գնալ Արտաշատ՝ այժմ պաշարեց Մծբինն առանց որևէ հակառակության։ Սակայն այս պաշարումն[50] առաջին ամիսները չտվեց ոչ մի հետևանք։ Քաղաքը, որի փաստական հրամանատարն էր ու պաշտպանը հռչակավոր հույն ճարտարապետ Կալլիմաքոսը, ցույց տվեց նույնպիսի ուժեղ դիմադրություն, ինչպես և Տիգրանակերտը։

Քաղաքի պաշտպանները, ինչպես վկայում է Դիոնը, միանգամայն վստահ էին, որ հռոմայեցիները ստիպված են լինելու հեռանալ։ Բայց անսպասելի կերպով, անձրևային ու փոթորկալից մի մութ գիշեր, երբ ոչինչ չէր կարելի նկատել կամ լսել՝ հռոմայեցիներին հաջողվեց մոտենալ քաղաքին և տիրել արտաքին պարսպին։ Այնուհետև ներքին պարիսպը ևս հնարավոր չեղավ, մթության ու հորդ անձրևի պատճառով, պաշտպանել նետաձգությամբ ու այրվող նավթով։ Հռոմայեցիները լցրին միջպարիսպային փոսը ցախով և հեշտությամբ վերցրին նաև երկրորդ պարիսպը։ Պարիսպների գրավումից հետո՝ Գուրասը և բերդապահ զորքը, որոնք ամրացել էին միջնաբերդում, անձնատուր եղան որոշ պայմանով և ազատ արձակվեցին։ Միայն Կալլիմաքոսը, որը Մծբինից առաջ հաջողությամբ ղեկավարել էր նաև պաշարված Ամիսոսի պաշտպանությունը, համարվեց հանցավոր և շղթայվեց։

Մծբինի առումը Լուկուլլոսի վերջին հաջողությունն էր։ Այնուհետև նրա աստղը հետզհետե բոլորովին խավարեց, և հռոմեական զորքը, ինչպես կտեսնենք, անփառունակ կերպով հեռացավ Հայաստանից։

[48] Տե՛ս «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 17—46։

[49] Տե՛ս Klio, Bd. X, 2, էջ 226—231։

[50] Պաշարման մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Պլուտարքոսը և կասսիուս Դիոնը, տե՛ս Պ լ ու տ., Լուկ., գլ. 32 և Դ ի ո ն, գք. 36, գլ. 6—7։

15. ՏԻԳՐԱՆԻ ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԱՐԾՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՆԱՀԱՆՋԸ

Մինչ հռոմեական զորքը երկար ու դժվար ճանապարհներով իջնում էր Միջագետք և պաշարել էր այստեղ Մծբինը՝ Միհրդատը և Տիգրանը, փոխանակ հուսաբեկ ու բարոյալքված թշնամուն հալածելու, հարձակվեցին հռոմեական զորամասերի վրա Պոնտոսում և Տիգրիսի հյուսիսակողմում։ Նրանք դարձյալ շարունակեցին վարել տեղային մանր կռիվներ, որոնք ունեցել էին հաջող հետևանքներ և, ինչպես տեսանք, հյուծել ու անբարոյացրել էին Լուկուլլոսի գլխավոր բանակը։

Միհրդատը, իր հետ վերցնելով ութ հազար զորք, որոնցից չորս հազարը հայեր էին, որ նա ստացել էր Տիգրանից՝ գնաց Պոնտոս, որպեսզի վերագրավե իր թագավորությունը, իսկ Տիգրանն աշխատեց վերանվաճել իր բուն թագավորության հարավային շրջանները[1]։ Այստեղ՝ Տիգրիս գետի հյուսիսակողմում, որը Մեծ Հայաստանի հարավամասն էր՝ Տիգրանը վերագրավեց մի շարք շրջաններ և շրջապատեց ու պաշարեց տեղական ամրություններից մեկը, որի մեջ պատսպարվել էին հռոմեական Լուկիուս Փաննիուս զորավարն ու նրա զորքերը։ Փաննիուսին, ինչպես վկայում է Դիոնը[2], Միջագետքից օգնության էր եկել և ապատեղ ինքը՝ Լուկուլլոսը։

Նույնպես և Միհրդատը, որը մտել էր նախ Փոքր Հայքի արևելյան շրջանները, ահաբեկելով այստեղ հռոմայեցիների ցրված ու թույլ ուժերը և կոտորելով մաս առ մաս թշնամիներին՝ մեծ արագությամբ գրավել էր իր թագավորության արևելյան մասերը։ Այստեղից նա կոչ էր արել իր ժողովրդին վեր կենալ ու ապստամբել և խոստացել էր ազատել բոլոր պոնտացիներին, որոնք հռոմայեցիների մոտ աշխատում էին որպես ստրուկներ։

[1] Տե՛ս Ա պ պ ի ա ն., *Միհրդատ.*, գլ. 88 և Կ ա ս ս ի ու ս Դ ի ո ն, գր. 36, գլ. 8—9։

[2] Տե՛ս գր. 36, գլ. 10։

Ժողովուրդը, ինչպես վկայում է Դիոնը[3], զրկաբաց ընդունում էր և օգնում Միհրդատին, որովհետև ատելությամբ լցված էր դեպի հռոմայեցիները ու նրանց դաժան ու հարստահարող իշխանավորները։

Երբ Միհրդատը Փոքր Հայքից անցավ Պոնտոսի ներքին գավառները՝ նրա դեմ դուրս եկավ հռոմեական Փաբիուս Հադրիանուս զորավարը։ Սակայն Միհրդատի նախկին վաճառական զորքը և նմանապես նաև պոնտացիները, որոնք հռոմայեցիներին սպասարկում էին իբրև ստրուկներ՝ կապ հաստատեցին Միհրդատի հետ, օգնեցին նրան[4] և տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ խմբերով անցան նրա կողմը։ Հռոմեացիները թեև այս ճակատամարտում մեծ կորուստներ էին կրել, սակայն Հադրիանուսը կարողացել էր աղետալի մարտը դադարեցնել շնորհիվ միայն այն հանգամանքի, որ թշնամին ստիպված էր մարտադաշտից դուրս տանել Միհրդատին, որը ծանր վիրավորվել էր[5]։ Հռոմեական պարտված զորքի մնացորդները փախան ու ամրացան Կաբիրա բերդաքաղաքում։

Հադրիանուսին օգնության հասավ Տրիարիուսը, որը նրան պաշտոնանկ արեց և փոխարինեց[6]։ Սակայն սա ևս չկարողացավ դուրս վտարել Պոնտոսից թշնամուն և հարկադրված եղավ ձմեռել Գադիուրայում՝ դեմ առ դեմ Միհրդատի զորաբանակին, որը գտնվում էր պոնտական Կոմանայի կողմերում։ Միհրդատն ամրացավ այստեղ Իրիս գետի հարավակողմում և աշխատեց նոր ուժեր հավաքել Փոքր Հայքից, որն ամբողջովին ազատված էր հռոմեական տիրապետությունից։ Նմանապես և Տրիարիուսը դիմեց Լուկուլլոսին և, հայտնելով նրան Հադրիանուսի պարտության ու հռոմայեցիների վտանգված դրության մասին՝ խնդրեց նրանից օգնություն։

Լուկուլլոսը, տեղեկություն ստանալով հռոմեական զորքի անհաջողությունների մասին՝ վճռեց Պոնտոսը փրկելու համար դուրս տանել իր զորքը Միջագետքից և հրաժարվել անդրեփրատյան իր նվաճումներից։ Սակայն նրա լեգեոնները, որոնք ուրախ ու հանգիստ ապրում էին ձմեռվա տաք կայաններում՝ հրաժարվեցին արշավանքի դուրս գալ գարնանից առաջ[7]։ Այս

[3] Գր. 36, գլ. 9, 2։

[4] Տե՛ս Դ ի ո ն, գր. 36, գլ. 9, 3—4։

[5] Ա պ պ ի ա ն ո ս, *Միհրդատ.*, գլ. 88։

[6] Տե՛ս նույնը, գլ. 88։

[7] Համեմատե Պ լ ու տ., *Լուկուլ.*, գլ. 34։

արդեն երկրորդ անգամն էր, որ հռոմեական զորքերը չէին հրաժարվում իրենց հրամանատարին և ըմբոստաբար ու ինքնագլուխ խախտում էին զինվորական կարգապահությունը։

Պետք է ասել, որ 68 թվի հայկական անհաջող արշավանքից հետո Լուկուլլոսի դրությունը սկսել էր խիստ տատանվել։ Հենց հռոմեական-հայկական այս կռիվների ժամանակ Հռոմում ուժեղացել էր նորից դեմոկրատական կուսակցությունը, որը համառորեն աշխատում էր վարկաբեկել ու տապալել այս հզոր հակառակորդ զորավարին, որը Սուլլայի համախոհն էր ու կուսակիցը։ Դեմոկրատական կուսակցությանը և, գլխավորապես, դրամատերերի ու կապալառուների ագիտացիային պետք է վերագրել, որ դեռևս 69/68 թվերին Լուկուլլոսին զրկել էին Ասիայի ու Կիլիկիայի կուսակալության պաշտոններից։ Ջայրույթին ավելի ևս սաստկացել էր նրա դեմ 68 թվի անհաջող կռիվներից հետո։ Նրա հեղինակության անկումը Հռոմում անդրադառնում էր, բնականաբար, զորքի վրա։ Լեգեոներների մեջ արդեն լուրեր էին պտտվում, որ Հռոմում որոշված է Լուկուլլոսին պաշտոնից հեռացնել։ Այսպիսով, 68 թվի կռիվներից ու նահանջից հետո, զինվորների սանձարձակությունը շարունակ ուժեղանում էր և նրանց մեջ սաստկանում էին ըմբոստության ու ապստամբության տրամադրությունները։ Զորքն այժմ պահանջում էր, որ իրեն թույլ տրվի վերադառնալ Իտալիա։ Զինվորներից շատերը, որոնց ծառայության ժամկետը լրանում էր 67 թվին, և որոնք իրենց զինվորության ընթացքում կողոպտել էին բազմաթիվ հարուստ քաղաքներ ու շրջաններ՝ այժմ այլևս ընչազուրկ պրոլետարներ չէին, այլ կարողության տեր էին և ունևոր։ Միանգամայն բնական է որ նրանք չէին ուզում վտանգի ենթարկվել նոր կռիվներում, այլ շտապում էին վերադառնալ Իտալիա և ապրել այնտեղ կուշտ և անդորր։

Շնորհիվ իր զորքի ընդդիմության՝ Լուկուլլոսը, ինչպես տեսանք, ստիպված եղավ մնալ Միջագետքում 68/67 թվի ամբողջ ձմեռը։ Միայն 67 թվի գարնան սկզբին նա թողեց Տիգրանակերտն ու Մծբինը և, անցնելով Եփրատի աջ կողմը՝ օգնության շտապեց Պոնտոսին։ Դատարկելով Միջագետքը և հարավային Հայաստանը՝ Լուկուլլոսը, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Մոմզենը, հրաժարվում էր, անշուշտ, բոլոր իր փայլուն հույսերից, որ կապված էին հայկական արշավանքի հետ[8]։

[8] Տե՛ս Моммсен, Римская история, III, էջ 63։

դեն Պոնտոսում սկսվել էին պատերազմական գործողությունները։ Տրիարիուսը, որն ուներ մոտ տասը հազար զորք՝ սկզբում աշխատեց խուսափել ընդհարումից և ամրացավ իր ճամբարում, Գազիուրայի մոտ։ Սակայն երբ Միհրդատն ուղեց պաշարել Դադասա ամրությունը, ուր գտնվում էին հռոմեական զորքի հարյուրատած ավարն ու գույքը՝ Տրիարիուսի զինվորները սրան հարկադրեցին օգնության գնալ Դադասայի կայազորին։ Դուրս գալով ամրացրած ճամբարից՝ Տրիարիուսը ստիպված եղավ մարտի բռնվել Միհրդատի հետ Գազիուրայի և Զելայի միջև խիստ վատնգավոր վայրում։ Չնայած որ հռոմայեցիները ցույց տվին թշնամուն ուժեղ դիմադրություն՝ հայ-պոնտական զորքերը կարողացան ետ մղել հռոմեական հետևազորը մի տղմուտ ձորի մեջ, ուր նա գրեթե ամբողջությամբ կոտորվեց։ Փախուստի էին դիմել ու ազատվել միմիայն ինքը Տրիարիուսը և հռոմեական հեծելազորը։

Ըստ Ապպիանոսի և Պլուտարքոսի վկայությունների[9] հռոմեական զորքից սպանվել էին ճակատամարտում 24 ռազմական տրիբուններ, 150 հարյուրապետներ և մոտ 7000 զինվորներ։ Տրիարիուսի այս ծանր պարտության մասին առանձնապես ուշագրավ է Կիկերոնի վկայությունը, որը մատնանշում է, որ ինքը, հետևելով հռոմեական պատմագիրների օրինակին՝ լռություն է պահպանելու պարտության մասին։ Վերջինս, ասում է Կիկերոնը, այնքան մեծ էր, որ գլխավոր հրամանատարը իմացել էր նրա մասին ո՛չ թե ճակատամարտին մասնակցող լրաբերից, այլ ժողովրդի մեջ պատող լուրերից[10]։ Սպանվածների դիակները, երեք տարի անթաղ մնալուց հետո, հողին էր հանձնել Պոմպեոսը, 64 թվին։

Լուկուլլոսը դեռևս կես ճանապարհին էր գտնվում, երբ տեղեկացավ, որ Տրիարիուսը, որին նա օգնության էր գնում՝ ծանր պարտություն էր կրել թշնամուց։ Նա ուզեց վերսկսել ճակատամարտը և վրեժ առնել Միհրդատից Տրիարիուսի պարտության համար, սակայն Միհրդատը մարտը չընդունեց և, նախապատվություն տալով մարտավարության նախկին կերպին՝ գերադասեց սպասել Տիգրանին և վերսկսել նրա հետ միասին լեռնային փոքր պատերազմը, որը, ինչպես տեսանք, փայլուն հետևանքներ էր տվել 68 թվի կռիվներում։

Գազիուրայի ու Զելայի կողմերից, ուր պարտություն էր

[9] Տե՛ս Ապպ., Միհրդ., գլ. 89 և Պլուտարքոս, Լուկուլ., գլ. 35։

[10] Տե՛ս De imp. Pompeii, IX, 25։

կրել Տրիարիուսը՝ Միհրդատը շտապեց ետ քաշվել Փոքր Հայք, վերցնելով իր հետ այնքան պաշարեղեն, որքան հնարավոր էր տանել[11]։ Իսկ այն, ինչ որ դժվար էր տանել, նա ոչնչացրեց, որպեսզի դժվարացնե թշնամու պարենավորումը։ Ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[12], նա իր զորքի հետ նահանջել էր Տալավրայի բարձունքները և, ամրանալով այստեղ՝ սպասում էր Տիգրանի գալստյան։ Եվ նույն այդ ժամանակ Ատրպատականի թագավոր Միհրդատը, որը Տիգրանի փեսան էր՝ հանկարծակի հարձակումներով հալածում ու սրի էր քաշում այս ու այն կողմ ցրված հռոմեական փոքր զորամասերը[13]։

67 թվի գարնանը Լուկուլլոսը և նրա զորքը գտնվում էին Փոքր Հայքում՝ դեմ հանդիման Միհրդատի զորաբանակին։ Իսկ թիկունքից, ինչպես և 68 թվի կռիվներում, նրան սպառնում էր Տիգրանը, որը վերագրավել էր արդեն իր բուն թագավորության հայկական հարավային երկրները և պատրաստվում էր օգնության գալու աններոջը։ Լուկուլլոսի ու նրա զորքի դրությունը խիստ ծանր էր, որովհետև հայ-պոնտական զորքերն անընդհատ ուժեղանում էին ու ստանում թարմ զորական ուժեր, մինչդեռ հռոմեական բանակը, որը շարունակ կորուստներ էր կրել՝ գրեթե չէր ըստանում օժանդակ նոր զորամասեր։

Արդ՝ կարիք ունենալով կորուստների լրացման Լուկուլլոսը Փոքր Հայքից սուրհանդակներ ուղարկեց Կիլիկիայի նորընտիր կվինտուս Մարկիուս Ռեքս կուսակալի մոտ և խնդրեց նրանից օգնություն։ Այս վերջինը, որն այդ ժամանակ գնում էր իր շքեղ ջանը՝ արդեն հասել էր Լիկաոնիա և ուներ իր տրամադրության տակ երեք լեգեոն։ Լուկուլլոսը լիահույս էր, որ Մարկիուս Ռեքսն իր խնդիրը չի մերժի, որովհետև նա հետևորդ էր քաղաքական միևնույն կուսակցության և միաժամանակ իր քենակալն էր։ Սակայն այդ միանգամայն զուր հույսեր էին։ Մարկիուս Ռեքսը մերժեց նրա խնդիրը և պատասխանեց, որ իր զորքերը չեն համաձայնվում գնալ Հայաստան[14]։

Վատ էին նաև Հռոմից հասած լուրերը։ Տրիարիուսի պարտության լուրը հռոմայեցիների ականջը հասնելուց հետո՝ Լուկուլլոսի հակառակորդները նոր առիթ ունեցան սաստկացնելու իրենց պայքարը նրա դեմ։ 67 թվի գարնանը նրանք կարողացան

[11] Տե՛ս Ա պ պ ի ա ն., Միհրդ., գլ. 90։

[12] Տե՛ս գր. 36, գլ. 14, 2։

[13] Տե՛ս Դ ի ո ն, գր. 36, գլ. 14, 2։

[14] Տե՛ս Ս ա լ լ ո ւ ս տ ի ո ւ ս, V, fr. 12 և 13, համեմատե նաև Կ ա ս ս ի ո ւ ս Դ ի ո ն, 36, 15, 1 և 17, 2։

հասնել իրենց վերջնական նպատակին։ Ժողովրդական տրիբուն Գաբինիուսի առաջարկությամբ Հռոմում ընդունվեց մի նոր օրենք, որը Լուկուլլոսից ետ էր վերցնում նրա հրամանատարության իրավունքն ընդդեմ Միհրդատի, ինչպես և Բիթանիայի ու Պոնտոսի կուսակալությունները, և տալիս էր այդ իրավունքները նույն տարվա կոնսուլ Մանիուս Ակիլիուս Գլաբրիոնին։ Նույն օրենքով արձակուրդ էր տրվում Լուկուլլոսի հրամանատարության տակ գտնվող այն լեգեոնարներին, որոնց ծառայության ժամկետն արդեն լրացել էր։ Օրենքը հակառակողներին սպառնում էր նրանց գույքի բռնագրավմամբ։ Հռոմի այս կարգադրությունները, ինչպես հաղորդում է Ապպիանոսը[15], իսկույն հրապարակվել էին ամբողջ Ասիայում։

Այսպիսով, Լուկուլլոսը, որն արդեն վարկաբեկ էր եղել իր բանակում 68 և 67 թվերի ռազմական անհաջողությունների ու պարտությունների պատճառով՝ վերոհիշյալ օրենքի հրապարակումից հետո կորցրեց բոլորովին իր վարկն ու հեղինակությունը։ Գտնվելով այսպիսի ծանր դրության մեջ՝ նա տեսավ, որ իրեն ուրիշ ոչինչ բան չէր մնում անել, քան հանձնել հրամանատարությունը կոնսուլ Գլաբրիոնին, որն արդեն ժամանել էր Փոքր Ասիա։ Նա խնդրեց այս վերջինին, որ համաձայն հռոմեական ժողովրդի որոշման ընդունե իրենից զորքի գերագույն հրամանատարությունը։ Սակայն Գլաբրիոնը ևս, ինչպես և Մարկիուս Ռեքսը, մերժեց նրա խնդիրը և չհամաձայնեց վերցնել իր վրա նրա պատասխանատու պաշտոնը, որը դառել էր չափազանց դժվար ու վտանգավոր։

Այսպիսով, Լուկուլլոսը, թողնված լինելով ինքն իրեն և վախենալով, որ Միհրդատն ու Տիգրանն իրեն կարող են շրջապատել Տալավրայի մոտ՝ հրաման տվեց իր զորքին արշավել Տիգրանի դեմ, հույս ունենալով, որ կհաջողվի հանկարծակիի բերել նրա հոգնած զորքը, որը շտապում էր օգնության գալ Միհրդատին և արդեն գտնվում էր Եփրատ գետի մոտ։ Հռոմեական լեգեոնները սկզբում, թվում էր, թե կատարում էին նրա հրամանը։ Սակայն երբ, դուրս գալով Փոքր Հայքից՝ հասան մեծ ճանապարհի մոտ, որը մի կողմից գնում էր դեպի Եփրատ գետը, իսկ մյուս կողմից՝ դեպի Գալատիա՝ նրանք հրաժարվեցին գրնալ հայերի դեմ և գերադասեցին ետ դառնալ արևմուտք։ Զինվորների մեծագույն մասը, որոնց ծառայության ժամանակն արդեն լրացել էր՝ հայտնեցին, որ համաձայն օրենքի արդեն

[15] Միհրդատ., գլ. 90, համեմատե Ս ա լ լ ո ւ ս տ ի ո ւ ս, V, fr. 14 (Kritz)։

և կավերեն հռոմեական շրջանները։ Վտանգ էր սպառնում, նրա ասելով, հռոմեական դրամատերերի հարստություններին, որ նրանք զնտեղել էին պետական հարկերի հավաքման գործում։ Հուսալքվել էին, ասում է նա, բաժնետերերը և վարձակալական ընկերությունների գործակալները, որովհետև նրանք գիտեին, որ թշնամու ձիավոր ջոկատների ասպատակները կարող էին իրենց գրկել ամբողջ տարվա եկամուտից։ Վախենում էին վարձակալներն անգամ իրենց սարուկներից, որոնց նրանք պահում էին արոտավայրերում ու արտերում, նավահանգիստներում ու պահակակետերում։

67 թվին հռոմեական հանրապետության դրությունը ծանր ու աղետալի էր դառել ո՛չ միայն հռոմեական Ասիայում, այլև ծովի վրա ու նաև բուն Իտալիայում։ Զափազանց ուժեղացել էին այդ ժամանակ ծովահենները, որոնք պարզապես տեր ու տնօրեն էին դառել էգեյան ու Միջերկրական ծովերի։ Նրանք հարձակվում էին ո՛չ միայն առանձին նավերի, այլ նաև ռազմական նավախմբերի վրա։ Նրանք շարունակ կողոպտում էին ծովափնյա շրջանները և գերի էին տանում մինչևիսկ ամենաազնվական հռոմեական պաշտոնյաներին ու դինվորականներին։ Հաղորդակցությունը ծովով չափազանց վտանգավոր էր դառել և Իտալիայում ու առանձնապես Հռոմում, որը հացահատիկ էր ստանում օտար երկրներից՝ հացի գները խիստ բարձրացել էին և սկսվել էր արդեն ահավոր սովը։

Հռոմում զգացին, որ հանրապետության սովորական պաշտոնեությունը չի կարողանալու դուրս հանել երկիրը ճգնաժամային այդ դրությունից, այլ հարկավոր են արտակարգ իշխանություն ունեցող պաշտոնյաներ, որոնց պետք է տրվեն դիկտատորական լիազորություններ։

Լուկուլլոսի նահանջի հենց ժամանակ, նույն այս 67 թվին, ժողովրդական տրիբուն Գաբինիուսն անցկացրեց Հռոմում իր առաջարկը, որով Պոմպեոսը ստացավ դիկտատորական արտակարգ իրավունքներ, որպեսզի նա ոչնչացնի ծովահենների և վերականգնի ծովային հաղորդակցության ճանապարհների անվտանգությունը։

Պոմպեոսը կարողացավ, իրապես, զրավել ծովահենների ամրությունները և, ջախջախելով նրանց ուժերը՝ հարկադրեց նրանց անձնատուր լինել։ Այնուհետև, 66 թվի սկզբներին, ժողովրդական տրիբուն Մանիլիուսի առաջարկությամբ՝ Պոմպեոսին տրվեց արտակարգ իշխանություն (imperium majus) արևելյան պատերազմը շարունակելու համար։ Համաձայն այդ օրենքի Արևվելքից հետ կանչվեցին Մարկիուս Ռեքսը և Մանիուս Ակիլիուս Գլաբրիոնը, և նրանց պաշտոնները հանձնվեցին Պոմպեոսին։ Այս վերջինը, որը Լուկուլլոսի վաղեմի հակառակորդն էր, ստացավ այժմ, բացի Գաբինիուսի օրենքով իրեն տրված նախկին լիազորություններից, զորքի բարձրագույն հրամանատարությունն առաջիկա կռիվներում ընդդեմ Միհրդատի և Տիգրանի ու նաև բացարձակ իրավունք պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու հռոմեական ժողովրդի անունից։

66 թվին ռազմական գործողությունները վերսկսվեցին Արևվելքում Պոմպեոսի առաջնորդությամբ։

16. ՊՈՄՊԵՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՊՈՆՏՈՍ ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հռոմում ընդունվում էր Մանիլիուսի վերոհիշյալ օրենքը՝ Պոմպեոսն ինքը գտնվում էր Կիլիկիայում։ Ստանալով տեղեկություն, որ իր վաղեմի հույսերը լիովին իրականացել են և որ իրեն է հանձնված պոնտական ու հայկական պատերազմների վարումը՝ իսկույնևեթ նա սկսեց նախապատրաստվել պատերազմի[1]։ Նա կարգադրեց դաշնակից և ստորադրյալ ասիական իշխանավորներին ու քաղաքներին, որ ուղարկեն իրեն օգնական զորքեր։ Նրան հաջողվեց իր դրոշների տակ հավաքել մինչևիսկ այն արձակուրդավոր զինվորներին, որոնք հրաժարվել էին մնալ Լուկուլլոսի բանակում։ Ամենակարճ ժամանակվա ընթացքում նա համակենտրոնացրել էր Կիլիկիայում, բացի Մարկիուս Ռեքսի վերոհիշյալ երեք լեգեոններից և ասիական օգնական զորքերից, ավելի քան հիսուն հազար նոր զորք։

66 թվի սկզբներին, իր մեծ արշավանքը սկսելուց առաջ, Պոմպեոսը նախապես աշխատեց, իրեն հատուկ առանձին ղգուշավորությամբ, դիվանագիտական պատրաստություններ ևս տեսնել։ Նա ուղարկել էր Միհրդատի մոտ, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[2], իբր թե բարեկամական բանակցությունների համար փախստական Միտրոփանեսին։ Սակայն, իրապես, նրա ուղարկած այս դեսպանը գնացել էր Պոնտոս պարզապես հետախուզական ու լրտեսական նպատակներով։ Միևնույն ժամանակ Պոմպեոսի մի այլ դեսպանությունը գնացել էր նաև Տիգրոն՝ բանակցելու Հրահատ Գ-ի հետ և առաջարկելու, որ նա հռոմայեցիների հետ դաշն կնքե Պոնտոսի ու Հայաստանի թագավորների դեմ։ Այս դաշինքը գլուխ էր եկել, ինչպես վկայում է Դիոնը[3], նույն այն պայմաններով, որ 68 թվին պարթևաց թագավորին առաջարկել էին Տիգրանը և Միհրդատը։ Հրահատ Գ-ին խոստում էր տրված, որ նա կստանա ամբողջ Միջագետքը մինչև Եփրատ,

[1] Տե՛ս Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 45, 1—2։

[2] Գք. 36, գլ. 45, 2։

[3] Տե՛ս գք. 36, գլ. 45, 3։

այսինքն՝ այն երկրները, որ նրանից գրավել էր հարավում Տիգրանը։ Միևնույն ժամանակ առաջարկ էր արված Հրահատին, որ նա, գործակցելով իբրև դաշնակից՝ հարձակվի հայկական թագավորության վրա հարավ-արևելքից։

Դաշինքի կնքման առաջարկը, ինչպես մատնանշվում է պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում[4], Հրահատ Գ-ին համոզել էր ընդունել Տիգրան Բ-ի որդին, Տիգրան Կրտսերը, որը 66 թվի սկզբներին ապստամբել էր իր հոր դեմ և փախել էր Տիգրոն։ Ինձ թվում է, սակայն, որ տիրող ու ընդհանրացած այս կարծիքը ո՛չ միայն վիճելի է, այլև անհավանական։ Կասսիուս Դիոնի համապատասխան վկայության մեջ պարզ կերպով ակնարկված է, որ վերոհիշյալ դաշինքը Պոմպեոսի հետ կապված է եղել Կրտսեր Տիգրանի Տիգրոն գալուց առաջ, և այս վերջինը Հրահատ Գ-ին հորդորած է եղել միայն իրեն օգնելու արշավել Հայաստան։

> «Իսկ Տիգրանը, Տիգրանի որդին,— վկայում է Կասսիուս Դիոնը,—վերցնելով իր հետ մեծամեծներից ոմանց, որոնց հաճելի չէր ծերունու իշխանությունը՝ փախավ Հրահատի մոտ. և երբ սա մտածում էր, թե ի՛նչ պետք է անել ըստ դաշինքի, որ կապված էր Պոմպեոսի հետ՝ համոզեց նրան արշավել Հայաստան»[5]։

Ինչպես տեսնում ենք, 66 թվի սկզբներին քաղաքական դեպքերը դասավորվում էին ո՛չ ի նպաստ դաշնակից թագավորների։ Մասնավորապես Միհրդատը, որի դեմ շուտով արշավանք էր սկսելու Պոմպեոսը, այլևս չէր կարող հույս դնել ո՛չ պարթևների վրա, ո՛չ էլ, առանձնապես, Տիգրանի վրա, որի երկրում ծագել էին ներքին խռովություններ և ապստամբություն։

Ինչպես հաղորդում են Ապպիանոսը և Վալերիուս Մաքսիմուսը, դավադրությունները Տիգրան Բ-ի դեմ Հայաստանում տեղի էին ունեցել մի քանի անգամ։ Այդ դեպքերը սրանց մոտ պատմված են այնպիսի վիպական մանրամասնություններով[6], որոնք ըստ իս վիճելի են դարձնում նրանց արժանահավատությունը, և որոնք կարող են ընդունվել միայն որոշ վերապահումներով։ Այս հեղինակների վկայություններից երևում է, որ

[4] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 382, Моммсен, Римская история, т. III, էջ 104, Халатьянц, Очерк истории Армении, էջ 208 և ուրիշ.։

[5] Տե՛ս Դիոն, գք, 36, գլ. 51, 2։

[6] Տե՛ս Ապպիան., Միհր., գլ. 104 և Վալերիուս Մաքսիմուս, գք. 9, գլ. 11։

Տիգրանի արքունիքում, որն ամուսնացել էր Միհրդատի Կլեոպատրա դստեր հետ, սովորական էին դառել պալատական խարդավանքներն ու արյունահեղ ոճրագործությունները, որոնք մեծ չափերով առանձնահատուկ էին, ինչպես հայտնի է, նաև պոնտական, սելևկյան և այլ արևելյան արքունիքներին։

Տիգրանն ուներ Կլեոպատրայից, ինչպես վկայում է Ապպիանոսը[7], երեք որդիներ, որոնք բոլորն էլ թագավորական իշխանության էին ձգտում հոր մահից առաջ։ Նրանցից մեծը, Զարեհը[8], հայ իշխանների հետ, որոնք դժգոհ էին Տիգրանից, իր հոր դեմ դավադրություն էր կազմել նրան գահընկեց անելու նպատակով։ Դավադիրները, ինչպես պատմում է Վալերիուս Մաքսիմուսը[9], հավատարմության երդում տալով միմյանց, իրենց աջ ձեռքերից, ըստ տեղական սովորության, արյուն էին թողնում և ծծում փոխադարձաբար մեկը մյուսից։ Դավաճանությունը սակայն հաջողություն չէր ունեցել և Զարեհն ու նրա դավակից ընկերները հաղթվել էին և սպանվել։ Կլեոպատրայից ծնված Տիգրանի միջնակ որդին, որի անունը չէ պահպանվել, ուզեցել էր նույնպես գրավել հոր գահը, օգտվելով ուրիշ առիթից։ Ներսունի Տիգրանը որսի էր գնացել իր այդ որդու ու կրտսեր Տիգրանի հետ։ Որսի ժամանակ նա վայր էր ընկել ձիուց և ուշաթափվել։ Միջնակ որդին, թողնելով իր հորն այդ ծանր վիճակում՝ վերցրել էր նրա թագը և դրել իր գլխին, իսկ կրտսերը, մնալով նրա մոտ՝ խնամել էր նրան և օգնել։ Ներսունի թագավորը, ուշքի գալով՝ հրամայել էր միջնակ որդուն մահապատժել, իսկ կրտսերին խոստացել էր տալ իր թագն ու գահը։ Սակայն, Տիգրանի կապադովկիայում գտնված ժամանակ, ապստամբել էր, ինչպես տեսանք, նաև այս կրտսեր որդին։

66 թվի սկզբներին Տիգրանը, լուր ստանալով իր որդու ապստամբության մասին, ստիպված եղավ ընդհատել իր հաղթական արշավանքը Կապադովկիայում և վերադառնալ Հայաստան։ Ապստամբ որդին, որ պատերազմ էր սկսել իր հոր դեմ՝ պարտություն կրեց, փախավ դավադիր հայ մեծամեծների հետ Տիգրոն և այնտեղ ամուսնացավ պարթևների թագավոր Հրահատ Դ-ի դստեր հետ[10]։

[7] Միհրդ., գլ. 104։

[8] Վալերիուս Մաքսիմուսի մոտ (գք. 9, գլ. 11) Տիգրանի այս մեծ որդին անվանված է Sariaster, որ համապատասխանում է հայկական Զարեհ (Zariadris) անվանն։

[9] Տե՛ս գք. 9, գլ. 11, 3։

[10] Տե՛ս Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104, Դիոն, գք. 36, 51, 1, համեմատած նաև Gutschmid, Geschichte Irans, էջ 83։

Կրտսեր Տիգրանի այս ապստամբությունը Պոմպեոսի արշավանքի ճիշտ նախօրյակին ո՛չ միայն մեծապես թուլացրեց դաշնակից թագավորների դիմադրական ուժը, այլև պատճառ դառավ նրանց բարեկամական հարաբերությունների վատացման։ Ներսունի Տիգրանը, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[11], կասկածում էր, որ իր որդուն գրգռողը և ապստամբության դրդողը հենց ինքը Միհրդատն է։ Նրա կասկածները, իսկապես, որոշ հիմք ունեին։ Տիգրանը, լինելով դաշնակից Միհրդատի, վարում էր, ինչպես վերև տեսանք, իր սեփական ու ինքնուրույն քաղաքականությունը։ Եվ Միհրդատին ձեռնտու էր, իհարկե, հայկական գահի վրա տեսնել իր երիտասարդ թոռին, որին նա կկարողանար իր ձեռքին խաղալիք դարձնել։

66 թվի գարնանը Պոմպեոսը Կիլիկիայի ու Կապադովկիայի պաշտպանության համար թողեց Մարկիուս Ռեքսի երեք լեգեոնները, և ինքն իր հավաքած զորքերովն առաջ շարժվեց դեպի Գալատիա, որպեսզի փոխարինի Լուկուլլոսին և ընդունի նրանից զորքի գերագույն հրամանատարությունը։ Երկու զորավարների հանդիպումը տեղի ունեցավ, ինչպես հաղորդում է Ստրաբոնը[12], Դանալա ամրոցում, որը գտնվում էր Տրոքմների երկրում։ Թեև Լուկուլլոսի և Պոմպեոսի ընդհանուր բարեկամներն աշխատեցին հաշտեցնել նրանց իրար հետ, սակայն, իրապես, նրանց տեսակցությունը վերջացավ փոխադարձ անարգանքով ու վիրավորանքներով։ Պոմպեոսն անվավեր հայտարարեց Լուկուլլոսի կարգադրությունները, որ արված էին իր ժամանումից հետո, վերցրեց նրանից գրեթե ամբողջ զորքը և թողեց նրան միայն 1600 զինվոր, որոնք Լուկուլլոսի հետ գնացին Իտալիա։ Վերադառնալով Հռոմ՝ Լուկուլլոսը, ինչպես հայտնի է, այլևս քաղաքական որևէ դեր չկատարեց, այլ վարեց այնտեղ անգործ ու շռայլ կյանք և հայտնի եղավ իր քեֆերով ու կերուխումով՝ «Լուկուլլոսյան» կոչված՝ «փարթամ խնջույքներով», որոնց համար նա ուներ անչափ հարստություններ, որ իր հետ տարել էր կողոպտված Պոնտոսից ու Հայաստանից։

Տրոքմների երկրից, որը սահմանակից էր Միհրդատի թագավորության, Պոմպեոսն իր ամբողջ բանակով, որը բաղկացած էր ավելի քան հիսուն հազար միայն բուն հռոմեական զորքից[13],

[11] Գք. 36, գլ. 50, 1։

[12] Տե՛ս XII, 5, 2 (567)։

[13] Պոմպեոսի զորքի թիվը Մոմզենը ենթադրում է քառասուն կամ հիսուն հազար, չհաշված դաշնակիցների օգնական զորամասերը (տե՛ս „Римская

մտավ Պոնտոս, իսկ նավատորմիղը, որը բաղկացած էր մոտ 270 նավից, կարգադրություն ստացավ վերահսկել ծովափնյա շրջանների վրա և նեցուկ լինել ցամաքային զորքի արշավանքին։ Պոմպեոսի զինական այս մեծ ուժերի դեմ Միհրդատը, որի երկիրն ավերվել ու ուժասպառ էր եղել Լուկուլլոսի արշավանքների ժամանակ՝ կարողացել էր հավաքել ու դուրս բերել ընդամենը մոտ 30.000 հետևազոր և 2—3000 հեծելազոր[14]։ Հայաստանից նա այլևս չէր կարող օգնություն ստանալ, որովհետև ծերունի Տիգրանի դեմ պատերազմ էին սկսել Հրահատ Գ-ն և Կրտսեր Տիգրանը։

Թողնված լինելով ինքն իրեն և տեսնելով, որ պատերազմի վախճանը թշնամու զորքի թվական մեծ առավելությամբ գրեթե կանխորոշված է՝ Միհրդատն ուզեց Պոմպեոսի հետ հաշտություն խոսել առանց պատերազմի և ուղարկեց նրա մոտ իր դեսպաններին։ Սակայն Պոմպեոսի առաջարկած պայմաններն այնքան ծանր էին, որ համաձայնությունը գլուխ չեկավ։ Պոմպեոսը պահանջ էր դրել, որ Միհրդատը հանձնե իրեն պոնտական զորքի մեջ գտնվող փախստականներին ու նաև ինքը անձնատուր լինի առանց որևէ պայմանի[15]։

66 թվի գարնանը վերսկսվեց Պոնտոսում պատերազմը Միհրդատի դեմ։ Ինչպես 68—67 թվերին, Միհրդատը դարձյալ վարեց պարտիզանական լեռնային պատերազմ, որը, ինչպես տեսանք, մեծ հաջողությամբ կիրառվել էր Լուկուլլոսի դեմ։ Նա շարունակ ետ էր քաշվում, հարկադրում էր Պոմպեոսին իրեն հետապնդել, հարձակվում էր հանկարծակի, վնաս էր հասցնում թշնամուն և, ավերելով իր սեփական երկիրը՝ աշխատում էր դժվարացնել հռոմեական զորքի պարենավորումը[16]։

Հոգնելով այս անվերջ ու ապարդյուն երթերից՝ Պոմպեոսը հարկադրվեց դադարեցնել թշնամու հետապնդումը և ներս խուժեց Փոքր Հայք, որտեղ գրեթե հայկական պոնտական զորքեր, բայց

история", III, էջ 104)։ Ռեյնաքը բուն հռոմեական զորքի թիվը հաշվում է 60.000 (տե՛ս Mithridate Eupator, էջ 382)։ Սխալ է, անտարակույս, Ֆեռեոյի մատնանշած 30.000 թիվը, որովհետև այդ թիվը չէ հիշատակված Դիոնի մոտ, որի վկայության վրա նա հիմնվում է (տե՛ս Величие и падение Рима, т. I, էջ 212)։

14 Տե՛ս Ա պ պ ի ա ն., Միհրդ., գլ. 97 և Պ լ ու տ., Պոմպեոս, գլ. 32։ Ինձ թվում է, որ Միհրդատի հեծելազորի փոքր թիվը, որ մատնացույց է արված աղբյուրների մեջ՝ կարող է վիճելի համարվել, որովհետև 67 թվի կոիվների ժամանակ նա ուներ, ինչպես տեսանք, ութը հազար հեծելազոր։

15 Տե՛ս Ա պ պ ի ա ն ո ս, Միհրդ., գլ. 98 և Դ իո ն, գբ. 36, գլ. 45, 3—4։

16 Տե՛ս Դ ի ո ն, գբ. 36, գլ. 47, 1, համեմատե նաև Ա պ պ. Միհրդ., գլ. 97։

կային իր մեծ զորքի համար պարենի առատ պաշարներ։ Սակայն Միհրդատը ևս, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[17], շտապեց նույնպես գնալ Փոքր Հայք, ամրացավ դժվարամատչելի լեռան վրա և այստեղ ևս աշխատեց խափանել հռոմեական զորքի պարենավորումը։ Պոնտական թռուցիկ ձիավոր ջոկատները, որոնք շարունակ իշնում էին բաց դաշտ, անընդհատ հարձակվում ու հարվածում էին հռոմայեցիներին և խմբերով բանակ էին բերում իրենց կողմն անցած դասալիքներին։ Շուտով Պոմպեոսի դրությունը պարենի պակասության պատճառով այստեղ ևս ծանրացավ։ Բայց նրա բախտից Միհրդատը ստիպված եղավ ինքը հեռանալ իր հարմար դիրքերից, որովհետև անջրդի այդ վայրերում սպառվեցին նրա ջրի պաշարները։ Պլուտարքոսի ասելով[18]՝ Միհրդատի գրաված հենց նույն այս լեռան զառիվայրերի վրա հայտնաբերվեցին նրա հեռանալուց հետո ջրի առատ աղբյուրներ, որոնցից օգտվեցին Պոմպեոսի զորքերը։

Պոմպեոսը կրնկակոխ հետապնդեց Միհրդատին, որը նահանջում էր Փոքր Հայքի անտառախիտ ձորերի ու կիրճերի միջով, ուր նա անկարող էր օգտագործել իր հեծելազորը։ Հետապընդման ժամանակ Պոմպեոսի հետևազորի և հեծելազորի առանձին ջոկատները, դարանամուտ լինելով՝ մեծ կորուստ պատճառեցին Միհրդատի հեծելազորին[19]։ Այս մասնակի պարտությունից հետո՝ Միհրդատը, զգուշանալով Պոմպեոսի նոր հարձակումներից՝ գրավեց, ինչպես վկայում է Ստրաբոնը[20], «Դաստեյրայի[21] մոտ Անգելիսենի ջրառատ լեռը» և, ամրանալով նոր այս տեղում՝ նորից ուզեց խանգարել հռոմեական զորքի պարենավորումը։

Սակայն այս անգամ Պոմպեոսը կանչեց Կիլիկիայից այնտեղ թողնված երեք հռոմեական լեգեոնները և, ավելացնելով իր զորքի թիվը՝ չորս կողմից, մոտ 22 կիլոմետր տարածության վրա, պահապան պոստերի շղթայով շրջափակ պաշարեց Միհրդատի զորաբանակը և այժմ ինքը դժվարացրեց պարենի մատակարարումը Միհրդատի զորքին[22]։ Իսկ հռոմեական զորքը պարենի անհրաժեշտ պաշարներն անարգել կերպով ստանում էր եկեղեցյաց գավառից, որը գրավել էր Եփրատի ձախ ափում Պոմպեոսի զորամասերից մեկը։

---

17 Գբ. 36, գլ. 47, 2 և այլն։


18 Պ լ ու տ., Պոմպեոս, գլ. 32, 2։

19 Տե՛ս Փ ր ո ն տ ի ն ու ս, II, գլ. 5, 33 և Դ իո ն, գբ. 36, գլ. 47, 4։

20 Տե՛ս XII, 3, 28 (555)։

21 Օրոսիուսի մոտ Դաստրակուս է անվանված ինքը լեռը (Dastracus mons) տե՛ս գբ. VI, գլ. 4, 3։

22 Տե՛ս Ա պ պ ի ա ն ո ս, Միհրդ., գլ. 99 և Պ լ ու տ. Պոմպեոս, գլ. 32, 3։



Պոմպեոս

Պոնտական զորքը, որին կարողացել էր Պոմպեոսը շրջապատել՝ ընկավ այժմ խիստ ծանր դրության մեջ և, մատնվելով սովի՝ հարկադրվեց մորթել մինչևիսկ իր ձիերը։ Մնալ նրան Դաստեյրայի մոտ այլևս անկարելի էր։ Ուստի պաշարումից 45 օր հետո՝ Միհրդատը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[23], հրամայեց սպանել պոնտական բանակի թույլ ու հիվանդ զինվորներին և խորը գիշերով անցավ իր զորքով, հանդարտ ու լուռ, հռոմեական քնած պահակապոստների շղթայի միջով և փրկեց իր բանակը սովամահությունից։ Հետևյալ առավոտը Պոմպեոսը շտապ հետապընդեց նրան և երրորդ օրը հասավ նրա ետևից ու նորից նրան շրջապատեց մի նեղ կիրճում։ Միհրդատը չկարողացավ այլևս խուսափել ճակատամարտից։ Վճռական ու վերջին կռիվը տեղի ունեցավ Միհրդատի հետ Գայլ գետից դեպի հարավ, Ենդերեսից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող այժմյան Պյուրկի մոտ, ուր հիմնվեց հետո Նիկոպոլիս քաղաքը։

Հռոմեական զորքը, անցնելով հակառակորդի թիկունքը և գրավելով շրջակա բարձունքները՝ գիշերվա լուության մեջ հանկարծակի սոսկալի մարտական աղմուկ բարձրացրեց և չորս կողմից կարկտի նման թշնամու վրա թափեց քարեր, նետեր և տեգեր։ Ապա հռոմայեցիները ցած իջան բարձունքներից և կոտորեցին պոնտական գրեթե ամբողջ ահաբեկված ու խուճապահար զորաբանակը[24]։

Ինքը Միհրդատն այս անգամ ևս կարողացավ թողնել ճակատամարտի դաշտը և իր զորքի փոքրաթիվ մնացորդներով ու իր սիրուհու՝ Հիպսիկրատիայի ուղեկցությամբ, որը տղամարդու շորեր հագած նրան միշտ հետևում էր ու նրա կողքին մարտնչում՝ փախավ Հայաստանի սահմանում գտնվող Սինորիա ամրոցը։ Այս անգամ ևս նա հույս ուներ, որ ապաստան կգտնի Հայաստանում և օգնություն կստանա ծերունի Տիգրանից[25]։

Վերև հիշված Դաստեյրայի տեղադրությունը, ինչպես և Միհրդատի նահանջի ճանապարհը Դաստեյրայից մինչև Սինորիա, սխալ ու խառնաշփոթ կերպով են լուսաբանված պատմագիտական երկերում։ Խառնաշփոթությունները առաջ են եկել նրանից, որ ըստ կըզըենական աղբյուրները ևս իրար հետ համերաշխ չեն և տալիս

---

[23] Տե՛ս Պլուտ., Պոմպ., գլ. 32, 3 և Փրոնտինուս, I, 1, 7։

[24] Ճակատամարտի նկարագրությունը տարբեր կերպ է տրված գանազան աղբյուրներում, տես Ափպիանոս, Միհրդատ., գլ. 99 և 100, և Դիոն, գր. 36, գլ. 48, 3—5 և 49, 1—8 և Պլուտարքոս, Պոմպեոս, գլ. 32, 3—5։

[25] Տե՛ս Պլուտ., Պոմպ., 32, 6—7, Վալերիուս Մաքսիմուս, IV, 6, 2 և Ափպիանոս, Միհրդատ., գլ. 101։

են հաճախ տեղագրական անհավասար ու անճշգրիտ տեղեկություններ։ Այս մութ խնդիրը, ինձ թվում է, հաջողվել էր ինձ լուծել և պարզել աշխարհագրական իմ ուսումնասիրության մեջ, որը նվիրված էր Պտոլեմեոսյան քարտեզի մանրախույզ քննության[26]։

Արդ՝ ի նկատի ունենալով, որ առաջադրած իմ նոր պարզաբանումները ո՛չ միայն կարևոր են Փոքր Հայքի և Հայաստանի պատմական աշխարհագրության համար, այլև ճշտում են Պոմպեոսի արշավանքների պատմությունը և որոշում նրա զորքերի տեղաշարժումների հին ճանապարհները՝ ավելորդ չեմ համարում այստեղ ևս կանգ առնել այդ խնդրի վրա և քննության առնել սկզբնաղբյուրների վկայություններն ավելի հանգամանորեն, քան այդ արված էր աշխարհագրական իմ աշխատության մեջ։

Կարևոր այդ վկայությունները, որ վերաբերում են այս խնդրին, թարգմանաբար մեջ եմ բերում ամբողջությամբ, ընդգծելով այն հատվածները, որոնց մեջ տեղեկություններ են հաղորդված Դաստեյրայի, Սինորիայի և Նիկոպոլսի մասին։

1. *Ստրաբոն, XII, 3, 28 (Լայպցիգ, 1915)՝*

«Երբ զորեղացավ Միհրդատ Եվպատորը՝ նա տիրեց Կոլխիդային և այն բոլոր երկրներին, որ նրան հանձնել էր Անտիպատորը՝ Սիսիդի որդին։ Նա այնքան հոգս էր քաշում այդ տեղերի մասին, որ կառուցել էր նրանց մեջ յոթանասունհինգ ամրություններ, որոնց մեջ դրել էր իր գանձերի մեծագույն մասը։ Դրանցից ամենանշանավորներն էին Հիդարան, Բասպոյդարիդան, ևս Սինորիան, որը սահմանակից էր Մեծ Հայքին. և հենց այդ պատճառով Թեոփանեսն անվանել էր այդ տեղը Սինորիա։ Իսկ Պարիադրեսի ամբողջ լեռնային շրջանը, լինելով ջրառատ և անտառաշատ և անջատված լինելով զանազան կողմերից թեք ձորերով և սեպ լեռնագագաթներով՝ այնպիսի մեծ հարմարություններ ունի, որ այնտեղ էր հենց շինել Միհրդատը գանձերի պահեստատեղերի մեծագույն մասը. և, իրապես, վերջ ի վերջո, ինքը ևս, երբ նրան հետապնդում էր Պոմպեոսը, ապավինեց պոնտական թագավորության այս հեռավոր կողմերը. և գրավելով Դաստեյրայի մոտ Անգոլիսենեի[27] ջրառատ լեռը

[26] *Տե՛ս «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 68—73։*

[27] *Մենեքեի բնագիրը փոխանակ ձեռնագրական Ἀγγολισηνῆς ընթերցված ունի Ἀκιλισηνῆς, համաձայն Ռսիլանդերի ուղղման, տե՛ս* Markwart, Die Genealogie der Bagratiden, *էջ 60, ծանոթ.։*

(մոտ էր նաև Եփրատը, որը բաժանում էր Ակիլիսենեն Փոքր Հայքից)՝ մնաց այստեղ մինչև որ պաշարված լինելով՝ հարկադրված եղավ փախչել լեռներով Կողքիս և այնտեղից Բոսփոր։ Իսկ Պոմպեոսը այս տեղի մոտ հիմնեց Փոքր Հայքում Նիկոպոլիս քաղաքը, որը մնում է մինչև այժմ և շատ լավ բնակված է»։

2. *Պլուտարքոս, Պոմպեոս, գլ. 32, 3՝*

«Այնուհետև [Պոմպեոսը], բանակ դնելով նրա շուրջը՝ շրջափակ պաշարեց նրան։ Եվ նա [Միհրդատը], 45 օր պաշարմանը դիմանալուց հետո՝ իր զորքի ամենաուժեղ մասի հետ աննկատելի կերպով փախավ, իսկ անպետքներին և հիվանդներին սպանել տվեց։ Սակայն հետո նրա ետևից հասավ Եփրատի մոտերքում Պոմպեոսը և բանակեց նրա մոտ. բայց երկյուղ կրելով, որ նա կարող է իսկույնևեթ անցնել Եփրատը՝ առաջնորդեց նրա դեմ կես գիշերին իր սպառազինված զորքը»։

3. *Նույնը, Պոմպեոս, գլ. 32, 6—7՝*

«Վերջապես նրանք [փախչելիս] հասան Սինորա ամրությունը, որը լեփ լեցուն էր թագավորական փողերով և թանկարժեք իրերով։ ...Այստեղից նա [Միհրդատը] շարժվեց Տիգրանի մոտ Հայաստան, սակայն երբ սա մերժեց և նրա գլխի համար հայտարարեց հարյուր տաղանդ վարձատրություն՝ նա անցավ Եփրատի ակուեֆեների մոտով և փախավ Կողքիսի միջով»։

4. *Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 48, 1՝*

«Արդ՝ Միհրդատը, երբ այդ ամենը հաջող անցավ՝ գրավեց առժամանակ Արմենիայի Անահիտյան երկիրը, որը ենթված էր մի ինչ-որ համանուն աստվածության, և այնուհետև այստեղ նրան հարեցին ուրիշ շատերը։ Իսկ երբ Պոմպեոսին ևս միացան Մարկիուսի զինվորները՝ նա վախեցավ և այլևս չմնաց այդ երկրում, այլ իսկույն աննկատելի կերպով դուրս եկավ գիշերով և ապա, առաջ գնալով գիշերները՝ հանապարհվեց դեպի Տիգրանի Հայաստանը»։

5. *Նույնը, գր. 36, գլ. 54, 3՝*

«[Պոմպեոսը] հաղթ հիմնեց այն տեղում, որտեղ հաղթություն էր տարել[28], և տվեց իր վիրավոր ու հաստակամ զինվորներին։ Այնտեղ նրանց հետ միասին բնակություն հաստատեցին նաև ցանկացողները հարևան տեղերից։

[28] *Համեմատե՛ նաև Ա պ պ ի ա ն ո ս, Միհրդատ., գլ. 105։*

եվ նրանք գոյություն ունեն և այժմ և անվանվում են նիկոպոլսեցիք»:

6. Ապպիանոս, Միհրդատ., գլ. 101՝

«Միհրդատը, գցելով իրեն իր միայն թիկնապահների հետ դեպի թեք լեռները՝ փախավ ու ազատվեց, և ճանապարհին նրան պատահեցին ոմանք նրա վարձկան հեծելազորից և մոտ երեք հազար հետևակներ, որոնք ուղեկցեցին նրան մինչև Սինոռեգա ամրոցը»:

7. Օրոսիուս, գք. VI, գլ. 4, 3՝

«Պոմպեոսը... Փոքր Հայքում Դաստեյրան լեռան մոտ շրջափակ պաշարեց թագավորի [Միհրդատի] բանակը»:

Մեջ բերված այս վկայություններում հիշատակված են, ինչպես տեսնում ենք, հռոմեական-պոնտական կռիվների և Միհրդատի նահանջի երեք գլխավոր վայրերը Փոքր Հայքում՝ Դաստեյրան, Նիկոպոլիսը և Սինորիան: Այս երեք վայրերից եվրոպական պատմագիտության մեջ անվիճելի կերպով որոշված է միմիայն Նիկոպոլսի տեղադրությունը: Նա գտնվել է, ինչպես վերև ասացինք, այժմյան Պյուրկի մոտ, ուր հայտաբերված են արձանագրություններ, որոնց մեջ պարզ կերպով հիշատակված է Նիկոպոլիս քաղաքի անունը[29]:

Եվրոպական գիտնականներից շատերը՝ Ռեյնաքը, Մարկվարտը և ուրիշները՝ կարծում են սակայն, որ Նիկոպոլիսը հիմնված է եղել ո՛չ թե գիշերային ճակատամարտի և Պոմպեոսի վճռական հաղթության վայրում, ինչպես վկայում են քաղաքի անունը (Nikó—πολις= «Հաղթության քաղաք») և Կասսիուս Դիոնի ու Ապպիանոսի վերոհիշյալ ցուցումները (վկ. 5), այլ Դաստեյրայի տեղում, ինչպես այդ մատնանշված է վերև մեջ բերված Ստրաբոնի վկայության մեջ[30] (տե՛ս վկ. 1): Այս ենթադրությունը հիմնավորելու համար Մարկվարտը մատնացույց է անում, որ նաև Պլուտարքոսի վերոհիշյալ վկայության մեջ (վկ. 2) գիշերային կռվի տեղը ցույց է տրված «Եփրատ գետի մոտերքում»: Ուստի և նա կարծում է, որ Միհրդատի վերջնական պարտության տեղը պետք է լիներ Եփրատ գետի մոտ եկեղյաց հին գավառում:

Ռեյնաքի ու Մարկվարտի եզրակացության դեմ, որը առաջին հայացքից համոզիչ է թվում, գլխավոր առարկությունը կա-

[29] *Տե՛ս* Taylor J. G., Journal of a tour in Armenia, Kurdistan and Upper Mesopotamia, Journ. of Roy. Geogr. Soc., London, 1868, t. 38, *էջ 302:*

[30] *Տե՛ս* Reinach, Mithridate Eupator, *էջ 385, ծան. 1 և* Markwart, Die Genealogie der Bagratiden, *էջ 59—93:*

րող է, անշուշտ, այն լինել, որ Ստրաբոնի վերոհիշյալ մութ ու երկդիմի վկայությունից դժվար է անել որևէ հաստատուն հետևություն: Ընդհակառակը, Ստրաբոնն իր այդ վկայության մեջ հենց ինքը, ինչպես տեսանք, հաղորդում է, որ Դաստեյրայի մոտ է գտնվել «Եփրատ գետը, որը բաժանում էր Ակիլիսենեն Փոքր Հայքից»: Եվ ուշագրավ է, որ Ստրաբոնի այս ցուցմանը կատարելապես համապատասխանում է ո՛չ թե Ռեյնաքի և Մարկվարտի, այլ Ադոնցի նոր ենթադրությունը, որն ուշադրության չէ առնվել, դժբախտաբար, նորագույն ուսումնասիրություններում:

Ադոնցի կարծիքով[31] Ստրաբոնի հիշած Դաստեյրան համապատասխանում է այժմյան Դոստալին, որը գտնվում է Կամախի և Ակնի միջև Եփրատի աջ ափի մոտ. ուրեմն՝ հենց համաձայն Ստրաբոնի վկայության՝ թե Եփրատ գետի մոտ և թե Փոքր Հայքի ու Ակիլիսենեի սահմանում: Պետք է ի նկատի ունենալ, որ Միհրդատի ու Տիգրանի ժամանակ Ակիլիսենեն եղել է, ինչպես միանգամայն ճիշտ ենթադրում է Ադոնցը, խիստ ընդարձակ մի շրջան և բովանդակել է իր մեջ ո՛չ միայն հին Հայաստանի եկեղյաց գավառը, այլ, հավանորեն, նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունը և Մզուրը[32]:

Որ Դաստեյրայի ու այժմյան Դոստալի նույնացումը կարելի է հաջող և ընդունելի համարել՝ այդ ցույց են տալիս նաև ներքև մեջ բերված մեր դիտողությունները Դաստեյրայի հեռավորության մասին Նիկոպոլսից:

Կարևոր է նախ մատնանշել, որ այժմյան Դոստալը հիշատակված է նաև Տայլորի մոտ, Զիմարայից մոտ 10—12 կիլոմետր հեռավորության վրա և այժմյան Պյուրկից (=Նիկոպոլիս) Զիմարա տանող ճանապարհի վրա, որը մանրամասն նկարագրված է նրա «Օրագիր մի պտույտի մասին Հայաստանում են» աշխատության մեջ[33]: Տայլորի նկարագրած այս ճանապարհը պարզապես Պևտինգերյան քարտեզի Նիկոպոլիս.—Զիմարա ճանապարհագիծն է, որի ուղղությունը ճիշտ է որոշված թե Ադոնցի մոտ և թե Կոնրադ Միլլերի բացատրական քարտեզում[34]: Պևտինգերյան քարտեզում Նիկոպոլսի հեռավորությունը Զիմարայից ցույց

[32] *Տե՛ս* «Армения в эпоху Юстиниана», *էջ* 54:

[33] *Տե՛ս նույնը, էջ 54—55:*

[33] *Տե՛ս* Journal of the Royal Geographical Society, vol. 38, London 1868, *նաև նույն աշխատության* Астафьев-ի *ռուսերեն թարգմանությունը՝* „Материалы для географии Азиятской Турции", Тифлис, 1874, прил. 11 к тому 11 „Изв. Кавк. Отдел. Рус. Геогр. Общества":

[34] *Տե՛ս* K. Miller, Itineraria Romana, Stuttgart, 1916, *էջ 679—680:*

է տրված 75 հռոմեական մղոն կամ մոտ 111 կիլոմետր։ Պարզ է, ուրեմն, որ տարածությունը Պյուրկ-Նիկոպոլսից մինչև այժմյան Դոստալ պետք է լիներ մոտավորապես 100 կիլոմետր և Դոստալից մինչև Զիմարա՝ մոտ 11 կիլոմետր։

Այս տարածությունները մի նոր ապացույց են, անշուշտ, Դաստեյրայի ու Դոստալի նույնության։ Պոմպեոսը, հետամտելով Միհրդատին, որը նահանջելու էր, բնականաբար, արագացրած երթով, կարող էր հասնել Դաստեյրա-Դոստալից Նիկոպոլիս-Պյուրկ ճիշտ և ճիշտ միայն երրորդ օրը, ինչպես այդ վկայում են հին հեղինակները։

Ճիշտ պետք է համարել ըստ այսմ և Կասսիուս Դիոնի ու Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը, որ Նիկոպոլիսը հիմնված է եղել ո՛չ թե Դաստեյրայում, ինչպես ենթադրում են Ռեյնաքը և Մարկվարտը, այլ Պոմպեոսի հաղթության և Միհրդատի վերջնական պարտության տեղում, այսինքն՝ Դաստեյրայից մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա գտնվող այժմյան Պյուրկում։

Վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված վայրերից երրորդի, Սինորիայի, տեղադրությունը ևս քննված է ու որոշված իմ պատմական-աշխարհագրական նույն աշխատության մեջ[35]։

Սինորիա ամրությունը, ինչպես մատնացույց է արել Կոնրադ Միլլերը, համապատասխանում է, անշուշտ, Պևտինգերյան քարտեզի Սինարա կայարանին։ Սակայն նրա և Ռ. Կիպերտի մոտ[36] սխալ է որոշված սրա տեղադրությունը։ Միլլերը Սինարայի տեղը ենթադրում է այժմյան Սրնկաոհճում, իսկ Կիպերտն՝ այժմյան Ալաջայում։ Սակայն, իրապես, նա գտնվել է, ինչպես մանրամասն ցույց է տրված վերոհիշյալ իմ աշխատության մեջ, այժմյան Գաղտաոհճից, որը համապատասխանում է Պևտինգերյան քարտեզի *Chalchdiaris կայարանին, 15 հռոմեական մղոն կամ մոտ 22 կիլոմետր հեռավորության վրա և ըստ այս տարածության ընկնում է Գաղտաոհճից Սատաղ տանող ճանապարհի վրա, Աշկալայից մոտ 15 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք՝ Եփրատ գետի մոտ։ Սինորիայի մասին կարևոր է ուէական Ստրաբոնի վերոհիշյալ վկայությունը (տե՛ս վերև վկ. 1), որից երևում է, որ նա նշանավոր մի ամրություն է եղել Միհրդատի թագավորության մեջ և գտնվել է Պոնտոսի ու Մեծ Հայքի սահմանում։ Այս վկայությունից, ինչպես տեսնում ենք, կարելի է եզրակացնել, որ Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանի հարավ-արևմտյան սահմանը հասնում էր մինչև այժմյան Կոպ-Դաղի լեռները, որոնց հարավ-արևելյան սառոռաններում, Եփրատ գետի մոտ, գտնվել է Սինորիա նշանավոր ամրությունը՝ Պևտինգերյան քարտեզի Սինարա կայարանը։

Որ մեր եզրակացությունը Սինորիայի տեղադրության մասին ստույգ է և անվիճելի՝ այդ հաստատում են Մարկվարտի նոր դիտողությունները, որ մեջ են բերված նրա վերոհիշյալ աշխատության մեջ[37]։ Մարկվարտը ևս հանգել է այժմ նոր եզրակացության, որ Միհրդատի և Տիգրանի ժամանակ Դերջան գավառը պատկանել է, հավանորեն, Միհրդատին, իսկ սրա վերջնական պարտությունից հետո, «Ակիլիսենեն և Դերջանը և թերևս նաև Կարենիտիսը» կցվել են Հայաստանին։ Նրա ենթադրությունը հավանական չէ, ինչպես տեսնում ենք, Կարենիտիս գավառի նկատմամբ, որն ըստ մեր եզրակացության պատկանել է մինչև Սինորիան ու Կոպ-Դաղը Հայաստանին։

Տեղագրական վերոհիշյալ խնդիրների վրա մենք անհրաժեշտ համարեցինք ընդարձակ կերպով կանգ առնել, որովհետև այդ մասում պատմագիտական երկերը կարոտ են հիմնական սրբագրության։ Մեր նոր ուսումնասիրությամբ Միհրդատի նահանջի ճանապարհը Դաստեյրայից մինչև Սինորիա պարզ կերպով որոշվում է Պևտինգերյան քարտեզի և Անտոնինոսի ճանապարհացույցի Zimara-Nikopolis և Nikopolis-Satala հին ուղեգծերով, որոնք քննված են ու լուսաբանված Ադոնցի և իմ պատմական-աշխարհագրական աշխատություններում[38]։

Սինորիա ամրոցը, ուր փախել էր Միհրդատն իր զորքի անհնազն մնացորդներով՝ նրա խոշորագույն գանձապահեստներից մեկն էր։ Այստեղ պահվում էին, ինչպես վկայում են Ապպիանոսը և Պլուտարքոսը[39], վեց հազար տաղանդ դրամ (=մոտ 25 միլիոն ոսկի մարկ կամ $12^1/_2$ միլիոն ոսկի ռուբլի) և թանկարժեք իրեր ու շորեր։ Սինորիայում Միհրդատը բաժանեց իր զորքին փող և նվերներ ու Տիգրանի մոտ ուղարկեց այստեղից սուրհանդակներ խնդրելու նրանից հյուրընկալություն։ Սակայն, ինչպես վերև հիշեցինք, ծերունի Տիգրանը կասկածում էր, և ո՛չ առանց հիմ-

[35] Տե՛ս «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 66—68։

[36] Տե՛ս K. Miller, Itineraria Romana, էջ 676—677 և R. Kiepert, Atlas von Kleinasien in 24 Biättern, 1902—1906։

[37] Տե՛ս Die Genealogie der Bagratiden, էջ 63։

[38] Տե՛ս Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 75—80 և իմ աշխատությունը՝ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 66—81։

[39] Ապպիանոս, Միհրդատ., գլ. 101 և Պլուտ., Պոմպեոս, գլ. 32, 6։

լի, որ իր որդուն դրդռողն ու իր դեմ բարձրացած ապստամբության գլխավոր դրդիչն ինքը Միհրդատն էր։ Ուստի և նա ո՛չ միայն մերժեց նրան ընդունել և օգնել, այլև ձերբակալեց սրա ուղարկած սուրհանդակներին և ուղարկեց նրանց Պոմպեոսին։ Նա ազդարարների միջոցով հայտարարեց, բացի այդ, որ Միհրդատի գլխի համար նա սահմանել է 100 տաղանդ դրամավարձ (=մոտ 420.000 գերմանական ոսկի մարկ կամ 210.000 ոսկի ռուբլի)։

Ֆրանսիական գիտնականներ Տուրնեբիզը և Մորգանը, ինչպես և Մոմզենը, միանգամայն իրավացի կերպով ենթադրում են[40], որ Միհրդատի փախուստի հենց ժամանակ Տիգրանը սկսել էր արդեն վարել Պոմպեոսի հետ հաշտության բանակցություններ։

Ըստ երևույթին, Միհրդատը նաև ինքն այլևս հույս չուներ ընդունելություն գտնելու իր փեսայի մոտ Հայաստանում։ Առանց Տիգրանից պատասխանի սպասելու՝ նա իր փոքրաթիվ զորաբանակով առաջ շարժվեց Սինորիայից դեպի հյուսիս։ Նա հույս ուներ, որ, հասնելով Սև ծովի հյուսիսային ափերը՝ իր Բոսփորյան նախկին թագավորությունից կկարողանա դուրս վտարել իր ապրստամբ որդուն, որը հռոմայեցիների հետ արդեն դաշն էր կնքել։

Միհրդատի ճանապարհը Սինորիայից մինչև Կողքիս մանրամասն նկարագրված է Ապպիանոսի մոտ[41]։ Սինորիայից նա գնացել էր Եփրատի ափերով և հասել մինչև նրա ակունքները։ Այստեղ նա մնացել էր երեք օր և կարգի էր բերել իր զորքերը։ Այնուհետև նա ուղղվել էր դեպի հյուսիս Հայաստանի Խոտենե[42] գավառի միջով, ուր խոտենցիները և իբերները, զինված նետաղեղներով ու պարսատիկներով՝ ուղեցել էին փակել նրա ճանապարհը։ Սակայն Միհրդատը նրանց ետ էր մղել և Ճորոխ գետի երկայնությամբ ու Սև ծովի ափերով հասել էր Փասիս (այժմյան Փոթի)

[40] Տե՛ս Fr. Tournebize, Histoire politigue et religieuse de l'Arménie, էջ 774, J. de Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919, էջ 78 և Моммсен, Римская история, т. III, 107։

[41] Տե՛ս Ապպիանոս, Միհրդ., գլ. 101, համեմատե՛ նաև Պլուտ, Պոմպեոս, 32, 7 և Դիոն, գր. 36, գլ. 50, 2—3։

[42] Հյուբշմանը կարծում է, որ Խոտենեն (Χωτηνή), որը հին Հայաստանի գավառներից մեկն է, գտնվել է Եփրատ գետի ակունքների ու Ափսարոս գետի միջև (տե՛ս «Հին Հայոց տեղվոյ անունները», թարգմ. Պիլոսիկեան, Վիեննա, 1907, էջ 19, ծան. 1)։ Իսկ Ռեյնաքը ենթադրում է, որ Խոտենեն համապատասխանում է Ստրաբոնի հիշատակած Χοζηνή-ին, տե՛ս Mithridate Eupator, էջ 389, ծան. 2։

և այնտեղից Դիոսկուրիաս։ Միհրդատի ճանապարհը պետք է ըստ այսմ ենթադրել այժմյան Աշկալայի և էրզրումի մոտով դեպի Թորթում և այստեղից Արդվինի ու Բաթումի վրայով դեպի Սուխում։

Միհրդատի փախուստից հետո Պոմպեոսը պատերազմը նրա դեմ համարեց վերջացած և նույն 66 թվին առաջնորդեց իր զորքը դեպի Հայաստան։

17. ՏԻԳՐԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՄՊԵՈՍԻ ՀԵՏ

Մինչդեռ Պոնտոսում տեղի էին ունեցել վերև նկարագրված անցքերը՝ Հայաստանն իր հերթին ենթարկվել էր հարձակման։ Պարթևների թագավոր Հրահատ Գ-ն, իր նորափեսա Կրտսեր Տիգրանի խնդիրքով և, հավանորեն, նաև Պոմպեոսի դրդմամբ՝ պատերազմ էր սկսել Տիգրան թագավորի դեմ, որը նրա անհաշտ թշնամին էր ու թշնամին։ Տիգրանի ապստամբ որդու և խոովարար հայ մեծամեծների ուղեկցությամբ՝ նա ներս էր խուժել Հայաստան և, նվաճելով նրա հարավ-արևելյան շրջանները՝ հասել էր մինչև Արտաշատ մայրաքաղաքը։

Մերունի Տիգրանը, որը հանկարծակիի էր բերվել, հարկադրվեց, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[1], փախչել իր երկրի լեռնային շրջանները։ Սակայն Արտաշատ քաղաքը, հավատարիմ մնալով Տիգրան թագավորին՝ ցույց տվեց համառ դիմադրություն։ Ինչպես հայտնի է Ստրաբոնի վկայությունից, հին Արտաշատը շնորհիվ իր ամրությունների գրեթե անմատչելի էր։

> *«Այս քաղաքը,— ասում է Ստրաբոնը[2],— գտնվում է թերակղզու նմանվող մի խորշում, որը, բացառությամբ պարանոցի, շրջապատված է պարսպով ու նրա առջև հոսող գետով, իսկ պարանոցը փակված ու պաշտպանված է խրամով ու ցցապատնեշով»։*

Շնորհիվ նրա ամուր այս դիրքի՝ պարթևները, որոնք չունեին ամրացրած քաղաքների պաշարման փորձ՝ չկարողացան նրան առնել և պաշարումը խիստ երկարեց։

Կասսիուս Դիոնի պատմելով[3], երբ պարթևների թագավորը տեսավ, որ պաշարումը խիստ երկար է տևելու՝ իր ուժերի մի մասը թողեց Տիգրանի որդուն և վերադարձավ իր երկիրը։ Սակայն հենց որ նա հեռացավ՝ ծերունի Տիգրանը, որն իր շուրջն էր հավաքել իրեն հավատարիմ մնացած զորական ուժերը, հարձակվեց դավաճան որդու և ապստամբած հայ իշխանների վրա, հաղթեց նրանց և հալածեց ու իր իշխանությունը վերահաստատեց ամբողջ իր երկրում։ Կրտսեր Տիգրանը հարկադրված եղավ Հայաստանից փախչել և ուղեց գնալ Միհրդատի մոտ ու ուղևորվեց դեպի Պոնտոս, սակայն, իմանալով ճանապարհին, որ իր պապը ծանր պարտություն է կրել և կարոտ է ինքը օգնության՝ փոխեց իր ծրագիրը և գնաց Պոմպեոսի մոտ։ Նա հույս ուներ, որ, համաձայնության գալով հռոմայեցիների հետ՝ կկարողանա այս նոր դավաճանության գնով ստանալ իր հոր գահը և թագավորությունը։

Պլուտարքոսի կարևոր մի վկայությունից[4] երևում է, որ Կրտսեր Տիգրանը եկել էր հռոմեական բանակը և հանդիպել էր Պոմպեոսին Արաքսի ափին։ Նրանց հանդիպման տեղը կարելի է ենթադրել այժմյան Քևիրիքեի մոտ։ Այստեղ հենց, Բարձր Հայքից Արտաշատ տանող ճանապարհի վրա, Արաքս գետի ափին, գտնվում էր, իրապես, ինչպես ցույց ենք տվել աշխարհագրական մեր աշխատության մեջ[5], Պևտինգերյան քարտեզի Ad Confluentes կամ «Գետախառնուրդի մոտ» կայարանը։

Հռոմեական զորավարն ուրախ պիտի լիներ, անշուշտ, որ Տիգրանի ապստամբ որդին, դավաճանելով իր հորը՝ ապավինում էր հռոմայեցիների հովանավորությանն ու օգնությանը։ Բայց Կրտսեր Տիգրանն արդեն ուշացել էր։ Նրա Պոմպեոսի մոտ գալուց դեռ առաջ՝ ծերունի Տիգրանը, տեսնելով որ անկարելի է միաժամանակ պատերազմել թե պարթևների ու իր որդու և թե հռոմայեցիների դեմ՝ սկսել էր, ինչպես վերև տեսանք, հաշտության բանակցություններ վարել Պոմպեոսի հետ։ Բանակցությունները դեռ չավարտած՝ նա ձերբակալել ու հանձնել էր Պոմպեոսին Միհրդատի պատվիրակներին և իր աներոջ գլխի համար վարձատրություն էր սահմանել 100 տաղանդ, այսինքն՝ ավելի քան 200.000 ոսկի ռուբլի։

Հավանորեն, Պոմպեոսն ինքն ևս դեմ չէր հաշտության, սակայն նա, օգտվելով Հայաստանում ծագած ներքին խռովություններից՝ ուզում էր, իհարկե, Տիգրանին առաջադրել խաղաղության պայմաններ ըստ իր հայեցողության։ Կասսիուս Դիոնի ուշագրավ մի վկայությունից[6] պարզ ու որոշ երևում է, որ այդ բանում Պոմպեոսին մեծապես օգնել էր Կրտսեր Տիգրանը, որն

[1] *Տե՛ս գք. 36, գլ. 51, 2։*
[2] *XI, 14, 6 (529)։*
[3] *Գք. 36, գլ. 51, 2։*

[4] *Պլուտ., Պոմպեոս, գլ. 33, 1։*
[5] *Տե՛ս «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 60--62։*
[6] *Գք. 36, գլ. 52, 1։*

ամեն կերպ խոչընդոտել ու խանգարել էր սկսած բանակցությունները։ Ըստ Դիոնի՝ որդու այս հակառակությունն էր պատճառը, որ ծերունի Տիգրանը չէր կարողացել դաշն կնքել չափավոր պայմաններով։


Կրտսեր Տիգրանը, հույս ունենալով, որ կստանա իր հոր գահը՝ ուղեցույց դառավ հռոմեական զորքին և առաջնորդեց Պոմպեոսին ուղիղ Արտաշատի վրա։ Այս արշավանքի ճանապարհը ևս պարզ կերպով որոշվում է Պետինգերյան քարտեզի Սատաղ—Բագավան—Արտաշատ հին ուղեգծով, որ մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխարհագրական իմ ուսումնասիրության մեջ։ Հռոմեական բանակը եկել էր Սատաղից Գաղտատիճի վրայով Քևիրիքե և այնուհետև գնացել էր Ալաշկերտի դաշտը և այստեղից Հայկական Պար կամ Ազրի-դաղ լեռնաշղթայի հարավային կողմով ու Կուջաղի լեռնանցքով մտել էր Արարատյան դաշտը։ Կասսիուս Դիոնի կարևոր մի վկայությունից[7] կարելի է հետևցնել, որ Պոմպեոսը ևս, ինչպես հետագայում նաև Կորբուլոնը՝ Արաքս գետն անցել էր Արարատյան դաշտում հին Վարդանակերտի մոտ գտնվող ծանծաղուտով[8] և Արտաշատին մոտեցել էր Արաքսի ո՛չ թե աջ, այլ ձախ կողմից։

Երբ Պոմպեոսի զորաբանակը մոտեցել էր Արտաշատին՝ Տիգրան Բ-ն, տեսնելով որ դիմադրությունն աննպատակ է ու անօգուտ՝ վճռեց, ինչ գնով էլ լինի, համաձայնության գալ Պոմպեոսի հետ և գնաց ինքը անձամբ նրա մոտ ու կամավոր կերպով անձնատուր եղավ հռոմայեցիներին։ Տիգրանի տեսակցության մասին Պոմպեոսի հետ հին աղբյուրները տալիս են խառնաշփոթ տեղեկություններ, որոնք կարևոր մի քանի կետերում իրարից զգալի չափով տարբերվում են։ Ապպիանոսը, օրինակ, թեև ինքը՝ համապատասխան Կասսիուս Դիոնի և Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունների՝ վկայում է, որ Տիգրանի գնալը Պոմպեոսի մոտ ինքնաբերաբար էր ու հոժարակամ, սակայն միևնույն ժամանակ մատնանշում է, թե ոմանք վկայում են նաև, որ Տիգրանին նախապես հրավիրել էր Պոմպեոսը։

Ինձ թվում է, որ այս վերջին տեղեկությունը, որը հիշատակված է Ապպիանոսի մոտ թուրքիկ կերպով և որը պատմագիտական երկերում աչքաթող է արված, կարող է ճիշտ լինել, որովհետև Պլուտարքոսի մոտ ևս մատնացույց է արված, որ Տիգ-

[7] Տե՛ս նույնը։

[8] Տե՛ս «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 45—46։



Պոմպեոսի ճանապարհը փոքր Հայքից դեպի Արտաշատ։

բանը, նախքան Պոմպեոսի մոտ գնալը, ներս էր թողել Արտաշատ նրա ուղարկած հռոմեական կայազորը։ Անհավանական չէ, ուրեմն, որ Տիգրանը Պոմպեոսի մոտ գնացել էր, իրոք, ո՛չ թե ինքնաբերաբար, այլ, հավանորեն, հատուկ հրավերով և նախնական բանակցություններից ու թերևս որոշ հավաստիացումներից հետո։ Հռոմեական աղբյուրներն աշխատել են, ըստ երևույթին, քողարկել նախնական համաձայնության հավանական այս փաստը և, Պոմպեոսին մեծարելու համար, կարևոր են համարել առանձնապես շեշտել, որ Տիգրանն ապավինել էր Պոմպեոսի գթասրտությանը հլու ու անվերապահ կերպով։

Համաձայն աղբյուրների տված տեղեկություններին՝ ծեռունի Տիգրանը, որն այդ ժամանակ մոտ 75 տարեկան էր, Պոմպեոսի մոտ եկել էր ձի հեծած, առանց արքայական ծիրանու, բայց գլխին ուներ իր խույրն ու ապարոշը։ Երբ նա հասել էր հռոմեական զորաբանակի մուտքի առջև, ուզեցել էր, ինչպես այդ ընդունված էր հայերի մոտ, մտնել ճամբար ձիով։ Սակայն Պոմպեոսի թիկնապահների պահանջով նա, համաձայն հռոմեական կարգերի, իջավ ձիուց ցած, տվեց նրանց իր սուրը ու ներս մտավ ոտքով։ Մտնելով Պոմպեոսի մոտ, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[9], նա դեն գցեց իր խույրը և ուզեց խոնարհվել ու նրան ողջունել, սակայն Պոմպեոսն իսկույն տեղից վեր կացավ, նրան բարձրացրեց և նստեցրեց իր կողքին։ Կասսիուս Դիոնի ասելով՝ Պոմպեոսն այնուհետև Տիգրանին մխիթարեց և հայտնեց, որ նա ո՛չ միայն կմնա Հայաստանի թագավոր, այլև կհամարվի հռոմայեցիների բարեկամ ու դաշնակից։ Ապա ծերունուն հանգստացնելուց ու քաջալերելուց հետո՝ Պոմպեոսը նրան հրավիրեց ճաշի։ Տիգրանի որդին, որը ներկա էր ու նստած էր Պոմպեոսի մյուս կողքին և որը հույս ուներ Պոմպեոսից ստանալու Հայաստանի գահը, տեսնելով, որ ինքը խաբված է՝ խիստ դժգոհ մնաց և Պոմպեոսի մոտ չգնաց ճաշի, որին հրավիրված էր հոր հետ միասին։

Տիգրանի ու Պոմպեոսի տեսակցության վերաբերող այս նկարագրությունը, որը կարող է, ինչպես ասացինք, աշառու կերպով գունավորված լինել՝ մենք մեջ բերինք, գլխավորապես, համաձայն Կասսիուս Դիոնի վկայություններին։ Պետք է սակայն մատնանշել, որ Պլուտարքոսի ու Ապպիանոսի համապատասխան հատվածներում կան անհաշտելի շեղումներ, որոնք պարզ ցույց են տալիս, որ նրանց վկայություններին հիմք են ծառայել տար-

[9] Գր. 36, գլ. 52, 3։

բեր սկզբնաղբյուրներ։ Ռեյնաքի կարծիքով, Կասսիուս Դիոնը կարող էր իր պատմության այս մասում օգտված լինել Լիվիուսից։ Պլուտարքոսը՝ Պոմպեոսի կենսագիր Թեոփանես Միտիլենացուց, իսկ Ապպիանոսը՝ Նիկոլայոս Դամասկացուց կամ Պոսիդոնիոսից[10]։

Ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել այս երեք աղբյուրների տեղեկությունները Տիգրանի ու Պոմպեոսի տեսակցության մասին։

1. Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 52, 1—4՝

«Եվ երբ Պոմպեոսն անցավ Արաքսը և մոտեցավ Արտաշատին՝ Տիգրանը և՛ քաղաքը նրան հանձնեց, և՛ ինքը հոժարակամ եկավ նրա բանակը։ Նա ցույց տվեց բացահայտ կերպով, որքան այդ հնարավոր էր, իր նախկին մեծությունը և այժմյան խոնարհությունը, որպեսզի արժանի երևա թե հարգանքի և թե կարեկցության։ Նա հանել էր մեջընդմեջ սպիտակ իր պատմուճանը և համակ ծիրանի վերարկուն, բայց ուներ գլխին իր խույրն ու ապարոշը։ Արդ՝ Պոմպեոսը, ընդառաջ ուղարկելով նրան իր թիկնապահներից մեկին՝ նրան իջեցնել տվեց ձիուց (որովհետև Տիգրանը, ինչպես նրանց մոտ սովորություն է՝ ներս էր մտնում ճամբարը ձիով)։ Բայց երբ Պոմպեոսը տեսավ, որ նա ներս մտնելով ոտքով՝ դեն գցեց խույրը և ուզում էր խոնարհվել իրեն ողջունելու համար՝ խղճահարվեց, վեր կեցավ տեղից, բարձրացրեց նրան, դրեց խույրը գլխին և նստեցրեց իր կողքի բազմոցի վրա։ Նա մխիթարեց նրան և ի միջի այլոց ասաց, որ նա ո՛չ միայն չէ կորցրել հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել նաև հռոմայեցիների բարեկամությունը։ Այսպիսով Պոմպեոսը մտերմացավ նրա հետ և հրավիրեց ճաշի։ Իսկ որդին, որը նստած էր Պոմպեոսի մյուս կողքին՝ հոր առջև վեր չկեցավ տեղից, և ո՛չ էլ նրան որևէ այլ կերպ պատվեց։ Նա նմանապես չգնաց ճաշի, որին հրավիրված էր։ Եվ հենց սրանով նա մեծապես իր դեմ գրգռեց Պոմպեոսի ատելությունը»։

3. Պլուտարքոս, Պոմպեոս, գլ. 33, 1—4՝

«Իսկ Տիգրան թագավորը, որին Լուկուլլոսը քիչ առաջ ջարդ էր տվել, իմանալով որ Պոմպեոսը բնավորությամբ մեղմ է և հեզ՝ ներս թողեց հռոմեական կայազորն իր մայրաքաղաքը և, վերցնելով իր բարեկամներին ու ազգականներին՝ գնաց, որպեսզի անձնատուր լինի Պոմպեոսին։

[10] Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 452։

Երբ նա հասավ ձի հեծած համբարի ցցապատնեշին՝ նրան մոտեցան Պոմպեոսի երկու թիկնապահները և հրամայեցին ձիուց ցած իջնել ու գնալ ոտքով,—որովհետև երբեք չի տեսնված, որ որևէ մի մարդ հռոմեական բանակ մտնի ձի նստած։ Տիգրանը հնազանդվեց ու հանեց և նրանց տվեց նաև իր սուրը։ Եվ հետո, երբ նա եկավ իրեն Պոմպեոսի մոտ՝ հանեց իր խույրը և ուղեց դնել նրա ոտքերի մոտ[11] և, բացի այդ, խոնարհվելով—որ ամենից ամոթալին էր—ուզում էր նաև ծունր իջնել։ Սակայն Պոմպեոսը, բռնելով նրա աջ ձեռքից՝ կանխեց այդ, քաշեց իր մոտ և նրան նստեցրեց իր կողքին, իսկ որդուն մյուս կողքին։ .....Բայց որդին դժգոհ մնաց և, հրավիրված լինելով ճաշի, ասաց, որ նա կարիք չունի նման պատիվների Պոմպեոսի կողմից և որ նա կգանի հռոմեացիների մեջ մեկ ուրիշին»։

3. Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104՝

«Սակայն բարբարոսների մոտ մեծապես համբավված էին Պոմպեոսի արդարամտությունը և հավատարմությունը։ Հույս դնելով նրա այդ համբավի վրա՝ նրա մոտ գնաց, առանց նախապես լրատար ուղարկելու, Տիգրան Հայրը։ Եվ սա, ամեն բանում իրեն տրամադրելով Պոմպեոսի արդարադատությանը՝ ուզում էր մեղադրել որդուն Պոմպեոսի առջև։ Երբ Պոմպեոսը, նրան պատվելու համար, իր զինվորական տրիբուններին և հեծելապետներին հրամայեց գնալ նրան դիմավորելու՝ Տիգրանի շուրջը գտնվողները ճանապարհին վախեցան, որովհետև մոտն էին գնում առանց լրատարի միջոցով ապդարարելու, և ետ փախան։ Իսկ Տիգրանը գնաց և, համարելով Պոմպեոսին իրենից ավելի հզոր՝ ըստ բարբարոսական սովորության ողջունեց նրան խոնարհվելով։ Ոմանք ասում են, որ Տիգրանին, որին նախապես հրավիրած է եղել Պոմպեոսը՝ առաջնորդել էին նրա մոտ թիկնապահները»։

Պոմպեոսի և Տիգրանի այս հանդիպման ժամանակ նրանց մեջ կայացավ հաշտություն, որով վերջ դրվեց հայկական նորաստեղծ աշխարհակալության։ Համաձայն հաշտության պայմանների[12] Տիգրանը պետք է հրաժարվեր իր բոլոր նվաճումներից,

[11] Համեմատե նաև Վալերիուս Մաքսիմուսի վկայությունը (գք. V, գլ. 1, 9), որի սկզբնաղբյուրն է Կիկերոնի Pro Sestio ճառը (XXVII, 58)։

[12] Տե՛ս Դիոն, գք. 36, գլ. 53, 2, Պլուտարքոս, Պոմպեոս, 33, 3—4 և Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104—105։

այն է՝ Ասորիքից, Արևելյան Կիլիկիայից, Փյունիկեից, Սելեվկիայից, Կորդուքից ու Մոփքից և մնալու էր միմիայն իր հայրենի երկրի՝ Մեծ Հայաստանի թագավոր։ Իսկ նրա որդին, Կրտսեր Տիգրանը, ստանալու էր Մոփքը (ըստ Ապպիանոսի[13] նաև Կորդուքը) և հոր մահից հետո ժառանգելու էր նաև նրա գահը։ Ոմանք, հիմնվելով Ապպիանոսի անորոշ մի վկայության վրա[14] կարծում են, որ Մոփքի թագավորությունը նա ստացել էր դեռ առաջ իր հորից[15]։

Մերոնի Տիգրանը ո՛չ միայն հարկադրված եղավ հրաժարվելու իր նվաճումներից, այլև վճարելու էր Պոմպեոսին 6000 տաղանդ պատերազմական տուգանք, որն անում է այժմյան դրամով մոտ 25 միլիոն գերմանական ոսկի մարկ կամ մոտ $12^1/_2$ միլիոն ռուսական ոսկի ռուբլի։ Բացի այդ, նա հռոմեական զորքերին ևս համաձայնել էր տալ հատուկ դրամական նվեր՝ ամեն մեկ զինվորին 50 դրաքմե (հավասար է մոտ 35 ոսկի մարկի կամ մոտ $17^1/_2$ ոսկի ռուբլու), հարյուրապետներին 1000-ական դրաքմե (=350 ոսկի ռուբ.) և զինվորական տրիբուններին 1-ական տաղանդ (=2100 ոսկի ռուբ.)[16]։

Հաշտության այս պայմաններին վերաբերող վկայությունները ևս մեջ ենք բերում բառացի թարգմանությամբ։

1. Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 53, 2՝

«Հետևյալ օրը Պոմպեոսը, նրանց ունկնդրելուց հետո՝ տվեց մեծին հայրենի ամբողջ թագավորությունը, իսկ այն, ինչ որ Տիգրանը նվաճել էր ինքը,—թե այլ երկրներ և թե Կապադովկիայի ու Ասորիքի մասերը, Փյունիկեն ու Հայաստանի սահմանակից Մոփքը,— նրանից վերցրեց, և, բացի այդ, նրանից պահանջեց նաև փող, իսկ որդուն տվեց միայն Մոփքը»։

2. Պլուտարքոս, Պոմպեոս, գլ. 33, 3—4՝

«Նա [Պոմպեոսը] ասաց, որ նախորդ դեպքերի հա-

[13] Միհրդատ., գլ. 105։

[14] Նույնը, գլ. 104։

[15] Տե՛ս Հ. Ասատուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 77։

[16] Տե՛ս Ստրաբոն, XI, 14, 10 (530), Պլուտարքոս, Պոմպեոս, 33, 3—4 և Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104։ Համաձայն վերջինիս վկայության դինվորական տրիբուններից ամեն մեկին տրված է եղել ո՛չ թե 6000 դրաքմե կամ 1 տաղանդ, այլ 10.000 դրաքմե։ Ըստ Հուլշի հանրապետական Հռոմի դեներադրաքմեն հավասար էր 0,70 ոսկի մարկի կամ մոտ 35 ոսկի կոպեկի, տե՛ս Griechische und römische Metrologie, Berlin, 1882, էջ 250—252, 297—299 և 711։

մար մեղադրելու է Լուկուլլոսին, որովհետև նա է նրանից [Տիգրանից] վերցրել Ասորիքը, Փյունիկեն, Կիլիկիան, Գալատիան և Պոնտը։ Իսկ այն, ինչ որ նա մինչև իր գալը պահպանել էր՝ կմնա իրեն։ Բայց պետք է հռոմայեցիներին վճարի իր հանցապարտության համար վեց հազար տաղանդ պատերազմական տուգանք։ Եվ Պոնտում թագավոր կլինի նրա որդին։ Այս պայմանները Տիգրանը գոհունակությամբ ընդունեց և, երբ հռոմայեցիները նրան ողջունեցին ու հայտարարեցին թագավոր՝ նա խիստ ուրախացավ ու խոստացավ տալ յուրաքանչյուր զինվորին կես մնաս, հարյուրապետներից ամեն մեկին՝ 10 մնաս և զինվորական տրիբուններին՝ մեկական տաղանդ»։

3. Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104—105՝

«Գալով Պոմպեոսի մոտ նա [Տիգրան թագավորը] նրողությունն խնդրեց պատահած դեպքերի համար և տվեց իրեն՝ Պոմպեոսին 6000 տաղանդ, յուրաքանչյուր զինվորին՝ 50 դրաքմե, վաշտապետներից ամեն մեկին՝ 1000 դրաքմե և զինվորական տրիբուններին՝ 10.000-ական դրաքմե։ Եվ Պոմպեոսը պատահած դեպքերը ներեց նրան, հաշտեցրեց որդու հետ և որոշեց, որ որդին թագավոր լինի Պոնտի և Կորդուքի, որոնք այժմ կազմում են փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը լինի թագավոր մյուս Հայաստանի, ու որդին լինի նրան հաջորդ։ Իսկ այն երկրները, որ նա նվաճել էր՝ հրամայեց թողնել։ Եվ Տիգրանը ձեռք քաշեց Ասորիքից—Եփրատ գետից սկսած մինչև ծովը. նրան էր պատկանում թե այդ երկիրը և թե Կիլիկիայի մի մասը, որոնց միջից նա դուրս էր վտարել Անտիոքոսին, որի մականունն էր Բարեպաշտ»։

4. Ստրաբոն, XI, 14, 10 (530)՝

«Իսկ երկրի [Հայաստանի] հարստության և հզորության կարևոր մի նշանն այն էր, որ Տիգրանը, Արտավազդի հայրը, երբ նրա վրա 6000 արծաթ տաղանդ դրված էր իբրև տուգանք՝ իսկույն այդ գումարը բաշխեց հռոմեական զորքերին,—յուրաքանչյուր զինվորին՝ հիսուն դրաքմե, ամեն մեկ հարյուրապետին՝ հազար դրաքմե և հեծելապետներին ու զինվորական տրիբուններին՝ մեկական տաղանդ»։

Թեև պատմական երկերում հաճախ մատնանշվում է, որ Պոմպեոսի վերաբերմունքը դեպի Տիգրանը եղել է արտասովոր կերպով մեղմ, սակայն, ինչպես տեսնում ենք, հաշտության վերո-

հիշյալ պայմանները բավական ծանր էին։ Պետք է ասել, որ արտաքին մեղմությունը և արտակարգ զգուշավորությունը եղել են Պոմպեոսի քաղաքական ու ռազմական գործունեության հիմնական հատկանիշները։ Լինելով հռոմեական ֆինանսիստների ու վաշխառուների կուսակիցը՝ Պոմպեոսն ինքը ևս, ինչպես հայտնի է, Իտալիայի ամենախոշոր վաշխառուներից մեկն էր։ Նա գերադասում էր հռոմեական իմպերիալիզմի նպատակները իրագործել ո՛չ թե զենքի ուժով, ինչպես Լուկուլլոսը, որը խիզախ զինվորական էր, այլ խաղաղ ճանապարհով և առանց ռիսկի։ Հայաստանը, ինչպես տեսնում ենք, նա մեծ հաջողությամբ կարողացել էր ընկճել ու կողոպտել առանց արյունահեղության ու զոհողությունների։

Հաշտության վերոհիշյալ պայմաններից չէր կարող, իհարկե, գոհ լինել Կրտսեր Տիգրանը։ Իրև վարձ իր դավաճանության՝ նա հույս ուներ ստանալու ո՛չ թե Պոնտոս երկրի թագավորությունը, որը նա, ինչպես տեսանք, նախքան իր ապստամբությունը, ըստ երևույթին, արդեն ստացել էր իր հորից, այլ հայկական մեծ ու հզոր պետությունը։ Ջափազանց ծանր ու անարդար էր նա համարում նաև այն, որ պատերազմական վերոհիշյալ տուգանքը վճարվելու էր, գլխավորապես, Պոնտում գտնվող գանձապահեստներից, այսինքն՝ իր թագավորության միջոցներից։ Թե ո՛րքիսի մեծ դժվարություններով էին դուրս տրվել դրամական հարստությունները Պոնտի պահեստներից՝ այդ մասին մանրամասն պատմում է Կասսիուս Դիոնը։ Նրա ընդարձակ վկայությունը, որը խիստ հետաքրքրական է թագավորական գանձերի պահպանման կարգերի համար հայկական երկրներում՝ մեջ ենք բերում թարգմանաբար առանց կրճատումների։

Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 53, 3—5՝

«Եվ որովհետև պատահմամբ նրա [Պոնտի] մեջ էին գտնվում գանձապահեստները՝ ուստի և սրանց պատճառով վեճ ունեցավ երիտասարդ Տիգրանը։ Եվ հաջողություն չունենալով (քանի որ Պոմպեոսն ուրիշ ո՛չ մի տեղից չէր կարող ստանալ որոշված գումարը)՝ նա դժգոհեց և մտածում էր փախչել։ Սակայն Պոմպեոսը, իմանալով այդ՝ նրան հսկողության տակ առավ առանց կալանքի և, սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ՝ հրամայեց, որ նրանք այդ բոլորը տան նրա հորը։ Իսկ երբ նրանք չհնազանդվեցին, ասելով, որ այդ նրանց պետք է կարգադրի երիտասարդ Տիգրանը, որին պատկանում է երկիրը՝ Պոմպեոսը սրան ուղարկեց ամրությունների վայրը։ Եվ սա,

տեսնելով որ դրանք փակ են՝ մոտ գնաց և հրամայեց դըժ-
կամորեն բաց անել։ Իսկ երբ նրանք դարձյալ չկսեցին,
առարկելով, որ նա այդ հրամանը տվել է ո՛չ ինն կամովին,
այլ հարկադրված՝ Պոմպեոսը զայրացավ և հրամայեց երի-
տասարդ Տիգրանին բանտարկել։ Եվ այսպիսով գանձերը
ստացավ Ծերունի Տիգրանը»։

Կրտսեր Տիգրանի ձերբակալության մասին, որ մատնանըշ-
ված է Դիոնի այս վկայության մեջ՝ հին աղբյուրները տալիս են
միանգամայն տարբեր տեղեկություններ։ Ըստ Կասսիուս Դիոնի
այս վկայության, ձերբակալման պատճառ էր ծառայել, ինչպես
տեսանք, նրա ընդդիմությունը և նրա հարուցած դժվարություն-
ները Ծոփքում գտնվող գանձերի հանձնման ժամանակ։ Ապպիա-
նոսն ակնարկում է, որ նա նոր դավադրություն էր կազմակեր-
պել իր հոր դեմ[17]։ Իսկ Պլուտարքոսը, որի համապատասխան
վկայությունը վերև մեջ էինք բերել, մատնանշում է, որ նա՝
հրավիրված լինելով ճաշի՝ հրաժարվել էր գնալ և անարգել ու
վիրավորել էր Պոմպեոսին[18]։ Ինձ թվում է, որ այս բոլոր վկա-
յություններն էլ կարող են որոշ չափով ճիշտ լինել։ Կրտսեր
Տիգրանը, որը դժգոհ էր մնացել և թշնամացել էր Պոմպեոսին՝
կարող էր, իրոք, կոպտաբար վերաբերված լինել սրան, հակառա-
կած լինել իր թագավորության գանձերի հանձնմանը և, միևնույն
ժամանակ, կարող էր նաև դավեր նյութած լիներ իր հոր դեմ։

Կրտսեր Տիգրանի ձերբակալությունը, որը փաստորեն Պոմ-
պեոսի դաշնակիցն էր՝ բացահայտ բռնություն էր և խախտումն
միջազգային իրավունքի։ Միաժամանակ այդ թշնամանք էր ու
վիրավորանք կալանավորի աներոջ՝ պարթևների թագավոր Հրա-
հատ Գ-ի նկատմամբ։ Ըստ Պլուտարքոսի վկայության[19]

> «Հրահատ պարթևը մարդ էր ուղարկել [Պոմպեոսի
> մոտ] պահանջելու երիտասարդին, որ իր փեսան էր, նաև
> պահանջ հայտնելու, որպեսզի իրենց իշխանությունների
> սահմանը լինի Եփրատ գետը։ Պոմպեոսը պատասխանել
> էր, որ Տիգրանն ավելի մոտ է իր հորը, քան աներոջը,
> իսկ սահմանը կլինի այն, որ կհամարվի իրավացի»։

Հակառակ, ուրեմն, Հրահատ Գ-ի բողոքներին, որը հիշեց-
նում էր Պոմպեոսին իր կնքած դաշինքը հռոմայեցիների հետ՝
Կրտսեր Տիգրանը և նրա կինն ու դուստրը[20] ուղարկվեցին շուտով

[17] Միհրդատ., գլ. 105։
[18] Տե՛ս Պլուտարքոս, Պոմպեոս, 33, 4։
[19] Տե՛ս նույնը, 33, 4։
[20] Նույնը, գլ. 45, 4։

Հռոմ, որպեսզի մասնակից լինեն Պոմպեոսի հաղթահանդեսի
շքերթին։


Պոմպեոսի վարքագծի այս անակնկալ փոփոխությունը պար-
թևական թագավորության հանդեպ համապատասխանում էր կա-
տարելապես Հռոմի արտաքին նենգ ու խարդախ քաղաքակա-
նությանը։ Քանի որ պոնտական ու հայկական թագավորու-
թյունները թշնամի էին Հռոմին և պատերազմում էին նրա դեմ՝
վերջինս իրեն ցույց էր տալիս բարեկամ պարթևներին։ Հռոմե-
կան զորավարները, ինչպես Սուլլան և Լուկուլլոսը, նույնպես և
Պոմպեոսը՝ կամ բարեկամական բանակցություններ էին վարում
նրանց հետ և կամ դաշինք էին կնքում ու խոստանում նրանց
Թողնել Միջագետքը մինչև Եփրատ գետը։ Բայց այժմ պոնտա-
կան թագավորությունն այլևս գոյություն չուներ, իսկ Տիգրան
թագավորը ճանաչվում էր իբրև բարեկամ ու դաշնակից Հռոմի։
Ուստի և Հռոմը, որը չէր ուզում ունենալ իր շուրջը հզոր ու մեծ
պետություններ՝ հիմա հովանավոր դառավ Տիգրան թագավորի
և փոխեց իր վերաբերմունքը դեպի Հրահատ Գ-ն։ Պարթևական
պետությունը Հռոմի համար այլևս հանդուրժելի չէր իբրև անկախ
ու ուժեղ թագավորություն։ Եվ շուտով, ինչպես կտեսնենք, նը-
րանց նախկին բարեկամությունը վերածվեց անհաշտելի թշնա-
մության։

Դժվար չէ նաև կռահել, թե ինչո՛ւ Պոմպեոսը Հայաստանի
գահը չտվեց Կրտսեր Տիգրանին։ Շատ պարզ է, որ Ծերունի Տիգ-
րանը, որը պարթևական թագավորության ոխերիմ թշնամին
էր՝ հռոմայեցիների համար ավելի ցանկալի դաշնակից էր, քան
Կրտսեր Տիգրանը, որը փեսան էր ու բարեկամը Հրահատ Գ-ի։

Ներգրավելով Հայաստանը հռոմեական ազդեցության շրջա-
նակի մեջ՝ Պոմպեոսը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[21], թողեց
այստեղ իբրև վերահսկիչ Ափրանիուսին, իսկ ինքն առաջնորդեց
հռոմեական զորքը դեպի հյուսիս ընդդեմ Միհրդատ Պոնտացու,
որը սակավաթիվ իր զորքերով պատսպարվել էր Կողքիսում։ Սա-
կայն որովհետև ձմեռն արդեն վրա էր հասել՝ նա ստիպված եղավ
ձմեռել Կուր գետի մոտ Արտաշատից Կողքիս տանող ռազմական
հին հանապարհի շրջակայքերում։

Ինչպես ցույց ենք տվել Պոմպեոսի անդրկովկասյան ռազ-
մուղիների լուսաբանությանը վերաբերող մեր ընդարձակ հոդ-
վածում[22], հռոմեական զորքի 66/65 թվի ձմեռվա կայանատեղերը

[21] Տե՛ս Պոմպեոս, գլ. 34, 1։
[22] Տե՛ս «Круговой путь Помпея в Закавказье», Вестник древней истории, 1939, 4:


Sebastopolis
Sebastopolis
Caspiae
Portae
Caspiae
Caucasus
Caucasus
Caucasus

նրանց ջարդել առանձին առանձին։ Սակայն հարձակումը, որը չափազանց վտանգավոր կարող էր լինել Պոմպեոսի զորաբանակի համար՝ չհաջողվեց։ Արտոկեսի ու Օրոյզեսի զորքերը ետ մղվեցին և նահանջելիս մեծ կորուստներ տվին, գլխավորապես, Կուրի գետանցքն անցնելիս[27], որը գտնվում էր, հավանորեն, Պահինգերյան քարտեզի Ad Metcurium կայարանի, այժմյան Ախալցխա քաղաքի մոտ։

Անսպասելի ու վտանգավոր այս հարձակումից հետո հռոմեական զորքերը անվրդով մնացին Կուր գետի մոտ մինչև 65 թվի գարունը։

[27] Տե՛ս նույնը, գլ. 34, 1—3, Ապպիանոս, Միհրդատ., գլ. 102—103 և Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 54, 1—5։

18. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՊՈՄՊԵՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՀԵՏՈ

65 թվի գարնան սկզբին Պոմպեոսը, փոխանակ առաջ շարժվելու դեպի Կողքիս՝ ուզեց նախապես ապահովել իր թիկունքը Իբերիայի կողմից և արշավանքի ելավ ընդդեմ իբերների։ Հռոմեական զորքն իջավ Կուր գետի հովիտներով, առանց որևէ դիմադրության հանդիպելու, մինչև Հարմոզիկա ամրությունը, որը գտնվում էր Կուր գետի և այժմյան Մցխեթի հարավակողմում։ Պոմպեոսի այս արշավանքը մանրամասն նկարագրված է Կասսիուս Դիոնի պատմության մեջ[1]։

Արտոկես թագավորը, ինչպես հաղորդում է Դիոնը, այրելով Կուր գետի կամուրջը՝ փախավ նրա ձախ ափը։ Սակայն տեսնելով, որ Պոմպեոսը, Հարմոզիկան գրավելուց հետո, պատրաստություններ էր տեսնում գետն անցնելու՝ նա իսկույն խաղաղության բանակցություններ սկսեց, ուղարկելով հռոմայեցիներին կենսամթերքներ և վերակառուցեց նաև Կուր գետի կամուրջը։

Բայց երբ հռոմեական զորքն անցել էր արդեն գետի մյուս ափը՝ նա վախեցավ ու նորից փախավ մինչև Պելորոս գետը։ Անցնելով այս գետը ևս՝ նա այրեց նաև սրա կամուրջը։ Ինչպես Պոմպեոսի հետապնդման ժամանակ, նույնպես և Պելորոս գետն անցնելիս՝ իբերները կրեցին մեծ կորուստներ։ Այնուհետև, որովհետև հռոմեական զորքերը կանգ չառան և Պելորոս գետի ափին՝ Արտոկեսն ուղարկեց Պոմպեոսին նվերներ, տվեց իր որդիներին իբրև պատանդ և ընդունեց նրա առաջարկած պայմանները։

Պոմպեոսի հաղթական բանակը վերջապես կարողացավ, ապահովելով իր թիկունքը հնարավոր հարձակումներից՝ շարունակել իր արշավանքը Միհրդատ Եվպատորի դեմ։ Հարմոզիկայի մոտից նա գնաց Կուր գետի հովիտներով և այժմյան Սուրամի ու Շորապանի վրայով դեպի Ռիոն գետի հովիտները և այնտեղից Սեբաստոպոլիս—Փոթի, ուր գտնվում էր հռոմեական նավատորմի-

[1] Տե՛ս գր. 37, գլ. 1, 3—5 և գլ. 2, 1—6։

ղը։ Պոմպեոսը կարծում էր, որ Միհրդատը, որը շրջապատված էր ծովի կողմից՝ գտնվում էր իբր ծուղակի մեջ։ Սակայն նա զարմացած մնաց, երբ իրեն հայտնեցին, որ որսն արդեն ծուղակից դուրս է եկել։ Համառ ծերունին գրեթե անմատչելի ճանապարհներով անցել էր իր սակավաթիվ զորամասի հետ մոտ 700 կիլոմետր և գտնվում էր արդեն Ղրիմում, ուր վերստին նվաճել էր Բոսփորյան իր թագավորությունը։

Պոմպեոսն աննպատակահարմար ու վտանգավոր համարեց շարունակել իր արշավանքը և գնալ ծովով Ղրիմ, ուր ուժեղացել ու վերականգնել էր իր իշխանությունը Միհրդատը։ Կողքիսից նա վերադարձավ Հայաստան և արշավեց այստեղից Աղվանք[2]։ Նա վճռել էր պատժել ու ընկճել Աղվանից Օրոյզես թագավորին, որը, ինչպես տեսանք, հարձակվել էր Հռոմայեցիների վրա, հավանորեն, Միհրդատի սադրանքով։

Պոմպեոսի վերադարձի ճանապարհը Կողքիսից Հայաստան, ինչպես և նրա աղվանների դեմ արշավանքի ռազմուղին, որոնք դեռ մինչև այժմ լուսաբանված չեն, կարելի է այժմ գրեթե հիշատիվ որոշել աշխարհագրական նորագույն ուսումնասիրությունների օգնությամբ։ Նրա ճանապարհը Կողքիսից մինչև այժմյան Ապարանի շրջանը պետք է ենթադրել, ինչպես վերև ասացինք, Պետինգերյան քարտեզի Սեբաստոպոլիս—Արտաշատ մեծ ռազմուղիով և այժմյան Աբասթումանի, Խոսպիայի ու Ղանլիճայի վրայով։ Իսկ ճանապարհը դեպի Աղվանք հավանական է ենթադրել դարձյալ Պետինգերյան քարտեզի Արտաշատ—Արմաստիկա—Լագո շրջանային հին ուղեգծով, որը քննության է առնված Մարկվարտի աշխատություններից մեկում[3]։


Հռոմեական զորքը գնացած պիտի լիներ այժմյան Ղանլիճայից Կիրովականի, Դիլիջանի, Իջևանի և Ազստաֆայի վրայով դեպի Կուր գետի հյուսիսակողմը գտնվող հին Կամբեճ գավառը, որը ենթադրում են այժմյան Յորա և Ալազան գետերի միջև։

Պոմպեոսի արշավանքն աղվանների դեմ մանրամասն նկարագրել են Կասսիուս Դիոնը և Պլուտարքոսը[4]։ Հռոմեական զորքը, ինչպես պատմում են նրանք, հասնելով Կուր գետի ստորին հոսանքի մոտերքը՝ կարողացել էր անցնել գետի հունով, որն ա-

[2] Տե՛ս Դիոն, գք. 37, գլ. 3, 3—4։

[3] Տե՛ս J. Markwart, Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien, 1828։

[4] Տե՛ս Դիոն, գք. 37, գլ. 3, 3—6, 4, 1—4 և 5, 1 և Պլուտարքոս, Պոմպեոս, գլ. 35, 1—2, համեմատե նաև Ապպիանոս, Միհրդատ., գլ. 103։



Պոմպեոսի ճանապարհը Սեբաստոպոլսից Աղվանք։


մառվա շոգերի պատճառով խիստ ծանծաղել էր։ Դեռն անցնելուց հետո՝ նրանք մտել էին այժմյան Ղարայափի դաշտը և առաջ շարժվել դեպի Յորա գետը, որը Կասիուս Դիոնի մոտ անվանված է Կամբյուզես (=Կամբեճ)։ Անցնելով նաև այս գետը՝ նրանք գնացել էին դեպի այժմյան Ալազան գետը, որի հին անունը եղել է ըստ Դիոնի և ըստ Պլուտարքոսի Աբաս կամ Աբանտ։ Ամբողջ այս ճանապարհը հռոմայեցիներն անցել էին շոգերի պատճառով, մեծ մասամբ, գիշերները և խիստ տառապել էին ծարավից։ Նրանք իրենց հետ վերցրել էին միմիայն ջուր, մոտ տասը հազար տիկ, իսկ կենսամթերքներ նրանց տալիս էին կամովին Կամբեճ գավառի տեղական բնակիչները։

Ճակատամարտն Աղվանից թագավորի զորքերի հետ տեղի ունեցավ Ալազան գետի ձախ ափին, ուր հռոմեական բանակը թշնամու հետ նոր էր մտել շփման մեջ։ Պլուտարքոսի պատմելով՝ աղվանական զորքերը, որոնց առաջնորդն էր թագավորի եղբայրը՝ Կողիսը, վատ էին զինված, և մեծ մասը հագել էին իրեն շոր գազանի մորթիներ։

Ճակատամարտից առաջ Պոմպեոսը հրամայել էր իր հետևակ զորքին թաքնվել հեծելազորի եռևը, և աղվանները, կարծելով, որ իրենց դիմադրում է միմիայն թշնամու հեծելազորը՝ խիստ կովի բռնվեցին սրա հետ։ Սակայն հռոմեական լեգեոնները, առաջ գալով հեծելազորի եռևից՝ ջարդեցին և նրանց ի փախուստ դարձրին դեպի մոտակա անտառները։ Եվ փախչողներից շատերը մահացան անտառներում, որ Պոմպեոսը հրամայել էր շրջապատել և հրդեհել։ Շուտով այնուհետև Օրոյզեսի հետ կնքվեց հաշտություն։ Աղվանքի թագավորը, հպատակվելով Պոմպեոսին՝ ինչպես և Իբերիայի Արտոկես թագավորը, ձեռականորեն ճանաչեց Հռոմի գերիշխանությունը։

Աղվանքից հռոմեական զորաբանակը, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[5], վերադարձավ Հայաստան և այստեղից Փոքր Հայք։ Համաձայն Կասիուս Դիոնի վկայության՝ 65/64 թվին դարձյալ նա ձմեռել էր 66/65 թվի ձմեռոցի տեղում Ասպիս գավառում (ἐντῇ Ἀσπιδι)[6]։ Ուշագրավ է, որ Դիոնի այս երկրորդ վկայության մեջ միևնույն գավառը, որն առաջին վկայության մեջ անվանված էր Անահիտյան երկիր, այժմ անվանված է Ասպիս։ Ինչպես մանրամասն ցույց ենք տվել «Պոմպեոսի շրջանային հանապարհն Ան-

[5] Տե՛ս Պոմպեոս, գլ. 36, 1։
[6] Տե՛ս Դիոն, գր. 37, գլ. 7, 5։



Պոմպեոսի հանապարհն Աղվանից Փոքր Հայք։

դրրկովկասում» մեր ռուսերեն ընդարձակ հոդվածում[7], այս գավառը Ասպիս կամ ավելի ճիշտ Կասպիս է անվանվել, հավանորեն, Պևտինգերյան քարտեզում նշանակված Caspiae մեծ կայսրանի անունով, որը գլխավոր կենտրոնավայրն է եղել այժմյան Խոսպիայի շրջանի։ Կասպիսը, ըստ երևույթին, նույնպես՝ ինչպես և Եկեղյաց գավառը, կոչվել է Անահիտյան երկիր։ Եվրոպական պատմագետների երկերում Պոմպեոսի զորքերի 65/64 թվի ձմեռոցի տեղը հակառակ Դիոնի վկայության ցույց է տրված Փոքր Հայքում, որ պարզապես սխալ է։

64 թվին Պոմպեոսի զորամասերը, վերադառնալով Հայաստանից Պոնտոս՝ պաշարեցին ու նվաճեցին Պոնտոսում և, գլխավորապես, Փոքր Հայքում, Միհրդատի հարուստ գանձապահեստները և հռչակավոր արխիվները, որոնք գտնվում էին Տալավրայում, Նոր ամրոցում, Սինորիայում և այլ տեղերում։ Այդ ամրություններում պահվում էին հազարավոր օնիքսե սկահակներ, որոնք ներզարդված էին ոսկով, հսկայական քանակությամբ անոթներ, մահճեներ, գահեր, նաև զրահներ ու սպառազինություններ, որոնք, մեծ մասամբ, ոսկեզօծված էին և զարդարված թանկագին քարերով։ Այս բոլոր հարստությունները և հելլենիստական արվեստի բոլոր թանկարժեք իրերը, որոնք կողոպուտի չէին մատնվել Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, ուղարկվեցին Պոնտոսից Հռոմ։

Մինչ Պոմպեոսը պատերազմ էր վարում իբերների և աղվանների դեմ ու նվաճում էր Պոնտոսի ամրությունները՝ պարթևները զբաղվել էին Միջագետքը, որն, ինչպես տեսանք, հռոմաձայն Պոմպեոսի հետ կնքած դաշինքի մինչև եփրատ գետը պատկանելու էր նրանց։ Պարթևները ներխուժել էին նաև Կորդվաց երկիրը, որի տիրապետության համար վեճ էր առաջացել իրենց ու հայերի մեջ։ Սակայն Պոմպեոսը պահանջեց Հրահատ Գ-ից մաքրել Կորդուքը, առարկելով, որ այդ երկիրը պատկանում է, իրապես, Տիգրան Բ-ին։ Չսպասելով նույնիսկ Հրահատ Գ-ի պատասխանին՝ նա հրամայեց իր օգնականներից մեկին, Ափրանիուսին, գրավել ու հանձնել Կորդուքը հայոց թագավորին։ Պլուտարքոսի պատմելով[8], հռոմեական այս զորապետը հալածեց պարթևներին մինչև Արբելա քաղաքը, որը գտնվում էր Ադիաբենեում։

[7] Տե՛ս «Курговой путь Помпея в Закавказье», Вестник древней истории, Москва, 1939, 4։

[8] Պոմպեոս, գլ. 36, 1։

Այստեղից Ափրանիուսը պետք է անցներ հյուսիսային Միջագետքի վրայով Ասորիք, ուր նույն այդ ժամանակ, 64 թվին, պետք է գար նաև Պոմպեոսը։ Բայց 65/64 թվի ձմեռվա կեսին, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[9], Ափրանիուսը և նրա զորքը ճանապարհը կորցրին ու մոլորվեցին և կարող էին ցրտի ու կենսամթերքների պակասության պատճառով Միջագետքի անապատներում կորստի մատնվել, եթե նրանց չօգնեին Կարրա քաղաքի (այժմյան Խառան) մակեդոնացի գաղթականները։ Սրանք հյուրընկալեցին Ափրանիուսին և առաջնորդեցին Ասորիք։

Չնայած Պոմպեոսի զրգռիչ ոտնձգություններին և դաշնադրության անպատկառ խախտմանը, որի համաձայն հյուսիսային Միջագետքը մինչև եփրատ գետը ճանաչված էր որպես պարթևներին պատկանող երկիր՝ Հրահատ Գ-ն չհամարձակվեց պատերազմել հռոմայեցիների դեմ։ 64 թվի գարնանը նա դիմեց իր զորքերով Հայաստան և հարձակվեց Տիգրանի վրա, որն օգնություն խնդրեց դաշնակից հռոմայեցիներից։ Այս դեպքը Պոմպեոսի համար մի հարմար առիթ էր պատերազմ սկսելու նաև պարթևների դեմ, ինչպես այդ ցանկանում էին, իրապես, նրա կուսակիցներից ու սպաներից շատերը։ Սակայն Պոմպեոսը, որ խիստ զգույշ էր և չուներ Լուկուլլոսի հանդուգն համարձակությունը, չուզեց բախտախաղի դնել իր ձեռք բերած հաջողությունները և խուսափեց կռվից։ Նա արդարանում էր նրանով, որ հռոմեական ժողովուրդն այդ իրեն չէ հանձնարարել, և որ դեռևս վերջնականապես զինաթափ չէ արվել Միհրդատ Պոնտացին[10]։ Պատերազմից հռոմայեցիների հետ, ինչպես ասացինք, խույս էր տալիս նաև պարթևների թագավոր Հրահատ Գ-ն, որը նույնպես չունեցավ արիություն ոտքի ելնելու հռոմեական ուխտանենգ զորավարի դեմ։ Եվ որովհետև նա նորից դեսպաններ էր ուղարկել Պոմպեոսի մոտ՝ վերջինս հայտնեց նրան, որ կուղարկե երեք միջնորդ դատավորներ, որոնք կհարթեն սահմանների վերաբերյալ նրա ու Տիգրանի վեճը[11]։ Հրահատ Գ-ն և Տիգրանը դադարեցրին պատերազմը և համաձայնեցին ընդունել միջնորդների վճիռները։

Այնուհետև ուղարկված դատավորները քննարկման ենթարկեցին նրանց գանգատներն ու պահանջները և կայացրին իրենց

[9] Գք. 37, գլ. 5, 5։

[10] Տե՛ս Կասսիուս Դիոն, գք. 37, գլ. 7, 1,

[11] Տե՛ս Դիոն, գք. 37, գլ. 7, 3, Ապպիանոս, Միհրդատ., գլ. 106 և Պլուտարքոս, Պոմպեոս, գլ. 39, 3։

վճիռը հօգուտ Տիգրանի։ Համաձայն նրանց որոշման հայոց թագավորը ստացավ ո՛չ միայն Կորդվաց երկիրը, այլև հյուսիսային Միջագետքի մի մասը։ Ուշադրավ է, որ Հրահատը հենց ինքը ևս, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[12], չառարկեց և հավանություն տվեց այդ վճռին, հույս ունենալով, որ հետագայում գուցե կհաջողվի իրեն հաշավել հայերի հետ և ստանալ նրանցից օգնություն ընդդեմ հռոմայեցիների։

Երբ կատարվում էին այս անցքերը, Միհրդատ Պոնտացին, որը վերահաստատել էր իր իշխանությունը Բոսփորյան թագավորության մեջ՝ խաղաղության նոր առաջարկություններ արեց հռոմայեցիներին և հայտնեց, որ եթե Պոմպեոսը համաձայնի վերադարձնել իրեն Պոնտական թագավորությունը՝ ինքը պատրաստ է հպատակվելու Հռոմին որպես վասսալ և հարկատու։ Պոմպեոսը, ինչպես և 66 թվին, նրան պատասխանեց նորից, որ նախքան բանակցություններ վարելը՝ նա պետք է անձամբ գա և հնազանդվի Հռոմին։ Հաշտությունն այլևս անհնարին էր։ Եվ Միհրդատը վճռեց նախապատրաստվել Հռոմի դեմ նոր կռվի և մշակեց նոր արշավանքի հանդուգն մի ծրագիր։ Նա մտադիր էր, դաշն կապելով սկյութների, թրակացիների և կելտերի հետ՝ արշավել Իտալիա Դանուբ գետի հովիտներով և Ալպյան լեռների վրայով, ինչպես այդ իրենից առաջ արել էր կարթագենացի Հաննիբալը։ Այդ մեծ արշավանքի համար հարկավոր էին, իհարկե, թե մարդկային և թե նյութական վիթխարի ուժեր ու միջոցներ։ Եվ 63 թվին, երբ Միհրդատը վերջացնելու վրա էր ռազմական իր պատրաստությունները, որոնց ամբողջ ծանրությունն ընկնում էր Բոսփորի բնակչության ու քաղաքների վրա՝ հանկարծակի նրա դեմ բռնկվեց տարերային կատաղի ապստամբություն, որին մասնակից էին ո՛չ միայն գրեթե բոլոր քաղաքները, այլև նրա զորքն ու նրա որդին՝ Փարնակը։ Մերունի Միհրդատը հասկացավ, որ իրեն չեն խնայելու, և որ այլևս փրկվելու ոչ մի հնար չկա։ Պաշարված լինելով Պանտիկապեյոն (այժմյան Կերչ) քաղաքի իր ամրոցում՝ նա չուզեց անձնատուր լինել ապստամբներին և իր կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ (63 թվի գարնանը)։

Նրա դիակը, որ ուղարկել էր Փարնակն Ասորիք՝ Պոմպեոսի հրամանով թաղեցին Սինոպի մոտ գտնվող պոնտական թագավորների դամբարանում։ Այժմ արդեն մեծ ու բազմամյա պատերազմը Միհրդատի դեմ, որը սկսվել էր դեռ քսան և հինգ տարի առաջ՝ կարելի էր համարել վերջացած։

[12] Գր. 37, գլ. 7, 4։

Պատերազմը կարելի էր ավարտված համարել նաև ամբողջ Արևելքում և Ասորիքում։ 65 և 64 թվերին Պոմպեոսի զորապետները՝ Գաբինիուսը, Սկավրուսը, Ափրանիուսը և ուրիշները՝ նվաճել էին հարավում Փյունիկիան, Պաղեստինան և Ասորիքի ու Միջագետքի մի քանի մասր իշխանությունները և քաղաքները։ Հռոմեական հանրապետության սահմանները հասնում էին այժմ Արևելքում միչև Միջագետքի անապատները և գրեթե մինչև Եգիպտոս։

64 և 63 թվերին Պոմպեոսը քաղաքականապես կազմակերպեց իր նոր նվաճած երկրները և կարգավորեց նրանց վարչական ներքին գործերը։ Դեռևս 64 թվին, երբ նա գտնվում էր դեռ Պոնտոսում, դարձրել էր Նիկոմեդեսի նախկին թագավորությունը, Բյութանիան և Միհրդատի պոնտական թագավորության արևմտյան մասը հռոմեական նահանգ։ Պոմպեոսից առաջ թե Լուկուլլոսը և թե հռոմեական ծերակույտը Ասորիքի օրինական թագավոր էին ճանաչել, ինչպես վերև տեսանք, Սելևկյան Անտիոքոս Ասիացուն։ Իսկ այժմ Սելևկյանների իշխանությունը հայտարարվեց Ասորիքում վերացված և այս ամբողջ երկիրը վերածվեց հռոմեական նահանգի։ Վերոհիշյալ Սելևկյան Անտիոքոսը դառավ Հռոմի վասսալ և փոխանակ Ասորիքի ստացավ Կոմագենի փոքր թագավորությունը, որի կենտրոնն էր Սամոսատ մայրաքաղաքը։ Այս թագավորության սահմաններումն էր գտնվում Եփրատի հռչակավոր գետանցքը Սելևկիա ամրոցի մոտ (այժմյան Բիրեջիկ), որն ուներ ռազմական և առևտրական խոշոր նշանակություն։

Ընդարձակ նոր երկրամասեր ստացան Հռոմի բարեկամ և դաշնակից Կապադովկիայի Արիոբարզան թագավորը և Գալատիայի Դեյոտարուս իշխանը, որոնք մեծ ծառայություններ էին մատուցել հռոմայեցիներին պոնտական և հայկական պատերազմների ընթացքում։ Պոմպեոսը տվեց Արիոբարզանին Կիլիկիայից անջատված մի քանի շրջաններ և ամբողջ Ծոփաց թագավորությունը։ Սրան էր այժմ պատկանում Եփրատի նշանավոր գետանցքը և Տոմիսա ամրոցը։ Իսկ Դեյոտարուսը, որը հայտարարվեց թագավոր՝ ստացավ Պոնտական թագավորության արևելյան մասը՝ արևելյան ծովափնյա Պոնտոսը, որի մեջ էին Փառնակիա և Տրապիզոն քաղաքները ու նաև Փոքր Հայքը։ Դեյոտարուսի թագավորության հյուսիսակողմում գտնվող Կողքիսը տրվեց իբրև առանձին իշխանություն Արիստարքոսին, որի անունով հայտնի են և հիշատակված են դրամագիտական երկերում մի քանի դրամներ։

Եփրատ գետի արևելակողմում Հռոմի գերիշխանությունը ճանաչել էին և նրա ազդեցության շրջանակի մեջ էին համարվում ո՛չ միայն Հայաստանը, որը հայտարարված էր բարեկամ ու դաշնակից հռոմեական ժողովրդի՝ այլև Ատրպատականը, Իբերիան, Աղվանքը, Օսրոենեն և մի քանի այլ արաբական փոքր ցեղեր հյուսիսային Միջագետքում։

Հայաստանը, որը բարեկամ ու դաշնակից էր հայտարարվել Հռոմի և անվանապես ընդունել էր սրա գերիշխանությունը՝ դառավ այժմ հռոմեական աշխարհակալության ռազմական առաջապահ։ Պոմպեոսը հիմնապես այնուհետև փոխեց իր քաղաքականությունը նրա հանդեպ։ Տիգրանը ևս, ինչպես և Արիոբարզանը և Դեյոտարոսը, ստացավ Պոմպեոսից և կամ սրա աջակցությամբ ո՛չ միայն Կորդուքը և հյուսիսային Միջագետքը, որոնց միացումը Հայաստանին վերև հիշատակել էինք, այլև Դերջանը և Ակիլիսենը[13], որն այդ ժամանակ, հավանորեն, պարունակում էր իր մեջ բացի հին Եկեղյաց գավառից նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունը և Մզուրը[14]։ Այսպիսով, Մեծ Հայաստանը, ինչպես տեսում ենք, Տիգրան Բ-ի ժամանակ ևս իր սահմաններն ընդարձակել էր թե Հայկական լեռնաշխարհի հարավակողմում և թե Փոքր Հայքի ու Ծովից աշխարհի հարակից շրջաններում։

Պոմպեոսի սիրաշահական նոր քաղաքականությունը Մեծ Հայաստանի հանդեպ արտահայտվեց նաև նրանով, որ «արքայից արքա» պատվանունը, որը մինչև Տիգրանը կրել էին պարթևների թագավորները, և որը, Տիգրանի աշխարհակալության տապալումից հետո, հռոմայեցիները սկզբում ճանաչել էին իբրև Հրահատ Գ-ի տիտղոս՝ այժմ վերապահվեց միմիայն Տիգրանին, իսկ Հրահատ Գ-ին սկսեցին անվանել լոկ «թագավոր»։

Պարթևների թագավորը հարկադրված եղավ անտրտունջ կերպով տանել այդ ակներև վիրավորանքներն ու թշնամանքները։ Հռոմի այս խաբված դաշնակիցը այժմ ինքն էր գտնվում երկու կրակի մեջ, ինչպես 66 թվին նրա նախորդը՝ Տիգրանը։ Ասորիքի սահմանում կազմ և պատրաստ կանգնած էր Պոմպեոսի մեծ զորաբանակը, իսկ Միջագետքի և Ատրպատականի կողմից սպառնում էին պարթևներին Հռոմի նոր դաշնակցի՝ Տիգրանի հայկական զորքերը։ Հրահատ Գ-ն հիմա նոր միայն հասկացած կլիներ, որ իր դաշնակցությամբ հռոմայեցիների հետ նա, ինչպես նախազգուշացրել էր իրեն Միհրդատը՝ կորստյան էր մատնել ո՛չ միայն իր հարևաններին, այլև ինքն իրեն։

Պոմպեոսի բացառիկ զգուշավորությանը պետք է վերագրել, որ նա չօգտվեց հանգամանքների բարեհաջող զուգադիպումից և հրաժարվեց հարձակվել պարթևների վրա, որոնք մեծ պատերազմի համար գրեթե անպատրաստ էին։ Իր եռանում նա ողջ ուշադրությունը բեղեց անարգված ու անպատված նախկին իր դաշնակցին, որը հնարավորություն էր ստանում նախապատրաստվելու և հարմար ժամանակ ընտրելու ընդդիմադրության և փոխվրեժի։ Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ առաջիկա անխուսափելի պատերազմի ժամանակ Հայաստանի բարեկամությունն ու օգնությունը բացառիկ մեծ կարևորություն էին ստանում ինչպես հռոմայեցիների, նույնպես և պարթևների համար։ Հենց այդ էր պատճառը, որ Հրահատ Գ-ն, ինչպես վերև տեսանք, դեռևս 64 թվին հարկադրվել էր փոխել իր թշնամական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ և լռելյայն համաձայնել էր զիջել Տիգրանին Կորդուքը և հյուսիսային Միջագետքը։ Շնորհիվ բարի հարևանական այդ նոր քաղաքականության հայերի և պարթևների մերձեցումը հնարավոր եղավ, ինչպես հայտնի է, Տիգրանի որդու՝ Արտավազդի թագավորության ժամանակ[15]։

Պոմպեոսի Իտալիա վերադառնալուց հետո (61 թ.)՝ Տիգրան Բ-ն խաղաղ ու անվրդով թագավորեց Հայաստանում մինչև խորին ծերություն, հավանորեն, մինչև 56 կամ 55 թիվը։ 56 թվին նա դեռ կենդանի էր և հիշատակված է Կիկերոնի ճառերից մեկում[16]։ Իսկ Կրասոսի արշավանքի ժամանակ, 54 թվին, Հայաստանում, ինչպես հայտնի է, միանձնորեն թագավորում էր նրա որդին՝ Արտավազդ Բ-ն։ Լուկիանոսը վկայում է, որ Տիգրանը վախճանվել էր խոր ծերության մեջ, 85 տարեկան հասակում[17]։ Եթե այս վկայությունը, որը կարող է կասկածելի համարվել,

---

[13] J. Markwart, Die Genealogie der Bagratiden, էջ 63 և «Հին-Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 73։

[14] Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 54—55։

[15] Մոմպենի և այլ պատմագետների ենթադրությունը, որ Հրահատ Գ-ի որդի Միհրդատ Գ-ն (57—54 թթ.) պատերազմ էր սկսել Արտավազդ Բ-ի դեմ՝ մի պարզ թյուրիմացություն է։ Յուստինիոսի համապատասխան վկայությունը (գր. 42, գլ. 4, 1), ինչպես մատնանշել է Գուտշմիդը՝ վերաբերվում է, իրապես, Միհրդատ Բ-ի կռիվներին ընդդեմ Արտավազդ Ա-ին. տե՛ս Gutschmid, Geschichte Irans, էջ 86, ծան. 2 և Моммсен, Римская история, III, Москва, 1887, էջ 292։

[16] Տե՛ս Pro Sestio, 27, 59։

[17] Տե՛ս Lucianus, Makrobioi, Bibl. Teubn.։

հնարավոր լինի հետագայում հաստատել՝ կարելի կլինի ենթադրել, որ նա ծնված պիտի լիներ 141 կամ 142 թ. (նախքան մեր թվ.) և, ուրեմն, մոտ տասը տարով մեծ եղած պիտի լիներ Միհրդատ Եվպատորից, որը ծնվել էր, համաձայն Ռեյնաքի, 132 թվին[18]։

Տիգրանի կինը՝ Կլեոպատրան, ըստ երևույթին, թողած է եղել իր ամուսնուն և հեռացած է եղել իր հոր մոտ, հավանորեն, Կրոսեր Տիգրանի ապստամբության ժամանակ։ 63 թվին, իր հոր ինքնասպանության ժամանակ, նա ևս, ինչպես հայտնի է, գտնվել է իր հոր հետ Պանտիկապեյոն քաղաքում[19]։

Տիգրան Բ-ի հետ վերջանում է Հայաստանի մեծապետական վերելքի խիստ կարճատև շրջանը։ Շատ պարզ է, որ այս հզոր թագավորը, որը Հայաստանը դարձրել էր լայնածավալ պետություն և իրեն նպատակ էր դրել զարգացնել իր երկրում հելլենիստական քաղաքային կուլտուրան և դուրս հանել հայ ժողովուրդը հետամնաց կացությունից՝ չէ կարող համարվել միջակ ու սովորական մի դեմք։ Սակայն պատմական խոշոր ու առաջավոր այս դեմքը, դժբախտաբար, աղավաղված ու խեղաթյուրված է պատմագիտական գրեթե բոլոր օտար և հայ երկերում։

Տիգրանի սխալ բնութագրերը բոլոր այդ երկերում պետք է ըստ իս անվերապահ կերպով մերժվեն, որովհետև դրանք, ինչպես տեսանք, հիմնված են, գլխավորապես, Պլուտարքոսի և նրա սկզբնաղբյուրների չարամիտ և հնարովի հերյուրանքների վրա, որոնք չունեն պատմական նշանակություն։

Տիգրան Բ-ն, ինչպես և Միհրդատ Եվպատորը, անտարակույս, հելլենիստական տիպի միապետներ էին, որոնք բուռն թափով առաջ էին տանում Աղեքսանդր Մակեդոնացու ու նրա հաջորդների քաղաքակրթական մեծ գործը։ Թե ինչպիսի խոր արմատներ էր ունեցել հելլենական կրթությունը հայկական արքունիքում՝ այդ երևում է նրանից, որ Տիգրանի որդին՝ Արտավազդը, ինչպես վերև ասացինք, գրած է եղել հունարեն լեզվով ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը հայտնի են եղել Պլուտարքոսին[20]։

Տիգրանի և Միհրդատի վերանորոգչական ու առաջադիմական գործունեությանը վերջ դրին Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքները։ Հաղթող ու աշխարհակալորեն առաջ շարժվող Հռոմը ո՛չ միայն ամայացրեց և ավերակների կույտ դարձրեց Պոնտոսի և հարավային Հայաստանի հարուստ ու փարթամ քաղաքներն ու գյուղերը, այլև, հաստատվելով մշտականապես Ասորիքում՝ հետզհետե առաջ բերեց ինչպես Հայաստանում, նույնպես և ամբողջ Առաջավոր Ասիայում հելլենիստական քաղաքակրթության թուլացում և կուլտուրական հետադիմություն[21]։ Հատկապես Հայաստանում ու նրա հարևան պարթևական թագավորության երկրներում հելլենիզմը և հելլենական քաղաքային կուլտուրան հետզհետե զիջեցին իրենց տեղն իրանական հին կենցաղին ու ավանդություններին, որոնք խոր արմատներ ունեին առանձնապես այս երկրներում։

* * *

Հռոմեական աշխարհակալության հաստատմամբ Եփրատ ու Տիգրիս գետերի մոտ հին Հայաստանի համար ստեղծվեց քաղաքական ծանր ու տանջալից բուֆերական կացություն, որն այնուհետև տևեց երկար դարեր։ Գտնվելով երկու հզոր թշնամիների՝ Հռոմի և Իրանի միջև, Հայաստանը հարկադրված եղավ հակառակ հայ ժողովրդի կենսական շահերի, մասնակից լինել կատաղի ու անվերջ պատերազմներին, որ պարբերաբար վերսկսում էին իրար դեմ հարևան մեծ պետությունները։

Հայկական լեռնաշխարհը հենց ինքը դառավ այնուհետև միջազգային պայքարի ու մրցությունների առարկա և կատարում էր հաճախ հենարան երկրի և ռազմադաշտի ծանր դեր։ Կռվող պետությունների համար Հայաստանին տիրապետելը խիստ կարևոր էր և պայմանավորված էր ո՛չ միայն այն հանգամանքով, որ նրա մեջ գտնվում էր համաշխարհային առևտրական ճանապարհների հյուսիսային մեծ գիծը, այլ, գլխավորապես, նրա ռազմական ու սարատեգիական մեծ կարևորությամբ։ Շնորհիվ աշխարհագրական իր առանձնահատկությունների, Հայկական լեռնաշխարհը, ինչպես հայտնի է, հսկայական բնական մի միջնաբերդ էր և ուներ առաջնակարգ նշանակություն ինչպես պաշտպանողական, նույնպես և հարձակողական պատերազմի համար։ Իբրև բարեկամ պարթևների՝ նա անհանդուրժելի մի վտանգ էր հռոմեական արևելյան նահանգների համար, իսկ իբրև դաշնակից Հռոմի՝ նա դարձյալ ահավոր սպառնալիք էր Պարթևական թագավորության համար։ Ուստի և քաղաքական մերձեցումը Հայաստանի հետ կամ նրա բռնի նվաճումը այնուհետև ամենահիմնական

[18] Տե՛ս Mithridate Eupator, էջ 52։
[19] Տե՛ս նույնը, էջ 405։
[20] Տե՛ս Կրասոսոս, գլ. 33, 1։
[21] Տե՛ս Eduard Meyer, Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1925, էջ 62 և այլն։

հարցը եղավ թե Հռոմի և թե պարթևների ու Պարսկաստանի արտաքին քաղաքականության։

Հայաստանի այս աղետալի դրությունը, որ առնչվել էր Պոմպեոսի հաղթական արշավանքներից ու 66 թվից հետո, շարունակվեց ո՛չ միայն հռոմեական-պարթևական, այլև բյուզանդական-սասանյան, բյուզանդական-արաբական և հետագույն շրջաններում։ Իբրև մարտադաշտ համառ ու արյունահեղ կռիվների՝ նա պարբերաբար ավերվում էր ու կողոպտվում, իսկ բնակչությունը սրի էր մատնվում ու գերվում։ Հայաստանի բուֆերական դրությունն էր գլխավոր պատճառը, որ նա անկարող եղավ իր ձեռքն առնել սեփական ճակատագրի տնօրինումը, և նրա քաղաքական վիճակը կարգավորում էին գրեթե միշտ շահագրգռված մեծ պետությունները։

Որպեսզի Հայաստանը կարողանար ազատվել բուֆեր-պետության իր դրությունից՝ հարկավոր էր, անշուշտ, որ Արևմուտքի և Արևելքի սահմանը և նրանց մշտական կռիվների բեմը Հայաստանի մոտից տեղափոխվեր մի այլ տեղ։ Հայաստանի համար ցանկալի էր, իհարկե, որ Առաջավոր Ասիայում վերականգնվեր քաղաքական այն կացությունը, որ նա ունեցել էր Աղեքսանդր Մակեդոնացու և կամ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ։

Սակայն այդ նրան այլևս բնավ չվիճակվեց։ Դարեր շարունակ արևմտյան և արևելյան մեծ աշխարհակալությունները մնացին անշարժ իրենց նույն հին դիրքերում՝ Եփրատ ու Տիգրիս գետերի մոտերքում։ Եվ Հայաստանը, որ Պոմպեոսի հաղթությունից և 66 թվից հետո կորցրել էր մեծապետական իր նախկին անկախությունը՝ մշտական զոհը դառավ արևմտյան և արևելյան մրցող մեծ պետությունների։

ՑԱՆԿ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Երկրորդի դարաշրջանը քաղաքական ու սոցիալական ցնցումների ալեկոծ մի ժամանակաշրջան էր, երբ վճռական ու արմատական փոփոխության էր ենթարկվում ո՛չ միայն Հայաստանի, այլև Արևմտյան Ասիայի ճակատագիրը։ Սակայն այդ մեծ հեղաշրջումը և, մասնավորապես, այն պատմական անցքերը, որ տեղի էին ունեցել Հայաստանում, խեղաթյուրված են մեծ չափով պատմագիտական բոլոր երկերում և մինչևիսկ դասական համարված ուսումնասիրություններում։

Խեղաթյուրումների գլխավոր պատճառներից մեկը պետք է համարել, անտարակույս, սկզբնաղբյուրների կողմնապահ ու աշառու տեղեկությունները, որ անվերապահ կերպով հյուրընկալվել են պատմական նորագույն երկերում։

Միհրդատ-Տիգրանյան դարաշրջանի հիմնական սկզբնաղբյուրներն են ականատեսների և ժամանակակից հեղինակների գրվածքները։

1. Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեոսի պաշտոնական տեղեկագրերը,

2. Սուլլայի հիշատակարանը,

3. Թեոփանես Միտիլենացու գրած Պոմպեոսի կոիվների պատմությունը,

4. Արքիաս Անտիոքացու վիպերգը,

5. Սալլուստիուսի պատմությունը և

6. Կիկերոնի ճառերը։

Գլխավորապես հենց այս սկզբնաղբյուրներից օգտված պիտի լինեին, անշուշտ, մեծագույն մասը հետագա պատմիչների։ Բայց հիշյալ զեկուցագրերը, ինչպես և նման կարգի գրվածքները, համաձայն քննական նոր հետազոտությունների՝ միանգամայն անվստահելի են։

«Զեկուցագրերի հեղինակները,—ասում է Ռեյնաքը[1],—

---

1 Տե՛ս Mithridate Eupator, էջ 418—419։

վատահ լինելով, որ իրենց սաները չեն մերկացվի՝ ուզնում էին իրենց հաջողությունները, թաքցնում իրենց անհաջողությունները, իսկ երբեմն իրենց պարտությունները հայտարարում իբրև հաղթություններ,—Մուրենան, օրինակ, որը պարտություն էր կրել՝ արժանացել էր հաղթահանդեսի։ Ընդրանք, ծայրաստիճան չափազանցրել են թշնամիների զորաթվերն ու կորուստները, իսկ իրենցը համապատասխան չափերով պակասեցրել։ Օրինակ, Տիգրանակերտի կռվի մասին իր զեկուցագրում Լուկուլլոսը Տիգրանի զորքերի թիվը ցույց է տվել մոտ 250.000 մարդ, մինչդեռ ուրիշ աղբյուրներ նույն զորքի թիվը հաշվում են միայն 80.000 մարդ[2]։ Նույն այս կռվում իր կորուստը նա համարում է 5 սպանված և 100 վիրավոր, մինչդեռ թշնամու կորուստը ենթադրում է առնվազն 30.000 մարդ։ Եվ Լուկուլլոսն այդ արել է, հետևելով Սուլլայի օրինակին, ու կարելի է վստահ լինել, որ Պոմպեոսը՝ միևնույն ուսուցչի աշակերտը, առավել ևս զերազանցել է իր նախորդներին»։

Նման չափազանցված ու սուտ տեղեկություններ հաղորդում են իրենց հովանավորների՝ Լուկուլլոսի և Պոմպեոսի մասին՝ նաև Արքիաս Անտիոքացին ու Թեոփանես Միտիլենացին։

Համեմատաբար ավելի արժանահավատ են համարվում Սալլուստիուսը և Կիկերոնը։ Սակայն հռոմեական այս հեղինակները ևս, որոնք օգտվել էին, հավանորեն, վերոհիշյալ զեկուցագրերից կամ նման աղբյուրներից՝ զերծ չեն ըստ իս որոշ չափազանցություններից։

Հռոմեական և հունական ավելի ուշ շրջանի աղբյուրները պետք է բաժանել երկու խմբի։

Առաջին խմբին են պատկանում հռոմեական սկզբնաղբյուրների վրա հիմնված երկերը, իսկ երկրորդ խմբին՝ այն հունական աշխատությունները, որոնց աղբյուր են ծառայել փոքրասիական բանավոր ավանդությունները և կամ գրավոր կորած երկերը։

Առաջին խմբի պատմական աղբյուրներից առանձնապես կարևոր է համարվում հայրենասիրական ոգով գրված, աշառու ու կողմնապահ Տիտուս Լիվիուսի պատմությունը, որը համառոտել են կամ մեծ չափով օգտագործել Ֆլորուսը, Եվտրոպիուսը, Օրոզիուսը, Փրոնտինուսը և ուրիշները։ Նույն այս խմբի աղբյուրներ են համարվում նաև Պլուտարքոսը և Ապպիանոսը, որոնց

[2] Տե՛ս Մ ե մ ն ո ն, գլ. 57։

մոտ Տիգրան Բ-ի ու Հայաստանի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները պահպանված են ամբողջությամբ։

Առաջինն այս հեղինակներից, Պլուտարքոսը, գրել է, ինչպես հայտնի է, Սուլլայի, Լուկուլլոսի և Պոմպեոսի կենսագրությունները։ Սակայն Պլուտարքոսի այս գրվածքները պարզապես ներբողներ են ու խրատական պատմվածքներ, որոնց մեջ պատմական փաստերը հաճախ քողարկված են կամ գունավորված են, մեծ մասամբ, հօգուտ մեծարված ու հերոսացված հռոմեական զորավարների։ Եվ ուշագրավ է, որ հենց Պլուտարքոսի չափազանցություններն ու ակներև հերյուրանքները մեծ են բերվում շարունակ պատմագիտական նորագույն երկերում։

Մյուս հեղինակը, Ապպիանոսը, օգտվել է բացի Լիվիուսից նաև փոքրասիական կորած աղբյուրներից, հավանորեն, Նիկոլաոս Դամասկացուց և Պոսիդոնիոսից։ Հատուկ ուշադրության արժանի են, անշուշտ, Ապպիանոսի պատմության այն մասերը, որոնք քաղված են փոքրասիական չեզոք այս հեղինակներից։

Երկրորդ խմբի՝ հելլենիստական Արևելքի հունական երկերը, դժբախտաբար, շատ քիչ են և չեն պահպանված իրենց ամբողջական բովանդակությամբ։ Այս աղբյուրներից կարևորագույնն է Մեմնոնի «Հերակլեայի պատմությունը», որի մեջ միջանկյալ կերպով ուշագրավ տեղեկություններ են հաղորդված Լուկուլլոսի արշավանքների մասին Հայաստանում։ Մեմնոնի այն վկայությունները, որոնք քաղված են Հերակլեայի հին ժամանակագրություններից, ավելի ճիշտ են ու արժանահավատ, քան հռոմեական ինքնասպարծ ու միտումնավոր հաղորդագրությունները։

Միանգամայն վստահելի է ու արժանահավատ բացի Մեմնոնից նաև Ստրաբոնը, որը ծնվել էր պոնտական Ամասիա քաղաքում 63 թվին (նախքան մեր թվ.)։ Սրա նախնիները վարել են պոնտական թագավորության մեջ բարձր պաշտոններ և եղել են ականավոր զինվորականներ։ Իր ազգականներից ու հայրենակիցներից նա լսած կլիներ, անշուշտ, և հավաքած տեղեկություններ Միհրդատյան մեծ դարաշրջանի մասին, որը նա նկարագրել էր իր «Պատմական հիշողություններ» (Ἱστορικὰ ὑπομνήματα) աշխատության մեջ։ Նա օգտվել է միաժամանակ բազմաթիվ պոնտական հին պատմագիրների երկերից, որոնց նա իր աշխարհագրության մեջ անվանում է «Միհրդատյան ժամանակագիրներ» (τὰ Μιθριδατικὰ συγγραφεῖς տե՛ս XI, 2, 14)։ Նրա պատմական մեծ աշխատության կորուստը պետք է համարել, անշուշտ, պատմական գրականության ամենամեծ կորուստներից մեկը։

Ստրաբոնի երկերից պահպանվել է միմիայն նրա աշխարհագրությունը, որի մեջ կան, բարեբախտաբար, միջանկյալ ու համառոտ տեղեկություններ թե Միհրդատյան կռիվների և թե Արտաշեսյան Հայաստանի ու Տիգրան Բ-ի մասին:

Մի քանի կարևոր վկայություններ, որ քաղված են, ըստ երևույթին, փոքրասիական չեզոք աղբյուրներից՝ ունի նաև Փլեգոն Տրալլացին իր «Օլիմպիականք»-ում:

Ինչպես տեսնում ենք, երկրորդ խմբի երկերից մնացել են միմիայն հատուկտոր և ընդմիջվող վկայություններ, որոնք չեն կարող հիմք ծառայել պատմական անցքերի մանրամասն վերականգնման: Սակայն պահպանված այս վկայությունները, որոնք դիմակազերծ են անում հռոմեական աղբյուրների սուտն ու աղավաղումները՝ պարզ ցույց են տալիս, որ այս վերջինների մինչեհիմ ընդունելի համարված վկայություններից պետք է օգտվել ամենամեծ զգուշությամբ:

Այդ անհրաժեշտ զգուշավորությունը բնավ չի պահված, դժբախտաբար, ո՛չ եվրոպական և ո՛չ էլ հայկական գիտական երկերում:

Մեր աշխատության մեջ ճշտված են ըստ հնարավորության, աղբյուրների համեմատական ուսումնասիրությամբ, հռոմեական հեղինակների հերյուրանքներն ու չափազանցությունները և Տիգրան Բ-ի ու նրա դարաշրջանի պատմությունը տրված է նոր լուսաբանությամբ:

ՑԱՆԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Սալլաստի, Լուկուլլոսի, Պոմպեոսի պաշտոնական տեղեկագրերը՝ ուղարկված հռոմեական սենատին Թարգամոսի դաշնադրից, Տիգրանակերտի առումից և Միհրդատի մահից հետո:

Այս գրություններից, որոնք չեն հասել մեր ձեռքը, օգտվել են Կիկերոնը, Ապպիանոսը, Պլուտարքոսը և ուրիշները:

2. Սալլաստի հիշատակարանից (Commentarium rerum gestarum), *որը նույնպես կորած է, օգտվել են Պլուտարքոսը, Լիվիոսը և ուրիշները: Որոշ հատվածներ, որ պահպանվել են այդ հիշատակարանից՝ հրատարակել է Պետերը, տե՛ս* Peter, Historicorum Romanorum fragmenta, *երկրորդ հրատարակություն, էջ 127 և նշ:*

3. Սալլուստիուս (87—34 թ. մեր թվ. առաջ), Historiarum fragm., ed. Fr. Kritzius, Leipzig, 1853 և Historiarum reliquiae, ed. B. Maurenbrecher, fasc. I—II, 1891, 1894: *Սալլուստիուսի երկը, որից պահպանվել են կարևոր հատվածներ՝ լավագույն աղբյուրն է համարվել Լուկուլլոսի արշավանքների:*

4. Կիկերոն (106—43 մեր թվ. առաջ), Ճառեր, նամակներ են, տե՛ս Pro lege Manilia *կամ* De imperio Cn. Pompeii, Pro Murena, Pro Sestio, Pro Archia poeta, Pro Flacco և Academicorum libri duo: *Համմ. ճառերի ռուսերեն թարգմանությունը՝* „М. Туллий Цицерон, Полное собрание речей в русском переводе", под редак. Ф. Зелинского, т. I, СПб. 1901:

Բ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Պոսիդոնիոս Ապամեացին (մոտ 135—51 մեր թվ. առաջ), որը գրել է Պոլիբիոսի պատմության շարունակությունը, նաև, հավանորեն, ինչպես ենթադրում է Ռեյնաքը (Mithridate Eupator, *էջ 426), *Պոմպեոսի արշավանքների պատմությունը (տե՛ս*

Str. XI, 1,6): Պահպանված են և հրատարակված են հատվածներ, տե՛ս C. Muller, Fragmenta historicorum graecorum, III:

2. Թեոփանես Միտիլենացին, որն անձամբ մասնակցել էր Պոմպեոսի արշավանքներին, տվել է սրանց պատմությունը՝ դունավորված ի նպաստ Պոմպեոսի: Պահպանված հատվածները հրատարակված են Մյուլլերի ժողովածուի երրորդ հատորում, տե՛ս Fragm. hist. graec., III:

3. Արքիաս Անտիոքացին, որն ուղեկցել էր Լուկուլլոսին և մասնակցել նրա արշավանքներին, գրել է հատուկ մի վիպերգ ի մեծարումն Լուկուլլոսի, իր հովանավորի: Ուշադրավ է, որ նաև այս կրած բանաստեղծական ներբողը աղբյուր է ծառայել Վիվիուսին և Պլուտարքոսին (տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 427):

Գ. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Տիտուս Լիվիուսի (59 թ. նախքան մեր թվ. — 17 մեր թվ. հ.) ընդարձակ պատմությունից, որ վերաբերում է Տիգրան Բ-ի շրջանին՝ պահպանվել են համապատասխան գրքերի համառոտ բովանդակությունները (periochae) և քաղվածքներ Ֆլորուսի, Եվտրոպիուսի, Օրոզիուսի և ուրիշ հեղինակների երկերում:

2. Պոմպեոս Տրոգուսը, որը ժամանակակից էր Լիվիուսին՝ գրել է ընդհանուր պատմություն (Historiae Philippicae), որի նախաբանները և համառոտ բովանդակությունը պահպանվել են Յուստինոսի երկում, տե՛ս M. Juniani Justini, Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, ex recen. Fr. Ruehl, Lipsiae, 1915:

3. Վելլեյուս Պատերկուլուսը, որը ժամանակակից էր Տիբերիուս կայսեր (14—37 մեր թվ. հ.), գրել է համառոտ հռոմեական պատմություն, տե՛ս Vellei Paterculi, Ex historiae Romanae libris duobus quae supersunt, ed. C. Halm, Bibl. Teubn.:

4. Ֆրոնտինուսը, որը ժամանակակից էր Դոմիտիանոսի (81—96 մեր թվ. հ.)՝ գրել է Strategematon libri 4, Bibl. Teubn.:

5. Ֆլորուսը գրել է երկրորդ դարի առաջին կեսում (մեր թվ. հ.) հռոմեական պատերազմների պատմությունը մինչև Օգոստոս: Նա օգտվել է, գլխավորապես, Լիվիուսի ընդարձակ պատմությունից: Տե՛ս Հալմի հրատարակությունը՝ Flori Juli, Epitomae de T. Livio bellorum annorum DCC libri II, ex rec. C. Halm, Bibl, Teubn.:

6. Եվտրոպիուսը կազմել է չորրորդ դարում համառոտ մի ձեռնարկ հռոմեական պատմության մինչև 364 թ. (մեր թվ. հ.), տե՛ս Eutropii, Breviarium histor. Roman. Rec. Fr. Ruehl, Bibl. Teubn:

7. Օրոզիուս քահանայի Սպանիայում գրված հեթանոսական աշխարհի համառոտ պատմությունը պարունակում է իր մեջ քաղվածքներ հնագույն երկերից և ունի կարևոր մանրամասնություններ Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքների մասին, տե՛ս Orosii Pauli, Historiarum adversus paganos libri VII, recen. C. Zangemeister, Bibl. Teubn.:

Դ. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Սարաբոն (63 նախքան մեր թվ.—19 մեր թվ. հ.), տե՛ս Strabonis, Geographica, recogn. A. Meineke, vol. ZI—III, Lipsiae, 1915—1925:

2. Նիկոլայոս Դամասկացին, Հերովդես Մեծի (37—4 մեր թվ. առ.) քարտուղարը, գրել է ընդհանուր պատմություն, որից մնացել են միայն հատվածներ, տե՛ս C. Müller, Fragm. hist. graec., III: Այս պատմությունն աղբյուր է ծառայել Ապպիանոսին:

3. Պլուտարքոսը (մոտ 46—120 մեր թվ. հ.) գրել է Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեոսի, Սերտորիուսի, Կրասոսի և այլ կենսագրություններ, տե՛ս Plutarchi vitae, graece et latine, Փարիզի հրատ. Th. Döhner-ի և F. Dübner-ի, հտ. I—V, 1846—1855:

4. Հովսեփոս Փլավիոսը (ծնվ. 37/38 թվ. մեր թվ. հ.) գրել է «Հրեական պատերազմ» և «Հրեական հնախոսություն» երկերը, տե՛ս Josephi Flavii, opera omnia, recogn. Eman. Bekker, Bibl. Teubn.:

5. Փլեգոն Տրալլացին, Հադրիանոս կայսեր (117—138 մեր թվ. հ.) ժամանակակից հեղինակը՝ գրել է ժամանակագրական մի երկ «Օլիմպիադներ» վերնագրով (Ὀλυμπιάδες), որից մնացել են հատվածներ, տե՛ս C. Müller, Fragm, hist. graec., III:

6. Ապպիանոս Աղեքսանդրիացին, որը ժամանակակից էր Հադրիանոս (117—138 թ. մեր թվ. հ.) և Անտոնինոս (138—161 մեր թվ. հ.) կայսրների՝ գրել է հռոմեական պատմություն, որի մեջ Տիգրան-Մհերդատյան դարաշրջանի անցքերը նկարագրված են 11-րդ և 12-րդ գրքերում (XI—Συριακή, XII—Μιθριδάτειος), տե՛ս Appiani Alexandrini, Historia Romana, ed. L. Mendelssohn, 2 vol., Bibl. Teubn.:

7. *Մեմնոնը (ժամանակն անհայտ) գրել է Հերակլեայի պատմությունը, տե՛ս Memnonis,* Historiarum Heracleae Ponti, ed C. Orellius, Lipsiae, 1816։

8. *Կասիուս Դիոնը (մոտավ. 155—235 մեր թվ. հ.) գրել է հռոմեական պատմություն տ՛ես Cassii Dionis Cocceiani,* Historiarum Romanorum quae supersunt, ed. Boissevain, vol. I, Berolini, 1895։

Ե. ՕԺԱՆԴԱԿ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. *Diodorus,* Biblioth. histor., ex recensione L. Dindorfii.

2. *Isidori Characeni,* Stathmoi Parthicoi, *տե՛ս* C. Müller, Geogr. graeci min., I.

3. *Lucianus Makrobioi,* Bibl. Teubn.

4. *Herodoti,* Historiarum libri IX, Bibl. Teubn., *տե՛ս նաև ռուսերեն թարգմանությունը՝* Ф. Г. Мищенко-յի, Москва, 1885։

5. *C. Plinii Secundi,* Naturalis Historiae, *տե՛ս* Histoire naturelle de Pline, avec la traduction en francais, par M. É. Littré, t. I—II, Paris, 1883։

6. Polybii historiae, Bibl. Teubn., *տե՛ս նաև* Всеобщая история в 40 книгах, перевод Мищенка, т. I—III. Москва, 1890—1899։

7. *Ptolemaei,* Geographia, *հրտր.* C. Müller-ի։

8. Valeri Maximi factorum et dictorum memorabilium libri IX, rec. C. Kempf, Bibl. Teubn.

9. C. Cornelii Taciti opera, adc. Weise, T. I, Annalium libri XVI, Lipsiae, 1829.

10. *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913։*

11. *«Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», երկ. տպագր. Վենետիկ, 1899։*

ՑԱՆԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Աբեղյան Մ., *Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899—1901։*

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908.

Kévork Arslan, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909.

Ասատրյան Հ. Յ., *Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռոմայ 190-էն ն. Ք. մինչև 428 յ. Ք., Վենետիկ, 1912։*

Belck W., Majafarkin und Tigranokerta, Zeitschrift für Ethnologie, 1899.

Նույնի, Der Weg Xenophons auf seinem Rückzuge bis in die Ebene von Alaschgert, Verhandl. der Berl. anthrop. Gesellschaft, 1899.

Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918.

Գարագաշյան Ա. Մ., *Քննական պատմութիւն Հայոց, II, Թիֆլիս, 1895։*

Գելցեր Հ., *Համառօտ պատմութիւն Հայոց, թարգմ. Հ. Գր. վ. Գալեմքյարյանի, Վիեննա, 1897։*

Gutschmid Alf. von, Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, Tübingen, 1888.

Նույնի, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Mém. de l'Acad. Imp. des sciences de St.-Pétersbourg, 1887.

Դաղբաշյան Հ., *Ստուգ Հայոց պատմութիւն, Թիֆլիս, 1914։*

Dolens et Khatch, Histoire des anciens Arméniens, Genève, 1907, *տե՛ս նաև հայերեն թարգմանությունը Ռ. Քաջբերունու, Թիֆլիս, 1909—1910։*

Duruy Victor, Histoire des Romains, t. II, Paris, 1890.

Drumann, Geschichte Roms, bearbeitet von P. Groebe, Band IV, Berlin, 1899.

Eckhardt Kurt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. IX, Heft 4 und Bd. X, Heft 1 und 2. *Տե՛ս նաև Վ. Գարանֆիլյանի հայերեն թարգմանությունը՝ «Տիգրան Բ և հայ-լուկուլլեան պատերազմները», Վիեննա, 1926, Ազգ. մատ. ՃԺԹ:*

Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. I, Berlin, 1910.

Լեո, Հայոց պատմություն, հատ. առաջին, Թիֆլիս, 1917:

Халатьянц Г., Очерк истории Армении, Москва, 1910:

Նուլնի, Армянские Аршакиды, Москва, 1903:

Karbe Hans, Der Marsch der Zehntausend vom Zapates zum Phasis-Araxes. Wissenschaftliche Beilage zum Jahresbericht des Königstädtischen Gymnasiums zu Berlin, 1898.

Կարիեր Ա., Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ համեմատ: Թրգմ. Հ. Հ. վ. Տաշյանի, Վիեննա, 1899, Ազգ. մատ. ԼԸ:

Kiepert H., Ueber die Lage der armenischen Hauptstadt Tigranokerta, Monatsberichte der Akademie der Wissenschaften zu Berlin, 1873.

Kiepert R., Atlas von Kleinasien in 24 Blättern, 1902—1906.

Ковалев С. И., История античного обшества, эллинизм и Рим, Ленинград, 1936.

Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անուններըը, թարգմ. Հ. Բ. Պիւզիկճյանի, Վիեննա, 1907, Ազգ. մատ. ԾԳ:

Hultsch Fr., Griechische und römische Metrologie, zw. Bearb., Berlin, 1882.

Манандян Я. А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930.

Նուլնի, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934:

Նուլնի, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեվտինգերյան քարտեզի, Երևան, 1936:

Нулнн, Круговой путь Помпея в Закавказье, „Вестник древней истории", Москва, 1939, 4:

Markwart J., Eranschahr nach der Geographie des Ps. Moses Xoren., Berlin, 1901.

Նուլնի, Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896, Philologus, Bd. 51—55:

Նուլնի, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

Նուլնի, Die Entstehung und die Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919:

Նուլնի, Das Itinerar von Artaxata nach Armastica auf d. römischen Weltkarte, Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, *Հանդէս ամսօրեա*, 1927, № 11:

Նուլնի, Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Xoren., Caucasica, fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930:

Meyer Ed., Blüte und Niedergang des Hellenismus n Asien, Berlin, 1925.

Merivale Ch., General history of Rome, 1875.

Miller Konrad, Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916.

Moltke H. von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei (1835—1839), Berlin.

Моммсен Ф., Римская история, том второй, перевод В. Н. Неведомского, Москва, 1887.

Моммсен Ф., Римская история, том третий, перевод А. Веселовского, Москва, 1887.

Mommsen Th., Römische Geschichte, Bd. V, Dritte Auflage, Berlin, 1886.

Նուլնի, Die Lage von Tigranokerta, Hermes IX, 1887:

Morgan J., Histoire du peuple arménien, Nancy-Paris-Strasbourg, 1919.

Низе Б., Очерк римской истории и источниковедения, издание третье, СПб, 1910.

Нич К. В., История римской республики, Москва, 1908.

Chapot Victor, la province romaine proconsulaire d'Asie, depuis ses origines jusqu' à la fin du Haut-empire, Paris, 1904.

Զամչյան Մ., Պատմութիւն Հայոց, I—III, Վենետիկ, 1784—1786:

Spiegel F., Eranische Alterthumskunde, Bd. III, Leipzig, 1878.

Reinach Th., Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890.

Sachau E., Ueber die Lage von Tigranocerta, Abhandl. der kgl. Akademie der Wissensch. zu Berlin, 1880.

Страбон, Всеобщая история в 40 книгах, перевод Мищенка, т. I—III, Москва, 1890—1899.

Taylor J. G., Journal of a tour in Armenia, Kurdistan and upper Mesopotamia, *տե՛ս ռուս. թարգմ.* Н. Астафьев-ի, Матер. для географии Аз. Турции, прил. к тому II Изв. Кавк. Отд. Рус. Геогр. Общ., Тифлис, 1874։

Tournebize F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

Fabriciys, Theophanes von Mitylene und Q. Dellius, als Quellen der Geographie deş Strabons, Strassburg, 1888.

Ферреро Г., Величие и падение Рима, т. I, перевод А. Захарова, Москва, 1915.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբեղյան Մ. *6, 45, 86*
Ագաթանգեղոս *64, 76*
Ադոնց Նիկ. *7, 11, 122, 197, 199, 226*
Աբեհաս *63, 64, 85*
Ալեքսանդր Մակեդոնացի ***33, 40, 59,*** *60, 78, 155, 229, 230*
Ալֆաուդոնիոս, *արաբ ցեղապետ, 153*
Ալեքսանդր, *«որդի Յոհաննու», 109*
Անասյան Հ. *6, 7*
Ամփիկրատես, *հռետոր, 85*
Անահիտ *23, 85*
Աննիբալ *կամ* Հաննիբալ *43, 172, 224*
Անտիոքոս Ասիացի *153, 225*
Անտիոքոս Բարեպաշտ *210*
Անտիոքոս Գրիպոս *153*
Անտիոքոս Դ *44*
Անտիոքոս Եվսեբես *153*
Անտիոքոս Մեծ *35, 40, 43*
Անտիոքոս, *իշխան Կոմագենի, 153*
Անտիպատր *(Սիսիդի որդին) 194*
Անտոնիոս *199*
Ապոլոն *23, 85*
Ապոլոնիդես, *պատմագիր, 28*
Ապպիանոս, *պատմագիր, 44, 46, 47, 51—53, 69, 70, 72, 81, 92, 100, 107, 108, 113, 116—118, 122—125, 130, 133, 134, 143—150, 154, 156—159, 162, 172, 176, 177, 179—183, 187, 188, 190, 193, 195—200, 204, 206, 208—210, 216, 218, 223*
Ապպիոս Կլավդիոս *47, 101—104, 107, 114, 153, 154*
Աստաֆե *197*
Աստղիկ *23, 85*
Աստուրյան Հ. *27, 67—69, 103, 123, 124, 135, 173, 209*
Աստալոս Գ., *Պերգամոնի թագավոր, 35*
Արամազդ *23, 85*
Արդատես, *արմենների թագավոր, 38*
Արզումանյան *5, 17*
Արիարաթ Բ, *Կապադովկիայի թագավոր, 38*
Արիարաթ Ե, *42, 77*
Արիարաթ Թ, *Միհրդատ Պոնտացու որդին, 49, 52, 54, 58, 59*
Արիորարզան Ա Հռոմեասեր, *Կապադովկիայի թագավոր, 49—54, 57, 92, 110, 111, 182, 225, 226*
Արիստարես *225*
Արիստոտել *7*
Արշակ Ա., *Պարթևական թագավորության հիմնադիր, 34*
Արշակուհիներ *11, 12*
Արշակուհիներ *(պարթև) 34, 65, 66*
Արսլան Գևորգ *27*
Արտաշես, *Ծոփքի թագավոր, 48*
Արտաշես Աշխարհակալ *63, 64*
Արտաշես Ա, *Մեծ Հայաստանի թագավոր, 40—48, 75, 79*
Արտաշեսյան թագավորություն *16, 25, 40, 44, 45, 75*
Արտավազդ Ա, *Արտաշես Ա-ի որդին, 45—47, 227*
Արտավազդ Բ, *Տիգրան Բ-ի որդին, 23, 85, 210, 227, 228*
Արտավան, *պարթև թագավոր, 45*
Արտեմիդե *63, 64, 78, 85*
Արտեմիս *23, 112*

Աբտոկես, *Իբերիայի թագավոր, 215, 217, 220*
Աբրեղայոս, *պոնտական զորավար, 61*
Աբրիաս Անտիոքացի *112*
Աբեմենյաններ *37, 48, 49, 75*
Ափրահիոս, *վերահսկիչ, 213, 222, 223, 225*
Աֆրոդիտե *23, 63, 64, 85*

Բագադատես, *տե՛ս Բագարատ*
Բագարատ *69, 70, 74, 153*
Բագոաս, *Տիգրան Բ-ի զորավար, 52, 53*
Բագրատուհիներ *69*
Բելէ, *անգլիացի գիտնական, 83, 131, 132, 166*

Գաբինիոս *181, 184, 185*
Գաբինիոս, *Պոմպեոսի զորավար, 225*
Գալեմքյարյան *87*
Գարագաշյան Ա. *146*
Գարանֆիլյան Հ. Գ. *27*
Գլաբրիոն, *տե՛ս Մանիուս Ակիլիոս Գլաբրիոն*
Գելցեր Հ. *87*
Գորդիոս *51, 52, 54*
Գյանջեցյան *6*
Գրեկով Բ. Դ. *5, 17*
Գուշմիդ Ա. *57, 99, 188, 227*
Գուրաս, *Տիգրան Բ-ի եղբայրը, 67, 74, 152, 174, 175*

Դաղրաշյան Հ. *146*
Դավիթ Անհաղթ *7*
Դարեհ I *13*
Դեմետրիոս Սկեփսացի *127*
Դեյոտարոս *225, 226*
Դիոդորոս Սիկիլիացի *38, 42, 78*
Դիոն, *տե՛ս Կասիուս Դիոն*
Դիոնիս *109*
Դիոս *63, 64*
Դիոփանտես պատմագիր *28*
Դոլենս և Խոշ *27, 54, 103, 113, 117*
Դորիլաոս, *քրմապետ, 78*
Դրուման *137, 143*

Եվտրոպիոս *82, 83, 133, 134, 154*
Եվսեբիոս Կեսարացի *7*
Երեմյան Ս. Տ. *24*

Զախարով Ա. *105*
Զարբիենոս, *Կորնվաց թագավոր, 102, 104, 153, 154*
Զարեհ, *Ծոփքի, Ակիսենեի և Օդոմանտիսի թագավոր, 40—42, 46, 48*
Զարեհ, *Տիգրան Բ-ի որդին, 188*
Զևս *23, 78, 85*

Էբհարդ Կ. *27, 52, 54, 100, 103, 114, 119, 124, 128, 130, 134, 135, 137, 140, 143, 144, 155, 160, 161, 165, 168—171, 173, 174*
Էլիաս Խմաստասեր *7*
Էդուարդ Մաուեր *229*

Թեոփանես Միտիլենացի *194, 207*
Թորոսյան Հ. *18*

Լեման-Հաուպտ *27, 81, 83*
Լիվիուս, *տե՛ս Տիտուս Լիվիուս*
Լուկիանոս *227*
Լուկիուս Փաննիուս *176*
Լուկիուս Փլակկուս *215*
Լուկուլլոս *22, 27, 29, 32, 43, 47, 51, 67, 71, 72, 76, 80—82, 85, 90, 94, 96—114, 117—150, 161—178, 180—185, 189, 190, 207, 210, 211, 213, 223, 225, 228*
Լուցիուս Մագիուս *93*
Լուցիուս Փաննիուս *93*
Լեո *113, 117, 160, 161*

Խալաբյանց Դ. *27, 71, 74, 109, 116, 129, 160, 161, 187*
Խորենացի, *տե՛ս Մովսես Խորենացի*

Կալլիմախոս *175*
Կայոս Գրախոս *36, 37*
Կասիուս Դիոն *66, 71, 122, 148, 153, 154, 157, 158, 162, 164, 166, 168, 170, 172, 177, 180, 186—191, 193, 195, 196, 198, 202, 204—209, 211, 212, 215—218, 220, 222—224*
Կարբե, *գերմանացի գիտնական, 61*
Կարիեր Ա. *64*
Կեսար Հ. *66*
Կիկերոն *59, 60, 160, 171, 172, 179, 182, 183, 208, 227*
Կիպերտ Հ. *82*
Կիպերտ Ռ. *198*
Կյուրոս *17, 86*
Կլեոպատրա, *Միհրդատ Եվպատորի դուստրը, 50, 188, 228*
Կլեոպատրա-Սելենե թագուհի *70—72, 109, 153*
Կողիս, *Աղվանքի թագավորի եղբայրը, 220*
Կովալև Ս. Ի. *105*
Կոստա, *պրոկոնսուլ, 94—96*
Կորբուլոն *204*
Կվինտուս Մարկիուս Ռեքս *180, 181, 185, 186, 189, 195*
Կրասսոս *170, 227, 228*
Կրեսոս *64*
Կրկյաշարյան Ս. Մ. *22, 24*

Հակոբյան Վ. *5, 6*
Հարությունյան Ս. *45*
Հերակլիդես *28*
Հերակլես *23, 85*
Հերակլ կայսր *12*
Հերոդոտ *82*
Հեփեստոս *63, 64, 85*
Հիփոթիկրատիա *193*
Հյուբշման *41, 116*
Հովհաննես *(«Յովհաննէս, որդի Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի»)* *109*
Հովհաննես մարգարե *82*
Հովսեփոս Փլավիոս *28, 71, 72*
Հորացիուս *99*
Հուլշ *97, 106, 150, 209*
Հրաչատ Գ., *պարթև թագավոր, 157, 158, 186—188, 190, 202, 212, 213, 222—224, 226, 227*

Մա ատովածուճի *78*
Մամիկ *122*
Մամիկոնյաններ *122*
Մանիլիուս *184, 186*
Մանիոս Ակվիլիոս *53, 55, 57*
Մանիուս Ակիլիուս Գլաբրիոն *181, 183, 185*
Մանկայոս, *Տիգրան Բ-ի զորավար, 121, 122, 148, 149*
Մալխասյանց Ստ. *6*
Մար Աբաս *14, 69, 116*
Մարկուս Մարիուս *95*
Մարկվարտ *41, 46—48, 64, 65, 69, 76, 116, 118, 119, 132, 194, 196—199, 218*
Մարս Կ. *25*
Մահարես *97, 98, 108*
Մանլիոս Մալլիոնոս *51, 53*
Մաշտոց Մ. *15*
Մեհրուժան, *Զարեհի որդին, 42*
Մեհրուժան *118, 119*
Մեմնոն Հերակլեացի *98, 100, 103, 104, 108, 111, 122—125, 128, 130, 134—137, 142, 143, 146, 148—150, 154, 156, 157*
Մեյնեհե *194*
Մեսոռոպոս Սկեփսացի *28, 85, 98, 126—128*
Մեսելլուս Կելլեր *215*
Մերիվել, *պատմաբան, 59*
Միթրաես *52, 53*
Միլլեր Կոնրադ *197, 198*
Միհիր *85*
Միհրդատ Ս. *34*
Միհրդատ Բ, *պարթևների մեծ թագավոր, 46*
Միհրդատ Գ., *Հրահատ Գ.-ի հայրը, 227*
Միհրդատ Ա, *պոնտական թագավորության հիմնադիր, 37, 38*
Միհրդատ, *Փոքր Հայքի թագավոր, 40, 44*
Միհրդատ Եվպատոր *կամ* Պոնտացի (Մեծ) *18, 22, 23, 27—31, 37, 38, 46—62, 64—68, 70, 71, 77, 78, 86, 91—105, 107, 108, 110, 111, 123—131, 135, 142, 143, 145, 149—151, 155—159, 162, 164,*

168—170, 176, 177, 179—203, 210, 213, 215, 217, 218, 222—225, 227, 228
Միշչենկո 41
Միտրոփաննես 186
Մյուլլեր 44, 66, 134, 146
Մոափերենես 78
Մոլոմե 83
Մոմզեն Թ. 18—21, 23, 27—31, 37, 54, 57, 58, 60, 62, 69—71, 81, 82, 86, 103, 108, 111, 116, 129, 136, 146, 147, 155, 156, 159—161, 169, 170, 173, 182, 187, 189, 200, 215, 227
Մորգան 20, 27, 31, 54, 160
Մովսես Խորենացի 13, 14, 17, 21, 24, 41, 45, 47, 63, 64, 76, 80, 86, 87, 90, 109, 116
Մովսես Կաղանկատվացի 6
Մուրեննա, զորավար, 91, 119, 120, 133, 135

Յուստինոս 45, 46, 50—53, 55, 57, 58, 60, 67, 68, 70, 227

Նարուզոդոնոսոր 21
Նաննա 85, 159
Նեմաննես կամ Նայմաննես, արմեն զորավար, 59
Նեվեդոմսկի 37, 56
Նիզե Բ. 70, 169
Նիկողայոս Դամասկացի 143, 207
Նիկոմեդես Բ 51, 53, 57
Նիկոմեդես Գ 53, 94
Նիչ Գ. 134

Շախաու 137
Շապո Վ. 107
Շպիգել Ֆ. 56

Ոռոբազոս, Միհրդատ Բ.-ի դեսպանը, 53
Ոռոնտաս-Երվանդ 44

Պապովյան Ա. Ա. 18
Պետրոս Մեծ 77
Պլեզիկեյան Հ. Բ. 41, 200
Պլինիոս 41, 67. 75, 76, 83, 85, 152
Պլուտարքոս 29, 42, 43, 47, 51, 52, 54, 71, 76, 80, 81, 85, 98, 97—104, 107, 108, 112—138, 140, 142—156, 159, 162, 164—166, 169—171, 173, 174, 179, 182, 190, 191, 193, 195, 196, 199, 202, 204, 206—209, 212—215, 218, 220, 222, 223, 228
Պոլիբիոս 40, 44
Պոմպեոս 13, 23, 28, 32, 75, 90, 172, 182—187, 189—191, 193—196, 198—204, 206—213, 215—218, 220, 222—228, 230
Պոսիդոնիոս 207
Պտղեմեոս, աշխարհագետ, 82, 83
Պտղեմեոս 68
Պրոկոպիոս Կեսարացի 14

Ռեյնաք 18, 19, 21, 23, 27—31, 47, 50, 51, 54, 92, 94, 99, 100, 103, 108, 112, 119, 121, 124, 125, 127—129, 134, 135, 143, 146, 150, 155, 156, 159, 160, 165, 169, 170, 173, 183, 187, 190, 196—198, 200, 207
Ռուփուս 154

Սալմանասար 3-րդ 13, 21
Սալլուստիուս 71, 98, 108, 111, 112, 134, 136, 145, 157
Սանատրուկ թագավոր 157
Սարզոն 2-րդ 13
Սարգսյան Գ. 5, 11, 21, 24
Սասանյաններ 41
Սելբոս 14
Սելևկյաններ 21, 33, 34, 38, 40, 48, 69, 75, 80, 85
Սելևկոս Բ. Կալլինիկոս 34
Սերտորիուս 91, 93, 95
Սեքստիլիուս 119, 120, 122, 123, 143, 158
Սկավրուս 225
Սոկրատես, Նիկոմեդես Գ.-ի կրտսեր որդին, 53
Սորնատիուս 154
Սուլլա 52, 53, 61, 62, 64, 69, 73, 91, 93, 95, 108, 146, 147, 157, 178, 213
Սուրյան 63
Ստրաբոն 40—43, 46—48, 65, 66, 68, 70, 75, 77, 78, 80, 82, 85, 111, 127, 128, 136, 151—153, 157, 189, 191, 194, 196—198, 200, 202, 209, 210

Վալերիուս Մաքսիմուս 187, 188, 193, 208
Վահագն 23, 85
Վայկուն եյուզակ 109
Վեսելովսկի 69

Տակիտոս 71, 83, 152
Տայլոր 196, 197
Տաքսիլես 137
Տաշյան Հ. Վ. 64
Տերտերյան Ա. 6
Տիբիուս, Հուլն, 78
Տիգրան Ա., Տիգրան Բ.-ի հայրը, 47
Տիգրան Երվանդյան 19
Տիգրան Բ կամ Մեծ 5, 17—24, 27—31, 33, 40, 45—58, 62, 65—76, 79, 80, 84, 85—88, 90, 93, 97—111, 113, 116—160, 162, 164—166, 168—170, 174, 176, 179—182, 185—190, 199, 200, 202—204, 206—209, 212, 213, 222—224, 226—228
Տիգրան Կրտսեր, Տիգրան Բ-ի որդին, 187, 189, 190, 202—204, 206, 209, 211—213, 215, 228
Տիգրանուհի, Տիգրան Բ-ի քույրը, 87
Տիմարխոս 44
Տիտուս Լիվիուս 134, 143, 146
Տիրան 47
Տիր 23, 85
Տրդատ (Արշակ Բ), պարթև թագավոր, 34
Տրիարիուս 177—180
Տուրնեբիզ Ֆ., ֆրանսիացի դիտնական, 27, 200

Փարիուս Հադրիանուս 177
Փառնակ Պոնտացի 40, 44, 224, 225
Փավստոս 80, 82, 83
Փլեգոն Տրալլացի 134, 135, 146, 158, 159, 169
Փերիխանյան 21
Փռոնտինուս 133, 135, 136, 138, 142, 143, 146, 147, 191, 193

Քսենոփոն 161, 166, 182
Քսիլանդեր 194

Ֆաբրիցիուս, Հեղինակ, 43
Ֆեոխոս 18, 19, 23, 27, 29, 31, 93, 105, 107, 134, 155, 169, 173, 190
Ֆինկ Ֆ. 6

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս *կամ* Աբաքա գետ, *տե՛ս Ալազան գետ*
Աբասթուման *218*
Աղիաբեն *48, 66, 75, 80, 130, 157, 222*
Աղրաբաճան ամրոց *66*
Աբենիք *60, 64, 85, 105*
Ալազան գետ *218, 220*
Ալաշկերտի դաշտ *204*
Ալաջա *198*
Ալեքսանդրիա *90*
Ալպյան լեռներ *224*
Ախալցխա *5, 215, 216*
Ախալխալաք *215*
Ակիլիսենե *41, 195, 197, 199, 226*
Ակիսենե *40*
Ակն *197*
Աղրակ *66*
Աղձնիք *48, 82, 83, 90, 116, 162*
Աղյուն *197, 226*
Աղստաֆա *218*
Աղվանք *6, 23, 48, 130, 218, 226*
Աղրի-Դաղ, *տե՛ս Հայկական Պարի*
Ամասիա *7, 78*
Ամաստրիս, *Հունական քաղաք, 77*
Ամիդ-Դիարբեքիր *114, 132*
Ամիսոս *37, 50, 77, 97, 102, 105, 107, 108, 175*
Ամնիաս, *գետ, 58*
Անահիտյան երկիր *195, 215, 220 222*
Անգոյիսենե *191, 194*
Անդրկովկաս *13, 213, 220. 222*
Անի ամրոց *63*
Անի-Կամախ *64, 197*
Անտիոք *21, 68, 69, 74, 80, 102, 103, 152, 153*
Անտիտավրոս *41*
Աշկալա *198, 201*
Աշտարակ *215*
Ապամեա, *քաղաք, 21*
Ապարան *218*
Առաջավոր Ասիա *17—19, 24, 31, 33, 44, 99, 152, 229, 230*
Ասդրապատ, *տե՛ս Ջաղրակարտա*
Ասիա *30, 31, 35, 56, 59, 62, 63, 78, 108, 117, 128, 178, 181, 183, 184*
Ասիական Թուրքիա *197*
Ասորեստան *13*
Ասորիք *21, 67—72, 79, 80, 104, 110, 152, 153, 209, 210, 223—225, 229*
Ասպիս գավառ *220*
Ատլանդ կղզյակ *63*
Ատտիկա *63*
Ատրպատական *34, 43, 44, 46—48, 50, 65—68, 130, 159, 180, 182, 197, 226*
Արաբիա *130*
Արածանի *22, 134, 136, 165, 166, 168—171, 173*
Արարատյան դաշտ *43, 44, 79, 173, 204*
Արարատ *171*
Արաքս գետ *43, 203, 204, 207*
Արաքսի դաշտ *43*
Արբելա *66, 68*
Արդվին *201*
Արզն, *քաղաք, 82*
Արկաթիոկերտ *23, 79*
Արմավիր *14, 15, 23, 24, 45, 79*
Արմենիա *41, 44, 46, 66*
Արշամաշատ *23, 79*
Արտազ գավառ *174*

Աբուաշատ *23, 24, 42—45, 50, 79, 80, 84, 121, 161, 165, 166, 174, 179, 202—205, 207, 213, 215, 218*
Աբուսխասատա կամ Աբուսխասատա *43*
Աբևելյան Կիլիկիա *110, 152, 209*
Աբևելք *17, 20, 23, 25, 29—31, 33, 35—37, 48, 53, 55, 56, 75, 110, 157, 159, 160, 225, 230*
Աբևմուտք *30, 33, 35, 75, 159, 210*
Ափսարոս գետ *200*
Աբուն *174*

Բաբելոն *21, 22, 81, 82*
Բաբելոնիա *66*
Բագարին *64*
Բագավան *174, 204*
Բաբում *201*
Բալկանյան թերակղզի *39*
Բակտրիա *34*
Բաշխալե *65, 174*
Բասգոյդարիզա *195*
Բասեն *165*
Բասորոքեդա *41*
Բաումա-սու *130, 132*
Բարձր Հայք *204*
Բաֆու *8*
Բեռվախա *61*
Բերիա, *քաղաք, 21*
Բերկրի *174*
Բեռլին *64, 81, 83, 97, 106, 137, 150, 209, 229*
Բիբլիա (Բաղեշ) *161*
Բիթանիա *36—39, 44, 53, 57, 93—95, 97, 181—183, 225*
Բիրեջիկ *225*
Բնաբեղ բերդ *124*
Բոսփոր *38, 94, 95, 97, 195, 200*
Բոսփորյան թագավորություն *97, 108, 218, 224*

Գազիուրա, *գյուղաքաղաք, 78, 177, 179*
Գալատիա *36—39, 94, 181, 182, 189, 210, 225*
Գաղտատին *198, 204*
Գայլ գետ *193*
Գառնի *14, 24*
Գոգարենե, *տե՛ս Գուգարք*
Գոդրք *45*
Գևորգյան ճեմարան *6*
Գուգարք *41*

Դադասա ամրություն *179*
Դաճալա ամրոց 189
Դաճուբ գետ *224*
Դշտային Կիլիկիա *69—71*
Դաստեյրա *191, 193, 194, 196—199*
Դաստրակուս լեռ, *191, 196*
Դարաճաղի գավառ *197, 226*
Դարդաճոս *62, 91*
Դերջան գավառ *41, 199, 226*
Դիդեմ *166, 171*
Դիլիջան *218*
Դիոսկուրիաս *38, 201*
Դոստալ *197, 198*
Դորպատ-Տարտու *8*
Դվին *13*

Եզիպտոս *68, 72, 79*
Եդեսիա *67*
Ելիմայիս *կամ* Լուրիստան *159*
Եկբատանա *50, 66*
Եկեղյաց գավառ *41, 191, 196, 215, 222, 226*
Ենա *5, 6*
Ենդերես *193*
Երեզ գավառ *64*
Երվանդաշատ *23*
Երևան *5, 8—10, 12—15, 17, 18, 21, 22, 24, 45, 171*
Եվբեա մեծ կղզի *63*
Եվրոպա *30, 59, 79, 107*
Եփեսոս *110, 117*
Եփրատ *34, 52, 67, 68, 71, 102, 111—114, 121, 151, 159, 181—183, 186, 191, 195—200, 210, 212, 213, 215, 222, 223, 225, 226, 229, 230*
Եփրատ-Արածանի երկիր *161, 166*

Ջաղրակարտա *34*
Ջախ *174*
Zanserio *կայարան 84*
Ջարեհավան *23*
Ջարիադրեխի պետություն *116*
Ջարիշատ *23*
Ջելա *179*
Ջիմարա *197, 198, 199*
Ջևմա *44, 67, 69, 72, 151*

Էգեյան ծով *60, 95, 184*
Էջմիածին *6*
Էրզրում *201*
Էպիդափնե *102*

Թեմիսկիրա նավահանգիստ *97*
Թերմոդեն գետ *92*
Թիլ ավան *64*
Թիֆլիս *5, 7, 10, 45, 103, 113, 197*
Թորթում *201*
Թրակիա *39, 59—61*

Իբերիա *23, 48, 72, 151, 217, 220, 226*
Իզոլու *(Իզոլի) 111*
Իլևան *218*
Իսավրիա *95*
Իսպանիա *91, 92*
Իտալիա *31, 36, 62, 77, 106, 178, 184, 189, 211, 224, 227*
Իրան *33, 229*
Իրիս գետ *177*

Լաոդիկեա, *քաղաք, 21*
Լազո կայարան *218*
Լամփսակուս, *քաղաք, 95, 96, 97*
Լայլացիգ *5, 6, 56, 64, 111, 157, 194*
Լեռնային Կիլիկիա *69, 72*
Լիկաոնիա *38, 128, 180*
Լիկոս գետ *99*
Լոնդոն *196, 197*

Խառան, *տե՛ս Կարրարա*
Խարբերդի դաշտ *114*
Խոյ *174*
Խոսպիա *215, 218, 222*
Խոտենե գավառ *200*

Ծոփք *կամ* Ծոփաց աշխարհ *38, 40, 44, 48, 49, 52, 54, 70—72, 79, 113, 114, 116, 119, 124, 136, 153, 160, 209—212, 225, 226*
Ծումբ *171*
Ծումբ-Դիդեմ *166*

Կաբիրա, *գյուղաքաղաք, 78, 99, 100, 101, 110, 178*
Կամախ, *տե՛ս Անի-Կամախ*
Կամբեն գավառ *218*
Կամբյուզես գետ *220*
Կապադովկիա *20, 21, 34, 36—39, 42, 44, 48—54, 56—59, 65, 70—73, 76, 85, 92—95, 110, 111, 122, 134, 151, 209, 225*
Կասպիանե *41*
Կասպիս *222*
Կասպից ծով *72*
Կասպյան երկիր *41*
Կարենիտիս *41, 199*
Կարբացեն *172*
Կարկաթիոկերտ, *տե՛ս Արկաթիոկերտ*
Կարնո գավառ *41*
Կարրարա, *քաղաք, 223*
Կիզիկոս, *քաղաք, 96, 97, 124*
Կիլիղիզ (Cyleiza-Cymiza) *83, 161*
Կիլիկիա *34, 38, 52, 70, 80, 94, 95, 122, 123, 128, 148, 150, 178, 180, 182, 186, 189, 191, 210, 225*
Կիրովական *218*
Կղարջք *41*
Կոլխիդա *194*
Կոմիս *38, 48, 61, 195, 200, 213, 217, 218, 225*
Կոմագեն *69, 70, 72, 110, 152, 153, 225*
Կոմանա, *գյուղաքաղաք, 78, 100, 177*
Կոնդախսազ *215*
Կոպ-Դաղ *199*
Կովկաս *197*
Կորդուք *կամ* Կորդվաց երկիր *48, 66, 68, 77, 80, 110, 114, 152—154*
Կուրդի *կամ* Կարվանսարայի լեռնանցք *174, 204*

Կուր գետ 44, 72, 213, 215—218

Հալիս գետ 183
Հայասա 13
Հայաստան 9—14, 16—25, 27, 28, 30, 31, 34, 40—44, 46, 47, 50, 62, 64, 66—69, 71—81, 84, 85, 90—93, 99—101, 105, 107—109, 111, 114, 116, 123—125, 129, 131, 133, 135, 154, 156, 158, 174, 178, 180, 186—190, 193—195, 197, 199—206, 210, 213, 217, 218, 220, 226—228, 230
Հայկական բարձրավանդակ 162
Հայկական լեռնաշխարհ 44, 48, 229
Հայկական Պար 204
Հայկական Տավրոս 116
Հասանդալա 165
Հարավային Հայաստան 229
Հարմոզիկա, ամրոց, 217
Հելլադա 9—12, 31, 60, 63, 64
Հելլեսպոնտ 96
Հիդարա, ամրոց, 194
Հին Հայաստան 17, 22, 24, 25, 27, 45, 79, 80, 86, 200, 229
Հյուսիսային Միջագետք 44, 174
Հնդկական Կովկաս 34
Հնդկական օվկիանոս 33
Հոռմ 17, 18, 34—38, 48, 51, 53, 56, 57, 59, 61, 62, 64, 67, 72, 73, 77, 91—95, 100, 103, 107, 110, 126, 129, 135, 169, 178, 180, 181, 183, 184, 186, 189, 209, 213, 220, 222, 224, 225, 229, 230
Հոռմեական Ասիա 91, 96, 106, 107
Հրեաստան 71
Հունաստան 35, 37, 56, 59, 61, 77, 85

Ղանլիճա 215, 218
Ղարայազի դաշտ 220
Ղարաֆիլիսե 165, 166
Ղրիմ 218

Ճորոխ գետ 200

Մազնեսիա 35, 40
Մաժաք 21, 70, 77, 92
Մակեդոնիա 35, 58, 60, 64, 67
Մանազկերտ 165
Մանանաղի 197, 226
Մասիոս լեռ 82
Մարաստան 44, 48, 65, 66, 72, 79, 87
Մարբուրգ 7
Մարմար ծով 96
Մելիտենե 71, 111
Մեծ Աղբակ գավառ 65
Մեծ Հայք 40, 42, 45, 48, 79, 194, 198
Մեծ Հայաստան 42, 44, 48, 49, 54, 56, 62, 79, 116, 142, 143, 152, 176, 209, 226
Մերձավոր Արևելք 12, 20, 23
Մզուր 197, 226
Միգդոնիա 31, 33, 66, 67, 82, 172, 174
Միջագետք 46, 52, 67, 70, 79, 80, 151, 156, 157, 174, 176—178, 182, 186, 196, 213, 223—227
Միջերկրական ծով 34, 70, 72, 110, 184
Միջին Ասիա 44, 50
Միսիա 38
Մծբին 67, 152, 174—176, 178
Մծուրն, քաղաք, 14, 23
Մշո դաշտ 130, 161, 162
Մոսկվա 25, 27, 29, 30, 37, 41, 54, 56, 60—62, 75, 81, 215, 222, 227
Մցխեթ 217

Յորա գետ 218, 220

Նախի 13
Ներջիկ 121, 130, 161, 162
Ներսիսյան դպրոց 7
Նիկոթորիոս գետ 83, 131, 132
Նիկսար (Նեոկեսարիա) 99
Նիկոպոլիս 193—199
Նոր ամրոց 222
Նինուե 21, 22, 66, 68, 81, 82

Շաբիան 114
Շենիկ 121, 162
Շորապան 217
Շռուռզարդ 197

Չինաստան 44

Պաղեստին 72, 109, 225
Պանոիկապեյոն (այժմ Կերչ), քաղաք, 224, 228
Պատրաես ավան 170
Պարթևստան 34
Պարիադրես 41, 42
Պարիադրեսի լեռնային շրջան 194
Պարիում, քաղաք, 95, 97
Պարսկաստան, 3, 37, 230
Պարթենիոս, գետ, 83
Պափլագոնիա 38, 93, 94
Պելոռոս գետ 217
Պեռերբուրգ 6, 7, 67, 70, 76, 169
Պերգամոն 35, 44
Պիմոլիսա, գյուղաքաղաք, 78
Պիսիդիա 95
Պյուրկ 177, 193, 196, 198
Պոնտոս 18—21, 28, 29, 31, 34, 38, 39, 42, 48, 49, 50, 57, 72, 77—79, 85, 93, 94, 96—99, 101, 105, 117, 125, 127, 128, 154, 155, 176—179, 181, 183, 186, 189, 190, 198, 202, 222
Պրիապոս, քաղաք, 95
Պրոպոնտիս 38, 95, 96
Պրովինցիա Ասիա 34, 93, 95, 96, 106
Պրոտոպաֆիոն 58
Պտղոմայիդ, քաղաք, 71, 109
Պևտինգերյան քարտեզ 12, 13, 83, 111, 114, 161, 166, 171, 173, 174, 194, 197—199, 203, 204, 215, 216, 218

Ջեզիրե 174
Ջուլամերկ 174

Ռուսաստան 38
Ռիոն գետ 217

Սամոսատ 225
Սատաղ 13, 198, 199, 204
Սերաստոպոլիս 13, 215, 217, 218
Սելևկիա, քաղաք, 44, 68, 69, 72, 152, 153
Սելևկիա, ամրոց, 225
Սելևկիա, շրջան, 79
Սելևկյան Ասորիք 69
Սելևկյան երկրներ 44
Սրճկատիճ 198
Սղերդ 83
Սինոպ 37, 50, 77, 108, 224
Սինորիա 193—196, 198—200, 222
Սինորեգա, ամրոց, 196
Սոգդիանե 34
Սոլի, քաղաք, 74
Սովետական Միություն 5, 15
Սովետական Հայաստան 5, 8, 14, 15, 16
Ստասպուրգ 5, 43
Սուխում 204
Սուրամ 38
Սև ծով 37, 38, 44, 48, 200

Վանա լիճ 161, 165
Վան 23
Վայկունիք 109
Վաղարշապատ 67, 86
Վասպուրական 41
Վարդանակերտ 204
Վիեննա 9, 27, 41, 63, 67, 87, 124, 200, 218
Վրաստան 130
Վրկան 34

Տալավրա, գյուղաքաղաք, 78, 100, 180, 181, 222
Տայք 41
Տավրոսյան խեռսոնես 38
Տավրոսյան լեռներ 84, 121, 130, 161, 164, 174

Տավրոս *114, 135, 152, 162, 172, 174, 183*
Տարոն *122*
Տամոնիախ, *տե՛ս Տմորիք*
Տիանա, *քաղաք, 77*
Տիգրանակերտ *13, 21—24, 30, 48, 71, 74, 77, 80—83, 85, 88, 90, 110, 113, 116—124, 129—138, 145, 147—153, 156, 159. 169, 175, 178*
Տիգրիս գետ *82, 113, 114, 116, 176, 229, 230*
Տիգրոն *155, 158, 186—188*
Տմորիք *41*
Տոմիսա ամրոց *111, 136, 225*
Տրապիզոն *37, 42, 77, 152, 225*
Տրոմմերի երկիր *182, 185*

Փայտակարան *41*
Փառնակիա *42, 225*
Փասիս, *տե՛ս Ռոթի*
Փավնիախ *41*
Փարիզ *21, 27, 31, 36, 54, 83, 152, 166, 220*
Փյունիկիա *70—72, 102, 225*
Փոթի *200, 217*
Փոքր Ասիա *20, 22, 35, 39, 58—63, 70, 72, 128, 129, 182, 183, 201*
Փոքր Հայք *37, 38, 40—42, 44, 48, 49, 92, 101, 176, 177, 180, 181, 190, 191, 194, 225, 226*
Փոյուգիա *39, 95*

Քաղկեդոն *94, 95, 96*
Քեռոնեա *146*
Քեփրիխե *84, 203, 204*
Քիոս կղզի *61*
Քոռնենե *41*
Քրդստան *196*
Քսերքսենե *41*

Օդոմանտիս *40*
Օսրոյենե *48, 67, 226*

Ֆարկին *48, 83, 86, 88, 116, 121, 131, 132*
Ֆարկին-սու *130, 131*

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

	Նախքան մեր թվ.
Անախոքոս Մեծի պարտությունը Մագնեսիայի ճակատամարտում	190
Արտաշեսը և Զարեհը իրենց հայրապարտում են անկախ թագավորներ Մեծ Հայքի ու Փոքրի	189
Արտաշես Ա-ի մահնակցությունը Փոքր Ասիայի հինգ թագավորների խաղաղության դաշինքին	180
Արտաշատ քաղաքի հիմնումը	166
Սելևկյան Անտիոքոս Դ-ի արշավանքը Հայաստան	165
Տիգրան Բ-ի ծնունդը	142/141
Տիգրան Բ-ի գահակալությունը	95
Տիգրան Բ-ի դաշինքը Միհրդատ Եվպատորի հետ	95/94
Ծովքի մկացումը մեծ Հայաստանին	94
Տիգրան Բ-ի առաջին արշավանքը Կապադովկիա	93
Կիլիկիայի փոխարքատոր Սուլլան վերագրավում է Կապադովկիան	92
Միհրդատ և Բագոաս զորավարների նոր հարձակումը Կապադովկիայի վրա	91
Տիգրան Բ-ի հաղթական կռիվները ընդդեմ պարթև Արշակունիների և սրանց արևելյան երկրների նվաճումը	89—85
Հռոմեական-պոնտական առաջին պատերազմը	88—84
Դարդանոսի բանավոր դաշնագրությունը	84
Տիգրան Բ-ն նվաճում է Ասորիքը և Դաշտային Կիլիկիան	84/83
Հռոմեական-պոնտական երրորդ պատերազմը	73—71
Մեռրոդոտոս Սկեփսացին ուղարկվում է Հայաստան իբրև դեսպան	71 (ամռանը)
Միհրդատ Եվպատորի պարտությունը և փախուստը Հայաստան	71 (աշնանը)
Դեսպան Ապպիոս Կլավդիոսը պահանջում է, որ Միհրդատը հանձնվի Լուկուլլոսին	71 թվի վերջերին
Լուկուլլոսի վերադարձը պրովինցիա Ասիա և պատերազմի ավարտման հանգիստաոնները	70
Լուկուլլոսի գաղտագողի ու անպատեհ արշավանքը Հայաստան	69 (գարնանը)
Մհերուժանի և հայկական փոքրաթիվ հեծելազորի գրոհը Թշնամու վրա	» »
Տիգրանակերտի պաշարումը	» »

Հայկական հեծելազորի դիշերային մուտքը Տիգրանակերտ և Տիգրանի կանանոցի ազատումը . . . . . 69 (գարնանը)
Տիգրան Բ-ի տեսակցությունը և խորհրդակցությունը Միհրդատի հետ . . . . . 69 (ամառը)
Ճակատամարտը Տիգրանակերտի մոտ . . . . . 69 (հոկտ. 6-ին)
Հռոմեական-հայկական հռվիններն Արածանիի հովիտներում 68 (ամառը)
Արածանիի ճակատամարտը . . . . . 68 (սեպտեմբերին)
Լուկուլլոսը պաշարում և գրավում է Մծբինը . . . . . 68 թվի վերջերին
Հռոմեական զորքի (Տրիարիուսի հրամանատարության) ծանր պարտությունը Պոնտոսում . . . . . 67 (գարնանը)
Հռոմեական զորքերի բարոյալքումը և Լուկուլլոսի նահանջը դեպի Թալատիա . . . . . 67 (ամառը)
Պոմպեոսի արշավանքը Միհրդատի դեմ . . . . . 66 (գարնանը)
Կրոսեր Տիգրանի ապստամբությունը հոր դեմ . . . . . » »
Միհրդատի նահանջը Թաստեյրայից և պարտությունը Լիկոս գետի մոտ . . . . . 66 (աշնանը)
Պոմպեոսի արշավանքը Հայաստան և հաշտությունը Տիգրանի հետ . . . . . » »
Իբերների ու ազվանների հանկարծակի հարձակումը Պոմպեոսի ձմեռող զորամասերի վրա . . . . . 66 (17—24 դեկտ.
Պոմպեոսի արշավանքն Իբերիա . . . . . 65 (գարնանը)
Պոմպեոսի արշավանքն Ալվանք . . . . . 65 (ամառը)
Պոմպեոսի վերադարձը Փոքր Հայք . . . . . 64 (գարնանը)
Տիգրան Բ-ի մահը 56/55

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը և նրա «Տիգրան Բ և Հռոմը» աշխատությունը 5
1. Առաջաբան 27
2. Առաջավոր Ասիայի քաղաքական ու տնտեսական դրությունը Տիգրան Բ-ից առաջ 33
3. Արտաշեսյան հարստությունը և Տիգրան երկրորդը . . . 40
4. Հայ-պոնտական դաշինքը և Տիգրան Բ-ի արշավանքը Կապադովկիա 49
5. Միհրդատյան առաջին պատերազմը (88—84 թվ.) 56
6. Տիգրան երկրորդի նվաճումները 65
7. Հելլենիզմի զորեղացումը Հայաստանում և Տիգրանակերտ քաղաքի հիմնումը 74
8. Միհրդատյան երրորդ պատերազմը և Միհրդատի փախուստը Հայաստան 91
9. Լուկուլլոսը պահանջում է հանձնել իրեն Միհրդատին և նախապատրաստվում է պատերազմի 101
10. Լուկուլլոսի հանկարծակի հարձակումը և առաջին ընդհարումը հայերի հետ 110
11. Տիգրանակերտի պաշարումը և Տիգրանի տեսակցությունը Միհրդատի հետ 121
12. Մեծ ճակատամարտը Տիգրանակերտի մոտ 130
13. Տիգրանակերտի առումը և Տիգրանի աշխարհակալ մեծ պետության քայքայումը 148
14. 68 թվի կռիվները Հայաստանում և Միջագետքում 156
15. Տիգրանի և Միհրդատի հաղթական առաջխաղացումը և Լուկուլլոսի նահանջը 176
16. Պոմպեոսի արշավանքը Պոնտոս և Միհրդատի պարտությունը . . 186
17. Տիգրանի հաշտությունը Պոմպեոսի հետ 202
18. Հայաստանը և մյուս հարևան երկրները Պոմպեոսի արշավանքից հետո 217

ՑԱՆԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Աղբյուրների համառոտ տեսություն 233
Ցանկ աղբյուրների 237
Ցանկ գրականության 241
Անձնանունների ցանկ 245
Տեղանունների ցանկ 251
Ժամանակագրական աղյուսակ 257

ՀԱԿՈԲ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԱՆԱՆԴՅԱՆ

Տիգրան Երկրորդը և Հռոմը
(Վերաիրատարակություն)

Հրատարակության է երկայացրել հայագիտական
հետազոտությունների կենտրոնը

Խմբագիր՝ Հ. Գ. Ժամկոչյան
Հրատ. խմբագիր՝ Լ. Լ. Աղայան
Գեղ. խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Հովսեփյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ա. Վարդանյան

ՎՖ 07700 *Պատվեր 725* *Տպաքանակ 10000*

Հանձնված է արտադրության 7/IV 1972թ.։
Ստորագրված է տպագրության 12/XII 1972 թ.։
Թուղթ 60×90¹/₁₆։ Տպագր. 16,25 մամուլ+3 ներդիր։
Հրատ. 13 մամ.։ Գինը՝ 1 ռ. 20 կոպ.։
Երևան համալսարանի հրատարակչություն։ Աբովյան փող. № 52։

Երևանի պետական համալսարանի տպարան։
Երևան, Աբովյան փող. № 52։